

Հայաստանի Հանրապետություն
Գիտությունների ազգային ակադեմիա
Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն

ԳԻՏԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1-2 (22)
2 0 1 9

Գյումրի 2019

*«Գիտական աշխատություններ» հոդվածների պարբերական ժողովածուն
հիմնադրվել է 1998թ. ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի Շիրակի հայագիտական
հետազոտությունների կենտրոնի գիտական խորհրդի որոշմամբ (15.01.1998)*

ISSN 1829-4316

Գլխավոր խմբագիր՝ Բանասիրական գիտությունների դոկտոր
Ս.Ա. ՀԱՅՐԱՎԵՏՅԱՆ

Խմբագրական խորհուրդ՝ Աբրահամյան Լ.Հ. (պատմ. գիտ. թեկնածու, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ), Ակոպով Ա.Ա. (պատմ. գիտ. թեկնածու, պատասխանատու քարտողար), Ավետիսյան Պ.Ս. (պատմ. գիտ. դոկտոր, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ), Բազեյան Կ.Ռ. (պատմ. գիտ. թեկնածու, դոցենտ), Գրիգորյան (Հայկազուն) Ա.Հ. (ճարտ. դոկտոր, պրոֆեսոր), Եզանյան Լ.Գ. (պատմ. գիտ. թեկնածու), Խաչատրյան Լ.Մ. (բան. գիտ. դոկտոր, պրոֆեսոր), Խաչիկյան Գ.Վ. (բան. գիտ. դոկտոր), Հայրապետյան Ա.Ս. (պատմ. գիտ. թեկնածու, դոցենտ) Հարությունյան Հ.Հ. (արվ. թեկնածու), Մելքոնյան Ա.Ա. (պատմ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս), Մկոյան Ա.Ա. (փիլ. գիտ. թեկն., մանկ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր), Պետրոսյան Ս.Գ. (պատմ. գիտ.դոկտոր), Սահակյան Կ.Ա. (հոգ. գիտ. թեկնածու, դոցենտ), Քոսյան Ա.Վ. (պատմ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր)

ԳԱԱ ՇՀՀ ԿԵՆՏՐՈՆԻ «ԳԻՏԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՒՆԻԹՅՈՒՆՆԵՐ»
NN 1-2 (22) / հայագիտություն և հասարակական գիտություններ
// ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիա, Շիրակի հայագիտական
հետազոտությունների կենտրոն/ Խմբ. խորհուրդ՝ Ս. Հայրապետյան և այլք.
- Գյումրի, «Ռ.ԱվետիսյանԱՁ», 2019. –306 էջ:

Գիտական պարբերականի հատորն ամփոփում է հայագիտության տարաբնույթ հարցերին վերաբերող գիտական հոդվածներ, հաղորդումներ ու հրապարակումներ, որոնք խմբագրական խորհրդի կողմից գրախոսվել, խմբագրվել և երաշխավորվել են տպագրության:

Ժողովածուն նախատեսված է հնագիտությամբ, պատմությամբ, ազգաբանությամբ, բանասիրությամբ զբաղվողների, ինչպես նաև ընթերցող լայն շրջանների համար:

*Խմբագրության հասցեն՝ 3101, ՀՀ, Գյումրի, Վ. Սարգսյան 5ա
հեռ.՝ +374 /312/6 94 77, +374/94/411-228
էլ. փոստ՝ scient.works@shirakcenter.sci.am
կայքէջ՝ www. shirakcenter.sci.am*

ISSN 1829-4316

© ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական
հետազոտությունների կենտրոն

Республика Армения
Национальная академия наук
Ширакский центр арменоведческих исследований

НАУЧНЫЕ ТРУДЫ

ВЫПУСК
1-2 (22)
EDITION

SCIENTIFIC WORKS

Shirak Centre of Armenological Studies
National Academy of Sciences
Republic of Armenia

Гюмри 2019 Gyumri

“Научные труды” основан в 1989г. решением ученого совета Ширакского центра арменоведческих исследований НАН РА (15.01.1998)

The periodical collection of “Scientific Works” was established in 1998 by the decision of the scientific board of Shirak’s Center of Armenological Studies of NAS of RA (15.01.1998)

ISSN 1829 - 4316

Главный редактор: доктор филологических наук **АЙРАПЕТЯН С. А.**

Редакционная коллегия: **Абраамян Л.А.** (к.ист.н., член кор. НАН РА), **Аветисян П.С.** (д.ист.н., член кор. НАН РА), **Айрапетян А.С.** (к. ист.н, доцент), **Акопов А.А.** (к.ист.н., ответственный секретарь), **Арутюнян А.А.** (к.иск.), **Базян К.Р.** (к.ист.н., доцент), **Григорян (Айказун) А.А.** (д. архит., профессор), **Еганян Л.Г.** (к.ист.н.), **Косян А.В.** (д.ист.н., профессор), **Мелконян А.А.** (д.ист.н., профессор, академик НАН РА), **Мкоян А.А.** (к.фил.н., д.пед.н., профессор), **Петросян С.Г.** (д. ист. н.), **Саакян К.А.** (к.псих.н., доцент), **Хачатрян Л.М.** (д.фил.н., профессор), **Хачикян Г.В.** (д.фил.н.)

“Научные труды” ШЦАИ НАН РА

NN 1-2 (22) арменоведения и общественные науки// Национальная академия наук РА, Ширакский центр арменоведческих исследований/ Ред. совет: С.Айрапетян и др.- Гюмри, ЧП “Р. Аветисян”, 2019.- 306 стр.

Научное периодическое издание включает относящиеся к вопросам арменоведения статьи, публикации и сообщения, которые после рецензирования и редактирования были рекомендованы к печати по решению редакционного совета.

Сборник предусмотрен для изучающих археологию, историю, этнографию, филологию, а также для широкого круга читателей.

Editor-in –chief: Doctor of Philological Sciences **HAYPAPETYAN S. A.**

Editorial board: **Abrahamyan L.H.** (PhD in History, Corresponding Member of NAS RA), **Akopov A. A.** (PhD in History, Responsible Secretary), **Avetisyan P. S.** (Doctor of History, Corresponding Member of NAS RA), **Bazeyan K. R.** (PhD in History, associate professor), **Grigoryan (Haykazun) A. H.** (Doctor of Architecture, professor), **Yeganyan L. G.** (PhD in History), **Khachatryan L. M.** (Doctor of Philology, professor), **Khachikyan G. V.** (Doctor of Philology), **Hayrapetyan A. S.** (PhD in History, associate professor), **Harutyunyan H. H.** (PhD in Art Studies), **Melqonyan A. A.** (Doctor of History, professor, Academician NAS RA), **Mkoyan A. A.** (PhD in Philosophy, Doctor of Pedagogy, professor), **Petrosyan S. G.** (Doctor of History), **Sahakyan K. A.** (PhD in Psychology, associate professor), **Qosyan A. V.** (Doctor of History, professor).

"SCIENTIFIC PROCEEDINGS" SHCAS NAS RA

NN 1-2 (22) Armenology and Social Sciences // National Academy of Sciences RA, Shirak Center for Armenological Studies/. Ed. Board: S.Hayrapetyan and others.-Gyumri, "R.Avetisyan PE", 2019,-306 p.

The volume of the scientific periodical covers various scientific articles, reports and publications concerning Armenology that have been reviewed, edited and guaranteed for publication.

The collection is for those specialists who study Archaeology, History, Ethnography, Philology and for a wide scope of readers.

Адрес редакции: 3101, РА, Гюмри, ул. В. Саргсяна 5а

Address: 3101, 5a V. Sargsyan Street, Gyumri, RA

тел./tel.: +374 /312/6 94 77, +374/94/411-228

E-mail: : scient.works@shirakcenter.sci.am

hppt: www.shirakcenter.sci.am

ISSN1829-4316

@ Ширакский центр арменоведческих исследований НАН РА, 2019

@ Shirak Center for Armenological Studies of NAS RA, 2019

Պ Ա Տ Մ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն
ИСТОРИЯ
HISTORY

ՀՏԴ՝ 930.272

ԼՈՒՅՍԻ ՊԱՇՏԱՄՈՒՆՔԻ ԷԹՆՈՒՆՅԱՆ ՎԱՅՐԵՐԸ

Մարգիս Պեսրոսյան

ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն

Բանալի բառեր՝ ցեղ, երկիր, դաշնակից, Էթիունի, Ուրարտու, տեղադրություն, ցեղանուն, տեղանուն, ստուգաբանություն, արեգակնային:

Հոդվածում պատմական Էթիունիի տարածքից բերված տեղանունների շարքի /Luša, Luhiu(ni), Durubani, Uišuši, Վանանդ, Երեւել, Փառախոտ/Փառոխտ, Փառական, Նիգ, Արեգունի/ նորովի ստուգաբանություններով գիտականորեն հաստատվում է Էթիունիի հնդեվրոպական-հայկական բնույթը:

Նախաբան Հայկական լեռնաշխարհի հյուսիսարևելյան շրջանները ուրարտական դարաշրջանում միավորված էին սեպագիր արձանագրություններում Էթիունի (Էթիուխի) կոչված ցեղամիության մեջ: Սա Ուրարտական թագավորության հզոր հակառակորդն էր հյուսիսում: Նրանց հակամարտությունն սկսվել էր այն բանից հետո, երբ Ուրարտուի թագավոր Սարդուրի I-ը (մ.թ.ա. 840-ական – 825թթ.) իրեն հռչակել էր «Նաիրիի թագավոր», որով բացահայտել էր ամբողջ Հայկական լեռնաշխարհին իր իշխանության տակ միավորելու ծրագրի գոյությունը: Նախահարձակ լինելով, Էթիունյան Վիտիրուխի, Լուշա և Կաթարգա ցեղերի աշխարհագորը, անցնելով Հայկական Պար լեռնաշղթան, ներխուժել էր Ուրարտուի տարածք, բայց Արածանիի վերնագավառում պարտություն էր կրել և նահանջել: Ուրարտուի և Էթիունիի միջև ռազմական գործողությունները շարունակվել էին հաջորդ հարյուրամյակում, որի ընթացքում ուրարտական արշավանքների հետևանքով ավերվել էին Էթիունյան բազմաթիվ բնակավայրեր, կոտորվել և գերեվարվել բյուրավոր մարդիկ: Այդուհանդերձ, Էթիունին վերջնականապես ընկճել և նրա բնակչությանը խաղիապաշտություն պարտադրել Ուրարտուի թագավորներին չէր հաջողվել: Էթիունցիները դիմակայել էին նաև արեգակնային լույսի պաշտամունքին հավատարիմ մնալու և սերունդներին այն փոխանցելու շնորհիվ:

1. *Լուշա ցեղի մասին առաջին վկայությունը*

Ուրարտուի Իշպուինի արքան (մ.թ.ա. 825-810 թթ.) և արքայազն Մենուան Էթիունի ցեղամիության երեք ցեղերի դեմ Ալաշկերտի դաշտում հաղթանակի հասնելուց հետո դրա վերաբերյալ տեղում մի արձանագրություն են թողել¹: Դրա մասին պատմում է նաև Վանի մոտ՝ Հյուսնենց գյուղում նրանց թողած արձանագրությունը: Այստեղ ասված է. «Արշավեցին Իշպուինե Սարդուրորդին (և) Մինուա Իշպուինորդին: Վանեցին Վիտերուխե, Լուշա (և) Կաթարգա դաշնակից արքաներին Եթիունյան, (որ) փախչում էին...»²:

2. Լուշա ցեղի և երկրի տեղադրության ճշգրտումը

Արձանագրության մեջ հիշվում է նաև Անաշե քաղաքը, որտեղ հաղթական հուշակոթող էր դրվել: Այս քաղաքը կա՛մ նույնացնում են հետագա Ալաշկերտի հետ, կա՛մ տեղորոշում են նրա մոտերքում³: Այսուհանդերձ, Ալաշկերտի շրջանը չէր կարող վիտիրու(խի) ցեղի երկրի մաս կազմել հետևյալ պատճառներով:

1. Արձանագրությունները խոսում են ոչ թե դաշնակից երեք ցեղերի երկրների նվաճման, այլ նրանց արշավանքի հետմղման մասին⁴: 2. Վիտիրուխի ցեղային երկիրը մշտապես հիշատակված է Շիրակում գտնված Էրիախիի և Ախուրյանի ավազանի մյուս ցեղային երկրների հարևանությամբ: 3. Եթե Ալաշկերտի շրջանը պատկաներ Վիտիրուխի ցեղային երկրին, ապա դրանով իսկ նա կհայտնվեր Էթիունի ցեղամիության կազմում, որովհետև վերջինիս հարավային սահմանը հասնում էր մինչև Մասիս (Հայկական Պար)⁵, իսկ Ալաշկերտի շրջանը դրանից հարավ էր: 4. Էթիունյան ցեղային երկրները, դրանց թվում՝ և Ախուրյան գետի ավազանում գտնվողները, ինչպիսին էր հենց Վիտիրուխին⁶, ընդարձակ չեն եղել: Դրանցից յուրաքանչյուրը ավելի փոքր տարածք էր զբաղեցնում, քան հետագա Մեծ Հայքի շատ ու շատ գավառներ:

Վստահաբար նույնը կարելի է ասել նաև եռյակի երրորդ անդամի՝ կաթարգա ցեղի և նրա երկրի վերաբերյալ, ինչը հաստատելու է գալիս ¹KUR Qatarza

¹ Меликишвили Г.А., Урартские клинообразные надписи (այսուհետև՝ УКН), М., 1960, № 23.

² УКН, № 20: Թարգմանությունն ու տառադարձումը Հ. Կարազոյանի (Հայ ժողովրդի պատմության քրեստոմատիս, այսուհետև՝ ՀԺՊՔ), հ. I, Եր., 1981, էջ 42:

³ Աղոնց Ն., Հայաստանի պատմություն, ակունքները X-VI դդ. մ.թ.ա., Եր., 1972, էջ 203, **Арутюнян Н.В.**, Топономика Урарту (այսուհետև՝ ТУ), Եր., 1985, стр. 27, 202.

⁴ Дьяконов И.М., Предыстория армянского народа. История Армянского нагорья с 1500-500 г. до н. э., Եր., 1968, стр. 155, пр. 207.

⁵ УКН, №30, ՀԺՊՔ, հ. I, էջ 42, ծան. 2: **Հմայակյան Ս.**, Էթիունե երկիրը և «Վիտերուխե-Լուշա-Քաթարգա» դաշնությունը, Շիրակի պատմամշակութային ժառանգությունը (այսուհետև՝ ՇՊՍԺ), հանրապետական երրորդ գիտաժողովի զեկուցումների հիմնադրույթներ, Գյումրի, 1998, էջ 16:

⁶ Վիտիրուխի ցեղային երկրի և նրա տեղորոշման մասին մանրամասն տե՛ս **Պետրոսյան Ս.**, Սեպագրային ՍՄՐԱ(Մ) երկրի տեղադրության շուրջ, ՀՀ ԳԱԱ ՇՀՀ կենտրոնի «Վիտակյան աշխատություններ» (այսուհետև՝ ԳԱԱ ՇՀՀԿ «ԳԱ»), հ. XXI, Գյումրի, 2018, էջ 50-59:

ցեղանուն-երկրանունը⁷: *Kat-arza բաղադրիչներից բաղկացած այս անվան երկրորդ բաղադրիչը հայերեն *արջ* բառի սեպագրային վերարտադրությունն է⁸, իսկ *kat բաղադրիչը նույնն է հետևյալ բառերի *կատ*- արմատի հետ: Դրանք են. *կատար* (<կատ-ար) «գագաթ», *կատիկ* (<կատ-իկ) «մակալեզու», *կատաղունի* (<կատ-աղ-ունի) «եկեղեցու վերնատուն»⁹, որոնց միջոցով կոռահվում է **կատ* արմատի նախնական «վերին, բարձրի» իմաստը¹⁰: Պատմական (ըստ «Աշխարհացոյցի»-ի) Շիրակ, Վանանդ և Արշարունիք գավառների սահմանագլխին գտնվող լեռնագանգվածը կրում էր *Արջոյ առիճ* անունը¹¹: Լեռնանվան առաջին մասը *արջ* բառի սեռական հոլովածն է, իսկ *առիճ*-ը կամ «գյուղ»¹² (լայնաբար՝ «բնակավայր» է նշանակում, կամ՝ «ամրոց, բերդ»¹³: Ըստ այսմ, Արջոյ առիճ լեռը եղել է արջի տոտեմական պաշտամունքի կենտրոն և Շիրակի, Վանանդի ու Արշարունիքի հարակից շրջաններով կազմել է սեպագրային Կաթարգա ցեղային երկիրը:

Ուրարտուի դեմ մարտնչած դաշնակից ցեղերից երկրորդը լուշան էր: ^{1/KUR}Luša ցեղային երկրի տեղորոշման հարցում ևս տարբեր տեսակետներ գոյություն ունեն: Ընդունելի կարելի է համարել նրա մոտավոր տեղորոշումը Երիախիից (կենտրոնական Շիրակում) արևմուտք և Արաքս-Ախուրյան գետախառնի շրջանից հյուսիս¹⁴: Եթե ճշգրտենք, ապա Լուշան ևս գտնվել է Ախուրյանի ավազանում, Կաթարգայից հյուսիս-արևմուտք՝ Շիրակին հարող կենտրոնական Վանանդում: Դա պարզ երևում է Արգիշտի I-ի (մ.թ.ա. 786-764 թթ.) Էթիունիի դեմ ձեռնարկած արշավանքներից մեկի նկարագրությունից, երբ նա Դիաուխիից (հետագա Տայք) նախ մտել էր Լուշա, ապա՝ Կաթարգա, իսկ հետո այս երկուսից արևելք գտնված Էրիախի¹⁵:

3. Լուշա և Լուխիունի երկրանունների ստուգաբանությունը

Այսպիսով, վերանում է Լուշա ցեղային երկիրը հետագա Լոռիի տարածքում տեղադրելու հնարավորությունը, որն առաջարկվել էր Luša (կարդա՝ *Լուսսի*) և Լոռի (<Լառի) տեղանունների թվացյալ հնչյունական նմանության հի-

⁷ YKH, № 127, V, ՀժՊՔ, հ. I, էջ 42:

⁸ Պետրոսյան Ս., Պետրոսյան Լ., Արարատի, Արագածի և մոտակա լեռների սեպագրային անունների շուրջ, ԳԱԱ ՇՀՀԿ, հ. XII, Եր., 2009, էջ 59:

⁹ Աճառյան Հ., Հայերեն արմատական բառարան (այսուհետև՝ ՀԱԲ), հ. II, Եր., 1973, էջ 536, 537, 538:

¹⁰ Պետրոսյան Ս., Պետրոսյան Լ., նշվ. աշխ., էջ 59:

¹¹ Երենյան Ս., Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի (այսուհետև՝ «Աշխարհացոյց»), Եր., 1963, էջ 40:

¹² ՀԱԲ, հ. I, Եր., 1971, էջ 258:

¹³ Մանանդյան Հ., Հին Հայաստանի գլխավոր ճանապարհները ըստ Պևտինգերյան քարտեզի, Եր., 1936, էջ 36, ծան. 1:

¹⁴ ТУ, стр. 131.

¹⁵ YKH, № 127, V.

ման վրա¹⁶: Վերանում են նաև Լուշան հետագա Ծաղկոտն գավառում (Հայկական պարից հարավ) տեղադրելու վերաբերյալ եղած և Luša-ն տեղի միջնադարյան իշխողների *Աշուղ* անվանը կապող ենթադրությունները¹⁷: Հնարավոր չէ նաև տարածքային և հնչյունական տեսակետներից հիմնավորումներ գտնել ցույց տալու համար վրացական (քարթվելական) լազ ցեղանվան (Սև ծովի հարավարևելյան ափին) և *Լուշա* ցեղանուն-երկրանվան միջև¹⁸ որևէ կապի գոյությունը: Հիմնավոր չէ նաև ենթադրությունը լուշա ցեղի (և նրա դաշնակից կաթարգա, վիտիրուխի ցեղերի) հին վրացական/քարթվելական ծագման վերաբերյալ¹⁹:

Սեպագրային ^{L/KUR}Luša անվան հիմքում մենք տեսնում ենք հայերեն *լոյս* «լույս» բառը (սեպագր. ս//հայ. *n, nj, nl*, իսկ թ//հայ. *u*)²⁰: Հայերեն *լոյս* բառը ծագում է հ.-ե. *louk- նախաձևից. հմմտ. հին հնդկ. rōka- «լուսավոր», ruči «լույս», ավեստ. raočah- «լույս, փայլ», հին պարս. raučah «լույս, օր», հուն. λευκός «փայլուն, լուսավոր, պայծառ, սպիտակ», իւեթ. luk «լուսավորել», լատին. lux «լույս» և այլն²¹: Luša ցեղանուն-երկրանվան հիմքում, մեր կարծիքով, համապատասխան դիցանունն է՝ կազմված *լոյս* «լույս» արմատից –այ վերջածանցով. հմմտ. բորայ «բորենի», երայ «որսի կենդանի», կրայ «կրիա», պախրայ, իսկ *Luša//*Լուսայ դիցանվան համար՝ արքայ, մօրայ «խորթ մայր», յօրայ «խորթ հայր» բառերը, մանավանդ՝ *Արայ* դիցանունը:

Հ.-ե. *louk- արմատն ունեցել է իր *louq-/*luq- տարբերակները, որոնցից կարող էր ծագել սեպագրությամբ ավանդված ^{URU}Lušiu²² <*luh-iu-(ni) տեղանվան *luh- բաղադրիչը²³: Այսպես էր կոչվում Էթիունի ցեղամիության մասը կազմած Էրիքուախի երկրի կենտրոնատեղին, որը գտնվում էր Մեծ Մասիսի հյուսիսային լանջին, հետագա Ցոլակերտի մերձակայքում²⁴: Մովսես Խորենացու բերած ավանդազրույցի համաձայն, Հայկազն Ամասիան՝ Արամանյակի թոռը, այստեղ երկու տուն (այս դեպքում՝ ամրոց) էր կառուցել. «զմին յարեւելս կոյս,

¹⁶ **Վարազդոզեան Յ.**, Սեպագիր տեղանուններ (Այրարատում և յարակից նահագներում). Հայկական լեռնաշխարհը սեպագիր աղբյուրներում (այսուհետև՝ Վարազդոզեան), հ. I, գիրք 1, Եր., 1998, էջ 113, 160-161: Լոռի < Լօռի (<*լօռ-ի) տեղանունը բաղկացած է լօռ<լաւռ արմատից և -ի տեղանվանակերտ վերջածանցից: Լօռ նշանակում է «մամուռ», «թաց տեղեր աճող մի տեսակ խոտ», որից՝ լօռուտ «լոռ շատ բուսած տեղ» (ՀԱԲ, հ. II, էջ 308):

¹⁷ «Աշխարհացոյց», էջ 51:

¹⁸ **Меликишвили Г.А.**, К истории древней Грузии, Тб., 1959, стр. 67, 210-212.

¹⁹ **Дьяконов И.М.**, նշվ. աշխ., էջ 143:

²⁰ Նույն տեղում, էջ 221, ծան. 282: **Վարազդոզեան**, էջ 227:

²¹ ՀԱԲ, հ. II, էջ 295:

²² УКН, №№ 31, 32.

²³ **Վարազդոզեան**, էջ 125:

²⁴ ТУ, стр. 130-131, 260.

մօտ յակունս աղբերցն, որ առ ստորոտով լերինն ելանեն, իսկ զմիւսն յարեմուտ կոյս նորին տանն... եւ ետ զնոսա ի ժառանգութիւն երկուց որդոյ իւրոց՝ արւոյն Փառոխի եւ կայտառին Յոլակայ. յորս բնակեալ իւրեանց անուն զտեղիսն կոչեցին ի Փառոխայ՝ Փառախոտ եւ ի Յոլակայ՝ Յոլակերտ»²⁵: Այս նույն տարածքում հայտնաբերված Մենուա թագավորի (մ.թ.ա. 810-786 թթ.) արձանագրություններից պարզվում է, որ նա այստեղ ամրոց է կառուցել և իր անունով կոչել Մենուախինիլի²⁶: Ենթադրում են, որ դա կարող է Յոլակերտը²⁷ կամ նախկին Լուխիու(նի)ն լինել²⁸: Կարծում ենք, թե ավանդազրույցի հետևությամբ այդտեղ երկու իրար մոտ, բայց և տարբեր ամրոցներ ենք տեսնելու, Մենուախինիլին Յոլակերտն է, իսկ Լուխիունին՝ Փառախոտը:

Անանուն պատմիչը գիտե Փառոխին և նրա բնակավայր Փառոխտը՝ Փառախոտը, բայց չգիտե Յոլակին և նրա Յոլակերտը: Իսկ սա կարող է արդյունքը լինել Փառախոտի առավել հայտնի լինելու հանգամանքի. այդպիսին էր սեպագրային Լուխիունին: Ըստ Անանուն պատմիչի՝ Փառոխի անունով «Փառոխտ կոչեն զտեղի բնակութեանն, եւ Փառականն դաշտ որսոց եւ արշաւանաց նոցին»²⁹: Վերջին հանգամանքն ավելի է շեշտում Փառոխի (և նրա Փառախոտի) կարևորությունը՝ Յոլակի (և նրա Յոլակերտի) համեմատ: Ավանդազրույցի երբայրներից Փառոխը թե՛ իր նստավայրի արևելյան դիրքով և թե՛ իր անվամբ բացահայտում է իր առասպելաբանական նախատիպի արևային բնույթը³⁰: *Փառոխ* <*փառ-ոխ* անվան առաջին բաղադրիչը *փառ* բառն է, որը «փայլ» է նշանակում (հմմտ. արմատի կրկնությամբ *փարփառ* «զեղեցիկ և վառվորուն աչքեր ունեցող»)՝³¹, իսկ *-ոխ* բաղադրիչը նաև «աչք» է նշանակել (հմմտ. *ոխ* «քեն, վրեժ» բառը՝ ծագած հ.-ե. *ok^h- «տես» արմատից)³²:

Եղբայրներից Յոլակն իր անվամբ բացահայտում է իր առասպելաբանական նախատիպի կայծակեղեն բնույթը³³, որովհետև *Յոլակ* <*ցոլ-ակ*՝ «ցոլացող ակ», անունն իմաստով նույնն է ինչ և «կայծակ» նշանակող *կայծ-ակն* և *փայլ-*

²⁵ Մովսիսի Խորենացու պատմություն Հայոց, Եր., 1981, գիրք Ա, գլ. Ժբ:

²⁶ YKH, №N° 31, 32.

²⁷ Կարազեօզեան, էջ 125:

²⁸ TY, стр. 130-131.

²⁹ Մեբեուսի եպիսկոպոսի պատմություն, Եր., 1939, գլ. Ա, էջ 7:

³⁰ Պետրոսյան Ս.Գ., Վաղուրարտական դիցարանի գլխավոր եռյակը (Ուլքե՞ր են Բուդինի հավաքածուի ընծայական թիթեղին պատկերված աստվածները), ԳԱ ՇՀՀԿ «ԳԱ», հ. VIII, Գյումրի, 2005, էջ 34:

³¹ ՀԱԲ, հ. IV, Եր., 1979, էջ 491:

³² Джаукян Г. Б., Очерки по истории дописьменного периода армянского языка, Ер., 1967, стр.122, 271.

³³ Պետրոսյան Ս. Գ., Հայոց մեհենագրության ակունքներում, Գյումրի, 2008, էջ 39-40:

ակն բառերը³⁴: Բացի դրանից, *ցուակ* բառը այդ նշանակությամբ է մուտք գործել «Ցուակ ջան, ցո՛ւ տու գնա» պարերգ, որն սկսվում է «Ամպի մեջ լորիկ թռավ» նախադասությամբ³⁵: *Ցու տակ, ցուակ* նշանակում է՝ «շողալ, փայլել», «լուսի ճառագայթների թռչելը, պեծպեծին տալը», իսկ արմատի կրկնությամբ ունենք *ցուցուակ* «ցուլալ, շարունակ այս ու այնտեղ ցուլալ, փայլփլել»³⁶: Բերված նշանակությունները առանց երկմտելու կարելի է վերագրել նաև կայծակին: Սրբուհի Լիսիցյանի կարծիքով, «Ցուակ ջան», «Ցուակի» կոչված ժողովրդական պարեղանակների պարային շարժումները բնորոշ են վերվերի պարերի տեսակին և հիշեցնում են կրակից թռչկոտող կայծեր, բոցի արձակումներ³⁷:

Սեպագր. *Լսիս(ու)* տեղանվան *լսի* բաղադրիչը, ծագած լինելով «լուս» նշանակող արմատից, իմաստով առավել մոտ է *Փառնիս* և *Փառնիստ/Փառնիստ* անունների *փառ-* բաղադրիչին: *Լսի-իս-ու-ի* վերջին բաղադրիչը բուն տեղանվանը չի պատկանում (հավելվել է ուրարտ. սեպագր. մեջ), իսկ *-իս-* բաղադրիչը ևս հնդեվրոպական ծագում ունի: Հնդեվրոպական նախալեզվի **(i)ā* վերջածանցը³⁸ Հայկական լեոնաշխարհին վերաբերող տեղանուններում խեթ. արձանագրությունները վերարտադրել են *-ija*, իսկ ուրարտ. և ասորեստ. Արձանագրությունները՝ *-ia* ձևով (հմմտ. *Alzija*, *Arnijia*, *Arzija*, *Maldija* և *Alia*, *Alluria*, *Alqania*, *Arşania* և այլն): Հ. Կարապետյանի կարծիքով՝ ուրարտական սեպագրությամբ *-իս* հայտնի վերջավորությամբ տեղանուններում առկա է նույն տեղանվանակերտ վերջածանցի սեռական հոլովաձևը՝ *-ia>-իս* //հայ. *-իս*³⁹: Ըստ այսմ, *Լսիս(ու)* տեղանվան ուղղական հոլովաձևը ունեցել է **Lushia* տեսքը: Թե՛ *-ia*, թե՛ *-իս* տեղանվանակերտ վերջածանցները հետագա հայերենում վերածվել է պարզ-*ի* հնչյունի. հմմտ. *Այլի*, *Գարբի*, *Գումայրի*, *Լոռի*, *Հաղի*, *Ուշի*, *Փարպի* և այլն: Ուշադրության է արժանի Անանուն պատմիչի այն հաղորդումը, որ Մասիսի ստորոտին է գտնվել որսատեղի և ձիարշավարան հանդիսացած *Փառնիկան* անունով դաշտը: Այստեղ անվան *փառ-* բաղադրիչի կապը վերոհիշյալ *փառ* բառի և *Փառնիսի* անվան հետ, կարծես, հուշում է, որ այն ձևված է եղել *Փառնիսի* նախատիպ արևի աստվածությանը (ձին, մանավանդ՝ թևավոր ձին, արևի աստծու սրբազան կենդանին և նրա խորհրդանիշն էր)⁴⁰:

4. Վանանդ և Երեւել տեղանունների ստուգաբանությունը

³⁴ Պետրոսյան Ս. Գ., Հայոց մեհենագրության ակունքներում, Գյումրի, 2008, էջ 39-40:

³⁵ «Երգարան», կազմեց Վ. Սամվելյան, Եր., 1949, էջ 334:

³⁶ Մալխասյանց Ս., Հայերեն բացատրական բառարան, հ. IV, Եր., 1945, էջ 468:

³⁷ Лисициан С., Старинные пляски и театральные представления армянского наорда, т. I, Ер., 1958, стр. 321-322.

³⁸ Ջահուկյան Գ., Հայոց լեզվի պատմություն. Նախագրային ժամանակաշրջան, Եր., 1987, էջ 231:

³⁹ Կարապետյան, էջ 125, 126, 264:

⁴⁰ Իսրայելյան Ս., Էրեբունի բերդ-քաղաքի պատմություն, Եր., 1971, էջ 72-73:

Մեպագր. Luša և Luhiu(ni) երկրանունների իմաստակիցն է նաև *Վանանդ* տեղանունը: Ըստ Մովսես Խորենացու՝ անվանակիր գավառը նախապես հայտնի է եղել «Անփայտ եւ Վերին Բասեան» անունով⁴¹: Ըստ երևութին, նախապես *Վանանդ* կոչվել է նույն Լուշան, իսկ հետո անունը տարածվել է ամբողջ գավառի վրա: Այս տեղանունը ևս բնիկ հայկական է՝ կազմված **վան-անդ* բաղադրիչներով: Վերջինս առկա է Հայկական լեռնաշխարհի ուրիշ տեղանուններում ևս (հմմտ. *Բագրեւանդ, Երանդ, Չարաւանդ*//սեպագր. *Zaranda, Հարանդ//Համբանդ, Մարանդ, Վարանդա*): Ըստ երևութին, այս տեղանվանակերտը ծագում է *-անդ* վերջածանցից՝ առկա *արանդ* «կոճղեզ», *արգանդ, դրանդ, եռանդ-ն, հիւանդ, արգաւանդ* բառերում: *Վանանդ* տեղանվան *վան-*ի առթիվ նկատենք, որ հայերենն ունի *վան* «բյուրեղ» բառը, որից էլ՝ *վանի* «բյուրեղյա», *վանակն* «բյուրեղացած կվարց, ապակու նման թափանցիկ մեծ բյուրեղ» (հմմտ. «Վանակնն մեծ պայծառ լուսաւորութեամբն»)՝⁴²: Վերջինիս առթիվ Անանիա Շիրակացին գրում է. «ասեն...եթէ *վանակն* պայծառ լուսաւորութեամբն եւ պաղպաղակն մաքուր եւ յստակ գեղեցկութեամբն՝ նման են *լուսաւորութեան* օդոյ եւ ջրոյ»⁴³: Այս նույն *վան* բառն է ընկած *Վանանդ* տեղանվան հիմքում⁴⁴: Եթե ուրարտ. Մեպագրությանը ավանդված ^{KUR}Biani երկրանունը, իրոք, վերաբերում է Վանանդին (Biani/*վան)⁴⁵, ապա այն պետք է համարել իմաստակիցը Luša/**Լուսայ* տեղանվան և նույնպես տեղադրել Վանանդի արևելքում:

Այս երկուսի իմաստակիցն է և նույն տարածքին է վերաբերում նաև *Երեւել* դաշտի անունը: 387թ. իրադարձությունների կապակցությամբ, երբ իրար դեմ էին ելել Հայոց երկու թագավորները՝ Արշակ III-ը և Խոսրով IV-ը, Մովսես Խորենացին հաղորդում է հետևյալը. «(Խոսրովը) ոչ այնչափ ատակեաց աճապարել՝ մինչև եզիտ զԱրշակ իջեալ յիւր սահմանս ի գաւառին Վանանդայ: Եւ պատահեն միմեանց ի դաշտին որ կոչի *Երեւել*. եւ տան պատերազմ ընդ միմեանս սաստիկ յոյժ»⁴⁶: Շիրակ գավառին սահմանակից դաշտի *Երեւել* <*երեւ-ել* անվան մեջ *երեւ-//արեւ*: Ինչպես հայտնի է հայերենում *p* և *n* բաղաձայններին նախորդող *ե* և *ա* ձայնավոր հնչյունները կարող էին հերթագայել՝ ստեղծելով

⁴¹ Խորենացի, Բ, գ:

⁴² ՀԱԲ, հ. IV, էջ 303: Մալխասյանց Ս., Հայերեն բացատրական բառարան, հ. IV, էջ 298: «Նոր բառգիրք հայկազեան լեզուի», հ. II, Եր., 1981, էջ 781:

⁴³ Անանիա Շիրակացի, Տիեզերագիտություն և տոմար, Եր., 1940, էջ 5:

⁴⁴ Պետրոսյան Լ.Ս., Արևի և լույսի պաշտամունքի արտացոլումները Վանանդում, ԳՊՄԻ հանրապետական գիտական նստաշրջանի զեկուցումների հիմնադրույթներ (Քրիստոնեության 1700-ամյակին նվիրված), Եր., 2001, էջ 31: Պետրոսյան Ս.Գ., Դասերը և եռադասության դրսևորումները հին Հայաստանում, Եր., 2006, էջ 98, 100:

⁴⁵ Գայսերյան Վ., Մեպագիր աղբյուրներում հանդիպող մի քանի երկրների տեղադրությունը, «Պատմա-բանասիրական հանդես», 1985, թիվ 1, էջ 213-214:

⁴⁶ Խորենացի, Գ, խգ:

այնպիսի տարբերակված զույգեր, ինչպիսիք են. *երագ/արագ, երասան-ակ/առասան-ակ, երաստ/արաստ, Երգինա/Արգինա, Երուանդ/Արուանդ*: Մեր կարծիքով, *արեւ* բառի տարբերակ **երեւ*-ը ևս պատկանել է հայոց լեզվի բառապաշարի «սրբագան» բառաշերտին: Երկու դեպքում էլ նկատի է առնվել լուսի պաշտամունքը, որն իր արտացոլումն է մասնավորապես գտել Սատուրն մոլորակին հին հայերի տված *Երեւակ* (<երեւ-ակ) անվան մեջ⁴⁷: Սրա բուն իմաստը «լուսատու» է եղել (հմմտ. *Լուսին<լոյս*-ին, այսինքն՝ «լուսատու»): *Երեւել* տեղանվան մեջ նախորդ անվան -ակ վերջածանցի փոխարեն **երեւ*- հիմքին հավելվել է -ել վերջածանցը (հմմտ. *անծեղ/անձեղ, բորեղ, գոռել, տառեղ-ն* բառերում առկա նույնական վերջածանցները): Անտարակոյս, Վանանդի այս դաշտը *Երեւել* կոչվել է լուսի պաշտամունքի ճանաչված կենտրոն լինելու պատճառով:

5. Կուլիա և Դուրուբանի տեղանունների ստուգաբանությունը

Արգիշտի I-ի արձանագրություններից մեկը՝ փորագրված Արագածի հյուսիս-արևմտյան լանջին գտնվող Սպանդարյան գյուղի հարավկողմի ձորում, պատմում է Կուլիա (Կուլիական) ցեղի նվաճման և նրա երկրի Դուրուբանի (URU Durubani) կենտրոնի գրավման մասին⁴⁸: Այս տեղանունը, մեր կարծիքով, արտացոլում է հ.-ե. *Dorubhān- նախաձևը, որից հայ. *տորբան* «վարդապետություն» բառը. հ.-ե. *d>հայ. տ, հ.-ե. *bh>հայ բ. և նախաշեշտ միջնաձայն *ու*-ի սղում⁴⁹: *Տորբան* բառի առթիվ Հ. Աճառյանը գրում է. «Պետք է կարծել, որ կազմված է *տոր* + *բան* «խոսք» բառերից, բայց անհայտ է *տոր*»⁵⁰: Վերջինս պետք է արմատակիցը լինի *տարգալ* «փայտե գդալ», *տոռն* «սանդի կոթ», *տորգ* «ծանր բաներ վերցնելու գլանաձև փայտ» և այլն, մանավանդ *տրամ* «ամուր, պինդ, հաստատուն» բառերի⁵¹: Ըստ Հ. Աճառյանի՝ *տրամ*-ը «բուն նշանակում է «փայտի պես ամուր» (նրանից ունենք *տրամաբանություն* բառը՝ արդեն հոգևոր նշանակությամբ) և ծագում է հ.-ե. *dru-rā /-mo- «ամուր» նախաձևից⁵²: Իմաստային զարգացման նույնպիսի ուղիներ են անցել նաև մեր բառերի արմատակիցները ազգակից լեզուներում. հմմտ. հին հնդկ. dhruvā «հաստատուն, ապահով, տևական», պարս. durust «ողջ, ամբողջ, ուժեղ, առողջ», հին իռլ. derb «ապահով, վստահ» անգլ.-սաքս. trēow «հավատարմություն, ճշմարտություն, հավատք»,

⁴⁷ Ըստ երևույթին, Երևակ լուսատուի անունը արեւ բառի նման ծագում է հ.-ե. *reu- արմատից, այլ ոչ թե, ընդունված կարծիքի համաձայն (ՀԱԲ, հ. II, էջ 46-47, 49), երեւի/երեւալ և երես բառերի նման՝ հ.-ե. *prep- արմատից:

⁴⁸ YKH, № 132.

⁴⁹ Պետրոսյան Ս.Գ., Պետրոսյան Լ.Ս., Սեպագրային DURUBANI/հայերեն տորբան, ՎՊՄԻ հանրապետական գիտաժողովի նյութեր, Վանաձոր, 2009, էջ 65-69:

⁵⁰ ՀԱԲ, հ. IV, էջ 422:

⁵¹ Նույն տեղում, էջ 384, 421, 422, 434:

⁵² Նույն տեղում, էջ 433-434:

պրուս. drwis «հավատք», կելտ. druides «քրմեր» կայլն⁵³: *Տորբան* < doru-bhān բառի երկրորդ բաղադրիչը կս հայերենի հնդեվրոպական միջուկին պատկանող բառերից է ծագած հ.-ե. *bhā «խոսել»-ից. հմմտ. հուն. φάμα «ձայն, աստվածների հայտարարությունը», լատին. fabula «խոսք, զրույց, առակ», գերմ. bannen «կախարդական խոսքով կապել», հին սլավ. balija «կախարդ»⁵⁴: Այսպիսով, *տորբան* «վարդապետություն» բառի բուն նշանակությունը եղել է «հաստատուն խոսքով (մարդ)», «հավատի խոսքը (կրող)»: Ըստ այսմ, պետք է ենթադրել, որ *տորբան* (<տորուբան<*doru-bhān) կոչվել է կուլիա/կուլիական ցեղի քուրմ-արքան, որից էլ նրա նստավայրի սեպագրային Durubani անունը:

Իսկ ի՞նչ պաշտամունքի կենտրոն էր Արագածի լանջի այս բնակավայրը, որի իրագործողը եղել է տեղական քուրմ-արքան: Կարծում ենք՝ դա եղել է լուսի պաշտամունքը: Այս տեսանկյունից ուշադրության են արժանի Լուսավորչի մշտավառ կանթեղի մասին մեզ հասած ավանդազրույցները: Հնագույն Շիրակի բնակիչների համար Արագածը լուսի աղբյուր էր: Ավանդազրույցներից մեկի համաձայն՝ «Երբ Գրիգոր Լուսավորիչը աղոթելիս է լինում Արագած լեռան կատարին, նրան գիշերը լուսավորում է մի կանթեղ, անպարան (առանց պարանի) կախված երկնքից: Ասում են, թե այդ կանթեղը այժմ էլ կա, միայն տեսանելի է արժանավորների»⁵⁵: Մեկ ուրիշ ավանդություն *Սպարան* գավառի անվան առաջացումը բացատրում է Լուսավորչի արցունքներով լի կանթեղի՝ երկնքից *անսպարան* կախված լինելու հանգամանքով⁵⁶: Որ վերջին ավանդությունը նախնադարից եկած ակունքներ է ունեցել, հուշում է Սպարան գավառի հին հայկ *Նիգ* (նաև *Նիգատուն*) անունը, որովհետև հին հայերենում *Նիգ* բառը ոչ միայն «լինգ» էր նշանակում, այլև «ձողաձև կամ գերանաձև լույս, որ երևում է ամպերում»⁵⁷: Ավելացնենք, որ Արագածի սրբազան լուսի համբավը համահայկական ընդգրկում է ունեցել: Այդ իսկ պատճառով է լեռան անունը հանդես գալիս հին հայկական տոմարում՝ որպես 20-րդ օրվա անուն: Բնականաբար, ամսի այդ օրը ձոնված է եղել լեռան և նրա սրբազան լուսի պաշտամունքին:

6. Ուիշուշի երկրի տեղորոշումը և անվան ստուգաբանությունը

Իր Խորխոռյան տարեգրության մեջ Արգիշտի I-ը Էրեբունի ամրոցի հիմնադրումը նկարագրելուց հետո պատմում է դեպի հյուսիս արշավանքի մասին. «Հենց այդ նույն տարում արշավեցի Ուրուրդա (երկրի) վրա: Իշ[●] լուրուրա ար-

⁵³ Նույն տեղում, էջ 434: Гамкрелидзе Т., Иванов В., Индоевропейский язык и индоевропейцы, т. I-II, Тб., 1984, т. II, стр. 613.

⁵⁴ ՀԱԲ, հ. IV, էջ 422:

⁵⁵ Ղանալանյան Ա., Ավանդապատում, Եր., 1969, էջ 368:

⁵⁶ Նույն տեղում, էջ 346, թիվ 384^ա:

⁵⁷ Պետրոսյան Օ.Ս., Արագածը ջրի և լուսի զուգորդված պաշտամունքի վայր, «ԳՊՄԻ հանրապետական գիտական նստաշրջանի զեկուցումների հիմնադրույթներ», Գյումրի, 1999, էջ 105-106:

քային (և) Ուբուրդա-ալխե երկիրն իր գրավեցի: Երդուա քաղաքն արքայական գրավեցի, Վիշուշե (երկիրը) հպատակեցրի (?): Մարդ, կին հանեցի այնտեղից: Արշավեցի Խախիա (երկրի) վրա»: Ամրոցները ավերեցի, քաղաքներն այրեցի»⁵⁸: Լույսի պաշտամունքի ևս մեկ կենտրոն եղել է հիշյալ երեք ցեղային երկրներից Վիշուշին՝ ^{KUR}Միսուսի: Նրանց տեղադրության վերաբերյալ տարբեր տեսակետներ են առաջադրվել: Ըստ Ն. Հարությունյանի՝ դրանք գտնվել են Արևմտյան Եփրատի վերնագավառում, իսկ դրանցից Խախիան իր անվամբ նույնանում է Եկեղեաց գավառի Խախ բնակավայրի (Երզնկայի մոտակայքում) հետ⁵⁹: Դրանց տեղորոշումը Արևմտյան Եփրատի վերնագավառում կամ Ասորեստանի մոտերքում (ինչպես կարծում է Գր.Ղափանցյանը)⁶⁰ հակասում է Արգիշտի I-ի հաղորդմանը, որովհետև այնտեղ խոսքը Էթիունիի երկրների մասին է: Ըստ այսմ, իրավացի է Հ.Կարազոյանը, որն այդ երկրներից առաջինի համար ծանոթագրում է. «Ուբուրդա-երկիր հետագայի Գուգարքի Տաշիր գավառում»⁶¹:

Եթե Ուբուրդան Տաշիրն է, ապա Վիշուշի և Խախիա երկրները գտնվելու էին նրանից արևելք, իսկ Խախիան՝ որպես արշավանքի ծայրակետ, ավելի արևելք, քան Վիշուշին: ^{KUR}Hahia երկրանունը, մեր կարծիքով, ուղղակի կապի մեջ է Հախում լեռնանվան և գետանվան հետ: Hahia < *Hah-ia, իսկ Հախում < *Հախ-ում: Ի նկատի առնենք, որ Hahia-ն կարող էր և Հախիա հնչել, որովհետև սեպագր. h//h, ju: Ինչպես վերևում տեսանք -ia տեղանվանակերտը հանդիպում է ուրարտական դարաշրջանի բազմաթիվ տեղանուններում և իր ժառանգորդն ունի ի դեմս *Լոռի, Կարբի, Կումայրի, Փարպի* և այլ տեղանունների -ի վերջածանցի: Hahia երկրանվան, Հախում լեռնանվան և գետանվան հիմքերի նույնությունը հուշում է, որ անվանակիր սեպագրային երկիրը պետք է գտնվեր Հախում լեռնաշղթայի և գետի տարածքում՝ Հախում և Աղստև գետերի ջրբաժանի շրջանը ներառյալ:

Ուբուրդայի և Խախիայի տեղադրությունների ճշտումով հնարավոր է դառնում ճշտելու նաև նրանց միջև գտնված Վիշուշի//^{KUR}Միսուսի երկրի տեղադրությունը, որն այդպիսով ընդգրկելու էր Սևանա լիճը հյուսիս-արևելքից եզերող Արեգունի լեռնաշղթան: Ըստ երևույթին, Էրեբունիի հիմնադրումից հետո ուրարտական բանակը ներկայիս Աշտարակ-Ապարան-Սպիտակ ուղղությամբ ներխուժել էր Ուբուրդա (Տաշիր), որտեղից Վանաձոր-Դիլիջան ուղղությամբ հայտնվել էր Վիշուշիում, ապա՝ Իջևան-Բերդ ուղղությամբ մտել Խախիա (հե-

⁵⁸ УКН, № 127, II, ЗԺՊՔ, հ. I, էջ 60:

⁵⁹ ТУ, стр.196, 204, 227-228.

⁶⁰ Капанцян Гр., Историко-лингвистические работы к начальной истории армян. Древняя Малая Азия, Ер., 1956, стр. 111.

⁶¹ ЗԺՊՔ, հ. I, էջ 67, ծան. 27:

տագա Sուս//Sուս-քուստակ գավառի տարածք)⁶²: Արեգունի լեռնանունը բաղկացած է *Արեգ* «արև» արմատից և *-ունի* վերջածանցից (հմմտ. *արքունի, ծերունի, տիկնունի*): Լեռնանվան իմաստը «արեգային, արևային» է: Մեր կարծիքով, *Արեգունի*-ն իմաստային կրկնությունն է անվանակիր լեռնաշղթան ընդգրկած երկրի սեպագիր անվան: Միսսի//**Uisos*-**ues*-*os* հնդեվրոպական ծագումով բաղադրիչներից բաղկացած այս երկրանվան առթիվ հիշենք, որ սեպագիր ձևն՝ սովորաբար վերարտադրել է *s* հնչյունը, իսկ սձ հնչյունակապակցության դեպքում պետք է ի նկատի առնել *os* արտասանությունը (*Մսթա*//*Sոսպ*-այ, *Uškia*//* Ոսկի, «Ոսկյա»):

Միսսի երկրանվան *Uis-* բաղադրիչի **ues*- արտասանությունը թույլ է տալիս նրա հիմքում տեսնել *h*-ե. **ues*- «լուսավորել, այրել» արմատը: Այս արմատով կազմված և լուսավոր երևույթներ ու աստվածություններ նշող բառեր կան հնդեվրոպական մի շարք լեզուներում: Դրանցից են հին հնդկ. *vāsara* «առավոտյան», «օր», *avasran* «նրանք լուսավորեցին», հուն. *έως* «արշալույս, լուսաբաց», «օր», *Ηώς* «Արշալույսի դիցուհին», լատին. *Vesta* «օջախի դիցուհին» և այլն⁶³: Երկրանվան *-us*//**-os*- բաղադրիչը ծագում է *h*-ե. *(*H*)*ons*- նախաձևից: Սրանում *s*-ին նախորդած ռնգային հնչյունի անկման համար հմմտ. *w-ufu* < *h*-ե. **mens-*, *ufu* < *h*-ե. **mēms-*, *nu* < *h*-ե. **oms*-⁶⁴ : Հ.-ե. *(*H*)*ons*-ի *(*H*)*ns*- տարբերակը (ստորին ձայնադարձ) ևս իր ժառանգ բառերն ունի հնդեվրոպական ազգակից լեզուներում. հմմտ. հայ. աստուած (<**au*-տիւ-ած), իւեթ. *hāšsu* «արքա», ավեստ. *ahū* «տեր», *ahūra* «տիրակալ, տեր, իշխան» (հմմտ. *Ahūra-Mazda* «Արամազդ աստված» բառացի «Տեր իմաստուն»), հին հնդկ. *ásura* «աստված», «ոգի, բարձրագույն էակ», հին իռլ. *áss* «աստված», գոթ. *ansēs* «կիսաաստվածներ», հին անգլ. *ós* «աստված»⁶⁵:

Եթե սեպագրային Միսսի անվան մեջ լույսի անձնավորում աստծու **Ues*-*os*- «Լույս տեր» կամ «Լույսի տեր» մակդիրն է, ապա կարելի է ենթադրել, թե ^{KUR}Միսսի երկրանունը նշանակել է «Լույս(ի) տիրոջ երկիր», իսկ այս երկրանվան իմաստակից Արեգունի (<Արեգ-ունի) լեռնաշղթայի անունը ցույց է տալիս, որ խոսքը հայոց հնագույն Արեգ աստծո մասին է: Նրան էր ձոնված և նրա *Արեգ* անունն էր կրում Հայկական տոմարի յուրաքանչյուր ամսի և յուրաքանչյուր տարվա առաջին օրը, ուրեմն, նաև ժամանակի հաշվարկն սկզբնավորած առա-

⁶² Հմմտ. «Աշխարհացոյց», էջ 82, 86, 105, 109, 111:

⁶³ *Гамкредидзе Т., Иванов В.*, նշվ. աշխ., հ. I, էջ 223:

⁶⁴ *Հյուրջման Հ.*, Հայագիտական ուսումնասիրություններ, Եր., 1990, էջ 57: ՀԱԲ, հ. I, էջ 157-158, հ. III, էջ 323-324, 609:

⁶⁵ *Гамкредидзе Т., Иванов В.*, նշվ. աշխ., հ. II, էջ 750: *Պետրոսյան Ս.*, *Աս արմատով բառերի պաշտամունքային բնույթի մասին, ՇՊՄԺ հանրապետական 7-րդ գիտ. նստաշրջանի նյութեր, Գյումրի, 2007, էջ 60-66:

ջին օրը: Իսկ այս օրն սկսվել է լույսով և լույսի կողմից խավարի հաղթահարումով ու վանումով: Ըստ այդմ, *Արեգ* դիցանվանը վերագրվել են հետևյալ իմաստները. «*Արեգ-մեծ, կամ առաւել, կամ լոյս, կամ խիստ, կամ քաջ*» և «*Արեգ-խիստ, կամ քաջ*»⁶⁶:

Քաջ-ը հեթանոսական Վահագն աստծու մակդիրն էր, իսկ նրա նախատիպը նույն Արեգ աստվածն էր, որի անունը անագրամայով հանդես է գալիս հետագայում Վահագնին վերագրված հայտնի օրհներգում («եւ աչկունք էին *արեգակունք*»/«և աչիկներն էին *Արեգի աչքեր*»): Միջնադարյան «Բառգիրք հայոց»-ում *արեգակն* բառին տրված է հետևյալ մեկնաբանությունները. «*Արեգակն*-լուսով, կամ լուսոյ ակն, կամ լուսով լցեալ, կամ մեծ ակն»⁶⁷: Հ. Աճառյանը նկատել էր տալիս, որ «Ընտիր հայերենի մեջ արեգակն և արև նշանակության կողմից զանազանվում են նրանով, որ *արեգակն* աստղն է, իսկ *արև* նրա լույսը»⁶⁸: Արեգակի և լույսի փախկապակցությունը առավել հստակ ձևակերպել է Լեոն: Նա գրում է. «Լույսը անձնավորում էր մի աստվածության մեջ, որ կոչվում էր *Արփի, Արեգ* կամ *Արև*, և ցերեկային լուսատու գունդն էլ՝ այդ աստվածության մարմնացումը, ընդունվում էր իբրև նրա աչք, և կոչվում էր *Արեգակն* կամ *Արևակն*»⁶⁹:

Եգրահանգում. Էթիունիի տարածքից բերված քննարկվող տեղանունների շարքը՝ Luša, Luhiu(ni), Durubani, Uišušī, Վանանդ, Երեւել, Փառախոտ/Փառոխոտ, Փառական, Նիգ, *Արեգունի*, խոսում է նրանում լույսի պաշտամունքի երբեմնի գոյության մասին, իսկ դրանց ստուգաբանություններով հաստատվում է Էթիունիի հնդեվրոպական-հայկական բնույթը:

ЭТИУНСКИЕ МЕСТА ПОЧЕТАНИЯ СВЕТА

Петросян С.Г.

Ключевые слова: племя, страна, союзник, Этиуни, Урарту, локализация, этноним, топоним, этимология, солнечный.

Царь Урарту Ишпуини и царевич Менуа в двух клинописных надписях рассказывают о нападении трех этиунских племен - витирухи, луша, катарза на Урарту. Эти племена были соседями Эриахи с запада. Из этих племен луша и их страна занимали центральную часть исторического Вананда. В основе этноним-

⁶⁶ Բառգիրք հայոց, Քննական բնագիրը, առաջաբանը և ծանոթագրությունները Հ.Մ. Ամալյանի, Եր., 1975, էջ 37, 371, ծան. 892:

⁶⁷ Բառգիրք հայոց, էջ 37:

⁶⁸ ՀԱԲ, հ. I, էջ 311:

⁶⁹ Լեո, Երկեր, հ. I, Եր., 1966, էջ 269:

топонима Luša//Lusa лежит армянское слово индоевропейского происхождения լոյս «լուս» (свет).

Корень топонима Luša//Lusa наличествует в топониме Luhiuni, центрального населенного пункта этиунской страны Эрикуахи.

Смысловые параллели топонима Luša представляли имена гавара Вананд и долины Еревел. Для первого ср.: клинописное название страны Biani и арм. слово ванакн (վանակն) - "кристаллизованный кварц, большой кристалл, похожий на стекло". А для второго ср.- арм. слово արև (арев) "солнце" и корень երև (ерев, <и.-е. *reu-) в имени Երեւակ (Еревак – планета Сатурн).

“Ниг” - название древнеармянского гавара, который занимал северо-восточные склоны горы Арагац и его подгорья. Слово “ниг” в грабаре обозначает не только "лом", но и "свет, показавшийся в облаках". По преданию, на вершине Арагаца находилась вечносветящая лампа Григора Просветителя. По имени жрецов, которые осуществляли почитание языческого прототипа этой вечносветящей лампы, по нашему мнению, и назван населенный пункт Dugubani на западном склоне Арагаца.

В 782 г. до н. э. царь Урарту Аргишти I после основания Эребуни совершил поход на север и у озера Севан покорил страны Убурда, Вишуши, Хахия. Страна Uišušī//Uisusi локализуется на нынешнем Арегунийском хребте и его окрестностях. Ср.: Арег-уни արեգակն (арегакн) - "солнце". В основе имени Uis-us-i, по нашему мнению, лежит и.-е. прототип *ues-os- в смысле "повелитель света".

ETIUNI PLACES OF LIGHT CULT

Petrosyan S.G.

Key words: *tribe, country, alley, Etiuni, Urartu, localization, ethnonym, toponym, etymology, solar.*

Ishpuini King of Urartu (825-810 BC) and Prince Menua in their two cuneiform inscriptions inform us about the back attack of three Etiun tribes - Vitirukhi, Lusha, Katarza. Those tribes were the resident tribes of Eriakhi's neighbouring western districts. Of the mentioned tribes Lusha and their country occupied the central part of historical Vanand. The bases of Luša//Lusa ethnonym-toponym is of the Armenian word of Indo-European origin լոյս "light". The root of the toponym Luša//Lusa is present in the toponym Luhiuni, the central settlement of the Etiunian country of Erikuahi.

The meaningful parallels of the toponym Luša were represented by the names of the Vanand province name and the valley of Yerevel. For the first cuneiform name comp. of the country Biani and Armenian word vanakn (վանակն) "crystallized quartz, a large crystal is like glass" and for the second cf. Armenian word արև (arev) "the sun" and the root երև (yerev, <I. -E. *reu-) in the name Երեւակ (the Saturn planet).

Nig is the name of the ancient Armenians who occupied the northeastern slopes of Mount Aragats and its foothills. The word Nig in the old Armenian means not only “crow”, but also “light appeared in the clouds”. According to the legend, on the top of Aragats there was an everlasting lamp of Grigor Loosavorich (the Illuminator). By the name of the priests who venerated the pagan prototype of this ever-luminous lamp, in our opinion, the settlement Durubani on the western slope of Aragats was named.

In 782 BC Argishti I, the King of Urartu, after founding Erebuni, made a trip to the north from Lake Sevan and conquered the countries of Uburda, Vishushi, and Khakhia. The country of Uisusi/Uisusi is located on the present Areguni Range and its surroundings: Սրէզ -նւի, comp. սրէզուլն (“sun”). The name Uis-us-i, in our opinion, is based on I.-E. prototype * ues-os- in the sense of “Lord of the Light”.

References

1. Acharyan H., Hayeren armatakan bararan, h. I, Yer., 1971, h. II. Yer., 1973, h. IV, Yer., 1979 (in Armenian).
2. Adonts N., hayastani patmutyun. Akunqnerə X-VI dd. m.t.a., Yer., 1972 (In Armenian).
3. Anania Shirakatsi, Tiezeragitutyun yev tomar, Yer., 1940 (in Armenian).
4. Arutyunyan N.V., Toponimika Urartu, Yer., 1985 (In Russian).
5. «Bargirq hayots», Qnnakan bnagirə, arajabanə yev tsanotagrutyunnerə H.M. Amalyani, Yer., 1975 (in Armenian).
6. Dyakonov I.M., Predistoria armyanskogo naroda. Istoriya Armyanskogo Nagorya s 1500-500 g. do n. e., Yer., 1968 (In Russian).
7. Gamkrelidze T.V., Ivanov V.V., Indoevropeskiy yazik i indoevropeytsi, t. I-II, Tb., 1984 (In Russian).
8. Gayseryan V., Sepagir aghbyumerum handipogh mi qani yerkrneri teghadrutyunə// «Patmbanasirakan hands», 1985, tiv 1 (in Armenian).
9. Ghanalanyan A., Avandapatum, Yer., 1969 (in Armenian).
10. «Hay zhoghovrdi patmutyan qrestomatia», h. I., Yer., 1981 (in Armenian).
11. Hmayakyan S.G., Etiune erkirə yev «Viterukhe-Lusha-Qatarza» dashnutyunə// «Shiraki patmamshakutayin zharangutyunə», hanrapetakan yerrord gitazhoghovi zekutsumneri himnadrutner, Gyumri, 1998 (in Armenian).
12. Hyubshman H., Hayagitakan usumnasirutyunner, Yer., 1990 (in Armenian).
13. Israyelyan M., Erebuni berd-qaghaqi patmutyun, Yer., 1971 (in Armenian).
14. Jahukyan G.B., hayots lezvi patmutyun. Nakhagrayin zhamanakashrjan, Yer., 1987 (in Armenian).
15. Jahukyan G.B., Ocherki po istorii dopismennogo perioda armyanskogo yazika, Yer., 1967 (In Russian).
16. Kapantsyan G.A., Istoriko-lingvisticheskie raboti k nachalnoy istorii armyan. Drevnaya Malaya Aziya, Yer., 1956 (In Russian).

17. Karageocean Y., Sepagir teghanunner (Ayraratum ev harakits nahangnerum), «Haykakan lernashkharhə sepagir aghbyurnerum», h. I, girq 1, Yer., 1998 (in Armenian).
18. Lisitsyan S., Starinniye plyaski i teatralniye predstavleniya armyanskogo naroda, t. I, Yer., 1958 (In Russian).
19. Manandyan H., Hin Hayastani glkavor chanaparhnerə əst Pevtingeryan qartezi, Yer., 1936 (in Armenian).
20. Malkhasyanc S., Hayeren batsatrakan bararan, h. IV, Yer., 1944 (in Armenian).
21. Melikishvili G.A., K istorii drevney Gruzii, Tb., 1959 (In Russian).
22. Melikishvili G.A., Urartskie klinobraznie nadpisi, M., 1960 (In Russian).
23. «Movsesi Khorenacvoy patmutyun Hayots», Yer., 1981 (in Armenian).
24. «Nor bargirq haykazean lezui», Yerkasirutyun H.G. Avetiqaean, H. Kh. Siurmelean, H. M. Avgerean, Yer., 1981(in Armenian).
25. Petrosyan S. G., *As armtov bareri pashtamunqayin bnuyti masin// «ShPMZh hanrapetakan 7-rd git. nstashrjani nyuter», Gyumri, 2007 (in Armenian).
26. Petrosyan S. G., Daserə yev yeradasutyun drsevorunnerə hin Hayastanum, Yer., 2006 (in Armenian).
27. Petrosyan S. G., Hayots mehenagrutyun akunqnerum, Gyumri, 2008 (in Armenian).
28. Petrosyan S. G., Sepagrayin UITIRUHI yerkri yev nra teghoroshman masin// HH GAA ShHH kentroni «Git. ashkhatutyunner», h. XXI, Gyumri, 2018 (in Armenian).
29. Petrosyan S. G., Vaghurartakan ditsarani glkavor eryakə (Ovqer en Budini havaqatsui əntsayakan titeghin patkervats astvatsnerə)// HH GAA ShHH kentroni «Gitakan ashkhatutyunner», Gyumri, 2005 (in Armenian).
30. Petrosyan S. G., Petrosyan L.S., Ararati, Aragatsi yev motaka lernerı sepagrayin anunnerı shurj// HH GAA ShHH kentroni «Git. ashkhatutyunner», h. XII, Yer., 2009 (in Armenian).
31. Petrosyan S. G., Petrosyan L.S., Sepagrayin DURUBANI/hayeren turban //«VPMI hanrapetakan gitazhoghovi nyuter», Vanadzor, 2009 (in Armenian).
32. Petrosyan Ts. S., Aragatsə jri yev luysi zugordvats pashtamunqi vayr// «GPMI hanrapetakan gitakan nstashrjani zekutsumnerı himnadruytner», Gyumri, 1999 (in Armenian).
33. «Sebeosi episkoposi patmutyun», Yer., 1939 (in Armenian).
34. Yeremyan S. T., Hayastanə əst «Ashkharhatsoyts»-i, Yer., 1963 (in Armenian).
35. «Yergaran», kazmets Samvelyan V., Yer., 1949 (in Armenian).

Ընդունվել է՝ 21.10. 2019

Գրախոսվել է՝ 02.11. 2019

Հանձնվել է տպ՝ 21.11. 2019

Տեղեկություններ հեղինակի մասին

Սարգիս ՊԵՏՐՈՍՅԱՆ՝ պատմ. գիտ. դոկտոր,

ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների

կենտրոնի առաջատար գիտաշխատող, էլ. փոստ՝ vahe1996@mail.ru

ՀՏԴ՝ 93.94.

ՀԱՅ-ՄԱՐԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՐՈՇ

ԽՆԴԻՐՆԵՐԻ ՇՈՒՐՁ

Ռուսլան Ցականյան

ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտ

Բանալի բառեր՝ Հայաստան, Մարաստան, Մովսես Խորենացի, Քսենոփոն, Պարույր, Տիգրան Երվանդյան, Կյուրոս, Հերոդոտոս, պատանդ, թագավոր:

Այն, որ պատմահայր Խորենացին եղել է հունաբան դպրոցի ազդեցության ներքո և ձեռքի տակ ունեցել Հերոդոտոսի ու Քսենոփոնի երկերը, հայտնի փաստ է: Պարսից տերության ապագա հիմնադիր Կյուրոս Մեծի ու Տիգրան Հայկազնի /Երվանդունու/ խորենացիական մտերմական կապը գալիս է Քսենոփոնի «Կյուրոսպեդիա» երկից, ըստ որի՝ հայոց արքա Տիգրանը Մարաստանի արքա Աստիագեսի պալատում է անցկացրել իր պատանեկությունը և եղել է Կյուրոսի հասակակիցն ու զինակիցը: Մարաստանում հայոց թագաժառանգի գտնվելու փաստը վկայում է նրա պատանդության մասին, ինչից էլ կարելի է ենթադրել, որ պատմական ինչ-որ ժամանակ հայ-մարական բախում է տեղի ունեցել, որի արդյունքում հայոց արքան **որպես պատանդ** Մարաստան է ուղարկել իր գահաժառանգ որդուն: Միայն այս կերպ կարելի է հասկանալ հայոց արքայազնի ներկայությունը հակառակորդ պետությունում:

Նախաբան. Ասորեստանի ու Բիայնիլի-Ուրարտուի անկումից հետո Մերձավոր Արևելքում տեղի ունեցավ տարածաշրջանի քաղաքական քարտեզի վերաձևում: Պատմության թատերաբեմում ի հայտ եկան երկու նոր գերիզոր ուժեր՝ Քաղդեական Բաբելոնիան և Մարաստանը: Հայկական լեռնաշխարհի հարավ-արևելքն ու արևելքը հայտնվեցին Մարաստանի ազդեցության ոլորտում:

Մ.թ.ա. VII դարի վերջին և VI դարի առաջին կեսում, հայ-մարական հարաբերությունների պատմությունը բավականին բարդ ու հակասական է: Եվ պատահական չէ, որ քննարկվող հիմնախնդիրը երկար տարիներ եղել է հայա-

գիտության, արևելագիտության և ընդհանրապես Հին Հայաստանի պատմության հիմնահարցերով զբաղվող մասնագետների հետաքրքրության ոլորտում: Հիմնախնդիրը կարելի է բնութագրել որպես հայոց պատմության *մթին կամ խավարի դարաշրջան*: Եվ չնայած այն հանգամանքին, որ ժամանակաշրջանի էթնոքաղաքական իրավիճակը շարունակում է մնալ առեղծվածային, միննույն ժամանակ այն չի դադարում արդիական լինելուց:

Հայերի և մարերի մշակութային շփման նախնական գոտին, ըստ երևույթին, եղել են Զագրոսյան լեռները, և ելնելով նրանց աշխարհագրական դիրքից՝ այդ հարաբերությունները բնական պիտի համարել: Մարական պետության (համադաշնության) առաջացումով այդ հարաբերությունները, ավելի ակտիվացան: Հայերի ու մարերի միջև քաղաքական հարաբերությունների սկիզբ է համարվում մ.թ.ա. VII դարի վերջին քառորդը:

Հայ-մարական առաջին հիշատակությունը պատկանում է պատմահայր Մովսես Խորենացուն: Վերջինս արձանագրում է՝ Պարույրը՝ «որդի Մկայորդույ», հայկական ուժերի գլուխն անցած, մարա-բաբելական միացյալ զորքերի հետ համատեղ, ակտիվ մասնակցություն է ցուցաբերել Ասորեստանի դեմ պայքարում և շուտով հանդես բերած իր պատրաստակամության դիմաց Մարաստանի թագավոր Կիաքսարից (մ.թ.ա. 625-585թթ.) ստանում է «թագավորության պատիվ և ձև»՝

«Վերջին սոցա, որք առ Ասորեստանեայց թագաւորութեամբն ... զմերս ասեմ Պարոյր առ Մարդանապալլաւ, որ ոչ փոքր ինչ օգնականութիւն տուեալ գտանի Վարբակայ Մարի, բառնալով զթագաւորութիւնն ի Մարդանապալլայ:

... Յինքն եւ զբաջն մեր նախարար յանգուցանէ զՊարոյր, թագաւորութեան շուք եւ ձեւ նմա խոստանալով»¹:

Ինչպես երևում է, պատմահայր Խորենացին հայկական պետության առաջացումը կապում է մարերի հետ: Սակայն պատմահայրը լռում է այդ հարաբերություններին նախորդող ժամանակահատվածի վերաբերյալ:

Բացի մարերին ռազմական օգնություն ցուցաբերելու վերաբերյալ հիշատակությունից՝ մենք անտեղյակ ենք Պարույրի թագադրման հանգամանքների ու պարտավորությունների մասին: Սակայն փաստ է, որ թագադրվող կողմը՝ այս պարագայում Պարույրը, վասալական կախման մեջ պիտի գտնվեր: Վերջինս էլ ենթադրում էր ոչ միայն ռազմական աջակցություն, այլև ամենամյա հարկ ու տուրք:

¹ Մովսիսի Խորենացույ Պատմութիւն Հայոց, աշխատութեամբ Մ. Աբեղեան եւ Ս. Յարութիւնեան, Տփղիս, 1913, Ա, ԻԱ/ԻԲ:

Պարույրից հետո, մինչև Տիգրան Երվանդյանի կամ Հայկազնի իշխանության ժամանակահատվածի հայ-մարական հարաբերությունների մասին պատմահայրը լռում է: Փոխհարաբերությունների երկրորդ փուլը սկսվում և ավարտվում է Տիգրան Հայկազնի ժամանակաշրջանով²: Սակայն այդ հարաբերությունների մասին առավելապես տեղեկություններ է հաղորդում Քսենոփոնն իր «Կյուրոպեդիա» երկում: Քսենոփոնի հաղորդումներից այս պարագայում՝ առավելապես հետաքրքիր են մինչ Տիգրանյան ժամանակահատվածին վերաբերող հիշատակությունները:

Հայ-մարական փոխհարաբերությունների վերաբերյալ մեր հիմնական տեղեկությունները պատմահայր Խորենացուց և Քսենոփոնի վերոհիշյալ երկից են: Ըստ Քսենոփոնի հիշատակությունների՝ հայոց թագավորը, որի անունը պատմիչը չի հիշատակում, ինչ-որ ժամանակ կռվել է Մարաստանի արքա Աստյուազեսի (Աժդահակ) (մ.թ.ա. 585-550 թթ.) դեմ և պարտվելով պարտավորվել է տուրք վճարել, ամրություններ չունենալ և պատերազմի պարագայում զորք տրամադրել մարերին³: Սակայն պետք է արձանագրել, որ մենք չենք տիրապետում մեկ այլ աղբյուրի, ըստ որի հնարավոր կլիներ բացահայտել այդ պատերազմի պատճառներն ու իսկությունը: Ինչևէ, մեկ այլ տեղ նույն Քսենոփոնը հայտնում է, որ արմեն թագավորը առաջ դաշնակից ու հպատակ էր մարերին⁴, որն այժմ հրաժարվում է զորք ուղարկել ու տուրք վճարել, ինչը պարտավոր էր⁵:

Հույն հեղինակը նշում է նաև արմենների թագավորի⁶ կողմից մարերին վճարվող տուրքի չափը՝ հիսուն տաղանդ⁷: Հայաստանի արքան, ըստ Քսենոփոնի հիշատակության, պատերազմի պարագայում պարտավոր էր նաև ռազմական օգնություն ցուցաբերել՝ 4 հազար հեծյալ և 2 բյուր հետևակ⁸: Ընդհանուր առմամբ՝ Հայաստանի տիրակալն ուներ մոտ 8 հազար հեծելազոր և մոտ 4 բյուր հետևակ, իսկ հարստությունը կազմում էր ավելի քան 3 հազար տաղանդ⁹:

² Մովսիսի Խորենացու Պատմություն Հայոց, Ա, ԻԴ/ԻԵ-Լ/ԼԱ:

³ Քսենոփոն, Կյուրոպեդիա, թարգմանությունը հունարեն բնագրից և ծանոթագրությունները՝ Ս. Մ. Կրկյաշարյանի, Եր., 2000, III, I: 10: Հմնտ. նաև՝ Ксенофонт, Киропедия, изд. под. В. Г. Бороухович и Э. Д. Фролов, М., 1976, III, I: 10:

⁴ Քսենոփոն, II, IV: 22:

⁵ Քսենոփոն, II, IV: 12:

⁶ Հայ պատմագրության մեջ ընդունված տեսակետի համաձայն՝ Երվանդ Սակավակյացը: Վերջինիս վերաբերյալ առկա է բազմաթիվ մասնագիտական գրականություն, որի քննությունը, սակայն, դուրս է մեր ուսումնասիրության շրջանակներից:

⁷ Քսենոփոն, III, I: 34: Ըստ Քսենոփոնի երկի ռուսերեն թարգմանության հեղինակների՝ այստեղ ամենայն հավանականությամբ խոսքը գնում է ատտիկյան տաղանդի մասին, որը կազմում էր 26.2 կգ. (26.2x50=1 տ. 310 կգ. արծաթ)՝ Ксенофонт, Киропедия, стр. 295 прим. 7, հմնտ. նաև Մանանդյան Հ., Երկեր, հատոր Ա., Եր., 1977, էջ 44, ծնթ. 1:

⁸ Քսենոփոն, II, I: 6:

⁹ Քսենոփոն, III, I: 33:

Հետաքրքիր է նաև, որ ըստ Հերոդոտոսի, շուրջ մեկ դար հետո Պարսից Աքեմենյան տերության ժամանակահատվածում Հայաստանից գանձվում էր 400 տաղանդ¹⁰, իսկ ըստ Ստրաբոնի՝ հայերը Միթրայի տոնին պարսից արքային ուղարկում էին նաև 20 քուռակ¹¹:

Մեզ համար մեծ հետաքրքրություն է ներկայացնում նաև Քսենոփոնի այն հիշատակությունը, ըստ որի՝ Հայոց թագավորի գահաժառանգ որդին եղել է Պարսից տերության ապագա հիմնադիր Կյուրոս II Մեծի (մ.թ.ա. 550-529թթ.) որսակիցը¹²: Ի դեպ, Մովսես Խորենացին նույնպես հաղորդում է, որ մարաց Աժդահակին մտահոգում էր Տիգրանի ու Կյուրոսի մտերմությունը՝

«... յաւուրսն յայնոսիկ ոչ սակաւ ինչ վտանգ՝ որ ի Մարացն Աժդահակայ ի միաբանութենէն Կիւրոսի և Տիգրանայ»¹³:

Պատմահայրը, սակայն, չի ներկայացնում Կյուրոսի ու Տիգրանի մտերմության հանգամանքները: Մ. Խորենացու հավաստմամբ՝ դաշնակցային հարաբերություն էր անգամ Տիգրանի և մարաց Աժդահակ թագավորի միջև: Հայ-մարական դաշնակցային հարաբերությունները, Մովսես Խորենացու հավաստմամբ, ամրապնդվել են խնամիական կապով: Հայոց արքա Տիգրանն իր քույր Տիգրանուհուն կնության է տալիս Աժդահակին¹⁴: Ըստ Բ.Հ.Հարությունյանի՝ մարերի հետ դաշնակցային հարաբերություններն ու խնամիական կապեր հաստատելը լույս նպատակ են ունեցել բթացնելու հայոց թագավորի զգոնությունը և նրան սպանելու հնարավորություն ստանալու¹⁵:

Արդ ինչպե՞ս և ի՞նչ հանգամանքներում երկու վասալական կախման մեջ գտնվող, իրարից բավականին մեծ հեռավորության մեջ գտնվող երկրների գահաժառանգները կարող էին լինել մտերիմ ու որսակից: Այս հարցի պատասխանը միանշանակ է, եթե հույն պատմիչի հիշատակությունն արժանահավատ է ապա՝ Մարաստանի կենտրոն Էկբատանում, որտեղ նրանք կարող էին լինել որպես պատանդ: Այս առումով հետաքրքիր է Վ. Խաչատրյանի մոտեցումը, ըստ որի՝ Պարսիքը իր թոռ Տիգրանին դեռ մանուկ հասակում ուղարկել է մարական արքունիք՝ ուսումնառության նպատակով, որտեղ էլ նա ընկերացել է

¹⁰ «Պակտյուիկեից, արմեններից և հարևաններից մինչև Եվքսինյանը ստացվում է չորս հարյուր տաղանդ. Սա տասներեքերորդ նահանգն էր»՝ **Հերոդոտոս**, Պատմություն ինը գրքից, թարգմանությունը՝ Մ. Կրկյաշարյանի, Եր., 1986, III, 93; **Геродот**, История в девяти книгах, пер. и прим. Г. А. Стратановского, Л., 1972, III, 93: **Մանանդյան Հ.**, նշվ. աշխ., էջ 61:

¹¹ **Страбон**, География в 17 книгах, пер. и комм. Г. Стратановского, Л., 1964, XI, 14, 9.

¹² **Քսենոփոն**, II, IV: 15; III, I; 14, 38; 2; 3:

¹³ **Մովսիսի Խորենացու Պատմութիւն Հայոց**, Ա, ԻԶ/ԻԷ:

¹⁴ Նույն տեղում, Ա, ԻԵ/ԻԶ:

¹⁵ **Հարությունյան Բ.Հ.**, Հայաստանի, հայ-իրանական հարաբերությունների և Առաջավոր Ասիայի հնագույն պատմության մի քանի խնդիրների շուրջ /մ.թ.ա. VII-VI դդ./, Եր., 1998, էջ 5:

Կյուրոսի հետ¹⁶: Հետաքրքիր է, որ հեղինակի կարծիքով, ըստ երևույթին, նաև Կյուրոսն էր նույն նպատակով գտնվում մարական արքունիքում:

Վերոշարադրյալը ճշմարիտ կլինի միայն, երբ այն դիտարկենք պատանդության տեսանկյունից, առավել ևս, որ նման պրակտիկան խորթ չէր Հին Մերձավոր Արևելքի երկրներին: Որպես օրինակ կարելի է հիշատակել նույն Կյուրոս II Մեծի պապին, որն ի դեպ կարող էր նաև Կյուրոսի պապը չլինել¹⁷, պարսիկների առաջնորդ, էլամահպատակ Պարսումաշի արքա Կուրաշին (Կյուրոսի անվան արքադական տարբերակը), որը հնագանդվեց Ասորեստանի արքա Աշուրբանիպալին (մ.թ.ա. 669-627թթ.) և պարսից պատվիրակության հետ մեկտեղ որպես պատանդ Նինվե ուղարկեց նաև իր որդի Արուկկուին¹⁸: Դեռ ավելին, նույն Քսենոփոնը նշում է, որ մարերի ու պարսիկների մոտ կար սովորույթ՝ ի նշան հավատարմության՝ պատանդներ ուղարկել¹⁹:

Եթե տեսականորեն ընդունենք Վ. Խաչատրյանի մոտեցումը, որ Տիգրանը Պարույրի կողմից էր ուղարկվել մարական արքունիք, ապա պետք է բացատրենք նրա բուն նպատակը՝ ոչ թե ուսումնառության նպատակով, այլ որպես պատանդ: Մակայն պետք է արձանագրել, որ Պարույրի ժամանակահատվածի ու գործունեության վերաբերյալ, բացի Խորենացու վերոնշյալ հիշատակությունից, մենք երկրորդ այլ աղբյուր չունենք: Վ. Խաչատրյանի մոտ նույնպես բացակայում է աղբյուրագիտական հենքը:

Ամեն դեպքում, Մարաստանի արքա Կիաքսարի կողմից Հայոց նահապետ Պարույրին թագադրելու հանգամանքը, ինչպես արդեն նշեցինք, ինքնին վասալական կախում է ենթադրում: Կիաքսարի կողմից Պարույրին թագադրելու փաստը, եթե այն իրական համարելու լինենք, վկայում է սովորական կամ արքայական ինվեստիտուրայի մասին: Ցանկացած դաշնային կառուցվածք ունեցող տերության, ինչպիսին էր Մարաստանը, քաղաքական ազդեցության սահմանները զծվում էին վեհապետի, այս պարագայում՝ Կիաքսարի արքայաստեղծ գործունեության շառավղով²⁰: Իսկ վեհապետ-վասալներ ուղղաձիգ հարաբերությունը սովորաբար ձևավորվում էր գերազանցապես ուժի և հարկադրանքի միջոցով²¹:

¹⁶ Խաչատրյան Վ.Ն., Հայոց հին պատմության հարցեր, Եր., 2010, էջ 20:

¹⁷ Հայաստանի հարակից երկրների պատմություն, Չորս հատորով, հատոր I, Հին շրջան, հատորի պատ. խմբագիր՝ Ա. Վ. Քոսյան, Եր., 2013, էջ 295:

¹⁸ Ցակականյան Ռ.Ա., Էթնոքաղաքական տեղաշարժերը Մերձավոր Արևելքում և Հայկական լեռնաշխարհում մ.թ.ա. VII-VI դդ., Եր., 2018, էջ 128:

¹⁹ Քսենոփոն, IV, II: 13:

²⁰ Մելիքյան Ա., Մալմաստի ժայռաքանդակը (Պատմական Հայաստանի Մասանյան մի հուշարձանի վերամեկնաբանություն), Եր., 2016, էջ 70:

²¹ Մելիքյան Ա., նշվ. աշխ., էջ 69:

Եզրահանգում. Ի մի բերելով Մովսես Խորենացու և Քսենոփոնի հիշատակությունները՝ կարելի է գալ հետևյալ եզրակացությունների՝ Հայոց նահապետ Պարույր Սկայորդին, ինչ-ինչ հանգամանքներում ստիպված է լինում ընդունել մարական գերիշխանությունը և որպես կրտսեր դաշնակից պարտավորվում՝

- 1) տարեկան մարական արքունիք ուղարկել 50 տաղանդ արծաթ,
- 2) ռազմուժի կեսի չափով (4 հազար հեծյալ և 2 բյուր հետևակ) ռազմական աջակցություն ցույց տալ Մարաստանին՝ մասնակցելով Ասորեստանի դեմ նրա արշավանքին,
- 3) ամրություններ չկառուցել,
- 4) Մարաստան ուղարկել թագաժառանգի:

Իսկ այս ամենի դիմաց Պարույրը Կիաքսարի կողմից թագադրվել է որպես թագավոր՝ հիմք դնելով նոր արքայատոհմի:

Այն, որ պատմահայր Խորենացին եղել է հունաբան դպրոցի ազդեցության ներքո և ձեռքի տակ ունեցել է Հերոդոտոսի ու Քսենոփոնի երկերը, հայտնի փաստ է: Ինչպես արդեն նշել ենք, Հայաստանի նվաճումը Մարաստանի կողմից, ընդհանուր առմամբ հայ-մարական հարաբերությունները Խորենացու մոտ տուրք են հենց հունաբան դպրոցի²²:

Պարսից տերության ապագա հիմնադիր Կյուրոս Մեծի ու Տիգրան Հայկազնի /Երվանդունու/ խորենացիական մտեմական կապն ըստ երևույթին գալիս է Քսենոփոնի «Կյուրոպեդիա» երկից, ըստ որի՝ հայոց արքա Տիգրանը եղել է Կյուրոսի հասակակիցն ու զինակիցը: Մարաստանում հայոց թագաժառանգի գտնվելու փաստը վկայում է նրա **պատանդության** մասին:

О НЕКОТОРЫХ ПРОБЛЕМАХ В АРМЯНО-МИДИЙСКИХ ОТНОШЕНИЯХ

Цаканян Р. А.

Ключевые слова: *Армения, Мидия, Мовсес Хоренаци, Ксенофонт, Паруйр, Тигран Ервандыан, Кир, Геродот, заложник, царь.*

То, что родоначальник армянской историографии Хоренаци находился под влиянием греческой школы и под рукой имел труды Геродота и Ксенофона,- это хорошо известный факт. По Хоренаци (Мовсес Хоренаци I, 25-26), дружеская связь Кюроса Великого, будущего основателя Персидской державы, и Тиграна Айказни /Ервантида/ вытекает из произведения Ксенофона «Кюропедия», в соответствии с которым свою юность армянский царь Тигран провел во дворце мидийского царя

²² Ցականյան Ռ.Ա., Ասորեստանի անկման Խորենացու և Սեբեոսի տարբերակները, ՎՒՄ, 2017, № 4, էջ 230-239;

Астиагеса и был сверстником Кюроса и его соратником по оружию. Факт нахождения армянского наследника престола в Мидии свидетельствует о том, в определенный исторический период имело место армяно-мидийское столкновение, в результате чего армянский царь отправил в Мидию своего сына - наследника престола в качестве заложника.

ON THE SOME PROBLEMS OF THE ARMENIAN-MIDIAN RELATIONS

Tsakanyan R. A.

Key words: *Armenia, Midia, Movses Khorenatsi, Xenophon, Paruyr, Tigran Ervandyan, Cyrus, Herodotus, hostage, king.*

It is a well-known fact that the historian Khorenatsi was under the influence of the Greek school and used the works of Herodotus and Xenophon. The description of the relationship between the founder of the Persian Empire the Cyrus Great and the Tigran Haykazun (Ervanduni) is derived from Xenophon's "Kyropedia". According to this work, the Armenian king Tigran spent his adolescence in the palace of the Midian king Astiages and was his peer and comrade in arms. The fact of the presence of the Armenian crown prince in Media is an evidence that in some historical period there was a collision between Armenia and Media, and in a result of which the Armenian king sent his son – the crown prince, **as a hostage**. This is the only explanation of the presence of the Armenian king in the opponent state.

References

1. Геродот, *Istoriya v devyati knigakhm per. i prim. G. A. Stratanovskogom Leningrad, 1972 (in Russian).*
2. *Hayastani harakic erkrneri patmutyun, Chors hatorov, hator I, Hin shrjan, hatori pat. khmbagir` A. V. Qosjan, Yerevan, 2013 (in Armenian).*
3. **Harutyunyan B. H.**, *Hayastani, hay-iranakan haraberutyunneri ev Arajavor Asiayi hnaguyn patmutyan mi qani khndirneri shurj /m.t.a. VII-VId.d./, Yerevan, 1998 (in Armenian).*
4. **Herodotos**, *Patmutyun iny grqic, targmanutyuny` S. Krkyasharyani, Yerevan, 1986 (in Armenian).*
5. **Khachatryan V. N.**, *Hayoc hin patmutyan harcer, Yerevan, 2010 (in Armenian).*
6. **Ksenopon**, *Kyropedia, targmanutyuny hunaren bnagric ev canotagutyunnery` S. M. Krkyasharyani, Yerevan, 2000 (in Armenian).*
7. **Ksenofont**, *Kiropediya, izd. pod. V. G. Borukhovich i E. D. Frolov, Moskva, 1976 (in Russian).*
8. **Manandyan H.**, *Yerker, hator A, Yerevan, 1977 (in Armenian).*

9. **Meliqyan A.**, Salmasti zhayraqandaky (Patmakan Hayastani Sasanyan mi hushardzani verameknabanutyun), Yerevan, 2016 **(in Armenian)**.
10. **Movses Khorenatsvov** Patmutivn Hayoc, ashkhatuteamb M. Abeghyani ev S. Yarutivneani, Tpghis, 1913 **(in Grabar)**.
11. **Strabon**, Geografiya v 17 knigakh, per. i komm. G. Stratanovskogo, Leningrad, 1964 **(in Russian)**.
12. **Tsakanyan R.**, Etnoqaghaqakan teghasharzhery Merdzavor Arevelqum ev Haykakan lernashkharhum m.t.a. VII-VIdd., Yerevan, 2018 **(in Armenian)**.
13. **Tsakanyan R.**, Asorestani ankman Khorenatsu ev Sebeosi tarberaknery, VEM, 2017, № 4, ej 230-239 **(in Armenian)**.

Ընդունվել է՝ 02.10.2019
Գրախոսվել է՝ 28.10.2019
Հանձնվել է տպ.՝ 08.11.2019

Տեղեկություններ հեղինակի մասին

Ռուսլան ՅԱԿԱՆՅԱՆ՝ պատմ. գիտ. թեկնածու.,
ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի գիտաշխատող,
Էլ փոստ՝ rooslantsakanyan@yahoo.com

ՀՏԴ՝ 930.85

ԱՐՑԱԽԻ ՎԵՐԻՆ ԹԱՂԱՎԱՐԴ ԳՅՈՒՂԻ ԱՌԱՔԵԼ ՍՅՈՒՆԵՑՈՒ
ԱՐԱՄԳԻՐՔԸ՝ ԸՍՏ ՄՍ ՀՊ 3888 ՁԵՌԱԳՐԻ

Մարինե Հարությունյան

ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ

Բանալի բառեր՝ գրիչ, հիշատակարան, ձեռագիր, Մատենադարան, դրախտ, մանկավարժ, Արարիչ, գյուղ, տող, կազմ:

Հաղորդման մեջ ներկայացվում է Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանի ՀՊ 3888 անտիպ ձեռագրի ընդհանուր նկարագրությունը՝ շեշտը դրվելով ձեռագրի հիմնական բովանդակության ու գրչի արժեքավոր հիշատակարանների վրա:

Նախաբան. Մատենադարանի ՀՊ 3888 ձեռագիրը «Աղամզիք» (կամ՝

Աղամ գիրք) է, որն ընդօրինակվել է XVIIIդ. սկզբին, Արցախի Վերին Թավարդ գյուղում: Այս աշխատությունը գրվել էր դեռևս միջնադարում նշանավոր բանաստեղծ, աստվածաբան-իմաստասեր, մանկավարժ, երաժիշտ-երգահան, հոգևորական Առաքել Սյունեցու (1350/1355-1425թթ.) կողմից: Այն չափածո ստեղծագործություն է՝ բանաստեղծությունների տեսքով): Աշխատությունում գրիչը ներկայացնում է մեծ փիլիսոփա Առաքել Սյունեցու մտքերն ու գաղափարները: Հարկ է նշել, որ ի տարբերություն Սյունեցու «Դրախտագրքի», այստեղ նյութը կարդալիս նկատում ես, որ այն վերացական չէ, սյուժեն, տիպական երևույթների նկարագրությունները և այլ պատկերներ հաղորդում են կենդանի շունչ: Ձեռագիրն ունի դյուցազներգական և աստվածաշնչական բովանդակություն:

ՀՊ 3888 ձեռագիրը ծաղկազարդված չէ: Վերջինս մեզ է հասել վերակազմված տարբերակով: Պահպանվել են գրչության վայրի, ժամանակի հիշատակագրությունները: *Գրիչը և պատվիրողը* անհայտ են: Ձեռագիրը բաղկացած է 148 թերթից (թվայնացված), էջ 18ա - 25բ թերթերը՝ չգրված: *Վայր*՝ Վերին Թավարդ: *Ժամանակ*՝ ԺԸ: *Նյութ*՝ թուղթ: *Մեծություն*՝ 17 X 10,5: *Գրություն*՝ միասին: *Գիր*՝ շղագիր: *Տող*՝ 19-23: *Կազմ*՝ լս.: *Հիշատակարան նախազադափար*՝ 148 բ (1717 թ.): *Հիշատակարան գրչի*՝ էջ 114-116բ, 146բ -147ա: *Վիճակը*՝ բավարար, որոշ թերթերի ծայրերը դեղնած: Ձեռագիրը թերթակալած է մատիտով:

Բովանդակությունում ուշագրավ ներկայացվում են դրախտաբնակ նախնիների՝ Ադամի ու Եվայի կարճատև փառքը, նրանց գործած մեղքը: Հեղինակը փորձում է ցույց տալ մարդկանց, որ վերջիններս պետք է հաշվի առնեն նրանց դառն փորձը և ապրեն արժանավայել, գեղեցիկ կյանքով: Ըստ Սյունեցու, եթե մարդիկ ցանկանում են դուրս գալ ներկա դժոխային վիճակից, չպիտի կրկնեն անցյալի սխալները, պետք է զերծ մնան մեղքերից: Երջանկությունը հնարավոր է նվաճել միայն գործուն պայքարով, մշտական բարոյական կատարելագործմամբ ու ինքնակատարելագործմամբ: Գրիչը ձեռագրի առաջին բաժիններում նկարագրում է Սյունեցու պատկերած դրախտը՝ գեղեցիկ, լուսավոր մի աշխարհ, որտեղ երջանիկ կյանք է վայելել առաջին գույգը: Զգացմունքայնորեն ներկայացնում է Եվայի մեղք գործելը, այսինքն՝ օձն ինչպես է համոզում նրան ճաշակել արգելված պտուղը:

Ձեռագիրը բաղկացած է 2 հիմնական գլուխներից, որոնք էլ իրենց հերթին՝ ենթագլուխներից. առաջինը՝ 26, երկրորդը՝ 10: 136բ-146ա էջերում ներկայացվել են առանձին ենթաբաժիններ: Առկա են գրչի երկու ընդարձակ հիշատակարան և մեկ նախագաղափար:

ԳԼՈՒԽ Ա

I «Վասն արարչության եւ ստեղծման մարդոյն¹» - {Նախքան զեղեալքս ամենեքեան, երրորդութիւնն անեղական, անուրաներք եւ անսահման նա գոյացոյց զեակս համայն: Նախ յողէից արար զհիւլեն²,....}:

II «Վասն զեղազարդութեան նախնեացն եւ դրախտին³» - {Փառք դրախտին անպատմելի, չքնադատես եւ սխրալի, ծառքն տային փայլ ըզ փայլի, արեգական պէս եւ լուսնի: Դէմքն Ադամայ փառօք ծաղկեալ, եւ որպէս լոյս ճառագայթեալ, ցոլմունք լուսոյ անտի հոսեալ, եւ որպէս ըզհուր փայլատակեալ⁴}:

III «Վասն խաբէութեան ու բանասարկուին ՚ի օձին⁵» - {Զայս ամենայն տեսեալ չարին, հեղձամաղձուկ լինէր յանձին, եւ մորմոքէր կըսկըծագին, պիղծ սաղաէլ չարն առաջին: Որպէս ըզհուր վառեալ հնոցին, բորբոքեր զչարն ի հոգին, կույր խաւարեալ բոլորովին⁶}:

IV - «Վասն լալոյ նախնեանց եւ սգոյ եւ տրտմունք նոցին»: V- «Վասն հոգեվարին և պատերազմի դիւանաց»: VI - «Վասն ահեղ դատաստանին եւ քննութեանց մարդկանց»

¹ ՄՄ, ձեռ. Հ^ֆ 3888,թ. 4բ-7ա:

² Նույն տեղում, թ. 4բ :

³ Նույն տեղում, թ. 7ա-9ա:

⁴ Նույն տեղում, թ. 7ա:

⁵ Նույն տեղում, թ. 9ա:

⁶ Նույն տեղում, թ. 9ա:

VII «Վասն զանազան տանջանացն դժոխոցն⁷» – {Յետ բնութեանց դատաստանին, երբ ամենայն բանք վճարին՝ այն է չար ժամ խաւարային, որ յոյս բարեացն հատանին: Յորժամ երթայք յինէն ասէ՝ զնոցա զամին յոյս հատանէ, ամպ խաւարին զնոսա ծածկէ եւ ամենայն չար պատահէ⁸}:

VIII «Վասն չարին թէ ուստի եղեւ եւ զինչ է պատճառ նորին» - {Ով հիացմամբ զարմանալի, եւ տարակոյս անքրննելի, ստեղծեալ էաք բնութեամբ բարի՝ չար խարբալեալ ապականի: Նախ քրննեսցուք թէ զի՞նչ է չար, եւ կամ ուստի՞ նորին պատճառ, որ հրեշտակացն էաճ խաւար՝ եւ մեր բնութեանս մահ կրկնաբար⁹....}:

IX «Վասն բաղձալոյ բարոյն ամենայն էից» - {Բնութիւնք հանուրց եզականին՝ յափըշտակել փութան զբարին, զի ցանկութիւնս այս անդրստին, ի ստեղծմանէն գոյր ի նոսին: Իւրաքանչիւրն ըստ չափս անձին, բաղձան հասնիլ բարեաց մասին, աչք ամենայն ի քեզ հային, զի տաս նոցա ըզպիտանին¹⁰}:

X «Վասն պատկերակցութեան մարդոյն առ Աստուած եւ առ հրեշտակս» - {Մարդս պատկեր է Արարչին, տիպ եւ նման յոյժ հրաշագին, այլ եւ նման հրաբուն դասին, ըստ յատկութեանց որ ի նոսին: Չորեքնիւթեայ բնութեամբ մարմին, ՚ի եռամասնեայ հոգին ՚ի նմին, չորս կերպ աթոռ է անեղին, հանգիստ կամաց երբեական անձին¹¹}:

XI «Վասն հարցաքննելոյն յԱստուծոյ զԱղամ յետ յանցման» {Յետ ողբալոյն Տեառն Աղամայ, հարցափորձել զայ ըզնոսա, զի զըղջացեալ ասեն մեղայ, եւ ջրնջեսցին յանցանք նոցա: Ու՞ր եւ Աղամ մարդս առաջին, ու՞ր է քո փառքն հրաշալին, պատուով եղի զքեզ ՚ի դրախտին եկեալ ընդ նոյն տեղին¹²....}:

XII «Վասն կրկնակի խորհրդով հարցմանն Աստուծոյ զԱղամ» - {Անճառ խորհուրդն աստուածային, ծածկեալ ի բանս իւր անքրնին, այնպէս խօսէր նա ընդ Նախնին (զԱղամ), որպէս աւարտն եղեւ բանին: Մինն ըստ բանին աւարտեցան, միայն գործով տայր պատասխան, եւ երկոքին կատարեցան՝ Աստուածային կամքն եւ հրաման¹³}:

XIII «Վասն խորհրդոյ հարցմանն Աստուծոյ յօձն խորամանկ» - {Եւ քեզ ասեմ, օձ խորագետ, որ ուսուցեր զկինըն տրզետ, թէպէտ յանցանք էր այդ եւ զէթ, բայց ո՛չ ՚ի քէն՝ այլ ի չարէզ: Զքեզ օձ ստեղծի իմաստնագոյն, զի ջոկեսցես

⁷ ՄՄ, ձեռ. Հ^մր 3888, թ. 27ա:

⁸ Նույն տեղում, թ. 27ա-27բ:

⁹ Նույն տեղում, թ. 29բ:

¹⁰ Նույն տեղում, թ. 36ա:

¹¹ Նույն տեղում, թ. 37բ:

¹² Նույն տեղում, թ. 41ա:

¹³ Նույն տեղում, թ. 43ա-43բ:

զչարն 'ի բարւոյն, եղեր չարեաց ու վեհագոյն, մարտեար ընդ իմ պատկեր մար-
դոյն¹⁴}:

XIV «Վասն գովելոյ զղրախտն եւ նախատելոյ զինքեանս նախաստեղ-
ծիցն» - {Յետ քննութեան բանից հարցման, տարակուսեալ նախնիքն ողբան, եթե
վասն է՞ր հանդիպեցան, այսքան չարեացս փորձութեան: Այն ի՞նչ զղրախտ էր
լուսափայլ, որ զմեզ արար հէնց ուշատար, մտօք կորաք մեք հիացեալ, եւ զպա-
տուիրանն մոռացեալ¹⁵ }:

XV «Վասն զղջմամբ ողբալոյն նախամօրն Եւայի» - {Այն ի՞նչ չար ժամ էր
ինձ պահած, որ օձն եկեալ ինձ բարբառեաց, այս ի՞նչ ականջ էր չար ի բաց, որ
սասանայ զմաղձըն թափեաց: Այս ինչ չար միտք էր խաւարած, որ զթըշնամոյն
բանն ոչ քննեաց: Այս ի՞նչ ատամն էր չարացած, որ զբանն լեզւի օձին ծամեաց:
Այս ի՞նչ չար ոտք էր մոլորած, որ առ մահու ծառն գնաց, այս ի՞նչ չար ձեռք էր
չորացած, որ զայն պտուղն շոշափեաց¹⁶ }:

XVI «Վասն կողին, որ եղել պատճառ խարմանն» - {Այն ի՞նչ սև կող էր
յիս ծածկած, որ ինձ պատճառ եղել չարեաց, յանմահ կենաց նա զիս զրկեաց, 'ի
տարտարոսն հրաւիրեաց: Այն ի՞նչ սև օր էր ինձ պահած, որ ընկեր չառի յայլ
կենդանեաց, վասն այն գԵւա յինէն ստեղծեաց, զի ինձ հաճոյ լիցի կամաց: Այն
ի՞նչ սև պահ էր ինձ թմրած, որ զկողն յինէն առին 'ի բաց, ընդ այնր մարմին եղել
լցած, զիս յԱստուծոյ էհան յաչաց: Կամ թէ նա կող էր յիմ ձախի, վասն այն գոր-
ծեաց ձախողակի, զի ամենայն իր ըստ կարգի, ըստ իւր բնութեան գործոյն չար-
ծի: Կամ թէ ելաւ յիմոյս միջաց, վասն այն նա զիս ընդ մէջ կտրեաց, որպէս ըզ-
կոթ փայտահարաց, նովաւ զմայրիսն կտտորեաց¹⁷ }:

XVII «Վասն պէսպէս պակասութեան առնելոյ կողին» - {Դարձեալ խոր-
հուրդ վասն կողին, զոր յինքն ունի ծածուկ մին մին, գործով եցոյց նա առ նախ-
նին, եւ հասարակ յամենսին: Նախ՝ զի կողն էր առ իս ծածուկ, երկրորդ՝ հանաւ
յինէն գաղտուկ, երրորդ՝ զի կին ստեղծաւ յատուկ, չորրորդ՝ ընկեր տըրաւ ինձ
զուղ: Նախ՝ ընդ օձին իսուէր ծածուկ, երկրորդ՝ զպտուղն եկեր գաղտուկ, եր-
րորդ՝ խաբեաց զիս հնարիւք, չորրորդ՝ արար դառն եւ տաղտուկ: Չի սա իմ կող
էր եւ մարմին, յիս կապակցեալ ամենեւին, սիրով լւայ բանից սորին՝ վասն այն
կորեաք ի միասին¹⁸ }:

XVIII «Վասն բազում կանայք այժմ ցուցանեն զբնութիւն կողին» -
{Դարձեալ եւ այս վասն կողին, այլազգ յայտնի խորհուրդ նորին, Այս նախա-

¹⁴ ՄՄ, ձեռ. Հ⁴⁶ 3888, թ. 49ա:

¹⁵ Նույն տեղում, թ. 54ա:

¹⁶ Նույն տեղում, թ. 59բ:

¹⁷ Նույն տեղում, թ. 62բ-63ա:

¹⁸ Նույն տեղում, թ. 64բ-65ա:

տիքն է Եւային, գոր ինչ գործեաց նա ընդ Նախնին: Երբ հանդիպիս դու մօտ ի կին, զայսոսիկ մի՛ կարդա նոցին, որ չանարգեն զգրող սորին, եւ բանքս ելնէ յաչաց նոցին: Զի այս գանգատ է Ադամայ, որ նախատեաց զկինն իւր զԵւա, բայց այլ կանանցն մեղք չկայ, զի ամենք չեն նմանք նմայ¹⁹}:

XIX «Վասն էր 'ի հողոյ ստեղծաւ մարդն եւ ոչ յայլ ինչ նիւթոյ» - {Իսկ թէ վասն էր՝ ստեղծ ի հողոյ, եւ ոչ յայլ ինչ պայծառ նիւթոյ, զի թէ պատկեր էր Աստուծոյ, պարտ էր առնել զնիւթն ի լուսոյ: Նա պատկերաւն ըզմեզ պատուեաց, եւ ոչ՝ նիւթով սոսկ զարդարեաց, բայց ի հողոյ զմարմինս կազմեաց, զի մի լիցուք հպարտացած: Զի ի լուսոյ հրեշտակք ստեղծան, հպարտացեալ յերկնից անկան, վասն այն հողոյ արար զԱդամ, զի մի՛ անկցի դիւաց նման²⁰}:

XX «Վասն տարերացն, որք են մարանք Արարչին» - {Տարերք մարանք են Արարչին, եւ գանազան բարիս լցելունին, գոր ինչ կամի յառաջ բերին, քանզի իւր կամքն է բանալին: Ի հողոյն յառաջ բերէ զՆախնին, եւ ի նմանէ զկողն, որ ի կին, եւ ի կնոջէն ծնանի որդին, եւ ի յորդոյն՝ տեսակ ազգին: Շինեաց իւր տուն չորս անկիւնի, ըզչորս տարերս այս ըզգալի, պէսպէս բարեօք լցեալ ունի, առատ բաշխէ ում եւ կամի²¹}:

XXI «Վասն համեմատութեան մարդոյն ընդ Աստուծոյ» - {Տեառն նման ասի հոգին, լոյս եւ անմահ եւ անմարմին, բանն ծնունդ միտքն եւ հոգին, Տեառն նման երեք եւ մին: Անսուրբ եւ անբանքն ի կենդանեաց, նմանութիւն չունին յԱստուած, այսպէս եւ Ադամ ոչ հաւատնեաց, առնուլ ընկեր ի յանբանեաց: Ադամ պատկեր էր Աստուծոյ, որ ստեղծուեց անախտ զնա ի հողոյ, եւ նա զկինն առանց աղտոյ, ծնաւ ի կոյս մարմնոյ իւրոյ: Տէր զամենայն ծածուկ գիտէ, եւ զլինելոցն ճանաչէ, Ադամ զկինն ոսկ իւր յայտնէ, եւ մայր կենաց զնա գուշակէ²²}:

XXII «Վասն համեմատութեան կողին յԱստուածածինն կոյսն» - {Դարձեալ խորհուրդ վասն կողին, համեմատեալ յԱստուածածնին, եւ Ադամայ նախաստեղծին, նորին Ադամայ սուրբ միածին: Զծածկեալ խորհուրդ անճառական, հրեշտակք եւ դէք զայն չիմացան, թէ գոր նախ ստեղծն իւրն նման, Աստուածացնէ զնա ընդ ինքեան: Բազում կողիցն առեալ ըզմին, ելից ընդ այնր յատուկ մարմին, նոյնպէս յերից անձանցն մին, ի նոյն կնոջէ եղել մարմին: Նոր ստեղծուած արար զկին, ոչ ի հողոյ, ոչ երկնային²³....}:

XXIII «Վասն կնքելոյ գերեզմանին Տեառն մերոյ» - {Դարձեալ խորհուրդ մեծ եւ անքնին, վասն կնքեալ գերեզմանին, յոր հիանամք ամենեքին, թէ որպէս

¹⁹ ՄՄ, ձեռ. Հ⁴ 3888, թ. 70բ-71ա:

²⁰ Նույն տեղում, թ. 72բ-73ա:

²¹ Նույն տեղում, թ. 74բ:

²² Նույն տեղում, թ. 78ա-78բ:

²³ Նույն տեղում, թ. 79ա:

կնիքն ամբողջ դրին: Խորհուրդս այս մեծ եւ զանազան, որ կնքեցին զգերեզմանն, զոր եւ ցուցից սակաւ ինչ բան, ըստ իմոյ մտաց տկարութեան: Ծաղկանց ծառոց որ 'ի հողէ, նա կուսական ծնունդ շնորհէ, զի՞ զարմանս տու զԱրարչէ, թէ նա յարեաւ 'ի կոյս վիմէ: Հոտն 'ի ծաղկանց յառաջ բերին, առանց բեկման նիւթոյ ծաղկին, զՅօր ծաղկի հոտն ի տապանին, զի արգելոյր կնիք վիմին²⁴}:

XXIV «Վասն համեմատութեան առաջին արարչութենէն յերկրորդ նորոգութեանս» - {Բարձեալ խորհուրդ ըստ այլ կերպի, նրբատեսակ իմացողի, յարարչութիւն ըսկըսանի, եւ խաչ Փրկչին խորհրդածի: Երրորդութիւնն խորհրդածի, ստեղծանել մարդ ըստ պատկերի, ընդ աշակերտացն Յիսուս խորհի, վասն յարութեանն Ղազարի: Անդ 'ի ստեղծումն մարդոյն գայ, առնիլ զԱդամ չորեքնիւթեայ, եկաւորի 'ի Բեթանիայ, յարոյց զՂազար չորեքօրեայ: Յորժամ ստեղծ Տէրն զՆախնին, դէք ժողովեալ՝ չար խորհէին, յետ յարութեան Ղազարոսին, հրէայք մահուան Տեառն խորհին²⁵ }:

XXV «Վասն մահուան եւ յարութեան Տեառն ի մեզ համեմատութիւն» - {Բարձեալ խորհուրդ այլ զանազան, մահուան Փրկչին եւ յարութեան, զի զոր ինչ անդ կատարեցան, բիրին 'ի մեզ խորհրդական: Ծարաւեցաւ Տէրն ի խաչին, նոքա զլեղի ըմպել տային, այժմ է ծարաւ ի սէր քոյին, դու լեղի մի դառնար նմին: Վասն մեղաց նախաստեղծին, մեռաւ Աստուած բանն 'ի խաչին, դու մի՛ խորհիր մահ Արարչին, գործել զնոյն մեղս կրկին: Ղունկիանոս որ նախ խոցեաց, փոշիմանեալ յետոյ պաշտեաց, բայց դու յառաջն ասես Աստուած, յետոյ խոցես տիգաւ մեղաց: Զինուորքն զՏէրն պահէին, վասն յարութեան կարծեաց նորին²⁶.... }:

XXVI «Վասն երկոտասան սքանչելեացն, որք եղեն յաւուր խաչելութեանն Քրիստոսի» - {Գործք Արարչին համանգամայն, էն սքանչելիք ամենեքեան, զոր նախ արար յարարչութեանն, եւ յերկրորդիս նորոգութեան: Եւ ի խորհուրդս միութեան, հնոյն ու նորոյս արարչութեան, միաւորեաց աստ զերկուսեան, զի ինքն է Տէր համանգամայն: Վեց օր հնոյն արարչութեան, եւ վեց նորոյս նորոգութեան, զայս մի եցոյց գործով յինքեան, սքանչելեօքն երկոտասան²⁷ }:

Վերջաբանուի աւարտման շարադրուի գրքոյն – {Բանս որ սկսաւ վասն Ադամայ, 'ի աւարտեցաւ 'ի դէմս նորա, Փառք Տէրութեանն երեքանձնեայ, յանցեալն, ներկայս եւ յապագայ: Խորհուրդս ունի սա զանազան, զոր հանճարեղ միտքն իմանան, բաղդատութիւնք համանգամայն, ի զկգբանէ մինչ ի վախճան: 'Ի յԱդամ առեալ պատմէ, եւ 'ի Քրիստոս համեմատէ, թէ որ մտօք մանր քննէ,

²⁴ ՄՄ, ձեռ. ՀՊ 3888, թ. 87ա:

²⁵ Նույն տեղում, թ. 95բ-96ա:

²⁶ Նույն տեղում, թ. 106բ:

²⁷ Նույն տեղում, թ. 108բ:

շատ պիտանի բան գտան: Կրկին անգամ զԱդամ հարցնե, կրկին դիմօք պատասխանե, գտեղծումն Նախնեաց՝ ի խաչն յանգե, եւ կրկնակի համեմատե²⁸....}:

ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆ ԳԼՉԻ - «Ի յուր հարիւր Հայոց թուական, յիսուն ու երկու մըտեալ նոր ամ, խորհրդաւոր բանս գրեցան՝ ի խրախութիւն սրտից մարդկան: Չձեզ աղաչեմ սուրբ ընթերցողք եւ աննախանձն օրինակողք, զհայր իմ Դաւիթ յիշէք մտօք, ՚ի սուրբ յաղօթս ձեր արտասուօք: Այլ եւ զեղբայր իմ զԲարսեղ, սուրբ քահանայ եւ հանճարեղ, զի վախճանեալ էր նա անմեղ, յիշէք յաղօթս ձեր արտասուեղ: Այլ եւ զմայրն իմ զՄելիք, եւ զՄարիամ հանն իմ բարիք, զննչեցեալսն եւ զկենդանիս, յիշէք յաղօթս ձեր նազելիք: Չմեծ վարդապետն իմ դասասաց, Գրիգոր անուն պատճառ բարեաց, յիշէք յաղօթս ձեր առ Աստուած, ազգօք ու արեամբ մերձաւորաց: Պայծառամիտ եւ հանճարեղ, պահող հսկող եւ արտասուող, հոգով մաքուր, բնութեամբ անմեղ, մեծ հռետորն բանի համեղ: Բանս յարմարեաց անճարագոյնս, քննեաց զբողոքս էից մասունս, զիբք քսանուչորս որպէս ծաղկունս, եկեղեցւոյ եղեալ ակունս: Չկաթողիկոս Հայոց ազգիս, զՏէր Կարապետ օրհնեալ հոգիս, յիշէք յաղօթս ձեր բարիս, եւ ընդ նըմին զթշուառ հոգիս: Այլ եւ զիշխանն մեծ Սմբատ, ու զՊուրթէլ եղբայրն իւր հարազատ, զաւակք նոցա ծննդեամբ արագ, յազգէս Հայոց լինել անհատ: Չորս յիշեցաք առ հասարակ, յիշէք եւ դուք մտօք յստակ, պահել զնոսս հոգով սպիտակ, տալ անթառամ փառաց պսակ: Եւ որ յիշե՛ զմեզ անմոռաց, յիշեալ լիցի ինքն առ Աստուած, որ թողութիւն խնդրէ մեղաց, թողցի եւ իւրն զոր գործեաց²⁹.....»:

ԳԼՈՒԽ Բ - «Վասն զանազան խօսակցութեան նախնեացն»: «Բանք նախատանաց առ օձն եւ առ բանսարկուն», «Բանք վասն զգալի օձին եւ անմարմին զազանին», «Վասն Արարչունի ու համեմատունի արարածոցս առ Աստուած» և այլն³⁰:

ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆ ԿԱՏԱՐՄԱՆ ՇԱՐԱԿՆԵՐԻ ԳԼՔՈՅՍ - «Ի յուր հարիւր Հայոց թուական, եւ յիսներորդ մտեալ նոր ամի, ոտանաւոր բանքս գրեցան, հարցաբանումն եւ պատասխան: Տէր Առաքեալ նուաստ ոգի, շնորհաց թափուր յամենայնի, զոտանաւորս շարադրեցի, վասն Ադամայ եւ Եւայի: Բանս որ պատմի համանգամայն, տուն՝ երկու հարիւր եւ քսան, ունի խորհուրդ սա զանազան, զոր հանճարեղ միտքն իմանան: Սիրողք բանից եւ ընթերցողք ու աննախանձն օրինակողք, զերգօսս յիշէք ինով նախնեօք, ՚ի սուրբ յաղօթս ձեր արտասուօք: Չմեծ վարդապետն իմ հանճարեղ, Գրիգորիոս հոգով անմեղ, բազում, բազում իմաստք յայտնեաց համեղ, յիշէք յաղօթս ձեր արտասուեղ: Յորժամ փառօք

²⁸ ՄՄ, ձեռ. Շ^{վր} 3888, թ. 111ա - 111բ:

²⁹ Նույն տեղում, թ. 114ա - 115ա:

³⁰ Նույն տեղում, թ. 117ա:

յերկնից գայցես, եւ զարարածս նորոգեսցես, զԲարսեղ եղբայրն իմ, որ առ քեզ, անձառ լուսով պսակեսցես³¹ »:

ՀԻՇՄՍՄԿԱԼԱՆ ՆԱԽԱԳԱՂԱՓԱԸ - «...օգոստոսի 4-ին ՚ի գիւղն Թաղավարդ, ՚ի 1166թուին հայոց կազմեցեալ Աղանգիրքս³²»:

Եզրահանգում. Այսպիսով, հաշվի առնելով աշխատության հիշատակարաններից մեկում (նախագաղափար, էջ 148) նշված ձեռագրի ընդօրինակման ժամանակը՝ ՚ի 1166 թուին (վերծանված տարբերակը՝ 1717թ., տե՛ս Ցուցակ ձեռագրաց, հ. Ա, Երևան, 1965, էջ 1104), կարող ենք նշել, որ այն ընդօրինակվել է Թաղավարդ գյուղում, XVIIIդ. (ի դեպ, «Ցուցակ ձեռագրացի» 1104 էջում ընդօրինակման ժամանակը նշվել է ԺԹ): Ուսումնասիրելով Արցախի Վերին Թաղավարդ գյուղում ընդօրինակված Հ^ֆ 3888 ձեռագիրը և տանելով համապատասխան զուգահեռներ Առաքել Սյունեցու «Աղանգիրք» աշխատության բնօրինակի հետ՝ հանգում ենք այն եզրակացության, որ Մատենադարանի վերոնշյալ ձեռագիրը իր բովանդակությամբ Սյունեցու աշխատության գրեթե կրկնօրինակն է՝ որոշ ենթաբաժինների վերնագրերի փոփոխմամբ, որոնք նկատելի են հատկապես 136բ-146ա էջերում:

**“АДАМГИРК” АРАКЕЛА СЮНЕЦИ АРЦАХСКОГО СЕЛА ВЕРИН
ТАГАВАРД СОГЛАСНО РУКОПИСИ МАТЕНАДАРАНА N 3888
Арутюнян М.**

Ключевые слова: *тисец, мемориал, рукопись, Матенадаран, рай, педагог, Творец, “деревня”, строка, обложка.*

В сообщении представлена работа известного поэта, богослова-философа, просветителя, музыканта-композитора, священнослужителя Аракела Сюнеци “Адамгирк” по рукописи Матенадарана N 3888. Произведение было имитировано неизвестным писателем в арцахском селе Верин Тагавард во второй половине 18-го века. В статье подробно представлено описание рукописи - место, период, страницы, материалы, размер, обложка, записи писаря, состояние рукописи. Это стих в виде поэзии, в котором практически полностью переданы мысли и идеи великого философа Аракела Сюнеци.

Публикация материала послужит небольшим вкладом в изучение рукописной культуры Арцаха.

³¹ ՄՄ, ձեռ. Հ^ֆ 3888, ր. 146բ-147ա:

³² Նույն տեղում, ր. 148բ:

**“ADAMGIRK” OF THE VILLAGE OF VERIN TAGHAVARD OF
ARTSAKH OF ARAKEL SYUNETSI ACCORDING TO THE
MANUSCRIPT N 3888 OF MATENADARAN**

Harutyunyan M.

Key words: *scribe, note, manuscript, Matenadaran, paradise, pedagogue, Creator, village, line, cover.*

Well-known poet, theologian-philosopher, educator, musician-composer, clergyman Arakel Syunetsi's work, “Adamgirk” according to the manuscript N 3888 of Matenadaran, has been presented in the article. It was imitated by an unknown writer in the village of Verin Taghavard of Artsakh in the second half of the 18th century. The description of the manuscript (the place, the period, pages, the material, the size, the scrap, the composition, the records of the scribe, and the state of the manuscript) has been presented in detail in the article. It is a verse (in the form of poetry), in which the scribe presents the thoughts and ideas of the great philosopher Arakel Syunetsi. The two main chapters of the work and their subchapters were presented in the content. The records of the scribe were introduced almost completely.

The publication of the article will have its small contribution from the viewpoint of the studying of the handwritten culture of Artsakh.

R e f e r e n c e s

1. Matenadaran Mesrop Mashtots in Yerevan, manuscript N 3888 (in Armenian).
2. Cucak dzeragrac, N I, Yerevan, 1965 (in Armenian).

Ընդունվել է՝ 04.10.2019

Գրախոսվել է՝ 21.10.2019

Հանձնվել է տպ.՝ 03.11.2019

Տեղեկություններ հեղինակի մասին

Մարինե ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ՝ պատմ. գիտ.թեկնածու,

ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի ավագ գիտաշխատող,

Էլ. փոստ՝ marina-arutunyan@mail.ru

ИСТОРИЯ
Պ Ա Տ Մ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն
HISTORY

УДК 930.2

ОСМАНСКАЯ ПЕРЕПИСЬ НАСЕЛЕНИЯ
ВЕРХНЕБАСЕНСКОГО САНДЖАКА 1835 г. КАК ИСТОЧНИК ПО
АРМЯНСКОЙ ГЕНЕАЛОГИИ: ПРИМЕР СЕЛА КЁПРЮКЁЙ.

Андраник Нагапетян

Независимый исследователь

Ключевые слова: *Шурагельская дистанция, Имирханли, Верхнебасенский санджак, Вагаршаван, Болорапахак, Кёпрюкёй, османская перепись населения, дефтер переписи населения, джизья, райя, историческая демография, армянская генеалогия, антропология.*

Работа посвящена проблеме использования первой османской переписи населения 1835 года в качестве генеалогического источника. В ней рассмотрена предыстория села и места, на котором оно расположено, исследованы и описаны ценные для генеалогии данные. При проведении исследования был использован подлинник дефтера переписи райи Верхнебасенского санджака, источники на армянском, английском, древнеармянском, русском, турецком и османско-турецком языках*.

Введение. Село Кёпрюкёй располагается рядом с местом слияния рек Аракс и Мурц. Согласно Мовсесу Хоренаци, на этом месте был основан город Вагаршаван. Себеос сообщает о расположенной поблизости крепости Болорапахак. На месте слияния рек расположен средневековый семиарочный мост, по которому проходил Шелковый Путь, в самом селе сохранились руины караван-сарая. В киликийский период по мосту проходили торговые пути из Айаса в Табриз, а также Трапезунда в Табриз.

В 1830 году после окончания русско-турецкой войны 1828 – 1829 годов армяне селения Кёпрюкёй Верхнебасенского санджака Эрзерумского эялета переселяются в селение Имирхан Шурагельской дистанции. Однако уже в 1835 году, по данным османской переписи населения 1835 года, в Кёпрюкёе проживало 24 семейства армян, насчитывающих 99 человек мужского пола.

* Автор выражает свою благодарность исследователям Александру Викторовичу Ефимову – Руководителю отдела РНИИКПН им Д.С. Лихачёва г. Москва; к.и.н., доценту Самвелу Асатуровичу Маркаряню за ценные комментарии относительно предварительного варианта данной статьи, а также сотрудникам Османского архива Салиху Кахриману и Шенгюлю Каралоглу за помощь в прочтении фрагментов текста на османском языке, написанных почерком сиякат.

Османская перепись райи охватывает только мужское население и содержит сведения об имени, росте, наличии либо отсутствии бороды или усов и их цвета, возрасте человека, степени родства в семье, о классе джизьи. В отдельных случаях обозначены даты смерти. В тех случаях, когда семья покинула село, указано, куда она ушла, например, в Крепость Карс либо в Нижний Басен.

После завершения русско-турецкой войны 1828-29 гг. из Эрзрумского эялета в пределы Российской империи переселяется большое количество христианского населения. Среди тех переселенцев были и предки нынешних жителей села Саратак Ширакской области Республики Армения, которые переселились в Саратак (до 1940 – Имирханли) в 1830 году из селения Кёпрюкёй Верхнебасенского санджака Эрзерумского эялета¹.

Село Кёпрюкёй располагается приблизительно в 60 километрах к востоку от Эрзрума в непосредственной близости от места впадения в Аракс притока Хасанкале (по-армянски Мурц). Место слияния этих двух рек упоминает Мовсес Хоренаци, повествуя историю основания города Вагаршаван, некогда располагавшегося на этом месте². Согласно Себеосу, на этом месте располагалась крепость Болорапахак³.

Рядом с селом, на месте слияния Аракса и Хасанкале, и по сегодняшний день стоит средневековый семиарочный мост через реку Аракс, по которому некогда проходил Шелковый путь, а в самом селе сохранились остатки руин старинного караван-сарая, который в 1841 году красочно описал английский путешественник Уильям Гамильтон⁴. В период существования Киликийского царства по мосту проходил торговый путь между средиземноморским портом Аяс и Табризом, а также между Табризом и Трапезундом. Аллан Эванс отождествляет топоним Polorbesch из труда флорентийского купца XIV века Франческо Пегалотти с названием «Болорапахак», претерпевшим фонетические изменения, и располагает его вблизи от вышеупомянутого моста⁵.

¹ Հայրապետյան Ա.Ս., Արևմտահայ գաղթականության տեղաբաշխումը Շիրազյալի գավառում (Արևելյան Շիրակ) 1829-1831թթ./http://www.shirakcenter.sci.am/pictures/gitashkhatutunnner /2002/153.pdf // ՀՀ ԳԱԱ ՇՀՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ», հ. 5, Գյումրի, 2002, էջ 162.;
 Հայրապետյան Ա.Ս., Արևրասանդրապոլի գավառը վիճակագրական նյութերում (XIXդ.-XXդ. սկիզբ). փաստաթղթերի և նյութերի ժողովածու, Երևան, Գիտություն, 2011, էջ 28:

² Хоренаци М., «История Армении». Пер. с древнеарм. языка, примечания Г. Саркисяна. / http://www.vehi.net/istoriya/armenia/khorenaci/02.html (31.10.2019), Ереван, Айастан, 1990.

³ Себеос, История епископа Себеоса. / Пер. с четв. испр. арм. изд. Ст. Малхасянц http://www.vostlit.info/Texts/rus10/Sebeos_3/frametext1.htm (31.10.2019), Ереван, АрмФАН-А., 1939, стр. 32.

⁴ Hamilton W.J., Researches in Asia Minor, Pontus and Armenia; with Some Account of Their Antiquities and Geology / https://babel.hathitrust.org/cgi/pt?id=mdp.39015000520778&view=1up&seq=225, London, John Murray, 1842, vol I., pp.184–185.

⁵ Pegolotti F.B., La Pratica della Mercatura. Edited by Allan Evans / https://cdn.ymaws.com/www.medievalacademy.org/resource/resmgr/maa_books_online/evans_0024.htm (31.10.2019), Cambridge, Massachusetts, 1936, p. 390.

Из османских источников известно, что в 1580 году рядом с мостом имелось село, в котором находился вакуф, о чём свидетельствуют записи в документах вакуфа⁶. Однако в подробном налоговом дефтере Эрзрумского эялета 1642 года селение Кёпрюкёй отсутствует, однако дефтер содержит данные по соседним селам⁷. Прошедший через это место в промежутке 1646-1648 годов османский путешественник Эвлия Челеби при описании моста через Аракс и переходе через него войска ничего не сообщает о самом селе.⁸ Вероятно, в определенный период времени населенный пункт на этом месте обезлюдел и прекратил свое существование вследствие затянувшихся турецко-персидских войн и опустошительных походов персидского Шаха Аббаса в начале XVII века, по повелению которого в Иран была сослана определенная часть армянского населения Басена⁹. В 1671 году Вартан Овнанян упоминает село Вагжван, которое, вероятно, судя по его тексту, находилось неподалеку от села Патижван (прим. ныне - Эсендере), расположенного в 6 километрах от Кёпрюкёя. Однако одних его сведений недостаточно для того, чтобы с полной уверенностью отождествить села Вагжван и Кёприкёй. При этом не вызывает сомнения то, что Вагжван – это топоним Вагаршаван, подвергшийся с течением времени определенным фонетическим изменениям¹⁰.

В своей книге, вышедшей в свет в 1806 году Г. Инджиджян среди сёл Верхнего Басена упоминает в том числе и Кёпрюкёй. Он сообщает, что «это село возведено большим и с высокими домами. Как видно, основано оно в давние времена». По его сведениям, в нем находились сборщики пошлины¹¹. После перечисления сел Верхнего и Нижнего Басена Г. Инджиджян добавляет, что, помимо названных сел, остается еще много тех, часть которых разрушаются, другие воссоздаются вновь, а

⁶ Soylu H., The Historical Development of Koprucokoy and the Types of Houses / http://www.turkiyatjournal.com/Makaleler/299502715_1357-5363-1-PB.pdf (31.10.2019) // Ataturk University Journal of Turkish Researches Institute, No. 14, Erzurum, 2000, page 195.

⁷ İnbacı, M., Çakır, İ. E. Demir, S., 1642 Tarihli Erzurum Eyâleti Mufassal Avâriz Defteri I (Erzurum-Tortum-İsbir-Hinis-Pasin), Ankara, Turk Tarih Kurumu, 2014.

⁸ Çelebi E., Evliyâ Çelebi Seyahatnâmesi. Topkapı Sarayı Kütüphanesi Bağdat 304 Numaralı Yazmanın Transkripsiyonu – Dizini, II Kitap, Hazırlayanlar: Kahraman S.A., Kurşun Z., Dağlı Y., İstanbul, Yapı Kredi Yayınları, 1998, s. 106. “Menzil-i cısr-i azîm Çoban Köprüsü: Bu cısr-i azîmden asker-i der[yâl]-misâl cısrin beri Hasankal’ası cânibinde meks edüp asker karşı tarafa geçmek fermân olundu. ... Üç günde cümle asâkir bu Çoban Sultân köprüsünden ubür edüp paşa dahi alay ile güzer edüp 7 sâ’atde”.

⁹ Даврижеци А., «Книга историй». Перевод с армянского. (Пер. с арм., предисл. и коммент. Л. А. Ханларян) / <http://www.armenianhouse.org/davrizhetsi/history-ru/contents.html> (31.10.2019), Москва, «Наука», 1978, стр. 56 -57, 60-61, 72, 485-486.

¹⁰ Ալիշան Ղ., Այրարատ : Բնաշխարհի Հայաստանեայց/<http://www.digilib.am/book/1345/1611/11041/?lang=en> (31.10.2019), Վենետիկ, Ս. Ղազար, 1890: «Օրհնեա զՎաղժվան, որք տալ փութացան զերիս քոնս ցորեան ... Իսկ ի Պատժվան` եռ մազի եւեթ հազիս թէ փրծան»:

¹¹ Ինճիճեան Ղ., Աշխարհագրութիւն չորից մասանց աշխարհի http://greenstone.flib.sci.am/gsdll/collect/armbook/books/ashxarhagrutyun1806h1_index.html (31.10.2019), հ. I, Վենետիկ, Ս. Ղազար, 1806, էջ 90,93: Տես քաղվածք «յայս զիւղ է շինուած ինչ մեծ եւ բարձրաշէն. որ որպէս յայտ է յերեւութից` շինել է ի վաղ ժամանակաց. յորում է բնակութիւն մարտաւորաց սահմանացն այնցիկ»:

население их перемещается с места на место, чтобы избежать угнетения со стороны турок и курдов.

В 1830 году, предположительно в июле, Кёпрюкёй покинули семьи, пожелавшие переселиться на новое место, в пределы Российской Империи. Переселенцы поселились в Восточном Шираке в селении имирханли в 17 километрах к югу от Гюмри. По данным камерального описания турецких переселенцев за 1832 год, в Имирханли проживало 303 человека, из них 161 человек мужского и 142 человека женского пола. За исключением нескольких семей, которые, вероятно, переселились из Нармана, Сиваса либо махалле Сиваси города Хасанкале и некоторых других населенных пунктов Эрзерумского эялета, большинство его жителей составляли переселенцы из Кёпрюкёя.

Село Кепрюкёй продолжало оставаться армянским через пять лет после переселения в 1830 году большей части, а возможно, и всех его жителей в Восточный Ширак. Известно, что уже в 1830-1831 начался новый процесс, при котором армянское население из северных и западных областей исторической Армении стало перемещаться в области, прилегающие к границе Российской империи, включая Басен, и селиться в селах, покинутых переселенцами¹².

Это подтверждают данные переписи населения Верхнебасенского санджака Эрзерумского эялета 1835 года, выявленной нами в Государственном Османском архиве при Правительстве Турецкой Республики в начале января 2019 года¹³.

Проведение первой по счету переписи населения, в современном её понимании, началось в Османской империи в 1831 году. Она проводилась с целью получения количественных данных для внедрения подушной подати для немусульманского населения, т.е. сбора джизьи с райятов, и учета мусульман для призыва на службу в армию.¹⁴ В этой связи перепись не охватывала женское население, а учет мусульманского и немусульманского населения велся отдельно и несколько отличался по параметрам.

Немусульмане, согласно уровню своего материального положения, подразделялись на три основных категории джизьи: a'lâ – высокую, evsât – среднюю и ednâ – низкую. В 1831 году с этих трех категорий взималось по 48, 24 и 12 курушей соответственно. Но в 1834 году с целью обеспечения дополнительного дохода для только что созданной армии европейского образца уровень джизьи был увеличен и составил 60, 30 и 15 курушей соответственно. Были еще две категории населения, с

¹² Melkonyan A.A., The Demography of the Province of Erzerum: Sixteenth-Twentieth Centuries. // Armenian Karin/Erzerum. Edited by Richard G. Hovannisian, Costa Mesa, California: Mazda Publishers, 2003, pp. 141-142.; Մելքոնյան Ա.Ա., Էրզրում: Էրզրումի նահանգի հայ ազգաբնակչությունը XIX դարի առաջին երեսնամյակին (Պատմաժողովրդագրական ուսումնասիրություն), Երևան, «Հայաստան», 1994, էջ 149-151:

¹³ BOA Fon Kodu: NFS.d., Defter No: 2746, Tarihi: 15 (S) Safer 1251 (12 Haziran 1835), Konusu: Erzurum vilayeti, Erzurum sancağı, Pasin-i Ulya kazası, reaya defteri. (a.g.tt).

¹⁴ Kılıç Ü., The Demographic Structure of Pasinler and its Villages in the First Half of 19th Century / http://www.turkiyatjournal.com/Makaleler/2020223990_Ümit%20KILIÇ.pdf (31.10.2019) // Atatürk University Journal of Turkish Researches Institute, No. 42, Erzurum, 2010, page 243.

которых джизья не взималась, – это *amelmânde*, в которую входили нетрудоспособные, нуждающиеся, пожилые и калеки, и *sıbyan*, т.е. дети. Они не учитывались при сборе налога джизья.

Дефтер райи, т.е. немусульманского населения Верхнебасенского санджака, состоит из 82 страниц и датирован 15 сафара 1251 года, то есть в переводе на григорианский календарь - 12 июня 1835 года. Согласно дефтеру переписи населения село Кёпрюкёй состояло из 24 домов, в которых проживало 99 человек мужского пола в возрасте от одного до 70 лет. Первым в каждом доме перечислен наиболее старший из трудоспособных членов семьи.

Двое жителей отнесены к высокой категории – это главы первой и третьей семей по списку, 56 человек - к средней, три человека - к низкой. 36 человек составляют дети, и два человека пожилые и неспособные работать. Анализируя количество человек в каждой категории, можно прийти к выводу, что большая часть работоспособного населения относилась к средней категории. Неработоспособное население составляло всего два человека в возрасте, согласно дефтеру, 70 лет.

Для каждого человека указано имя и имя отца, рост (высокий, средний либо низкий), цвет бороды либо усов в случае наличия, возраст, степень родства в семье, а также информация о том, к какой непосредственно категории джизьи относится данный человек.

Исследователь Рачья Тарбасян в своей работе, посвященной армянской истории и традициям Эрзерума, пишет: «Армянские крестьяне Басена были хорошо сложены. Зачастую они были светловолосы и голубоглазы».¹⁵ Данные османской переписи населения 1835 года подтверждают информацию Р. Тарбасяна. По данным османской переписи и на примере вышеупомянутого села мы видим, что русым либо светло-русом цветом волос обладали члены восьми семей из двадцати четырёх. Несколько позже, возможно во время проведения последующей переписи в 1842 году, в дефтере были произведены дополнительные записи почерком сиякат. В них указаны даты смерти для усопших, сведения о покинувших и прибывших в село лицах с указанием даты их убытия либо прибытия в интервале между 1835 и 1842 годами. Из записей о покинувших село жителях видно, что глава седьмого семейства в 1836 году ушел в каза Муша, семнадцатое семейство, состоящее из главы и двоих сыновей, в 1838 году ушло в Карс, а три человека из восемнадцатого и двадцать первое семейство ушли в Нижний Басен. В конце списка переписи жителей села дописаны те, кто пришел и поселился в селе в 1839 году.

2.1. Текст касательно принципов транскрипции османского текста латиницей.

Имена и обозначения, прочтение которых вызывает затруднения в связи с неразборчивым почерком, не были транскрибированы, а их места обозначены квадратными скобками, содержащими многоточие [...]. В тех случаях, где это возможно

¹⁵ **Tarbassian H.A.**, *Erzurum (Garin), its Armenian history and traditions* (translated from the Armenian by Nigol Schahgaldian) / https://archive.org/details/ErzurumgarinItsArmenianHistoryAndTraditions_699 (31.10.2019), Garin Compatriotic Union of the United States, 1975, page 26.

проведено сравнение написания имен одних и тех же жителей в переписях 1835 года и следующей переписи 1842 года.

При транскрипции использована латиница современного турецкого языка. При транскрипции армянских имен, содержащих звуки, отсутствующие в современном литературном турецком языке, использованы латинские символы Ğ и X, например, Ğazar – Դշզար, Хаço – Խշչը.

К сожалению, особенности почерка, которым написан османский текст, во многих случаях не отображает различия между глухими и звонкими согласными. Однако в написании таких имен, как, например, Դշիհթ с начальной буквой Ծ [t] или Զ [t]¹⁶ и Պէրրուи через Զ [d], отражаются фонетические особенности каринского диалекта армянского языка. В тех случаях, когда звонкость согласных определить не представляется возможным, при транскрипции применено звучание литературного западноармянского языка.

Следующая перепись населения Верхнебасенского санджака была проведена в 1842 году. На момент этой переписи число жителей села Кёпрюкёй сократилось до 65 человек мужского пола. Для сравнения население села Имирханли, в котором поселились жители Кёпрюкёя в 1830 году, по данным камерального описания 1832 года, насчитывало 303 человека, из них 161 человек мужского пола и 142 женского.

Село Кёпрюкёй продолжало оставаться преимущественно армянским вплоть до 1915 года. О количестве его жителей - мусульман нам не известно, в то время как, по некоторым данным, накануне геноцида в нем проживало более 1100 армян. В селе имелось две армянских церкви и армянская школа «Арамян».¹⁷

О том, что село прежде было армянским, помнят местные жители. В личном общении с одним из местных жителей в начале августа 2019 года нам удалось узнать, что в селе сохранились остатки обеих церквей, армянское кладбище и отдельные хачкары. На сегодняшний день в селе проживают турки и курды-сунниты. Предки последних переселились из районов Дигора.

Заключения: По представленным материалам мы не смогли прийти к однозначному выводу в отношении населения села Кёпрюкёй. Остался невыясненным вопрос о том, кто они - новопоселенцы из соседних областей исторической Армении или оставшиеся после переселения 1830 года коренные, автохтонные жители этого села. Вопрос о том, какие из вышеупомянутых семей являются автохтонными, а какие поселились в Кёпрюкёе между 1830 и 1835 годами, станет предметом дальнейших исследований. Но при этом нам удалось получить точные данные о

¹⁶ Например, житель по имени Դշիհթ под номером 16 в переписи 1835 года записан через начальную Ծ [t], а в переписи 1842 года под номером 9 его же имя, записано через начальную Զ [t].

¹⁷ Բաղդասյան Գ.Մ., Արևմտյան Հայաստանի պատմաժողովրդագրական նկարագիրը մեծ եղեռնի նախօրեին. Մաս չորրորդ: Էրզրումի նահանգի արևելյան և հարավային գավառները / <http://www.ysu.am/files/7-1510055033-.pdf> (31.10.2019) // Վե՛մ համահայկական հանդես, Թիվ 1 (53) հունվար-մարտ, Երևան, 2016, էջ 11:

численности и этническом составе населения после переселения 1830 года и на примере села Кёпрюкёй исследовать и показать сведения по генеалогии, антропологии и исторической демографии, которые может предоставить первая османская перепись населения (1835 года).

Приложение №1¹⁸.

Дефтер райи Верхнебасенского каза Эрзерумского санджака Эрзерумского эялета.

15 сафара 1251 года (12 июня 1835 года).

Райя селения Кёпрюкёй входящего в упомянутый каза.

Reaya-ı karye-i Köprüküy tabi-i kaza-i mezbur

Hane 1

1. Orta boylu kır sakallı Xaço veled-i Ovanes sinn 50 (ala)
Fevt fi 17 C sene 252 (17 Cemaziyelahir 1252)
2. Oğlu orta boylu kara bıyıklı Panos veled-i Xaço sinn 27 (evsat)
3. Oğlu Ovanes veled-i Panos sinn 3
4. Diger oğlu Bedros veled-i Panos sinn 5
Fevt 257 (1257)
5. Diger oğlu Eĝo veled-i Panos sinn 3
Fevt 257 (1257)
6. Diger oğlu orta boylu Kirkor veled-i Xaço sinn 23 (evsat)
7. Oğlu şabb-ı emred [...] veled-i Kirkor sinn 14 (evsat)
8. Diger oğlu Sarkis veled-i Kirkor sinn 4
9. Karındaşı orta boylu kumral bıyıklı Aleksan veled-i Ovanes sinn 35 (evsat)
Fevt 257 (1257)
10. Oğlu orta boylu şabb-ı emred Manuk veled-i Aleksan sinn 15 (evsat)
Fevt fi gurre-i C sene 255 (Cemaziyelahir 1255)
11. Diger oğlu orta boylu çar-eburu Eĝo veled-i Aleksan sinn 20 (evsat)
Oğlu Xaço
Tevellüd [...] sene 256 (1256)
12. Tâbi orta boylu çar-eburu Simon veled-i Giragos sinn 27 (evsat)

Hane 2

13. Orta boylu sarı bıyıklı Manuk veled-i Ovanes sinn 27 (evsat)

Hane 3

14. Orta boylu kır sakallı [...] veled-i Artin sinn 44 (ala)
15. Oğlu orta boylu kara bıyıklı Ovanes veled-i [...] sinn 29 (evsat)
16. Oğlu Tavid veled-i Ovanes sinn 8
17. Diger oğlu şabb-ı emred Kaspar veled-i Ovanes sinn 10
18. Diger oğlu Hambar veled-i Ovanes sinn 3
19. Diger oğlu şabb-ı emred Nahab[et] veled-i [...] sinn 20

¹⁸ Имена и обозначения, прочтение которых вызвало затруднения в связи с неразборчивым почерком, не были транскрибированы, а их места обозначены квадратными скобками, содержащими троеточие [...].

20. Ođlu Kevork veled-i Nahab[et] 1

21. Diger ođlu řabb-ı emred Atam veled-i Minas sinn 15 (evsat)

Hane 4

22. Orta boylu kumral bıyıklı Sarkis veled-i Sađatel sinn 37 (evsat)

23. Ođlu orta boylu řabb-ı emred Toros veled-i Sarkis sinn 18 (evsat)

24. Diger ođlu řabb-ı emred Ovanes veled-i Sarkis sinn 15 (evsat)

25. Diger ođlu Mıgırdiç veled-i Sarkis sinn 1

26. Diger ođlu Ğazar veled-i Sarkis sinn 3

27. Karındaşı orta boylu kara bıyıklı [...] veled-i Sađatel sinn 25 (evsat)

Fevt fi gurre-i C sene 255 (Cemaziyelahir 1255)

28. Ođlu [...] veled-i [...] sinn 3

29. Tabi orta boylu çar-ebru Sahak veled-i Kirkor sinn 23

Hane 5

30. Orta boylu kır sakallı Giragos veled-i Serop sinn 45 (evsat)

31. Ođlu orta boylu kara bıyıklı Serop veled-i Giragos sinn 25 (evsat)

32. Ođlu Avedis veled-i Serop sinn 6

33. Diger ođlu Kalus[t] veled-i Serop sinn 4

34. Diger ođlu orta boylu çar-ebru Mado veled-i Giragos sinn 20 (evsat)

Hane 6

35. Orta boylu kara bıyıklı [...] veled-i Eđo sinn 30 (evsat)

36. Ođlu Sarkis 3

Hane 7

37. Kısa boylu kır sakallı Bedros veled-i Mıgırdiç sinn 46 (evsat)

Reft be kaza-i Muř fi 16 N sene 51 (16 Ramazan 1251) ba ferman-ı sami.

38. Ođlu orta boylu çar-ebru Artin sinn 22 (evsat)

39. Diger ođlu çar-ebru Mıgırdiç veled-i Bedros sinn 17

40. Diger ođlu řabb-ı emred Agop veled-i Bedros sinn 15 (evsat)

Varakı yok

Hane 8

41. Orta boylu sarı bıyıklı [...] veled-i Manuk sinn 30 (evsat)

42. Ođlu Markar veled-i [...] sinn 4

43. Karındaşı orta boylu sarı bıyıklı [...] veled-i Manuk sinn 24 (evsat)

44. Diger karındaşı çar-ebru Abdal veled-i Manuk sinn 20 (evsat)

Varakı yok

45. Babası orta boylu ak sakallı Manuk veled-i Sahak sinn 60 (evsat)

Hane 9

46. Orta boylu kara bıyıklı Giragos veled-i Kaspar sinn 25 (evsat)

47. Ođlu Ovanes veled-i Giragos sinn 9

48. Diger ođlu Kevork veled-i Giragos sinn 3

49. Karındaşı orta boylu kara bıyıklı Tano veled-i Kaspar sinn 23 (evsat)

50. Diger karındaşı řabb-ı emred Mıgırdiç veled-i Kaspar sinn 17 (evsat)

51. Babası orta boylu ak sakallı Kaspar veled-i Ovanes sinn 70 (amelmande)

Hane 10

- 52. Orta boylu kır sakallı Ğarib veled-i Ğızro sinn 47 (evsat)
 - 53. Ođlu orta boylu kara bıyıklı Kirkor veled-i Ğarib sinn 25
 - 54. Ođlu Manuk veled-i Kirkor 1
 - 55. Diger ođlu ar-ebru [...] veled-i Ğarib sinn 20 (evsat)
 - 56. Diger ođlu řabb-ı emred Sarkis veled-i Ğarib sinn 11 (edna)
 - 57. Karındařı orta boylu kır sakallı Ohan veled-i Ğızro sinn 45 (evsat)
- Varakı yok

Hane 11

- 58. Kısa boylu kara bıyıklı Agop veled-i Ğızro sinn 25 (evsat)
- 59. Ođlu [...] řuhur 3
- 60. Karındařı řabb-ı emred Vartan veled-i Ğızro sinn 15 (evsat)
- 61. Babası kısa boylu kır sakallı Ğızro veled-i Amirzat sinn 70 (amelmande)

Hane 12

- 62. Orta boylu kara bıyıklı [...] veled-i Xao sinn 30 (evsat)
- 63. Ođlu Bedros sinn 3
- 64. Diger ođlu Kirkor sinn 1
- 65. Karındařı orta boylu kara bıyıklı [...] veled-i Xao sinn 25 (evsat)
- 66. Ođlu Mıgırdi veled-i Sefer sinn 3
- 67. Diger ođlu [...] veled-i Sefer sinn 1

Hane 13

- 68. Orta boylu kara bıyıklı Markar veled-i Ayvaz sinn 30 (evsat)
- 69. [...] řabb-ı emred Avak veled-i Ğarib sinn 15

Hane 14

- 70. Orta boylu kara bıyıklı [...] veled-i Nigođos sinn 30 (evsat)
- 71. Ođlu řabb-ı emred Manuk sinn 15 (evsat)

Hane 15

- 72. Orta boylu kara bıyıklı Minas veled-i Bođos sinn 30 (evsat)
 - 73. Ođlu Simon sinn 3
 - 74. Diger ođlu Tumas sinn 3
 - 75. Emmisi ođlu řabb-ı emred Asvadur veled-i Andiras sinn 10 (evsat)
- Varakı yok
- 76. Karındařı orta boylu kara bıyıklı Kirkor veled-i Bođos sinn 25 (evsat)

Hane 16

- 77. Orta boylu ak sakallı [...] Agop veled-i Ğazar sinn 57 (evsat)
- Varakı yok
- 78. Ođlu orta boylu sarı bıyıklı Kaspar veled-i Agop sinn 30 (evsat)
- Varakı yok

Hane 17

- 79. Orta boylu ak sakallı Parseđ veled-i Ğazar sinn 55 (evsat)
- Reft be canib-i Kars Kalesi 7 M 254 (7 Muharrem 1254)
- Varakı yok

80. Ođlu orta boylu ar-ebru Nigođos sinn 22 (evsat)

Bu dahi

81. Diger ođlu řabb-ı emred Mıgırdi sinn 18 (evsat)

Bu dahi

Hane 18

82. Kısa boylu kara bıyıklı [...] veled-i [...] sinn 25 (evsat)

Varakı yok

83. Damadı kısa boylu kara bıyıklı Ovanes veled-i Sarkis sinn 27 (evsat)

Reft be Pasin-i Sufla fi 7 C 254 (7 Cemaziyelahir 1254).

84. Ođlu Sarkis veled-i Ovanes sinn 6

Bu dahi

85. Diger ođlu Nahab[et] veled-i Ovanes sinn 2

Bu dahi

Hane 19

86. Orta boylu kara bıyıklı Agop veled-i Ğarib sinn 35 (evsat)

87. Ođlu Xao veled-i Agop sinn 5

88. Diger ođlu Sarkis sinn 1

89. Karındařı orta boylu kara bıyıklı Tumas veled-i Ğarib sinn 30 (evsat)

Varakı yok

Hane 20

90. Orta boylu kara bıyıklı Ğarib veled-i [...] sinn 30 (evsat)

91. Ođlu [...] sinn 2

Hane 21

92. Orta boylu kumral bıyıklı Mıgırdi veled-i Manuk sinn 30 (evsat)

Reft be Pasin-i Sufla fi 7 C sene 254 (7 Cemaziyelahir 1254)

93. Ođlu Ğazar sinn 1

Bu dahi

Hane 22

94. Orta boylu kara bıyıklı Bedros veled-i [...] sinn 30 (evsat)

Varakı yok

95. Ođlu Ayvaz sinn 5

96. Diger ođlu [...] sinn 1

Hane 23

97. Orta boylu sarı bıyıklı Aslan veled-i Kevork sinn 20 (evsat)

Hane 24

98. Kısa boylu kumral bıyıklı Kirkor veled-i Minas sinn 27 (evsat)

99. Ođlu řabb-ı emred [...] sinn 20 (evsat)

A'lâ 02

Evsât 56

Ednâ 03

Sıbyan ve amelmânde 38

Orta boylu kara bıyıklı Martiros veled-i Bedros sinn 20
Amed be karye-i Köprü fi 15 Za sene 4 (15 Zilkade 1254)
Oğlu şabb-ı emred [...] sinn 14
Amed fi minh
Diger oğlu Ovanes sinn 8
Amed fi minh
Orta boylu kara bıyıklı Mato veled-i Ovanes sin 35
Amed be karye-i [...] der kaza-i m (mezkur) fi 19 S sene 255 (19 Safer 1255)
Oğlu Artin
Tevellüd fi R sene 255 (Rebiülahir 1255)

Приложение №2.

Пример перевода на русский язык информации об отдельных семьях села Кёпрюкёй.

Дом 1.

1. Среднего роста, серобородый, Хачо дитя Ованеса, 50 лет, высшей категории.
Умер 17 джумада аль-ахир 1252 года (29 сентября 1836 года).
2. Его сын, среднего роста, черноусый, Панос дитя Хачо, 27 лет, средней категории.
3. Его сын, Ованес дитя Паноса, 3 года.
4. Его другой сын, Петрос дитя Паноса, 5 лет.
Умер в 1257 году (в 1841 году)
5. Его другой сын, Эго дитя Паноса, возраст 3 года.
Умер в 1257 году (в 1841 году).
6. Другой сын, среднего роста, Киркор дитя Хачо, 23 года, средней категории.
7. Его сын, без бороды (прим.: термин *шаббы-эмред*), [...] дитя Киркора, 14 лет, средней категории.
8. Другой сын, Саркис дитя Киркора, 4 года.
9. Его брат, среднего роста, с русыми усами, Алексан дитя Ованеса, 35 лет, средней категории.
Умер в 1257 году (в 1841 году).
10. Его сын, среднего роста, без бороды, Манук дитя Алексана, возраст 15 лет, средней категории.
Умер в начале месяца джумада аль-ахир 1255 года (в августе 1839 года).
11. Его другой сын, среднего роста, с недавно выросшей бородой (прим.: термин *чар-эбру*), Эго (прим.: Егиазар) дитя Алексана, 20 лет, средней категории.
Его сын Хачо.
Родился в 1255 году (в 1839 году).

12. Подданный (прим.: вероятно слуга), среднего роста, с недавно выросшей бородой, Симон дитя Киракоса, 27 лет, средней категории.

Дом 2.

13. Среднего роста, со светло-русыми усами, Манук дитя Авака, возраст 27 лет, средней категории.

Дом 7.

37. Короткого роста, серобородый, Петрос дитя Мкртича, 46 лет, средней категории.

Ушел в каза Муша 16 рамадана 1251 года (5 января 1836 года) согласно ферману.

38. Его сын, среднего роста, с недавно выросшей бородой (прим.: термин *чар-эбру*), Артин, 22 года, средней категории.

39. Его другой сын, с недавно выросшей бородой, Мкртич дитя Петроса, 17 лет.

40. Его другой сын, без бороды, Акоп дитя Петроса, 15 лет, средней категории.

Документ отсутствует.

Дом 17.

79. Среднего роста, белобородый, Барсег дитя Казара, возраст 55, средней категории.

Ушел в сторону Карсской крепости 7 мухаррама 1254 года (2 апреля 1838 года).

Документ отсутствует.

80. Его сын, среднего роста, с недавно выросшей бородой, Никогос, 22 года, средней категории.

Он также (прим.: переселился в Карс).

81. Его другой сын, без бороды, Мкртич, 18 лет, средней категории.

Он также.

Дом 21.

92. Среднего роста, с русыми усами, Мкртич дитя Манука, 30 лет, средней категории.

Ушел в Нижний Басен 7 джумади аль-ахир 1254 года (28 августа 1838 года).

93. Его сын Казар, 1 год.

Он также.

После окончания основного текста переписи 1835 года позже дописаны те, кто поселился в Кеprüкёе после проведения переписи в 1835 году.

Среднего роста, черноусый Мартирос дитя Петроса, 20 лет.

Пришел в селение Кеprü 15 зулькада 1254 года (30 января 1839 года).

Его сын, без бороды, [...], 14 лет.

Пришел тогда же.

Его другой сын Ованес, 8 лет.

Пришел тогда же.

Среднего роста, черноусый Мато сын Ованеса, 35 лет.

Пришел в селение [...] в упомянутом каза 19 сафара 1255 года (4 мая 1839 года).

Его сын Артин.

Родился в месяце рабиу аль-ахир 1255 года (в июне либо июле 1839 года).

ՎԵՐԻՆ ԲԱՍԵՆԻ ՍԱՆՁԱԿԻ 1835 ԹՎԱԿԱՆԻ ՕՍՄԱՆՅԱՆ
ՍԱՐԴԱՀԱՍԱՐԸ ՈՐՊԵՍ ՀԱՅԿԱԿԱՆ ԾԱԳՈՒՄՆԱԲԱՆՈՒԹՅԱՆ
ԱՂԲՅՈՒՐ. ՔՅՈՓՐՅՈՒՔՅՈՅ ԳՅՈՒՂԻ ՕՐԻՆԱԿԸ

Նահապետյան Ա.Ռ.

Բանալի բառեր՝ Շորագյալի ուղեմաս, Իմիրխանյի, Վերին Բասենի սանջակ, Վաղարշավան, Բոլորապահակ, Քյոփրյուքյոյ, օսմանյան մարդահամար, մարդահամարի դեֆթեր, ջիզյա հարկ, ռայա, պատմական ժողովրդագրություն, հայկական ծագումնաբանություն, մարդանվանագիտություն:

Քյոփրյուքյոյ ավանը տեղակայված է Արաքս և Սուրց գետերի միախառնման վայրում: Ըստ Մովսես Խորենացու՝ այդ տեղանքում է հիմնադրվել Վաղարշավան քաղաքը: Սերեռը տեղեկացնում է մոտերքում տեղակայված Բոլորափախակ ամրոցի մասին: Գետերի միախառնման տեղում գտնվում է միջնադարյան յոթնականար կամուրջը, որով անցնում էր Մետաքսի ճանապարհը: Ավանում պահպանվել են քարվանսարայի ավերակները: Կիլիկյան շրջանում կամրջով անցնում էին Հայաստանից Թավրիզ, ինչպես նաև Տրափզոնից Թավրիզ տանող առևտրային ճանապարհները:

1828-1829թթ. ռուս-թուրքական պատերազմի ավարտից հետո Էրզրումի էյալեթի Վերին Բասենի սանջակի Քյոփրյուքյոյն ավանի հայերը 1830թ. Վերաբնակվում են Շորագյալի ուղեմասի Իմիրխան ավանում: Սակայն, արդեն 1835թ. օսմանյան բնակչության հաշվառման տվյալներով Քյոփրյուքյոյում բնակվում էր հայերի 24 ընտանիք, որից 99-ը՝ արական սեռի ներկայացուցիչ: Օսմանյան հաշվառումը ընդգրկում էր միայն արական բնակչությունը և տեղեկություն էր պարունակում անվան, հասակի, մորուքի կամ բեղերի առկայության, գույնի, ինչպես նաև տարիքի, կյանքի մակարդակի, ընտանիքում դիրքի մասին: Որոշ դեպքերում նշվում էին մահվան տարեթվերը: Այն դեպքերում, երբ ընտանիքը լքում էր ավանը, նշվում էր նրանց նոր բնակության վայրը, օրինակ, Ղարսի Բերդ կամ Ներքին Բասեն:

**OTTOMAN CENSUS OF THE POPULATION OF SANJAK OF
UPPER BASEN OF 1835 Y. AS A SOURCE FOR THE ARMENIAN
GENEALOGY: AN EXAMPLE OF KÖPRÜKÖY VILLAGE.**

Nahapetyan A.R.

Key words: *Shuragel distance, Imirkhanly, Upper Basen Sanjak, Valarshavan, Bolorapahak, Koprukoy, Ottoman population census, census defter, jizyah, raya, historical demography, anthroponymy.*

The village of Koprukoy situates near to the confluence of the rivers Arax and Murts. According to Movses Khorenatsi the town of Vagharshavan was found at this place. Sebeos says about the Bolorapahak fortress located nearby. There is a medieval seven arches bridge over Arax at the confluence which was a part of the Silk Road and the remnants of caravanserai are still can be found in the village. In Cilician period, the bridge was used by the trade routes between Ayas and Tabriz and Tabriz and Trapezund.

In 1830, after the end of Russo-Turkish war of 1828-1829 the Armenians of the village of Koprukoy in the Upper Basen Sanjak of Erzerum Eyalet resettle to the village of Imirkhanly in the Shuragel distance. However, according to the Ottoman population census there were 24 Armenian families numbering 99 males in Koprukoy already in 1835.

The Ottoman census of raya covers only the male population and contains data about the name, height, the presence or absence of a beard or mustache and its color, the age of a person, the relationship in the family and the category of jizyah. In some cases, there are indications of the date of death. For those who left the village it is shown the date and the place they left for.

R e f e r e n c e s

1. **Alishan Gh.**, Ayrarat: Bnashkharh Hayastanyayc <http://www.digilib.am/book /1345/1611/11041/?lang=en> (31.10.2019), Venetik, S. Ghazar, 1890 (**In Armenian**).
2. **Soylu H.**, The Historical Development of Koprukoy and the Types of Houses / http://www.turkiyatjournal.com/Makaleler/299502715_1357-5363-1-PB.pdf (31.10.2019) // Ataturk University Journal of Turkish Researches Institute, No. 14, Erzurum, 2000, page 195 (**In Turkish**).
3. **Badalyan G.M.**, Arevmtyan Hayastani patmazhoghovrdakan nkaragire mets yegherni nakhorein. Mas chorord: Erzurumi nahangi arevelyan yev haravayin gavarnere / <http://www.y-su.am/files/7-1510055033-.pdf> (31.10.2019) // Vem hamahaykakan handes, Tiv 1 (53) hunvar-mart, Yerevan, 2016, ej 11 (**In Armenian**).
4. **Başbakanlık Osmanlı Arşivi** Fon Kodu: NFS.d.. Defter No: 2746, Tarihi: 15 (S) Safer 1251 (12 Haziran 1835), Konusu: Erzurum vilayeti, Erzurum sancağı, Pasin-i Ulya kazası, reaya defteri. (a.g.tt) (**In Turkish**).

5. Çelebi E., Evliyâ Çelebi Seyahatnâmesi. Topkapı Sarayı Kütüphanesi Bağdat 304 Numaralı Yazmanın Transkripsiyonu – Dizini, II Kitap, Hazırlayanlar: Kahraman S.A., Kurşun Z., Dağlı Y., İstanbul, Yapı Kredi Yayınları, 1998, s. 106 **(In Turkish)**.
6. Davrizhetsi A., “Kniga istoriy”. Perevod s armyanskogo. (Per. s arm., predisl. i koment. L.A. Khanlaryana, <http://www.armenianhouse.org/davrizhetsi/history-ru/contents.html> (31.10.2019), Moskva, “Nauka”, 1978, str. 56-57, 60-61, 72, 485-486 **(In Russian)**.
7. Hayrapetyan A.S., Aleksantrapoli gavare vichakagrakan nyuterum (XIXd.-XXd. skizb). pastatkheri yev nyuteri zhoghovatsu, Yerevan, Gitutyun, 2011, ej 28 **(In Armenian)**.
8. Hayrapetyan A.S., Arevmtyan gaghtakanutyun teghabashkhume Shoragyali gavarum (Arevelyan Shirak) 1829-1831 tt **(In Armenian)**.
<http://www.shirakcenter.sci.am/pictures/gitashkhatutiunner/2002/153.pdf> (31.10.2019) // HH GAA SHHH kentroni “Gitakan ashkhatutyunner”, h.5, Gyumri, 2002, ej 162 **(In Armenian)**.
9. İnbaşı, M., Çakır, İ. E. Demir, S., 1642 Tarihli Erzurum Eyâleti Mufassal Avâriz Defteri I (Erzurum-Tortum-Isbir-Hinis-Pasin), Ankara, Turk Tarih Kurumu, 2014 **(In Turkish)**.
10. Injijyan Gh., Ashkharhagrutyun chorits masanc ashkharhi / http://greenstone.flib.sci.am/gSDL/collect/armbook/books/ashxarhagrutyun1806h1_index.html (31.10.2019) h. I, Venetik, S. Ghazar, 1806, ej 90, 93 **(In Armenian)**.
11. Khorenatsi M., “Istoriya Armenii”. Per. s drevnearm. yazyka, primechaniya G. Sarkisyana. / <http://www.vehi.net/istoriya/armenia/khorenaci/02.html> (31.10.2019), Yerevan, Ayastan, 1990 **(In Russian)**.
12. Kılıç Ü., The Demographic Structure of Pasinler and its Villages in the First Half of 19th Century/http://www.turkiyatjournal.com/Makaleler/2020223990_Ümit%20KILIÇ.pdf (31.10.2019) // Atatürk University Journal of Turkish Researches Institute, No. 42, Erzurum, 2010, page 243. **(In Turkish)**.
13. Melkonyan A.A., Erzurum: Erzurumi nahangi hay azgabnakchutyune XIX dari arajin yerensamyakin: (Patmazhoghovrdakan usumnasirutyun), Yerevan, “Hayastan”, 1994, ej 149-151 **(In Armenian)**.
14. Sebeos, Istoriya yepiskopa Sebeosa. / Per. s chetv. ispr. arm. izd. St. Malkhasyants / http://www.vostlit.info/Texts/rus10/Sebeos_3/frametext1.htm (31.10.2019), Yerevan, ArmFAN-A., 1939, str. 32 **(In Russian)**.

Ընդունվել է՝ 24.10.2019

Գրախոսվել է՝ 04.11.2019

Հանձնվել է տպ.՝ 08.11.2019

Информация об авторе

Андраник НАГАПЕТЯН – магистр зарубежного регионоведения,
переводчик персидского языка. E-mail:bsna@yandex.ru

ՀՏԴ՝ 93.94

ԴՐՎԱԳՆԵՐ XXII. ՄԿՁԲԻՆ ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼԻ ԳԱՎԱՌՈՒՄ
ՍՈԼԵԳՆԱԾ ՏԱՐԱՓՈԽԻԿ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ*

Արմեն Հայրապետյան

ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն

Բանալի բառեր՝ Ալեքսանդրապոլի գավառ, խոլերա, մալարիա, տիֆ, գյուղական բնակավայրեր, համաճարակային հիվանդություններ, պարբերական մամուլ, մահացության դեպքեր, գաղթականներ:

Սույն հոդվածի շրջանակներում արխիվային նորահայտ վավերագրերի, գիտական գրականության և ժամանակի պարբերական մամուլի հաղորդումների համադրմամբ առանձին ուսումնասիրության առարկա է դարձել XXII. սկզբին Ալեքսանդրապոլի գավառում մոլեգնած տարափոխիկ հիվանդությունների պատմությունը, ներկայացվել է դրանց հայտնվելու հաճախականությունը, լուսաբանվել են տարածման պատճառները, անդրադարձ է կատարվել առողջապահության ոլորտում առկա խնդիրներին, ցույց է տրվել այդ հիվանդությունների թողած ազդեցությունը գավառի ժողովրդագրական պատկերի վրա:

Նախաբան. Բնական վերարտադրությամբ բնակչության թվի համաչափ աճն Ալեքսանդրապոլի գավառում սկսվեց XIXII. 50-ական թվականների կեսերից: Հաջորդ դարասկզբին շարունակվող այդ գործընթացը պարբերաբար խաթարվեց բնական աղետներով, մեծ մասշտաբներ ընդունած աշխատանքային միգրացիայով, անընդմեջ հայտնվող տարափոխիկ հիվանդություններով, պատերազմով և այլ գործոններով: Վերևում թվարկված խնդիրների քննությունը հնարավորինս մանրագնին կատարելու համար ուսումնասիրվող ժամանակահատվածը պայմանականորեն բաժանել ենք երկու շրջափուլերի՝ 1903-1910թթ. և 1914-1916թթ.:

* Հետազոտությունն իրականացվել է ՀՀ ԿԳՄՄՆ գիտության կոմիտեի տրամադրած ֆինանսավորմամբ՝ 18SH-6A007 ծածկագրով գիտական թեմայի շրջանակներում:

Առողջապահության ոլորտում առկա խնդիրներն

Ալեքսանդրապոլի գավառում 1903-1916թթ.

Դարասկզբին Ալեքսանդրապոլի գավառը թատերաբեմ էր դարձել միմյանց հաջորդող ծաղկի, քոթեճի, մալարիայի, տիֆի, խոլերայի և այլ տարափոխիկ հիվանդությունների համար: Հայտնվելով գավառի այս ու այն հատվածում՝ դրանք անմիջապես մեծ տարածում էին ստանում՝ պատճառելով մարդկային զգալի կորուստներ:

Սուր վարակիչ հիվանդությունների շարքից առաջինը գավառում մեծ տարածում ստացավ բնական ծաղիկը: Հիվանդությունը հայտնվեց 1903թ. հունվարի սկզբներին՝ գավառի Մեծ Արքիվալի և Ղոնդաղսագ գյուղերում: Համաճարակի տարածման առաջին երկու շաբաթների ընթացքում գրանցվեց վարակվելու 11 և մահվան՝ 5 դեպք¹: Հաջորդ մեկ ամսվա ընթացքում մահվան ելքով ևս 6 դեպք գրանցվեց գավառակենտրոնում²: Գավառի գյուղական բանակավայրերում ծաղկի վարակը մոլեզնեց մինչև ուշ աշուն, սակայն մահվան դեպքեր այլևս չարձանագրվեցին: Զանգվածային վարակման վերջին դեպքը գրանցվեց նոյեմբերի 18-ին Սարալում՝ 41 հիվանդ:³

Քառամյա դադարից հետո՝ 1907թ. աշնանը, ծաղկի վարակը կրկին հայտնվեց այս անգամ Ղազանչիում և շրջակա գյուղերում: Տարածվելով մանկահասակ երեխաների շրջանում՝ հիվանդությունը, ըստ «Ժայռ» պարբերականի, հոկտեմբերի կեսերից մինչև դեկտեմբերն ընկած ժամանակահատվածում մոտ 150 մանուկների մահվան պատճառ դարձավ⁴: Ծաղկի երրորդ՝ վերջին զանգվածային բռնկումը տեղի ունեցավ 1910թ. սկզբներին: «Ախուրեան» օրաթերթի հավաստմամբ՝ հունվարի կեսերին հայտնվելով Նորաշենում և հարակից գյուղերում, հիվանդությունը կրկին տարածվեց դեռահասների շրջանում՝ պատճառելով մարդկային կորուստներ⁵:

Նույն տարիներին գավառի գյուղերում մեծ տարածում ստացավ նաև անհայտ տիպի խիստ մահաբեր մի հիվանդություն, որի տեսակը մեզ ճշտել չհաջողվեց: Ժամանակի պարբերական մամուլում այդ մասին տեղեկություններ հայտնվեցին միայն 1908թ. սկզբներին, երբ վարակն արդեն հասցրել էր մարդկային զգալի կորուստներ պատճառել: «Ժայռ» պարբերականին թղթակցած Գ. Ղազարյանի հավաստմամբ, «հիւանդութիւնը սկսում էր ոտքերից, ապա անցնում ստամոքսը, յետոյ գլուխը, որի ընթացքում սևանում էին բերանը,

¹ ՀԱԱ, ֆոնդ 102, ցուցակ 2, գործ 866, թ. 11:

² Նույն տեղում, թ. 54:

³ ՀԱԱ, ֆոնդ 102, ցուցակ 2, գործ 866, թ. 178:

⁴ Մոծակ, Մանուկների կոտորած, «Ժայռ», Ալեքսանդրապոլ, 1907, N 6, 27 դեկտեմբերի, էջ 2:

⁵ Գաւառի տեղեկատու. Նորաշեն, «Ախուրեան» օրաթերթ, Ալեքսանդրապոլ, 1910, 25 ապրիլի, N 26, էջ 3:

ատամները, լեզուն, այնուհետև առաջ էր գալիս մահը»: Ախտահարման ողջ ընթացքը շարունակվում էր 4-5 օր, և միայն շատ քչերին էր հաջողվում ապաքինվել: Անհայտ տեսակի այդ հիվանդությունից միայն Մահմուդջուղ գյուղում 1908թ. հունվար-մարտ ամիսներին մահացել է 30 մարդ, իսկ թե ողջ գավառում քանի մարդ է մահացել՝ հայտնի չէ: Փաստ է միայն այն, որ ընտանիքի անդամներից մեկի ախտահարվելու դեպքում ողջ ընտանիքը դատապարտվում էր մահվան: Օրինակ, Դավիթ Սիմոնյանի ընտանիքից մահացել էր 5 մարդ, Հերթեցյաններից՝ 4 մարդ և այլն⁶:

Ի տարբերություն նախորդների՝ գավառի ազգաբնակչությանը համեմատաբար փոքր վնաս հասցրեց քոթեշը: Դարասկզբի պարբերական մամուլում մեզ հաջողվեց գտնել սուր ստրեպտոկոկային այս վարակի զանգվածային բռնկման միայն մեկ հիշատակություն: Ըստ «Ախուրեան» օրաթերթի՝ հիվանդությունը գավառի Բայանդուր գյուղում հայտնվել էր 1909թ. սեպտեմբերի կեսերին՝ Կարսի մարզի Բաշ Շորագյալ գյուղից⁷: Մեկ-երկու շաբաթ անց այն անցել էր Ալեքսանդրապոլ, ապա Օրթաքիլիսա: Չնայած քոթեշի ընդունած մեծ մասշտաբներին՝ առաջին երկու բնակավայրերում մահվան ելքով դեպքեր չէին արձանագրվել և միայն Օրթաքիլիսայում ախտահարված 100 հիվանդներից մահացել էր 30-ը⁸:

1910թ. սկզբներին մամուլում տեղեկություններ հայտնվեցին բժավոր տիֆի համաճարակի բռնկման մասին: Հիվանդության առաջին նշանները երևացին 1909թ. դեկտեմբերին, իսկ արդեն հունվարի վերջերին տիֆը տարածվեց գավառի գյուղերում: «Այնպիսի տներ կան, որ ամբողջ գերդաստանով տիֆով վարակւած են, հիւանդ ու անօգնական», -գրում է «Ախուրեան»-ը⁹: Փետրվարին տիֆով վարակվելու դեպքեր գրանցվեցին նաև Ալեքսանդրապոլի քաղաքային բանտում և երկաթուղու բանվորների շրնջանում¹⁰: Համաճարակը մոլեգնեց մինչև մարտի կեսերը, ապա սկսեց նահանջել, այնպես որ արդեն ապրիլի առաջին օրերին գավառում հիվանդներ այլևս չկային:

Ո՛չ արխիվային վավերագրերում և ո՛չ էլ ժամանակի պարբերական մամուլում տիֆի հասցրած մարդկային վնասների մասին տեղեկություններ չկան,

⁶ Ղազարեան Գ., Մահմուդջուղ, «Ժայռ», Ալեքսանդրապոլ, 1908, N 32, 4 ապրիլի, էջ 3:

⁷ Կ. Ա., Համաճարակ հիւանդութիւններ, «Ախուրեան» օրաթերթ, Ալեքսանդրապոլ, 1909, N 78, 5 նոյեմբերի, էջ 1:

⁸ Թ.Գ., Օրթաքիլիսա, «Ժայռ», Ալեքսանդրապոլ, 1910, N 23, 23 մարտի, էջ 3:

⁹ Ս.Մ., Թօփառլի, «Ախուրեան» օրաթերթ, Ալեքսանդրապոլ, 1910, 24 յունւարի, N 6, էջ 3:

¹⁰ Տիֆի դեմ պայքարում 1910թ. փետրվարի 18-ին մահացավ քաղաքում մեծ հեղինակություն վայելող ազգությամբ վրացի բժիշկ Ս.Հ. Մեսիսին (Մանրամասն տե՛ս Ծ.Ի., Բժիշկ Ս.Հ. Մեսիսի, «Ախուրեան» օրաթերթ, Ալեքսանդրապոլ, 1910, 18 փետրւարի, N 13, էջ 2):

ինչը թույլ է տալիս եզրակացնել, որ չնայած հիվանդության տարածման մասշտաբներին՝ այն, այնուամենայնիվ, մարդկային մեծ զոհերի չի հանգեցրել:

Տիֆի հարվածից չապաքինված՝ 1910թ. հուլիսին գավառը հայտնվեց մալարիայի համաճարակի ճիրաններում: Աֆրիկյան ծագում ունեցող այս հիվանդության տարածման հիմնական արեալը տափաստանային՝ գերազանցապես ճահճոտ շրջաններն են: Երևանի նահանգում մալարիան տարածված էր Երևանի, Սուրմալուի, Էջմիածնի և Շարուր Դարալագյազի գավառներում, բայց ոչ երբեք՝ լեռնային ու նախալեռնային շրջաններում: Սակայն, 1910-1912թթ., պայմանավորված նորմայից շոգ ամառային ամիսներով, հիվանդությունն ընդգրկեց ողջ նահանգի տարածքը՝ ախտահարելով բնակչության ընդհանուր թվի 19%-ը: Ըստ պաշտոնական վիճակագրության՝ նահանգի 906000 բնակիչներից ճահճային տենդով վարակվեց 172515-ը: «Կարելի էր առանց չափազանցութեան ասել, գրում է բժիշկ Ա. Մելիքյանը, որ 1912թ. յետո Հայաստանում չկայ մեկը, որ երբևիցէ հիւանդացած չլինի մալարիայով»¹¹:

Այս համատեքստում մեր ուսումնասիրության առարկա Ալեքսանդրապոլի գավառին մալարիայի հասցրած վնասը կարելի է համարել չնչին: 187500 բնակիչ ունեցող գավառում սուր վարակիչ հիվանդությամբ ախտահարվեց 8887 մարդ կամ բնակչության ընդհանուր թվի միայն 4.7%-ը (1910թ.՝ 4006 մարդ, 1911թ.՝ 2595 մարդ, 1912թ.՝ 2286 մարդ): Համեմատության համար նշենք, որ նույն տարիներին Երևանի գավառում ճահճային տենդը տարածվեց բնակչության 34.2%-ի մոտ (142000 բնակիչ, որից 48592-ը՝ ախտահարված):

XX դարասկզբին Ալեքսանդրապոլի գավառում մոլեզնած տարափոխիկ հիվանդությունների շարքում իր մահաբերությամբ հատկապես աչքի ընկավ խոլերան:

Սուր աղիքային ինֆեկցիոն այս հիվանդությունն առաջին անգամ հայտնվեց 1904թ. աշնանը: Բայագետում ռուսական փոխհյուպատոսի հավաստմամբ, խոլերան Երևանի նահանգ ներթափանցեց Օսմանյան կայսրության Ալաշկերտի կազայից: Վարակի առաջին նշանները երևան եկան հոկտեմբերի 7-ին, երբ, ըստ բժիշկ Խունդաձեի, Էջմիածնի գավառի Մարկարա գյուղում գրանցվեց մահվան 2 դեպք խոլերային շատ նման հիվանդությունից: Չորս օր անց խոլերայով հիվանդներ հայտնաբերվեցին նաև Նախիջևանի գավառում, երկաթուղու շինարարների՝ հիմնականում թուրքահպատակ հույների ու հայերի մեջ: Չնայած նահանգային իշխանությունների գործադրած միջոցառումներին՝ հաջորդ երկու շաբաթների ընթացքում հիվանդությունն ընդունեց ահռելի

¹¹ Մելիքեան Ա., Մալարիան Հայաստանում, «Մալարիա» գիտական հասարակական հանդես, Եր., 1920, N 1, յուլիս, էջ 25:

մասշտաբներ՝ ընդգրկելով Երևանի նահանգի 196 բնակավայր: Ըստ պաշտոնական տեղեկատվության՝ 1904թ. հոկտեմբերի 25-ից մինչև 1905թ. հունվարի 3-ն ընկած ժամանակահատվածում նահանգի տարածքում երկու սեռերից խոլերայով հիվանդացավ 8295 մարդ, որից 3679-ը մահացավ¹²:

Նույն տեղեկատվության համաձայն՝ համաճարակը մարդկային և նյութական ամենամեծ վնասը հասցրեց Երևանի գավառին՝ 2099 հիվանդ ու 1735 մահացած, իսկ ամենաքիչը տուժեց Ալեքսանդրապոլի գավառը: Այստեղ հիվանդության առաջին դեպքը գրանցվեց 1904թ. նոյեմբերի 15-ին քաղաքի երկաթուղային կայարանում: Հաջորդ մեկ ամսվա ընթացքում գրանցվեց խոլերայով հիվանդանալու ևս վեց դեպք՝ 3 մարդ Ալեքսանդրապոլում, 1-ը՝ Մեծ Ղարաքիլիսայում, և 2-ը՝ Վոսկրեսենովկայում: Ախտահարվածներից 5-ը 1904թ. դեկտեմբերի 20-ի դրությամբ մահացան: Անցկացված քննության արդյունքում պարզվեց, որ հիվանդացածներից 5-ը եղել են ճանապարհորդներ, այդ թվում՝ 4-ի մոտ հիվանդության ախտանիշները հայտնաբերվել էին Ալեքսանդրապոլի երկաթուղային կայարանում¹³:

1905թ. գարնանը հիվանդությունն անցավ Թիֆլիսի նահանգ, այնուհետև մոլեզնեց Անդրկովկասի հյուսիսային շրջաններում և նորից հայտնվեց միայն երեք տարի անց: Խոլերայի առաջին նշանները երևան եկան 1908թ. հոկտեմբերի 15-ին: Թե նահանգի տարածքում համաճարակն ի՞նչ մասշտաբներ ընդունեց, արխիվային փաստաթղթերի բացակայության պատճառով ստույգ նշելն անհնար է: Հայտնի է միայն, որ տարածման առաջին շաբաթվա ընթացքում, այսինքն՝ հոկտեմբերի 15-22-ն ընկած ժամանակահատվածում Երևան քաղաքում, համանուն գավառի Թազաքենդ և Ալեքսանդրապոլի գավառի Մեծ Քեթի գյուղերում խոլերայով հիվանդացավ 18 մարդ, որից 11-ը մահացավ: Հաջորդ երկու շաբաթների ընթացքում նահանգի տարածքում հայտնաբերվեց խոլերայի ևս 2 օջախ՝ Ալեքսանդրապոլի գավառի Յաղուրի գյուղում և Էջմիածնի գավառում:

Ընդամենը երկու տարի անց Անդրկովկասը կրկին հայտնվեց խոլերայի ճիրաններում: Հիվանդությունն այս անգամ սկսվեց Բաքվից, անցավ Թիֆլիս, ապա երկաթուղու երկարությամբ իջավ Ղարաքիլիսա, Ալեքսանդրապոլ ու Կարս:

Քաղաքի սանիտարահիգիենիկ վիճակը բարելավելու և խոլերայի հասցնելիք հարվածը հնարավորինս մեղմելու նպատակով Ալեքսանդրապոլի քաղաքային վարչությունը ստեղծեց սանիտար-կատարողական մասնաժողով, իսկ

¹² Подробное описание эпидемии холеры в Эриванской губернии за 1904 год, Памятная книжка Эриванской губернии на 1906 год, Под ред. К.А. Волчанина, Эривань, «Тип. Ованисянца и К», 1905, стр. 93-98.

¹³ Նույն տեղում, էջ 101-108:

քաղաքը բաժանեց սանիտարական 12 շրջանների: Վարչության հաջորդ որոշումներով՝ քաղաքային հիվանդանոցն ու բժշկի բնակարանն ապահովվեցին հեռախոսակապով¹⁴, աղբյուրներից վերցված խմելու ջրի նմուշներն ուղարկվեցին Թիֆլիս՝ փորձաքննության, իսկ թեյարաններն ու սրճարաններն անորոշ ժամանակով փակվեցին¹⁵: Քաղաքային վարչությունն իր վրա վերցրեց նաև ունեզուրկ քաղաքացիներին դեղորայքով ապահովելու և խոլերայից մահացածներին թաղելու ծախսերը¹⁶:

Չնայած ձեռնարկված նախազգուշական միջոցառումներին՝ վարակի տարածումից խուսափել այնուամենայնիվ չհաջողվեց: Խոլերայի հայտնվելու առաջին 5 օրերի ընթացքում Ալեքսանդրապոլում գրանցվեց մահվան 7 դեպք¹⁷: Հաջորդ երկու ամիսների ընթացքում (մինչև օգոստոսի 31-ը), ըստ ոստիկանական տեղեկագրերի, ախտահարվածների թիվը գավառակենտրոնում հասավ 178-ի, իսկ մահացածներինը՝ 82-ի¹⁸: «Ժայռ» պարբերականի հավաստամամբ, նույն ժամանակահատվածում նահանգային կենտրոն Երևանում խոլերայով ախտահարվեց 298 մարդ, որից 198-ը մահացավ¹⁹:

Գյուղերում համաճարակի առաջին զոհերը հայտնվեցին հուլիսի 15-ին՝ Արթիկում, Բաշպուղում և Խաչաքիլիսայում²⁰: Թե հաջորդ շաբաթների ընթացքում խոլերայից մահվան ելքով քանի դեպք գրանցվեց, մեզ պարզել չհաջողվեց: Ըստ «Ախուրեան» օրաթերթի՝ հիվանդությունը հատկապես մեծ տարածում ստացավ Հոռոմում, Թոմարտաշում, Մեջիտլիում, Ղութնիղշլաղում, Փոքր Պարնիում, Իմրխանում, Թալիբօղլիում, Ճլովխանում և Փոքր Ղարաքիլիսայում, որովհետև ամառային շոգերի պատճառով հոսող գետակներն ու ջրհորներն այս գյուղերում ցամաքել էին, և իբրև ջրի աղբյուր մնացել էին նեխված լճակները²¹: Համաճարակը նահանջեց միայն սեպտեմբերի սկզբներին, երբ մի քանի

¹⁴ Լրատու, Ալեքսանդրապոլ, «Ախուրեան» օրաթերթ, Ալեքսանդրապոլ, 1910, 30 յուլիսի, N 51, էջ 4:

¹⁵ Ալեքսանդրապոլ, «Ժայռ», Ալեքսանդրապոլ, 1910, N 58, 29 յուլիսի, էջ 3:

¹⁶ Խոլերան Ալեքսանդրապոլում, «Ժայռ», Ալեքսանդրապոլ, 1910, N 57, 24 յուլիսի, էջ 1:

¹⁷ Խոլերան Ալեքսանդրապոլում, «Ժայռ», Ալեքսանդրապոլ, 1910, N 57, 24 յուլիսի, էջ 3:

¹⁸ Տեղեկագիր, «Ժայռ», Ալեքսանդրապոլ, 1910, N 60, 6 օգոստոսի, էջ 4: Խոլերայով հիանդացածների և մեռածների մասին, «Ախուրեան» օրաթերթ, Ալեքսանդրապոլ, 1910, 12 օգոստոսի, N 54, էջ 3: Խոլերայով հիանդացածների և մեռածների մասին, «Ախուրեան» օրաթերթ, Ալեքսանդրապոլ, 1910, 20 օգոստոսի, N 56, էջ 3: Խոլերայով հիանդացածների և մեռածների մասին, «Ախուրեան» օրաթերթ, Ալեքսանդրապոլ, 1910, 24 օգոստոսի, N 57, էջ 3-4: Խոլերայով հիանդացածների և մեռածների մասին, «Ախուրեան» օրաթերթ, Ալեքսանդրապոլ, 1910, 29 օգոստոսի, N 58, էջ 2: Խոլերայով հիանդացածների և մեռածների մասին, «Ախուրեան» օրաթերթ, Ալեքսանդրապոլ, 1910, 3 սեպտեմբերի, N 59, էջ 2:

¹⁹ Պապիկյան Ս., Խոլերան Երևանում, «Ժայռ», Ալեքսանդրապոլ, 1910, N 70, 12 սեպտեմբերի, էջ 4:

²⁰ Ալեքսանդրապոլ, «Ժայռ», Ալեքսանդրապոլ, 1910, N 58, 29 յուլիսի, էջ 3:

²¹ Տեր-Արիստակեսյան Բ., Գալառի տեղեկատու, «Ախուրեան» օրաթերթ, Ալեքսանդրապոլ, 1910, 12 օգոստոսի, N 54, էջ 3:

շաբաթ շարունակվող անտանելի շոգերը հանկարծակի փոխվեցին վաղաժամ ցրտերով:

Առաջին աշխարհամարտի նախօրեին Ալեքսանդրապոլի գավառի հատկապես գյուղական ավանդապահ ազգաբնակչության համար ուղղակի չարիք դարձան վեներական հիվանդությունները: Դրանք ոչ միայն վտանգեցին սերունդների գոյությունը, այլև հանգեցրին լուրջ բարոյահոգեբանական ճգնաժամի: Ժամանակակիցների հավաստմամբ՝ սեռավարակների տարածման հիմնական պատճառը պանդխտությունն էր: Դարասկզբին Շիրակի գյուղերում մեծ տարածում էր ստացել աշխատանքային միգրացիան դեպի ԱՄՆ: Արտագնա աշխատանքի մեկնում էին հիմնականում երիտասարդ տղամարդիկ: Օտարության մեջ փող վաստակելուց հետո սրանց զգալի մասը վերադառնում էր՝ իր հետ բերելով հիվանդությունների մի մեծ փունջ: Ըստ «Գաւառի ձայն»-ին թղթակցած Ջ. Մեջլումյանի՝ «ցաւը այնքան մեծ չէր լինի, եթէ այդ ախտերը մնային միայն գաղթականի մէջ, սակայն այդպէս չէր»²²: Սեռավարակները տարածվում էին հետևյալ կերպ. մինչ պատանու վերադառնալը նրա ծնողները գյուղում ընտրում էին հարսնացու: Պանդխտությունից վերադարձած երիտասարդը «առանց բժշկական քննութեան», ամուսնանում էր՝ սեռական ճանապարհով հիվանդությունը փոխանցելով կնոջը, իսկ սրանից էլ այն անցնում էր երեխաներին:

Ահավասիկ տարափոխիկ այն հիվանդությունները, որոնք 1903-1910թթ. ընկած ժամանակահատվածում հաջորդաբար ներթափանցեցին Ալեքսանդրապոլի գավառ: «Ախուրեան», «Գաւառի ձայն» և «Ժայռ» պարբերականները հետևեցին դրանց հայտնվելու հաճախականությանը, լուսաբանեցին տարածման պատճառները, հնարավորության սահմաններում ներկայացրին գավառին հասցված նյութական ու մարդկային վնասների մասշտաբները, ինչպես նաև մատնանշեցին առողջապահության ոլորտում առկա խնդիրներն ու առաջարկեցին դրանց լուծման ճանապարհներ:

Այսպես, ըստ «Ժայռ» պարբերականի, ծաղիկը, կարմրուկը, քոթեշն ու տիֆը գավառում մեծ տարածում ստացան, որովհետև գյուղական բնակավայրերը զուրկ էին բժշկական հաստատություններից: Ավելի քան 180.000 բնակիչ ունեցող գավառում XXդ. սկզբին կար մեկ գյուղական բժիշկ Մեծ Ղարաքիլիսայում և մեկ բուժակ Հոռոմում: Արհեստավարժ բժիշկների սակավությունը ճանապարհ էր հարթում գյուղական հեքիմների, դալլաքների ու տարբեր արկածախնդիրների համար²³: Իրավիճակը շտկելու նպատակով 1910 թ. հունվարի

²² Մեջլումեան Ջ., Փոքր Պարնի գիւղ, «Գաւառի ձայն» լրագիր, Ալեքսանդրապոլ, 1914, N 18, 16 փետրւարի, էջ 3:

²³ Մոճակ, Մանուկների կոտորած, «Ժայռ», Ալեքսանդրապոլ, 1907, N 6, 27 դեկտեմբերի, էջ 2:

1-ին Քյավթառլիում բացվեց 6 մահճակալով հիվանդանոց²⁴: Սակայն, դա հարցին լուծում չտվեց, որովհետև գյուղացիությունը բժշկին դիմելու և դրամ ծախսելու փոխարեն «հաւատացած էր, որ հիւանդի... առողջանալը կախում ունի ճակատագրից, իսկ բժշկի... հոգ տանելը աւելորդ բան է»²⁵:

Վարակիչ հիվանդությունների տարածման ևս երկու պատճառ մատնանշում է «Ախուրեան»-ը: Դրանք են՝ գյուղական ազգաբնակչության ժլատությունն ու տգիտությունը: «Երբ նորանցից մինը մեռնում է-գրում է Ա. Միքայելյանցը,-ազգականները մեռածին տալիս են վերջին համբոյրը, իսկ հետոյ համբոյր են տալիս տան առողջ երեխաներին,... ապա մեռածի հագուստները բաժանում նրա ազգականներին»²⁶:

Ի դեպ, տգիտություն կոչվածը, ըստ օրաթերթի, հաճախ հասնում էր գավելշտի: Այսպես, Մեծ Քյավփանակ գյուղի բնակիչներ Խաչո և Սահակ Մինասյան եղբայրները 1907թ. մարտին հիվանդանում են տիֆով: Այն բանից հետո, երբ Խաչոն մահանում է, տնեցիները վերջապես որոշում են դիմել հեքիմի օգնությանը: Վերջինս խորհուրդ է տալիս հիվանդին «նավթի սպիրտ» խմեցնել: Սահակի հարազատները դեղատանը «նավթի սպիրտի» փոխարեն գնում են «անուշադրի սպիրտ» և օգտագործում ողջ ընտանիքով: Հաշված բոպենների ընթացքում «փրկիչ» դեղամիջոցն ընդունած հիվանդը, նրա ընտանիքի անդամներն ու տեսակցության եկած ազգականները մահանում են²⁷:

Մեկ այլ գավելշտալի պատմության, որ տեղի էր ունեցել Փոքր Պարնի գյուղում, «Ժայռ» պարբերականի էջերում անդրադարձել է Գ. Մաջումյանը: «Տիֆը մեր գիւղերում շատ զոհեր տարաւ,-գրում է հողվածագիրը,-մեռանք սրբերին մատաղ խոստանալով, խունկ ու մում վառելով, բայց ոչ մէկը չօգնեց»: Եվ այդ ժամ հուսահատ պարնեցիները գյուղի քահանայի գլխավորությամբ որոշում են հիվանդությանը հաղթել «խորամանկությամբ»: Համագյուղացիներից մեկին բարձրացնում են գյուղի եկեղեցու կտուրը, իսկ մյուսին ուղարկում գերեզմանատուն: Առաջինը կտուրից պիտի հարցներ՝ «այ մարդ, տեղ կա՞յ գերեզմաններում», իսկ երկրորդը պիտի պատասխաներ՝ «տեղ չկայ»: Պարնեցիների տրամաբանությամբ տիֆն այսքանից հետո պիտի թողներ գյուղը: «Բայց արի ու տես, որ այդ աւանակը թարս պատասխան տուեց ու բոռաց՝ «Արեք, արեք,

²⁴ Լրատու, Ալեքսանդրապոլ, «Ախուրեան» օրաթերթ, Ալեքսանդրապոլ, 1910, 4 փետրւարի, N 9, էջ 4:

²⁵ Գաւառի տեղեկատու. Նորաշէն, «Ախուրեան» օրաթերթ, Ալեքսանդրապոլ, 1910, 25 ապրիլի, N 26, էջ 3:

²⁶ Միքայէլեանց Ա., Նամակ Բայինդուրից, «Ախուրեան» օրաթերթ, Ալեքսանդրապոլ, 1909, N 69, 27 սեպտեմբերի, էջ 3:

²⁷ Պուրակ, Նամակ Մեծ Քեափանակից, «Ախուրեան» օրաթերթ, Ալեքսանդրապոլ, 1907, N 26, 4 մայիսի, էջ 3:

սաղ գիւղն էլ որ գաք, տեղ կայ»: Եվ հիւանդութիւնը մնաց գիւղում»-ամփոփում է Գ. Մաջլումյանը²⁸:

Եթե ծաղիկը, քոթեշը, մալարիան, տիֆը կամ սեռավարակները տարածվում էին կլիմայական անբարենպաստ պայմանների, բժշկական հիմնարկությունների սակավության, գյուղական վայ-հեքիմների կամ խավարամտության պատճառով, ապա խոլերայի տարածման հիմնական պատճառն ազգաբնակչության առասպելական փնթիությունն էր:

Անդրկովկասի սանիտարահիգիենիկ վիճակը բարելավելու նպատակով դեռևս XIX դարավերջին կառավարության հատուկ հանձնարարականով երկրամասի բոլոր քաղաքներն ընդունեցին «Սանիտարական պարտադիր կանոններ» խորագրով հատուկ կանոնադրություններ, որոնց կատարումը պարտադիր էր քաղաքացիների համար: Ալեքսանդրապոլի քաղաքային վարչությունը 36 կետերից բաղկացած նմանատիպ կանոնադրություն ընդունեց 1894թ.²⁹: Սակայն հաջորդ երկու տասնամյակների ընթացքում քաղաքի առողջապահական վիճակն ավելի վատթարացավ: Հասարակական արտաքննողներից զուրկ քաղաքի փողոցները վերածվեցին մեկ ընդհանուր արտաքննողի, գետակները ստացան «մուռդառ չայ» անունը, որովհետև աղբանոցներ էին հիշեցնում, իսկ մայրերն ու բակերը ծածկվեցին գոմաղբի հաստ շերտով: «Անմաքրութիւնը դարձել է կենցաղավարութեան եղանակ,-գրել է Գեղամ Արմենը,-այսօր վախ կայ, աչալուրջ լինենք, վաղը վերացաւ վախը՝ նշանակում է պիտի դադարե՞նք զգուշաւոր լինելուց, այսօր համաճարակ հիւանդութիւն կայ՝ մաքրենք քաղաքը, իսկ վաղը վերանալու լինի համաճարակը՝ ձեռքերնիս ծալած նստե՞նք»³⁰:

Խոլերայի վերջին համաճարակի ժամանակ փնթիությանը գումարվեց նաև տեղացիների անասելի անփութությունը: Ականատեսների հավաստմամբ՝ սովորական կառքով դիակը տեղափոխում էին գերեզմանատուն, իսկ հետո առանց այն ախտահանելու սպասարկում էին առողջներին: Կամ թե՛ խոլերայով հիվանդների համար հատուկ բարաք էին կառուցել, բայց դիակները պահելու համար սենյակ չէին նախատեսել, այնպես որ եթե բարաքում օրվա երկրորդ կեսին մեկը մահանար, ապա դիակը՝ մինչև հաջորդ առավոտ մնալու էր առողջների կողքին³¹:

²⁸ Մաջլումյան Գ., Փոքր Պարնի գիւղ. Թալիսման խօլերայի դէմ, «Ժայռ», Ալեքսանդրապոլ, 1910, N 78, 14 հոկտեմբերի, էջ 3:

²⁹ VOX, Մեր քաղաքի առողջապահական դրութիւնը, «Գաւառի ձայն» լրագիր, Ալեքսանդրապոլ, 1914, N 32, 6 ապրիլի, էջ 2:

³⁰ Գեղամ Արմեն, Անճարի զգուշութիւն, «Ախուրեան» օրաթերթ, Ալեքսանդրապոլ, 1910, 10 սեպտեմբերի, N 61, էջ 1:

³¹ Խօլերան սաստկանում է Ալեքսանդրապոլում, «Ժայռ», Ալեքսանդրապոլ, 1910, N 61, 10 օգոստոսի, էջ 1:

1914թ. օգոստոսին սանձագերծվեց Առաջին աշխարհամարտը: Ռազմական գործողությունները Կովկասյան ճակատում սկսվեցին 1914թ. նոյեմբերի սկզբներին: Գրեթե միաժամանակ հայտնվեցին նաև առաջին գաղթականները: Նրանց ընդունման ու տարրական կենսապայմանների ապահովման դժվարին գործն իրենց ուսերին վերցրին Անդրկովկասի հայաշատ նահանգներում ու գավառներում գործող հասարակական կազմակերպությունները: Գաղթականների առաջին խմբերն Ալեքսանդրապոլի գավառ հասան 1914թ. նոյեմբերի կեսերին, իսկ արդեն 1915թ. հունվարի վերջին նրանց թիվը հասավ 6909-ի³²: Չնայած գործադրված բոլոր ջանքերին՝ պատերազմը, գաղթականության օրըստօրե աճող թիվը, սովն ու ցածր կենսամակարդակը էական նախապայմաններ հանդիսացան գավառում համաճարակային հիվանդությունների տարածման համար:

Մամուլում հայտնված առաջին հաղորդումները տարափոխիկ հիվանդություններից տիֆի մասին էին: Ըստ «Մշակ»-ին թղթակցած Գևորգ ք. Մկրտումյանի՝ վարակն Ալեքսանդրապոլ էին բերել Երևանից եկած փախստականները՝ 1915թ. ապրիլի սկզբներին: Սակայն հիվանդությունն առանձնապես մեծ մասշտաբներ չէր ընդունել: Ապրիլի 24-ի դրությամբ հիվանդների ճնշող մեծամասնությունն արդեն ապաքինվել էր, մահացել էր 4 մարդ³³:

Ալեքսանդրապոլի գաղթականների շրջանում տիֆը նորից հայտնվել էր 1915թ. սեպտեմբերի երրորդ տասնօրյակում, սակայն այս անգամ ևս զանգվածային բնույթ չէր կրել: Ըստ Ատրպետի՝ սեպտեմբերի 19-ից 22-ն ընկած ժամանակահատվածում «Ռօղոսեան» հանրակացարանից «Քաղաքների միության» հիվանդանոց էր տեղափոխվել 3 օլթեցի³⁴:

Առավել զանգվածային ու կորստաբեր էր տիֆի երրորդ բռնկումը: «Գաւառի ձայն» օրաթերթի հաղորդած տվյալների համաձայն՝ համաճարակը սկսվել էր 1915թ. դեկտեմբերին, Փոքր Ղարաքիլիսա գյուղում, ապա անցել Արթիկ, Իլիսիարի և տարածվել գավառի մյուս բնակավայրերում³⁵: Գավառում բժշկական շրջայց կատարած Ա. Տեր-Հովհաննիսյանի հավաստմամբ՝ համաճարակի տարածման հիմնական պատճառը կենցաղային անբարենպաստ պայմաններն

³² Однодневная перепись беженцев из Турции, Персии и из мест, пограничных с Турцией (армян, айсоров, греков и пр.) 1914-1915гг, Перепись произведена 30-го января 1915г, Эриваньская. стат. Комиссия, Эривань, «Тип. «Луїс», 1915, стр. 26-31: Ալեքսանդրապոլի գավառը վիճակագրական նյութերում (XIXդ.-XXդ. սկիզբ), Փաստաթղթերի և նյութերի ժողովածու՝ աշխատասիրությամբ **Ա. Հայրապետյանի**, Եր., «Գիտություն» հրատ., 2011, էջ 232-235:

³³ Մկրտումեան Գևորգ ք., Փախստականների մօտ, «Մշակ» օրաթերթ, Թիֆլիս, 1915, N 100, 13 մայիսի, էջ 3:

³⁴ **Ատրպետ**, Փախստականների վիճակը, «Մշակ» օրաթերթ, Թիֆլիս, 1915, N 212, 27 սեպտեմբերի, էջ 3:

³⁵ **Մեակ Յ.**, Խի-Ղարաքիլիսե, «Գաւառի ձայն» լրագիր, Ալեքսանդրապոլ, 1916, N 1, 17 յունւարի, էջ 4:

էին, որոնցում հայտնվել էին գաղթականները: «Եթե բժաւոր տիֆով հիւանդներին ուղարկում ես հիւանդանոց, հարկ եղած դէպքում ուստիկանութեան միջոցով,-գրում է բժիշկը «Հորիզոն»-ի էջերում,-ապա ինչպէս ախտահարել այն ահագին օդաները իրենց ծակ ու ծուկերով, ուր փախստականներից գատ կան ձիեր, եզներ, կովեր, ընտանի աղանիներ, շատ անգամ և հաւեր»³⁶:

Ընդհանուր առմամբ՝ 1915թ. դեկտեմբերին Կարսի մարզում ու Ալեքսանդրապոլի գավառում մոլեզնած բժավոր ու աղիքային տիֆից օրական 3-5 մարդ էր մահացել, ինչն ըստ «Համբաւաբեր»-ի թղթակցի՝ բավականին համեստ թիվ էր, որովհետև Էջմիածնի, Իգդիրի և Երևանի գավառներում նույն հիվանդություններին օրական զոհ էր գնում 30-300 գաղթական³⁷:

Ալեքսանդրապոլի գավառում տիֆի բռնկման վերջին դէպքը մամուլն արձանագրել էր 1916թ. աշնանը: «Համբաւաբեր»-ի թղթակից Տ. Շահբազյանի հաշվումներով՝ հոկտեմբերի 20-ից Աղբիլիսա և Սարիար գյուղերում մոլեզնած համաճարակին օրական զոհ էր գնում մինչև 5 մարդ³⁸:

1915թ. ամռան վերջերին մամուլում տեղեկություններ հայտնվեցին գավառում աղիքային սուր վարակիչ հիվանդությունների, հատկապէս դիզենտերիայի տարածման մասին: «Մշակ»-ին թղթակցած Սարգիս Բոյրազյանի հաշվումներով՝ օգոստոսի 1-8-ն ընկած ժամանակահատվածում միայն Նալբանդ գյուղում հիվանդությանը զոհ էր գնացել 20 մարդ³⁹: Եվս 20-ը, ըստ Ատրպետի, մահացել էր սեպտեմբերի 3-ին քաղաքի հիվանդանոցում⁴⁰: Իսկ ընդհանուր առմամբ՝ 1915թ. օգոստոսի 27-ից մինչև նոյեմբերի 1-ը «Քաղաքների միության» Ալեքսանդրապոլի հիվանդանոցներն ընդունել էին աղիքային հիվանդություններով ախտահարված 518 գաղթականների: Հաջորդ երկու ամիսների ընթացքում սրանցից 397-ը ապաքինվել էին, իսկ 121-ը՝ մահացել (90-ը՝ սեպտեմբերին, 31-ը՝ հոկտեմբերին)⁴¹:

Գաղթականների շրջանում տարածված տարափոխիկ հիվանդություններից մահացության բարձր ցուցանիշներով առանձնացավ նաև ծաղիկը: «Համ-

³⁶ **Տեր-Յովհաննիսեան Ա.**, Ալեքսանդրապոլ, «Հորիզոն» օրաթերթ, Թիֆլիս, 1916, N 5, 10 յունւարի, էջ 5:

³⁷ **Շարաֆեանց Ա.**, Համառօտ տեսութիւն գաղթականութեան, ծագման, արդի կացութեան, Կ.Հ.Բ. Ը.-թեան եւ նրան կից Հայկ. Կենտ. Կոմիտէի գործունէութեան, «Համբաւաբեր» շաբաթաթերթ, Թիֆլիս, 1916, N 4, 17 յունւարի, էջ 102:

³⁸ **Շահբազեան Տ.**, Աղբիլիսա և Սարիար, «Համբաւաբեր» շաբաթաթերթ, Թիֆլիս, 1916, N 47, 20 նոյեմբերի, էջ 1487:

³⁹ Ականատես, Փախստականների վիճակը, «Մշակ» օրաթերթ, Թիֆլիս, 1915, N 177, 13 օգոստոսի, էջ 2:

⁴⁰ **Ատրպետ**, Փախստականների վիճակը, «Մշակ» օրաթերթ, Թիֆլիս, 1915, N 198, 8 սեպտեմբերի, էջ 2:

⁴¹ **Ատրպետ**, Փախստականների հիւանդանոց, «Մշակ» օրաթերթ, Թիֆլիս, 1915, N 249, 10 նոյեմբերի, էջ 3:

բաւաբեր»-ի պնդմամբ՝ 1915թ. դեկտեմբերի կեսերին գավառի մի քանի գյուղերում հայտնված հիվանդությունը, չնայած իր տեղային (լոկալ) բնույթին, 1-10 տարեկան երեխաների շրջանում օրական 7-8 կյանք խլեց⁴²: Օրինակ, ըստ «Հորիզոն» օրաթերթի՝ միայն Մոնգյուրլի գյուղի եկեղեցում 1916թ. հունվարի 5-ի դրությամբ երեխայի 7 դի կար⁴³: Նույն պարբերականի այլ հաղորդագրությունների համաձայն՝ 1915թ. դեկտեմբերից մինչև 1916թ. հունվարի առաջին շաբաթն ընկած ժամանակահատվածում 35 երեխա ծաղկի համաճարակին զոհ էր դարձել Ջաջուռում⁴⁴, 3-ն էլ՝ Ձիթհանքովում⁴⁵:

Տարափոխիկ հիվանդությունների դեմ պայքարելու համար Ալեքսանդրապոլի գավառում առաջին հիվանդանոցն ու դեղատունը, «Հորիզոն» օրաթերթի հավաստմամբ, բացվեցին 1914թ. դեկտեմբերի 27-ին՝ «Եղբայրական օգնության» տեղի կոմիտեի, «Երիտասարդական Միութեան» և «Ալագեազի Ջաւակունք» ընկերությունների համատեղ ջանքերով⁴⁶: Թիֆլիսի «Հայկական կենտրոնական Կոմիտե»-ի կողմից Ալեքսանդրապոլում բացված երկրորդ հիվանդանոցի մասին ազդարարեց «Գաւառի ձայն»-ը⁴⁷: «Քաղաքների Միության» կոմիտեի կողմից 1915թ. հոկտեմբերին Մեծ Ղարաքիլիսայում հիմնված հիվանդանոցի մասին էլ հայտնեց «Մշակ»-ը⁴⁸:

Սակայն համաճարակային հիվանդություններն այս փոքրաթիվ ուժերով արմատախիլ անելն անհնար էր, և 1915թ. հունվարին արևելահայ մամուլն ահազանգեց գոյություն ունեցող հիվանդանոցային ցանցն անհապաղ ընդլայնելու անհրաժեշտության մասին: Օրինակ, «Գաւառի ձայն»-ն այդ տարվա իր անդրանիկ համարում գրում էր, թե գավառում «տարածւած են տիֆ, սկարլատինա, դիֆտերիդ... և գաղթականները ներկայումս ունին բացառապէս բժշկի, ֆելտշերի (բուժակ) և դեղօրայքի կարիք»⁴⁹:

Ցավոք, առաջին քայլերից հետո արևելահայ մամուլը մեզ համար անհայտ պատճառներով այլևս անհրաժեշտ հետևողականություն չցուցաբերեց ա-

⁴² Գաւառ, «Համբաւաբեր» շաբաթաթերթ, Թիֆլիս, 1916, N 3, 10 յունուարի, էջ 77:

⁴³ Մեայուհ, Հետեւանքները և կարծիքների փոխանակութիւնը, «Հորիզոն» օրաթերթ, Թիֆլիս, 1916, N 3, 6 յունուարի, էջ 2:

⁴⁴ Գաւառական կեանք, «Հորիզոն» օրաթերթ, Թիֆլիս, 1916, N 4, 9 յունուարի, էջ 3:

⁴⁵ Տեր-Յովհաննիսեան Ա., Ալեքսանդրապոլ, «Հորիզոն» օրաթերթ, Թիֆլիս, 1916, N 5, 10 յունուարի, էջ 4:

⁴⁶ Ալեքսանդրապոլի «Եղբայրական օգնութեան» կոմիտե, «Հորիզոն» օրաթերթ, Թիֆլիս, 1916, N 8, 14 յունուարի, էջ 5:

⁴⁷ Նոր հիւանդանոց, «Գաւառի ձայն» լրագիր, Ալեքսանդրապոլ, 1915, N 4, 18 յունուարի, էջ 2:

⁴⁸ Իշխան Ա.Մ., Արդութեան-Երկայնաբազուկի զեկուցումը փախստականների մասին, «Մշակ» օրաթերթ, Թիֆլիս, 1915, N 271, 8 դեկտեմբերի, էջ 3:

⁴⁹ Մոճռոճեան Պ., Համառօտ տեղեկագիր Աղեքսանդրապոլի ազգային կենտրոնական յանձնաժողովի գաղթականական սեկցիայի, «Գաւառի ձայն» լրագիր, Ալեքսանդրապոլ, 1915, N 1, 11 յունուարի, էջ 3:

ռողջապահության ոլորտի հիմնախնդիրների նկատմամբ: Մինչդեռ 1915թ. ամռանն այս բնագավառում լրջագույն տեղաշարժեր կատարվեցին. օգոստոսի 27-ին «Եղբայրական օգնության» կոմիտեի հիվանդանոցներն անցան «Քաղաքների Միության» ենթակայության տակ: Ողջ բժշկասանիտարական գործը իր հսկողության տակ վերցրած կոմիտեն մինչև տարեվերջ միայն Ալեքսանդրապոլի գավառում 5 հիվանդանոց հիմնեց, այդ թվում՝ 200 մահճակալով մեկը՝ գավառակենտրոնում, ինչի շնորհիվ գաղթականների շրջանում համաճարակային բռնկումները նվազեցին, իսկ մահացության դեպքերը դարձան հազվադեպ⁵⁰:

Ընդհանուր առմամբ հարկ է նշել, որ Ալեքսանդրապոլի գավառում, շնորհիվ հասարարական կազմակերպությունների և հատկապես «Քաղաքների միության» կոմիտեի անձնուրաց աշխատանքի, մահացության մակարդակն ընդհանուրի համեմատ խիստ ցածր էր: Համաձայն Ալեքսանդրապոլի փոխանորդ Արտակ վարդապետի 1916 թ. հունիսի 16-ին Ամենայն հայոց կաթողիկոս Գևորգ Ե-ին ներկայացրած տեղեկագրի՝ ցրտից, սովից ու հիվանդություններից 1915թ. ընթացքում գավառում մահացել էր ընդամենը 1164 գաղթական (331-ը՝ Ալեքսանդրապոլում, 833-ը՝ գավառի գյուղերում)⁵¹: Համեմատության համար նշենք, որ Բ. Իշխանյանի հաշվումներով՝ Էջմիածնում միայն 1915թ. օգոստոսի վերջին տասնօրյակում սովի և համաճարակի զոհ էր դարձել 2135 մարդ, օրական միջին թվով 236 մարդ⁵²:

Եզրահանգում. Ասփոփելով XXդ. սկզբին Ալեքսանդրապոլի գավառում առկա առողջապահական խնդիրների համառոտ քննությունը՝ նշենք հետևյալը. 1903-1916թթ. ընկած ժամանակահատվածում գավառը թատերաբեմ դարձավ միմյանց հաջորդող տարափոխիկ հիվանդությունների համար: Դրանց պատմությունը մենք պայմանականորեն բաժանեցինք երկու շրջափուլերի: Առաջին փուլում՝ 1903-1910թթ., մեր կողմից արձանագրվեցին ծաղկի, քրթեշի, մալարիայի, տիֆի, խոլերայի և սեռավարակային հիվանդությունների բռնկման դեպ-

⁵⁰ Ալեքսանդրապոլ քաղաքի և համանուն գավառի տարածքում «Քաղաքների միության» կոմիտեի ծավալած հիվանդախնամ գործունեության մասին մանրամասն տե՛ս u Положение беженцев в Александропольском районе (Доклад уполномоч. бакин. Ком-та помощи беженцам без различия национальности А.Г. Иоаннисяна, сделанный им на заседании Комитета 3 окт. 1915 г.), Баку, Тип. Первого Типогр. Т-ва, 1915; Краткие сведения о волне беженцев из Турецкой Армении в июле 1915г. и о мерах, принятых Кавказским Комитетом Союза городов для борьбы с эпидемией среди них, Тифлис, типография И. А. Мартиросянца, 1915; Краткие сведения о положении беженцев на Кавказе и оказанной им Союзом городов помощи за время с 20-го сентября по 1-ое ноября 1915г., вып. 2, Тифлис, Типография «Либерман и К°», 1915.

⁵¹ ՀԱԱ, ֆոնդ 57, ցուցակ 2, գործ 1306, թ. 3-7:

⁵² **Իշխանեան Բ.**, Աղետի եւ տառապանքի աշխարհից, «Մշակ» օրաթերթ, Թիֆլիս, 1915, N 203, 17 սեպտեմբերի, էջ 2: Ի դեպ, 1915թ. օգոստոսի վերջին տասնօրյակում Էջմիածնում մահացածների թիվը հաշվելիս Ա-Դոն նշում է 2613 մարդ (Տե՛ս u Ա-Դո, Մե՛ծ դեպքերը Վասպուրականում 1914-1915թթ., Եր., Տպարան «Լոյս» 1917, էջ 485):

քեր: Ժամանակի պարբերական մամուլը լուսաբանեց դրանց տարածման պատճառները, հնարավորինս ներկայացրեց հասցված վնասների մասշտաբները, իսկ առողջապահության ոլորտի հիմնական խնդիրը համարեց հիվանդանոցների ծայրահեղ սակավությունը: «Ախուրեան», «Գաւառի ձայն» և «Ժայռ» պարբերականների հավաստմամբ՝ բժիշկների բացակայությունը ճանապարհի հարթեց գյուղական հեքիմների, դալլաքների ու այլ արկածախնդիրների համար, իսկ տեղական ազգաբնակչության առասպելական փնթիությունն ու տգիտությունը պատճառ դարձան, որպէսզի գավառ ներթափանցած յուրաքանչյուր հիվանդություն անմիջապէս մեծ տարածում ստանա՝ պատճառելով մարդկային զգալի կորուստներ:

Ինչ վերաբերում է ուսումնասիրության այս փուլում գավառի ժողովրդագրական պատկերի վրա տարափոխիկ հիվանդությունների թողած ազդեցությանը, ապա նշենք, որ աղբյուրների միակողմանիության, իսկ ավելի հաճախ բացակայության պայմաններում այդ հարցին պատասխանելը գրեթէ անհնար է: Ձեռքի տակ եղած սակավաթիվ վիճակագրական տեղեկությունները հիմնականում վերաբերում են Ալեքսանդրապոլ քաղաքին: Անցկացվել է արդյոք հիվանդների ու զոհերի վիճակագրություն գավառի՝ հիվանդանոցներից զուրկ գյուղերում՝ հայտնի չէ: Ստորև ներկայացված վիճակագրական տեղեկություններն այնուամենայնիվ հիմք են տալիս պնդելու, որ տարափոխիկ հիվանդություններն այս փուլում գավառի ժողովրդագրական պատկերի վրա էական ազդեցություն չեն թողել:

Վիճակագրական տեղեկություններ Ալեքսանդրապոլի գավառի 1897-1914թթ. ժողովրդագրական դրության մասին⁵³

Վայրը	1897թ./հազ.մ./	1902թ./հազ.մ./	1908թ./հազ.մ./	1914թ./հազ.մ./
Ալեքսանդրապոլ քաղաքում	30616	33723	33879	51316
Գավառի գյուղերում	134887	147731	153055	171849
Ընդհանուր	165503	181454	186934	223165

Համաճարակային հիվանդությունների տարածման երկրորդ փուլում՝ 1914-1916 թթ., մեր կողմից արձանագրվեցին բժավոր և աղիքային տիֆի, ծաղկի ու դիզիտերիայի բունկման դեպքեր: Պարբերական մամուլն այս անգամ ևս լայնորեն լուսաբանեց բոլոր դեպքերը: «Սշակ», «Գաւառի ձայն», «Հորիզոն», «Համ-

⁵³ Հայրապետյան Ա.Ս., Ալեքսանդրապոլի գավառը վիճակագրական նյութերում /XIXդ.-XXդ. սկիզբ/, փաստաթղթերի և նյութերի ժողովածու, Երևան, «Գիտություն» հրատ., 2011, էջեր 189-191, 197-204, 207-214, 247-248:

բաւարեր» պարբերականների հավաստմամբ՝ շարունակվող պատերազմի ու հսկայական մասշտաբներ ընդունած ներգաղթի պայմաններում հասարակական կազմակերպություններին հաջողվեց անձնուրաց աշխատանքի շնորհիվ կանխել հիվանդությունների տարածումը տեղական ազգաբնակչության շրջանում, ապա ճիշտ ընտրված քաղաքականության արդյունքում հասնել գաղթականության շրջանում մահացության դեպքերի նվազմանը: Օրինակ, 1915թ. ընթացքում Ալեքսանդրապոլի ողջ գավառում ցրտից, սովից ու հիվանդություններից մահացավ 1164 գաղթական, այն դեպքում, երբ Էջմիածնում միայն օգոստոսի վերջին տասնօրյակում սովին ու համաճարակին զոհ գնաց 2135 մարդ:

Ցավոք, աշխարհամարտի առաջին երեք տարիներին ավելի քան 95000 գաղթական ընդունած գավառը 1918թ. մայիսին զինագրավվեց թուրքերի կողմից: Թուրքական վեցամսյա տիրապետությունն ուղղակի դիմախեղեց գավառի ազգաբնակչության էթնիկ պատկերը: Տարբեր հաշվումներով՝ այս նոր եղեռնագործությանը զոհ գնաց մինչև 40000 մարդ⁵⁴: Ստեղծված իրավիճակում պարզել, թե գավառի ժողովրդագրական պատկերի վրա ինչ ազդեցություն կարող էին թողնել 1914-1916թթ. տարածված համաճարակային հիվանդությունները մեր կարծիքով, անիմաստ է:

ЭПИЗОДЫ ИЗ ИСТОРИИ ЭПИДЕМИЧЕСКИХ ЗАБОЛЕВАНИЙ,
ВСПЫХНУВШИХ В АЛЕКСАНДРОПОЛЬСКОМ УЕЗДЕ В НАЧАЛЕ XX ВЕКА

Айрапетян А.С.

Ключевые слова: *Александропольский уезд, холера, тиф, малярия, сельские районы, эпидемические заболевания, периодическая печать, смертность, беженцы.*

Целью отдельного исследования истории эпидемических заболеваний в Александропольском уезде в начале XX века является выявление проблемы в сфере здравоохранения, которые были присущи тому времени, а также их влияние на демографию уезда. Исследуемый период мы условно разделили на две части.

Распространение в 1903-1910гг. чередующихся оспы, малярии, брюшного тифа, венерических болезней в основном было обусловлено малочисленностью

կրթական քաղաքականության իրականացման համար: Ալեքսանդրապոլի քաղաքային վարչության՝ 1919թ. հոկտեմբերի 27-ի՝ դպրոցական գործը կազմակերպելու վերաբերյալ քաղաքային խորհրդին ուղղված զեկուցման մեջ պաշտպանվում են կառավարության գաղափարները պրակտիկ, տարրական պարտադիր և երկսեռ, արտադպրոցական տարիքի երեխաների, և որ կարևոր է՝ շարունակական կրթության վերաբերյալ: «Ներկայ դեմոկրատիկ ինքնավարութեան պարտականութիւններից մեկն էլ հանդիսանում է,- մասնավորապես ասված է այդ զեկուցման մեջ, - դպրոցական գործը ուղիղ հիմքերի վրայ դնելը: Դրա համար անհրաժեշտ է ստեղծել այնպիսի պայմաններ, որի մեջ մանուկ սերունդը հնարավորութիւն ունենայ բարգավաճել և պատրաստել առողջ մտքով այնպէս, որ գործնականին ծանօթանալով, պատրաստի պրակտիկ կեանքի համար»:²⁷ Չեկուցում առաջ է քաշվում նաև տարրական պարտադիր կրթության գաղափարը: Չափազանց անհրաժեշտ է համարվում հատուկ ուշադրություն դարձնել նաև արտադպրոցական տարիքի երեխաների ուսումնառությամբ: Այդ նպատակով առաջարկվում է ստեղծել առանձին դպրոցներ՝ մանկական պարտեզներ երկու սեռի երեխաների համար: Այս հանգամանքը կարևորում էր նրանով, որ սա հիմք կարող էր հանդիսանալ հետագայում երկսեռ տարրական դպրոցներ բացելու համար: Բացի այդ՝ ապահովվում էր կրթության հաջորդականությունը: Կարևորում էր հատկապես մանկական պարտեզների բացման դաստիարակչական և սոցիալական նշանակությունը: Համարվում էր, որ դրանց բացմամբ երեխաները կկտրվեն փողոցից, և կդրվեն նրանց առողջ դաստիարակության հիմքերը, իսկ ծնողները, երեխաներին տեղավորելով մանկապարտեզներում, կկարողանան աշխատանքի անցնել և բարելավել իրենց նյութական վիճակը: Հետաքրքիր էր նաև մանկապարտեզներին առաջարկվող ծրագիրը, որը ներառում էր ձեռարվեստ (նկարչություն), երգեցողություն, երաժշտություն (նվագակցություն և պարեր), մարմնամարզություն, նախապատրաստական զրույց-դասեր, խոսակցություն և լեզվի զարգացում, ծանոթություն բնությանը, մանկական պատմվածքների ընթերցանություն, զբոսանք և խաղեր ու նախնական թվաբանություն: Քաղաքային վարչությունը ենթադրում էր բաց անել սկզբում չորս մանկական պարտեզներ, որոնց ծախսը կլինէր տարեկան մոտավորապես 22000 ռուբլի: Հաճախող մանուկների համար առաջարկվում էր ամսական 100 ռուբլի վարձ, աշակերտության 50%-ին ընդունել ձրի, այնպես, ինչպես որոշված էր քաղաքային դպրոցների համար: Ուսումնավարձից ստացած փողով վարչությունը նախատեսում էր մանուկների համար կազմակերպել այդ տարիքի երեխաներին շատ անհրաժեշտ նախա-

²⁷ ՀԱԱ ֆ. 105, ց. 1, գ. 2776, թ. 4-5:

Ճաշը:²⁸ Սույն զեկույցը ներկայացնելով քաղաքային խորհրդի բարեհաճությանը՝ վարչությունը ենթադրում էր, որ խորհուրդը կընդունի այն իր բոլոր մասերով հաստատող որոշում, ինչպես նաև կառաջարկի վարչությանը անմիջապես անցնել մանկական պարտեզների բացմանը:²⁹ Քաղաքային խորհրդի 1919 թ. հոկտեմբերի 29-ի նիստը որոշում է հաստատել քաղաքում 4 մանկապարտեզ բացելու վերաբերյալ վարչության որոշումը և հանձնարարել վերջինիս միջնորդել կառավարության առաջ՝ 22 հազար ռուբլի փոխանցելու համար և, առանց սպասելու այդ գումարը ստանալուն, բացել մանկապարտեզները:³⁰ Կրթական գործին աջակցում էին նաև Ալեքսանդրապոլի հասարակական կազմակերպություններն ու ընկերությունները: Այսպես՝ «Արտադպրոցական զարգացման ընկերությունը» 1919թ. նոյեմբերին Քաղաքային խորհրդին ուղղված նամակում առաջարկում է կազմակերպել մանկական ակումբներ, ստեղծելու «անհատապես բազմակողմանի զարգացած առողջ քաղաքացի՝ հասարակական խոր հայացքներով»:³¹ Ընկերությունը, մանուկների դաստիարակությունը համարելով հասարակական զարգացման անհրաժեշտ գործոն, նշում էր. «Դաստիարակութեան նպատակն է ստեղծել հարմար միջավայր զարգացնելու երեխայի նորմալ տվյալները, ձգտել ոչ այնքան տալ գիտութեան փաստեր, որքան ստեղծել ընդունակություններ, այսինքն՝ զարգացնել հոգեբանությունը իրա բազմակողմանի մասերով, չը բաւարարելով լոկ ուսումնական տւեալներով, զարգացնել երեխեքի մեջ գիտակցութեան ընդունակութիւն, մտքի տոկունութիւն, որ նա կարողանա անմիջապէս պարզաբանէ իրա շրջապատը, ինքնագործունէութիւն և հասարակականութիւն, գեղարւեստական և բարոյական նորմալ տւեալները, տալ ընդհանուր հասկանալի գիտելիքներ զանազան մասնագիտութիւններից իբրեւ նիւթ երեխայի ինքնուրույն կեանքի, զարգացնել մարմինը»:³² Ընդառաջ գնալով Հանրային կրթության նախարարի առաջարկությանը և նկատի ունենալով ժողովրդական համալսարանների, կիրական օրյա դպրոցների ու հայոց լեզվի դասընթացների, ընդհանրապես արտադպրոցական կրթության տարածմանը կոչված հիմնարկությունների կարիքը՝ տարրական դպրոցների Ալեքսանդրապոլի շրջանային տեսուչը հրավիրում է զանազան դպրոցների և քաղաքային ինքնավարության ներկայացուցիչների ընդհանուր ժողով: Քննելով արտադպրոցական կրթության խնդիրը՝ ժողովը որոշում է կազմել 11 հոգուց բաղկացած հատուկ հանձնաժողով, որի մեջ ի պաշտոնէ

²⁸ ՀԱԱ ֆ. 105, ց. 1, գ. 2776, թ. 4-5:

²⁹ ՀԱԱ ֆ. 105, ց. 1, գ. 2776, թ. 4-5:

³⁰ Նույն տեղում:

³¹ ՀԱԱ ֆ. 105, ց. 1, գ. 2777, թ. 1:

³² ՀԱԱ ֆ. 105, ց. 1, գ. 2777, թ. 1:

մտնում էին նաև շրջանային տեսուչն ու քաղաքի ներկայացուցիչը: Հանձնաժողովը նպատակահարմար է գտնում արտադարձական կրթության և դաստիարակման գործը բաժանել երեք մասերի՝ ժողովրդական համալսարան, գրաճանաչության դպրոց մեծերի և պատանիների համար և հայոց լեզվի դասընթացներ: Միաժամանակ հարց է բարձրացվում ճշտելու այդ գործում Հանրային կրթության նախարարության և քաղաքային ինքնավարության փոխհարաբերությունը: Ըստ Քաղաքային ինքնավարության վարչության՝ այդ գործի ուղղակի հսկողությունն ու ղեկավարությունը պետք է լինեն իր ձեռքում:³³

Ալեքսանդրապոլի տեղական իշխանությունները ջանք չէին խնայում կրթության և մշակույթի զարգացմանն աջակցելու համար՝ մշտապես ընդառաջ գնալով ինչպես պետական մարմինների, այնպես էլ հանրային պահանջներին: 1919 թ. հոկտեմբերի 23-ին ՀՀ հանրային կրթության և արվեստի նախարարը գրությամբ Ալեքսանդրապոլի քաղաքային վարչությունը հայտնում է քաղաքներում և ավաններում թատերական շենքեր կառուցելու համար պետությունից խոշոր վարկ վերցնելու իր մտադրության մասին՝ առաջարկելով ձրի հողամաս տրամադրել և մասնակցել շենքի կառուցման և նախագծի մշակման ծախսերին:³⁴ Ալեքսանդրապոլի քաղաքային վարչությունը նույն օրն իսկ պատասխան գրությամբ համաձայնվում է ոչ միայն տարածք տրամադրել թատրոնի շենքի համար և իր վրա վերցնել ծախսերի մի մասը, այլ նաև առաջարկում՝ առաջին հերթին Ալեքսանդրապոլում սկսել շինարարությունը՝ նախ այն համարելով ծայրահեղ անհրաժեշտություն քաղաքի համար, հետո նաև՝ այստեղ մեծ թվով ազատ աշխատուժի առկայությամբ պայմանավորված:³⁵

Քաղաքային վարչությունը 1920թ. ապրիլին թատերական կյանքի զարգացման նպատակով ընդառաջում է նաև դերասան Ջարիֆյանի խնդրանքին՝ դերասանական խմբի ներկայացումներից քաղաքային տուրք վերցնել ոչ թե 20%, ինչպես մինչ այդ եղել է, այլ՝ 10 %:³⁶

Ալեքսանդրապոլի տեղական ինքնավարության մարմինները հատկապես նախանձախնդիր էին տեղում պետական համալսարանի բացման գործում: Ալեքսանդրապոլի գավառում 1918թ. թուրքերի վարած քաղաքականության հետևանքով ոչ միայն նվազել էր գավառի բնակչության թիվը, այլև փոխվել կազմը: Գավառը զրկվել էր երիտասարդ կարող ուժերից: Ալեքսանդրապոլի բնակչության մեծ մասը հեռացել էր քաղաքից, քաղաքում և գավառում հաստատվել

³³ ՀԱԱ, ֆ. 105, ց. 1, գ. 2777, թ. 4-5:

³⁴ ՀԱԱ, ֆ.105, ց.1, գ.2819, թ.1:

³⁵ ՀԱԱ, ֆ.105, ց.1, գ.2819, թ.2:

³⁶ ՀԱԱ, ֆ.105, ց.1, գ.2892, թ.9:

Էին մեծ թվով գաղթականներ:³⁷ Առավել ծանր էր տնտեսական վիճակը: Գավառը բառիս բուն իմաստով թալանված էր թուրքերի կողմից: Բնակչության նվազումը, սոցիալ-տնտեսական ծանր վիճակը աղետալի հետևանքներ կարող էին ունենալ գավառի հետագա զարգացման համար: Հետևաբար Ալեքսանդրապոլի գավառի տեղական իշխանությունների հիմնական մտահոգությունը գավառի տնտեսական զարգացման և բնակչության քանակի ավելացման խնդիրն էր: Դրա համար կարևոր նշանակություն կարող էր ունենալ մի շարք հիմնարկությունների տեղափոխումը Երևանից Ալեքսանդրապոլ: Հայաստանի կառավարությունը նախատեսում էր համալսարանի բացումը Ալեքսանդրապոլում իրականացնել Երևանում համապատասխան շենքի և բնակարանների սղության պատճառով, այն կարևոր նշանակություն կարող էր ունենալ Ալեքսանդրապոլի տնտեսական և կրթամշակութային կյանքի աշխուժացման գործում: Պատահական չէ, որ երբ 1919թ. հոկտեմբերի 16-ին ՀՀ հանրային կրթության նախարարությունը դիմում է Ալեքսանդրապոլի քաղաքագլխին՝ խնդրելով պարզել, թե հնարավոր է տեղի ուսումնարանների շենքերում ժամանակավորապես տեղավորել համալսարանը և նպաստավոր պայմաններ ստեղծել համալսարանի գոյության համար,³⁸ վերջինս մեծ պատրաստակամությամբ համաձայնվում է համալսարանին հատկացնել Առևտրային ուսումնարանի մի մասը, լուծել դասախոսների բնակարանային խնդիրները և ուսանողական հանրակացարանի հարցը: Ընդ որում, Ալեքսանդրապոլի քաղաքագլուխ Հ. Մելքոնյանը, 1919թ. հոկտեմբերի 30-ին ՀՀ Նախարարների խորհրդի նախագահին գրում է, որ ոչ միայն հնարավոր է, այլև անհրաժեշտ է համալսարանը բացել Ալեքսանդրապոլում:³⁹ Ավելին, նա առաջարկում է Ալեքսանդրապոլ տեղափոխել մի շարք այլ հաստատություններ ևս, ինչպես օրինակ՝ փոստ-հեռագրատունը, երկաթուղային, ջրային և գյուղատնտեսական վարչությունները: «Շնորհիվ բոլոր մինիստրությունների ու դրանց ճիւղերի կենտրոնացման Երևանում,- գրում է քաղաքագլուխը,- որը իրոք չի յարմարեցված այդ բանի համար, ստեղծել է մի վերին աստիճանի ծանր կացություն, որը թե քաղաքացիներին և թե ծառայողներին հիմք է տալիս դժգոհելու: Բնակչութեան խտացումը Երևանում բացի անյարմարութիւններից քաղաքացիներին սպառնում է վարակիչ հիվանդութիւնների առաջանալու և այն տարածելու վտանգով և ազդում է մթերքների գնի բարձրացման վրայ: Մեզ թվում է, որ այնպիսի հաստատութիւններ, ինչպիսիք են համալսարանը, երկաթուղին, ջրային,

³⁷ Ալեքսանեան Կ.Վ, Արևմտահայ գաղթականութեան դրութիւնը Ալեքսանդրապոլի գաւառում 1918-1921թթ., Հայկազեան հայագիտական հանդէս, Պեյրուք, 2013, հ. 33, էջ 83-100:

³⁸ ՀԱԱ, ֆ. 105, ց. 1, գ. 2798, թ. 1:

³⁹ ՀԱԱ, ֆ. 105, ց. 1, գ. 2798, թ. 2:

գյուղատնտեսական, փոստ-հեռագրատան վարչությունները, առանց գործին վնասելու կարելի է փոխադրել Ալեքսանդրապոլ, որը աշխարհագրական դիրքով հանդիսանում է Հայաստանի սկիզբը: Առաջարկում ենք կազմակերպել համալսարանի աշխատանքները Ալեքսանդրապոլում: Մեր առաջարկի ընդունման դեպքում ա), շնչասպառ Երևանը կթեթևանա և բ), Ալեքսանդրապոլին կտրի առաջ գալու և զարգանալու հնարավորություն»:⁴⁰

1919թ. դեկտեմբերի 5-ին հանրային կրթության նախարարի զեկույցի հիման վրա Նախարարների խորհուրդը որոշում է համալսարանը ժամանակավորապես Ալեքսանդրապոլում բացել և մինչև 1919-20թթ. ուսումնական տարվա վերջը պարապմունքներն այնտեղ անցկացնել:⁴¹ Սակայն 1920թ. հունիսի 21-ին Նախարարների խորհուրդը որոշում է համալսարանը տեղափոխել Երևան:⁴² Ալեքսանդրապոլի քաղաքային խորհուրդը, նրա լիազոր ներկայացուցիչները, հանդես գալով դրա դեմ, Հանրային կրթության նախարար Գ. Ղազարյանին ներկայացնում են մի զեկուցագիր, որում համալսարանի տեղափոխումը համարում են վնասակար՝ գրելով. «Ամբողջ երկրի նյութերը քամել և խտացնել մի կետում, և գավառը արյունաքամ անել, համարում ենք մեծապես վնասակար հայրենիքի համար»:⁴³ Քաղաքագլուխը նույնիսկ առաջարկում է Ալեքսանդրապոլում գտնվող նախկին ռուսական զորանոցի՝ Պոլիգոնի տարածքը՝ 56 մասնաշենք տրամադրել համալսարանի ֆակուլտետներին, այն դարձնել ուսանողական ավան:⁴⁴ Հարկ ենք համարում նշել, որ համալսարանը մի շարք պատճառներով այդպես էլ չվերաբացվեց Երևանում, և միայն Հայաստանի Հանրապետության անկումից և խորհրդային կարգեր հաստատվելուց հետո այն շարունակեց աշխատել՝ 1920 թվականի դեկտեմբերի 17-ին Խորհրդային Հայաստանի լուսավորության ժողովրդական կոմիսար Ա. Հովհաննիսյանի հրամանով վերակազմվելով և վերակոչվելով Երևանի ժողովրդական համալսարան:⁴⁵

Հայոց մանուկ պետության համար կարևոր նշանակություն էր ստացել պետական պաշտոնյաների կողմից հայոց լեզվին տիրապետելու խնդիրը: 1920թ. հունվարի 10-ին Հանրային կրթության և արվեստի նախարարը, շրջաբերական գրությամբ Ալեքսանդրապոլի Առևտրային դպրոցի տեսուչ Լևոն

⁴⁰ ՀԱԱ, ֆ. 105, ց. 1, գ. 2798, թ. 2:

⁴¹ ՀԱԱ, ֆ.199, ց.1, գ.98, թ.83: Երևանի համալսարան:1918-1920թթ: Վավերագրերի ժողովածու, կազմ. Մամիկոնյան Ֆ., Միրզոյան Ս., Եր.,1995, էջ134:

⁴² ՀԱԱ, ֆ.199, ց.1, գ.118, թ.128: Երևանի համալսարան:1918-1920թթ: Վավերագրերի ժողովածու, կազմ. Մամիկոնյան Ֆ., Միրզոյան Ս., Եր.,1995, էջ 215:

⁴³ ՀԱԱ, ֆ.307, ց.1., գ.335, թ.95-97:

⁴⁴ ՀԱԱ, ֆ.307, ց.1., գ.335, թ.95-97:

⁴⁵ Երևանի համալսարան:1918-1920թթ: Վավերագրերի ժողովածու, կազմ. Մամիկոնյան Ֆ, Միրզոյան Ս., Եր.,1995, էջ 280: ՀԽՍՀ դեկրետների և հրամանների ժողովածու, պրակ 1, թթ17-18: Էջմիածին, 1921թ:

Սարգսյանին հանձնարարում է կազմակերպել հայոց լեզվի դասընթացներ:⁴⁶ Դասընթացների նպատակը լինելու էր պաշտոնյաներին պարզ և ընթերցելի ձեռագրով պաշտոնական գրություններ գրել և կարդալ սովորեցնելը:⁴⁷ Պարապմունքները պետք է լինեին խիստ գործնական, շաբաթական վեց ժամ և առնվազն չորս օր: Թեև հիմնական մեթոդ առաջարկվում էր արտագրությունների կատարումը, սակայն դասատուներն ազատ էին առաջադրված նպատակին հասնելու համար այլ մեթոդներ ևս իրականացնելու հարցում: Նախարարությունն իր պարտականություն էր համարում նաև անվանել այն պաշտոնյաների ցանկը, որոնք պարտադրաբար պետք է հետևեին դասընթացներին:⁴⁸ Հարկ է նշել, որ բացված ութ խմբերից պարապմունքներին հաճախում են միայն առաջին խմբի մասնակիցները, որոնք, ի դեպ օտարազգիներ էին: Լևոն Սարգսյանը ստիպված է լինում դիմել Հանրային կրթության և Արվեստի նախարարությանը՝ խնդրելով փակել դասընթացները՝ խոստանալով կարգավորել հարցը:⁴⁹ Հետագա ամիսներին, մասնավորապես մայիսյան ապստամբությունից հետո, այս հարցը սրություն է ստանում: 1920թ. մայիսի 30-ի «Պետական լեզուն չիմացող պաշտոնյաների լիկվիդացիայի մասին» օրենքի համաձայն այլևս արգելվում է հայերենին չտիրապետող պաշտոնյաներին, բացառությամբ զինվորականների, շարունակել պաշտոնավարումը, և շատերը ստիպված հեռանում են աշխատանքից:⁵¹

Հանրային կրթության և արվեստի նախարարությունը առանձնակի կարևորություն էր տալիս մանկավարժական վերապատրաստման դասընթացներին: 1920 թ. հունիսի 6-ին Ալեքսանդրապոլում Հանրային կրթության և արվեստի նախարարության դպրոցների բաժնի վարիչ Գ. Էդիլյանի ներկայությամբ և մասնակցությամբ⁵² Խրիմյան պետական դպրոցի դահլիճում բացվում են ամառային մանկավարժական դասընթացներ, որոնց մասնակցում են 130 հոգի:⁵³

⁴⁶ ՀԱԱ, ֆ.307, ց.1,գ.124, թ.58:

⁴⁷ Օրենքի համաձայն՝ վեց ամսվա ընթացքում պետական և հասարակական հիմնարկությունները պարտավոր էին գործնական միջոցներ ձեռք առնել հայերենը պետական գործառնականության պաշտոնական լեզու դարձնելու համար:

⁴⁸ ՀԱԱ, ֆ.307, ց.1,գ.124, թ.57:

⁴⁹ ՀԱԱ, ֆ.307, ց.1, գ.124, թ. 75:

⁵⁰ ՀԱԱ, ֆ. 307, ց.1, գ.124, թ. 76:

⁵¹ ՀՀ Պատվամենտի օրենքները, Եր., 1998, էջ 341:

⁵² Գ. Էդիլյանը դասախոսում էր օրական երկու ժամ դիդակտիկա և մեթոդիկա առարկաները:

⁵³ ՀԱԱ, ֆ.307, ց.1, գ.119,թ. 66:

Յուրաքանչյուր առարկայի դասավանդման ավարտից հետ, ունկնդիրները հանձնում էին քննություն:⁵⁴

Ալեքսանդրապոլում հաջողությամբ ընթանում էր Ֆիզիկական կրթության կազմակերպման գործընթացը: Որբերով լցված Ալեքսանդրապոլում մարմնակրթական շարժումը համարվում էր լավագույն ազդակը հայ պատանիների կյանքի բարոյական խթանման: Պատահական չէ, որ Ալեքսանդրապոլը դառնում է մարզական և սկաուտական շարժման կենտրոն: Դեռևս 1918թ. Ալեքսանդրապոլի Առևտրական ուսումնարանում դասավանդող Մարտին Մարգարյանի* կողմից կազմակերպվում է «Բազե» մարմնակրթական կենտրոնը: Նրա ջանքերով է մարմնամարզական գործիքներով կահավորվում ուսումնարանի մարզադահլիճը, որը առաջինն էր Հայաստանի Հանրապետությունում:

1920թ. օգոստոսին Ալեքսանդրապոլում ստեղծվում է Սկաուտական Տեղական ժամանակավոր խորհուրդ՝ բաղկացած ծնողներից, քաղաքային վարչության ներկայացուցչից, դպրոցների վերատեսուչներից և բժիշկներից, որը կոչված էր վարելու սկաուտական գործը քաղաքում: Հայտնելով այդ մասին՝ Հանրային կրթության նախարարության բժշկական բաժնի վարիչը Քաղաքային վարչությունից պահանջում է հանձնել Խորհրդին Սկաուտության վերաբերյալ գործերը և գումարները:⁵⁵

Մարմնակրթական և սկաուտական շարժման զարգացմանը մեծապես նպաստում է Վահան Չերազը: 1920թ. օգոստոսի 17-ին ՀՀ Հանրային կրթության նախարարին ուղղած նամակում Վահան Չերազը, Տիգրան Խոյանը և Օնիկ Յազմաչյանը, որոնք նախարարության հրավերով եկել էին Հայաստան կազմակերպելու սկաուտական և ընդհանրապես մարմնակրթական շարժումը, առաջարկում են այդ շարժման կենտրոնը դարձնել Ալեքսանդրապոլն իր բազմակողմանի հարամարությունների համար, որպիսի նրանք դիտում էին՝

«ա.աշխարհագրական դիրքը՝ լինելով կենտրոնական մեծագույն քաղաքը, որտեղեն կարելի է շատ դյուրին և արագ անմիջական հարաբերություն ունենալ Երևանի, Ղարսի, Ղարաքիլիսայի, Դիլիջանի և մինչև Պոլսոյ հետ:

բ. մարմնակրթության համար դաշտային պեսպիսություն,

գ. որբերի ավելի հոծ և դասավորված խմբավորում քաղաքի և շրջաններու մեջ,

դ. բնակարանային, գրասենյակի և մարզասրահի հարմարություններ,

⁵⁴ ՀԱԱ, ֆ.307, ց.1, գ.124, թ.67:

* Մարտին Մարգարյանը Պետերբուրգում ուսումնառության տարիներին /1912-1918/ դարձել էր «Սոկոլ» ընկերության անդամ, խորությամբ ծանոթացել չեխական մարմնամարզությանը:

⁵⁵ ՀԱԱ, ֆ.105, ց.1, գ.2857, թ.7:

ե. կլիմայական և առողջապահական առավելություններ»⁵⁶

1920թ. սեպտեմբերի 23-ին Ալեքսանդրապոլում հիմնվում է «Հայաստանի ընդհանուր մարմնակրթական միության Շիրակի մասնաճյուղը»,⁵⁷ որը ստանձնում է Շիրակի նահանգում ֆիզիկական կրթության զարգացման և տարածման պարտականությունը:⁵⁸

1920թ. սեպտեմբերի 24-ին Ալեքսանդրապոլում բացվում է առաջին տեխնիկական դպրոցը: Ամենայն Հայոց կաթողիկոսը իր հեռագրում գրում է. «Մեծ մխիթարութեամբ տեղեկանալով պատմական Շիրակում բացելիք առաջին տեխնիկական դպրոցի մասին, ի սրտե օրհնում եմ կուլտուրական այս նոր հաստատութիւնը ու ցանկանում եմ, որ այն լինի արդիւնաւոր և լրացնի մեր վերանորոգուած Հայրենիքի անհրաժեշտ կարիքները: Օրհնում եմ Ձեզ, նոյնպէս և ապագայ դպրոցի կազմին և աշակերտութեանը»:⁵⁹

1920 թվականի նոյեմբերից մինչև 1921թ. ապրիլը Ալեքսանդրապոլի գավառը կրկին գրավվում է թուրք բարբարոսների կողմից և վեց ամիս ապրում թուրքական բռնազավթման պայմաններում:

Եզրահանգում. Այսպիսով 1917-1920 թվականների քաղաքական բուռն իրադարձություններով հարուստ ժամանակահատվածում Անդրկովկասի ծայրամասային Ալեքսանդրապոլի գավառը դարձավ արևելահայության կրթամշակութային կյանքի կենտրոն:

1917 թ. փետրվարյան հեղափոխությամբ սկսված ազգային զարթոնքը գավառը վերածեց քաղաքական մտքի դարբնոցի, որի քուրայում կոփվեցին մշակութային և քաղաքական նշանավոր գործիչներ, կյանքի կոչվեցին նոր գաղափարներ:

Մանկավարժական և հայագիտական դասընթացների շնորհիվ ազգայնացվեցին դպրոցը և ուսուցչությունը, դրվեցին ազգային նոր դպրոցի հիմքերը:

Չնայած 1918-1920թթ. կրթական համակարգի զարգացման բազմաթիվ խոչընդոտներին՝ Ալեքսանդրապոլի տեղական իշխանության մարմիններն այստեղ զգալի աշխատանք կատարեցին Հայաստանի Հանրապետության կառավարության կրթական քաղաքականության իրականացման ուղղությամբ: Այդ քաղաքականության սկզբնական, պարտադիր, երկսեռ, պրակտիկ և արտադպրոցական կրթության, բնակչության անգրագիտության վերացման և

⁵⁶ ՀԱԱ, ֆ.207, ց.1, գ.217, թթ. 59-60: Պապոյան Ռ., Ֆիզիկական կուլտուրան Ալեքսանդրապոլում, Գյումրի, 2002, էջ 68:

⁵⁷ Միության մեջ մտնում էին «Բազե» ընկերությունը, Ֆուտբոլի խմբակներ, սկաուտական խմբակներ, «Ատլետիկ», մասնաճյուղը, և այլն:

⁵⁸ ՀԱԱ, ֆ.105, ց.1, գ.2857, թ.1-2:

⁵⁹ ՀԱԱ, ֆ.57, ց.2, գ.1171, թ.2:

կրթության շարունակականության մասին առանցքային գաղափարները հետագայում ընկան խորհրդային կրթական համակարգի հիմքում և զարգացում ստացան խորհրդային տարիներին:

ОБРАЗОВАНИЕ И КУЛЬТУРНАЯ ЖИЗНЬ В АЛЕКСАНДРОПОЛЬСКОМ УЕЗДЕ В 1917-1920ГГ.

Александян К. В.

Ключевые слова: *национализация и демократизация школ, образовательная и культурная жизнь, арменоведческие и педагогические курсы, фольклор, городская автономия, образование, театр, университет.*

В статье рассмотрены вопросы революционных реформ в области образования и культурной жизни Александропольского уезда в эпоху бурных политических событий 1917-1920гг., представлены процессы национализации, демократизации и реформирования школ, которые начались в Александропольском уезде сразу после Февральской революции и были закончены в годы Первой Республики созданием новой армянской школы.

Стараниями местных властей и общественности Александропольский уезд был превращен в настоящую кузницу образования и культурной жизни, где были выкованы и призваны к жизни идеи, питавшие армянскую политическую мысль. Образование и культура стали тем оплотом, на основе которого в начале XX века воскресло тело и истерзанная душа армянского народа.

EDUCATIONAL AND CULTURAL LIFE IN ALEXANDRAPOL PROVINCE IN 1917-1920

Aleqsanyan A. V.

Key words: *nationalization and democratization of schools, educational and cultural life, Armenian studies and pedagogical courses, folklore, urban autonomy, education, theater, university.*

The article is on the revolutionary reforms of the educational cultural life in Aleksandrapol province in the years full of turbulent political events of 1917-1920. presents the processes of nationalization, democratization and reorganization of schools started immediately after the February Revolution in Aleksandrapol province, which ended with the establishment of a new Armenian school in the years of the First Republic.

Thanks to the efforts of the local authorities and the society of Aleksandrapol province, the province has become a veritable forge of educational cultural endeavors, where the ideas that nourish the Armenian political mind have been tempered and brought to life.

The education and the culture have become the bulwark upon which the body and the lacerated soul of the Armenians were lifted up which were oppressed at the beginning of the century.

References

1. Aleksanyan K. V., Arevmtahaj gaxtakanutjan drutjuny Aleksandropoli gavarum 1918-1921, h.33, Hajkazjan hajagitakan handes, Pejrut, 2013 (In Armenian).
2. Aleksanyan K. V., krtakan gorci kazmakerpumn Aleksandropoli gavarum 1918-1920, h.10, HH GAA SHHHK , Gitakan ashxatutjunner, «Izd. GA», Gyumri,2007 (In Armenian).
3. Aleksanyan K. V., Pastatxter 1918 tvakani majisin turkakan banaki koxmic Aleksandropoli gravman ev qaxaqajin inqnavarutjan nor marminneri dzevavorman veraberjal, «Izd. Banber Hajastani arxivneri», tiv 1,Yerevan, 2011 (In Armenian).
4. Aleksanyan K. V., Hajastani arajin Hanrapetutjan lezvakan qaxaqakanutjan harci shurj h.14, HH GAA SHHHK, Gyumri, Gitakan ashxatutjunner, «Izd. GA», 2011(In Armenian).
5. Papoyan R., Fizikakan kulturan Aleksandrapolum, Gymri, «Izd. Dpir», 2002 (In Armenian).

*Ընդունվել է՝ 20.05.2019
Գրախոսվել է՝ 27. 05.2019
Հանձնվել է սույ.՝ 11.11.2019*

Տեղեկություններ հեղինակի մասին՝

Կարինե ԱԼԵՔՍԱՆՅԱՆ՝ պատմ. գիտ. թեկնածու, դոցենտ
ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների
կենտրոնի գիտաշխատող, էլ փոստ՝ karineal@mail.ru

ՀՏԴ՝ 930.85

«ՀԱՅԵԼԻ»-Ն՝ ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼԻ ԱՌԱՋԻՆ ԵՐԳԻԾԱԹԵՐԹ
Գևորգ Այվազյան

ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն

Բանալի բառեր՝ երգիծանք, Էջմիածին, Փառնակես, դպրոց, եկեղեցի, ֆելիետոն, Երևան, «Մշակ», կլուբ, Ալեքսանդրապոլ:

Ալեքսանդրապոլում և Երևանում ճանաչված ուսուցիչ Մակար Տեր-Սարգսյանը խմբագրական-հրատարակչական բեղուն գործունեություն է ունեցել: Հրապարակման մեջ ներկայացված է նրա ֆելիետոնային ժառանգության մեծ մասը կազմող «Հայելի» երգիծաթերթի պատմությունը: Հեղինակի առանձնահատուկ ուշադրության կենտրոնում «Հայելի»-ն է՝ որպես Ալեքսանդրապոլի հասարակական միջավայրի ծնունդ: Քննարկվել են թերթի բովանդակությանը, ուղղվածությանը, երգիծանքի արտահայտչամիջոցներին վերաբերող հարցեր:

Նախաբան. Ալեքսանդրապոլի ու Երևանի մի շարք դպրոցների երկարամյա ուսուցիչ Մակար Տեր-Սարգսյանը (Փառնակես, 1855-1912թթ.)¹ զբաղվել է նաև լրագրական-հրատարակչական բուռն գործունեությամբ: Նրա հրատարակությունները, հատկապես «Հայելի» ֆելիետոնային երգիծաթերթը, աչքի են ընկնում XIX դարի երկրորդ կեսի և XX դարի սկզբի հայ հասարակական-քաղաքական կյանքի, միջազգային իրադրության խորը իմացությամբ: Ի դեպ, «Հայելու» պատմության ուսումնասիրությունը խիստ համահունչ է «Գյումրին՝ հումորի մայրաքաղաք» արդիական բանաձևումին: «Հայելի»-ում Երևանի

¹ Մակար Տեր-Սարգսյանը ծնվել է Հին Նախիջևան գավառի Աստապատ գյուղում երկրագործ և բրուտ Հարությունի ընտանիքում: Փոքր հասակում զրկվել է ծնողներից: Նրա և քրոջ մասին հոգ են տանել հորեղբայրները: 1866թ. հաստատվել է Թիֆլիսում և որպես որդեգիր սովորել Ներսիսյան դպրոցում: Դպրոցն ավարտել է 1872թ. հունիսին: Կարճ ժամանակ Թիֆլիսում Գ.Սունդուկյանի պիեսներն արտագրելուց, ուսուցչություն անելուց հետո 1873թ. սեպտեմբերին տեղափոխվել է Ալեքսանդրապոլ: Աշխատել է տեղի Վիճակային, Արդության և Սահականուշյան դպրոցներում: 1887թ. մինչև 1912թ. դասավանդել է Երևանի Թեմական դպրոցում: 40 տարվա մանկավարժը գեղագրության, զծագրության, նկարչության դպրոցական ձեռնարկների, տպագիր և անտպայ թերթի զավեշտական պիեսների հեղինակ է (Տե՛ս «Կռան», Երևան, 1911, №2, էջ 4-5, № 4, էջ 4-5):

նահանգի և տարածաշրջանի հայաշատ քաղաքների (Ալեքսանդրապոլ, Երևան, Թիֆլիս, Բաքու, Կ.Պոլիս, Շուշի, Կարս, Սղնախ, Ղզլար, Ջեյթուն և այլն) մասին Փառնակեսի դիտարկումները հազվագյուտ հետաքրքրություն կարող են ներկայացնել նաև այսօր:

Փառնակեսը՝ իբրև հմուտ երգիծաբան, քաղաքային մշակույթի պատմաբան, Թիֆլիսի «Մեղու Հայաստանի» և «Նոր-Դար» պարբերականներում շարունակում և զարգացնում էր պարոնյանական երգիծանքը: Հայ գրականության, մանկավարժական մտքի, թատրոնի, երգիծական մամուլի պատմության մասնագետներն իրենց աշխատություններում հակիրճ անդրադարձել են միայն Փառնակեսի թատերգություններին, հեղինակած դպրոցական դասագրքերին:² Փառնակեսը՝ որպես երգիծաբան, դուրս է մնացել նաև «Ձուռնա-Տմբլա» ֆելիետոնային երգիծաթերթի հրատարակիչ Կոստանդին Մելիք-Շահնազարյանին (Տմբլաչի Խաչան) նվիրված արժեքավոր հետազոտություններից³: Չնայած, ինչպես Փառնակեսն է նշում. ««Հայելի»-ով առաջ են եկել ծաղրական թերթեր հրատարակողներ իրենց ծաղրական խմբագիրներով: ...«Հայելին» ստեղծել է Սօծակներ ու Ձուռնաներ» [1892, №1]: Բանասեր Ս.Նազարյանը, խոսելով արևելահայ երգիծական մամուլի պատմությունից, անդրադառնում է նաև գեղարվեստական, երգիծաբանական, պատկերազարդ «Հայելի» շաբաթաթերթին (Թիֆլիս, 1906-1907թթ., խմբագիր-հրատարակիչ՝ Բարդուղիմեոս Ճեպեյան): Շփոթելով ժամանակը և հանգամանքները՝ Ս.Նազարյանը գրում է, թե «Հայելին» փաստորեն խմբագրել է դրամատուրգ Փառնակեսը:⁴ Հողվածի հեղինակի սխալի պատճառն ամենայն հավանականությամբ այն թղթակցությունն է,⁵ որ Ճեպեյանի «Հայելի»-ում դրել է Փառնակեսը, որի մեջ դժգոհությունն է հայտնում իր

² **Փափագեան Վ.**, Պատմություն հայոց գրականության (բանահիստորեան պատմություն): Սկզբից մինչև մեր օրերը, Թիֆլիս, Էլեկտրաշարժ տպարան օր. Ն.Ադանեանի, 1910, էջ 630: Հայ նոր գրականության պատմություն, հատոր 3, Եր., ՀՄՍՀ ԳԱ հրատարակչություն, 1964, էջ 676-677: Հայոց պատմություն: Հատոր III: Նոր ժամանակաշրջան (XVII դարի երկրորդ կես-1918թ.): Գիրք երկրորդ (1901-1918թթ., հայ գաղթավայրերը, պարբերական մամուլը և մշակույթը XIXդ. և XXդ. սկզբին), Եր., «Ձանգակ» հրատարակչություն, 2015, էջ 234:

³ **Հայրապետյան Թ.**, Կոստանդին Մելիք-Շահնազարյան (Տմբլաչի Խաչան) 1857-1940: Կյանքն ու գործը: Հայ ազգագրություն և բանահյուսություն: Նյութեր եւ ուսումնասիրություններ, 24, Եր., ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2007, էջ 9-118: **Միրզոյան Ե.**, Տմբլաչի Խաչանի «Ձուռնա-Տմբլայի» լեզվական արվեստը, Ստեփանակերտ, «Դիզակ պլյուս» ՍՊԸ, 2007, 184 էջ: Հայ նոր գրականության պատմություն, հատոր 4, Եր., ՀՄՍՀ ԳԱ հրատարակչություն, 1972, էջ 572-576:

⁴ **Նազարյան Ս.Ս.**, Արևելահայ երգիծական մամուլի պատմությունից (1906-1915) // Լրաբեր հասարակական գիտությունների, Երևան, 2000, №1, էջ 144:

⁵ «Հայելի», Թիֆլիս, 1906, , նոյեմբերի 27, №3, էջ 19-20:

թերթի անունը յուրացնելու համար և իրեն իրավացիորեն կոչում է «Հայելի»-ի «իսկական» խմբագիր:

Ալեքսանդրապոլում շաբաթաթերթ հրատարակելու փորձերը վերաբերում են 1873, 1874 և 1881թթ.⁶: Առաջինը նախաձեռնել էր հոգևոր-հասարակական գործիչ Հովսեփ Կոստանյանցը: 1874թ. քաղաքի «ուսումնական խումբը մտածում էր մի ազնիւ նպատակի վերայ.-հրատարակել մի որևիցէ լրագիր: Շատ աշխատեցին, չարչարուեցին, բայց վերջը յայտնուեցաւ, որ անհնարին է հրատարակել այստեղ շաբաթաթերթ լրագիր»:⁷ Ալեքսանդրապոլում թերթ հրատարակելու բոլոր նախաձեռնություններն էլ տարբեր պատճառներով ձախողվեցին:

Նշենք, որ առնվազն 1876 թվականից Գևորգ Մանոյանցի և Ստեփան Աղաբաբյանցի ջանքերով մի քանի տարի առաջ բացված Ալեքսանդրապոլի հայկական տպարանն ուներ զրքեր և թերթեր տպագրելու հնարավորություն: Ուշագրավ է, որ Գյումրիում տպարան բացելու մտադրություն եղել է դեռևս 1837 թվականին: Այդ մասին իմանում ենք Երևանի կոնսիստորիայից Գյումրու հոգևոր առաջնորդ Նիկողայոս Եպիսկոպոսին ուղղված 1837թ. դեկտեմբերի 20-ով թվագրվող գրությունից: Կոնսիստորիան, պատասխանելով հոգևոր առաջնորդի երկու դիմումներին, թույլատրում է Գյումրիում եկեղեցի և տպարան կառուցելու համար հանգանակություն կազմակերպել:⁸

Քաղաքային թերթ հրատարակելու միտքը հանգիստ չէր տալիս «ուսումնական խմբի» անդամ, «Ալեքսանդրապոլի դպրոցների ոսկեդարի» փայլուն ներկայացուցիչ երիտասարդ ուսուցիչ, թատերագիր, հրապարակախոս Մակար Տեր-Սարգսյանցին: XIX դարի երկրորդ կեսի Ալեքսանդրապոլի հայ հասարակական միջավայրից ազդվելով՝ նա արևելահայ երգիծական մամուլի պատմությանն անձանոթ ձևաչափով «Մեղու Հայաստանի» պարբերականում սկսում է հրատարակել «Հայելի» ֆելիետոնային երգիծաթերթը:

Մ.Տեր-Սարգսյանցը հայտնի էր Փառնակես ծածկանունով: Փառնակեսը Միհրդատ VI Պոնտացու (Ք.ա. 121/0-63թթ.) ապստամբ որդին էր: Գրական աւպարեզում Մ.Տեր-Սարգսյանցի կողմից այդ պատմական անձի կերպավորումը խոսում է նրա հավակնոտ ծրագրեր և քաղաքացիական բարձր գիտակցություն ունենալու մասին: Հորը բերդի մեջ պահող Փառնակեսի նման Մ.Տեր-Սարգսյանցի հողվածները և ֆելիետոնները նեղն էին դնում հասարակական կյանքի հալածիչներին: Կարծես նրան են վերաբերում թագավորազն Փառնակեսի ար-

⁶ Տեղացի, Նամակ Ալեքսանդրապոլից // «Մշակ», Թիֆլիս, 1882, №62, էջ 2:

⁷ «Մեղու Հայաստանի», Թիֆլիս, 1875, №9, 8 մարտի, էջ 3, Լուր-Լեր:

⁸ Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտ, Կաթողիկոսական դիվան, թղթապանակ 91, վավերագիր 98:

տասանած հետևյալ տողերը. «Միհրդատայ ահը օր աշխարհիս կէսը տարածուեցաւ, Փառնակեսինը բոլոր աշխարհք պիտի ազդէ ու զարհուրեցնէ»:⁹

1883-1902 թթ. ընթացքում լույս է տեսել «Հայելի» ոչ սովորական երգիծաթերթի 39 համար¹⁰ և 4 հավելված: 1883-1886թթ. երգիծաթերթը հրատարակվել է «Մեղու Հայաստանի»-ի, իսկ 1887-1902թթ. «Նոր-Դար»-ի ֆելիետոն բաժնում: 1888-1891թթ., 1895-1897թթ. թերթը խմբագիր-հրատարակչի զբաղվածության և այլ պատճառներով չի հրատարակվել: Թերթի նյութերը 1883-1887թթ. գրվել են Գյումրիում, իսկ 1892-1902թթ.՝ Երևանում: Փառնակեսն իր երգիծաթերթի տարիքը նշում է 19 տարեկան՝ ներառելով նաև դրա լույս չտեսած ժամանակահատվածը: Իրականում երգիծաթերթը հրատարակվել է 13 տարի: Սատիրան ակնհայտ է արդեն ֆելիետոն-երգիծաթերթի բնաբանից.

Չավեշտական հրատարակություն

Լոյս է տեսնում ամիսը մի անգամ:

Յայտարարությունները տպւում են ձրի:

Ստորագրուիլ ուզողները թող դիմեն Թիֆլիս՝ «Մեղուի» խմբագրությունը:

Խմբագրությունը միշտ փակ է:

Լուրջ թղթակցություններ չեն ընդունվում:

Ծնւում է Գիւմրիում, մկրտվում Թիֆլիսում [1883, №1]:

Ժամանակի ընթացքում այն փոխվել է, ինչպես՝

...

Լոյս է տեսնում տարին չգիտենք քանի անգամ:

...

Ստորագրուիլ ուզողները թող դիմեն Թիֆլիս՝ «Նոր-Դարի»

խմբագրությունը:

... [1887, №1]:

կամ՝

Չէ՞ ս ամաչում, որ փող չ'տուած կարդում է՛ ս:

...

Լոյս է տեսնում ամիսը մի անգամ:

...

Ծնւում է Երևանում, մկրտվում Թիֆլիսում [1894, № դեկտեմբեր և հունվար]:

⁹ **Միհրդատ:** Ողբերգություն: Յօրինեաց Պ.Սարգիս Տ.Սարգսար Վանանդեցեան, Կ.Պօլիս, ի տպարանի Հ.Գայօլի, 1858, էջ 36:

¹⁰ 1883թ. 6 համար և համապատասխանաբար 1884թ.՝ 1, 1885թ.՝ 1, 1886թ.՝ 4, 1887թ.՝ 2, 1892թ.՝ 5, 1893թ.՝ 2, 1894թ.՝ 6, 1898թ.՝ 4, 1899թ.՝ 1, 1900թ.՝ 2, 1901թ.՝ 4, 1902թ.՝ 1:

Փառնակեսն այսպես է ներկայացրել իր կողմից երգիծաթերթ հրատարակելու հանգամանքները. «Երկար մտածելուց յետոյ որոշեցի այնպիսի բան ի լոյս ընծայել, որ Ռուսաստանի հայ մամուլի պատմութեան մէջ մինչ այսօրս դեռ գոյութիւն չ'ունենար: Փափագիս հասայ, որոշեցի զաւելջտական մի ամսագիր հրատարակել «Հայելի» անունով, բայց որովհետև գրպանիս դարտակութիւնը չէր թոյլ տալիս մէկէն ի մէկ ծախքի տակ ընկնել, ուստի և յարմար դատեցի ուրիշ միջոցի դիմել. ինդրեցի և թոյլտուութիւն ստացայ «Մեղուի» պ. Խմբագրից՝ իմ ամսագիրս «Մեղուի» մէջ հրատարակել, որի՝ համար էլ ի հարկէ իշխանութիւնից իրաւունք ստանալու կարիք չը մնայ» [1883, №1]:¹¹ Նրա մտացածին թղթակիցները¹² գնահատել են հայ դպրոցի կարիքները (հոգաբարձություն, ուսուցիչների աշխատավարձ, գրագիտություն, կենցաղ, հարցաքննության մակարդակ, արհեստների ուսուցում, հաշվապահություն), անցկացրել դպրոցների աուդիտ: Բացահայտվել չցանկացող թղթակիցը, ծաղրելով Փամբակի վարժապետների հայոց լեզվից իմացությունը, ներկայացնում է նրանցից մեկի կազմած «Հայկական բառարան»-ը. կաթ-կովային ջուր, կին-ապրաբերուհի, երկինք-կապտառաստաղ, ձուկ-ջրային միջատ, ձի-ինքնավարժ բեռնակիր, մարդ-գնայուն ծառ և այլն [1883, №3]: Բազմաթիվ համարներում խոսվում է ուսուցիչների «ողբալի» վարձատրության մասին: Ալեքսանդրապոլի կլուբի ծառա Նիկոլը 15-ամյա ծառայության դիմաց ստացել էր 120 արծաթ ռուբլի, տարեկան թոշակ և պատվո նշան: Եթե ուսուցիչները կանխատեսել գիտենային, «բուն սկզբից ծառայ լինելն կընտրէին ու այսօրուան օրը 20-30 տարի ծառայելուց յետոյ գոնէ մի

¹¹ «Նոր-Դար»-ում հրատարակվելու կապակցությամբ սահմանել է նաև թերթի նպատակը. «...թերթիս ուղղութիւնն ու նպատակը մնալու են նոյնը, այսինքն ծիծաղել ու ծիծաղեցնել և այս՝ մանաւանդ ներկայ հանգամանքներում շատ կարևոր է. ինչո՞ւ, որովհետև մենք տեսնում ենք, որ բոլոր հայերը մեր աչքում մի տեսակ փոփոխութիւն են ստացել, կարծես գլխի վայր լինին կանգնած, ուր հարկաւոր է ինդալ՝ այնտեղ լալիս են՝ և ընդհակառակն՝ երբ հարկաւոր է լալ՝ այնտեղ խնդում են» [1887, №1]:

¹² Պապիս թոռը, Չկնոբ, Խաբարբզ, Բանալի, Վրձին, Հեռադիտակ, Տելեֆոնյանց, Դիտակ, Խուզարկու, Հեռախոս, Գասպար Սարկիսով, Ուսուցից Կ...Ս..., Նոր թղթակից Քամ, Թմբուցի Մաթուսաղա մահտեսի Մելիք-Ուրբելեանց, Ազգային խորոզ, Պուր-Պուտ (Պուրպուր), Կոչնակ, Նավթ, Լապտեր, Դիմախոս, Գոշ Միլիթարիկ, Թատերասեր, Պոչաձիզ (Պոչաձիզ-Ականջաձիզ), Բուք, Ծիլի, Սալմաստցի Ֆահրադ, Կախգլուխ, Կարապ, Ժորժ դը Պարի, Եաշա, Նիկիտինի ցիրկի Իվան Դուրակ, Տուգ-Պիկ, Մատիտ, Խարազան, Հեռատես, Օձ և Մորմ, Թառ և Սանթուր, Ջուռնա ու ֆլեյտա, Դուդուկ ու կլարնետ, Դիոլ ու Բարաբան, Թառ ու Ջութակ, Սագ ու Քյամանչա, Չանգ ու Չանգակ, Միտ, Թաթոս Թաթոսյանց, Արձանագիր, Չոնգուր, Նշան էֆենդի, Գրավաճառ Գեորգ Ջարդարյան, Մուխսի Բադդասար, Ականատես, Գոջբազ, ուսուցիչ Մախքոսյան, Ճեմարանացու մի ծնող, Հայրենիքի տնօրեն Հայկակ, Դերասան, Ունկնդիր, Նոր Գոշ Միլիթար, Ականջ, Վերջակետ, Մեծ Հայելի, Ծածկած բազազխանի պրիկազիկներ, Համերգի սիրահար, Բէլ Մեռնեայանց, Փարոս, Եզովպոս, Օղաչու Անդրե, Ճպուռ, Մզմզ, Նորախույզ, Հոբոս տղեն և այլն:

կտոր ցամաք հացի փող կունենային» [1886, №№1,2, հմմտ. 1883, №5, 1894, մարտ, 1898՝ հունվար, ապրիլ, 1900՝ հունվար]: Բանային «մարդկային ցեղը» բաժանում է չորս դասակարգերի. «... Երկրորդ դասակարգին պատկանում են նոքա, որոնց գլուխը լիքն է, փորը բարակ և գրպանը դատարկ-բարեխիղճ ուսուցիչ» [1883, №5]: Արևելահայ դպրոցների հոգաբարձական մարմինների ընդհանուր պատկերն է տրված Թմբուլցի Մաթուսաղա մահտեսի Մելիք-Ուրբեյանցի կտակի 6-րդ կետում. «...վերակացու, գանձապահ և հոգաբարձու կարգում եմ այնպիսի մի մարդու, որ անպատճառ գտնուէր հետևեալ պայմանների մէջ. - ա.սկզբում պօլիցիական ծառայութեան մէջ լինէր եղած և այն տեղից վճարուած, բ.ուսուցիչ, բայց դասերին երբէք չը յաճախող, գ.գործակատար-յօգուտ իւր գրպանի, դ.գանձապահ-յօգուտ իւր կոկորդի, ե.հոգաբարձու-իւր շահերի, գ.քարտուղար-յօգուտ անգուակ մարդոց, է.փաստաբան-կեղծ պաշտպան, ը.անդամ կամ նախանդամ-աթոռը թափուր թողնող յարաժամ, թ.կտակակատար-կտակապատառ և ժ.Որբոց խնամատար-որոց զրկող անդադար» [1883, №4]:

Փառնակեսի հրապարակախոսության մի հսկայական հատված նվիրված է հայ եկեղեցուն և հոգևորականներին (ստախոսություն, խաբեբայություն, քահանայական կոչումների վաճառք, քահանաների կրկնամուսնություն, սնահավատություն, գրագիտության աստիճան, քարոզներ կարդալու ունակություն, գանձագողություն, Երուսաղեմ ուխտի գնալ և հոգին վաճառել, եկեղեցի չհաճախել): «Հայելի»-ի թղթակից Հեռադիտակը դառը զվարճանք է պատճառում ընթերցողներին՝ ներկայացնելով Ալեքսանդրապոլի քահանաներից մեկի (Յ...ք...Վ...եան) 1885թ. մայիսի 4-ով թվագրվող փնթի գրագրությունը. «Ազնիւ և հորամոյն պարոն Սարգիս, Մի լիցի ինձ գրել և ձեզ ո՛չ լսել. ահա՛ ես իբրև քահանայ բարձրելոյն աստուծոյ, և ազգիս Մերում, և եկեղեցոյ գրեցի Առ ձերոջ ՅԱրգութին, և աղաչեմ դուք ձերովդ հեզութեամբ և խոնարհութեամբ ընկալիք իմոյս բանիցս յառաջադիմութիւնն...» [1886, №2]: Փառնակեսը, պատասխանելով ազուլեցի Սեդպոսին, պախարակում է փողով քահանա ձեռնադրվելու երևույթը և հիասթափեցնում է նրան՝ գրելով, թե ոչ բոլոր դեպքերում է կաշառքը մութ տեղը լույս տալիս [1886, №3, հմմտ. 1894, մայիս]:

Փառնակեսը երգիծող հայելին կախել էր «Մշակ»-ի խմբագրությունում, վեհարանում և ճեմարանում, դպրոցներում, հոգևոր առաջնորդարաններում, յուրաքանչյուր հայաբնակ քաղաքի նույնիսկ ամենամութ անկյուններում: Անճոռնի, բայց արատները շտկելու դիտավորությամբ է «Հայելի»-ին արտապատկերում Էջմիածնի վանքում, ճեմարանում տեղի ունեցող իրադարձությունները: Մի տեղ խմբագիր-հրատարակիչը այդ պատկերներին համահունչ գրում է. «Կեանքի մէջ ապրելու համար չը պէտք է սահմանափակվիլ իւր մաս-

նաւոր և հայի փթած նեղ շրջանակի մէջ...» [1886, №2]: «Արարատ» ամսագիրը կոչում է միջազգային տիրացուների օրգան և նրա թղթակիցներից շատերին համարում «անպոչ մոծակներ» [1894, մայիս]: Փառնակերը կատակախառն, բայց մանրամասն լուսաբանել է 1884 և 1892թթ. կաթողիկոսական ընտրությունները: Նա չար մտադրությամբ ընթերցողին «ակամա» մատուցում է 1892թ. մայիսի 5-ին կաթողիկոսի ընտրությանը մասնակցելու համար Վրաստանի և Իմերեթիայի թեմից թեմական պատգամավորի ընտրության վերաբերյալ իր կազմած կերակրացանկը.

1. Ձուկ – պահպանողական:

2. Արգանակ-մարտի 8-ի ընտրութիւն:

3. Կոտլէտ հաւից-Ապրիլի 22-ի ընտրութիւն:

4. Փլաւ-Համագումար ժողով:

5. Խորոված-Քառանուն ցանկ:

6. Պլօմբիր-Մեծ մարդ:

7. Միրգ-Թզուկ (Գրիգոր Արծրունի-Գ. Ա.) [1892, №5]:

Ցավոք սրտի, նորդարական Փառնակերը գերծ չի մնացել անձնական վիրավորանքներից: Խնդիրը հետևյալն էր. թեմի պատգամավորի թեկնածու առաջադրվել էին ազատամիտ «Մշակ»-ի խմբագիր Գ. Արծրունին և առաջադեմ պահպանողական «Արձագանք»-ի խմբագիր Աբգար Հովհաննիսյանը: Ընտրվել էր Գ. Արծրունին: Թեև «Նոր-Դար»-ի խմբագիր Սպանդար Սպանդարյանը հրաժարվել էր առաջադրվելուց, միննույն է, «Նոր-Դար»-ի աշխատակից Փառնակերը պահպանել է կուսակցական¹³ համերաշխությունը:

Որպես ուղղամիտ պահպանողական՝ «Հայելի»-ին ամենաշատը քննադատել է «Էվելինայի» հեղինակ Գրիգոր Արծրունուն, «բազարնայա» «Մշակ»-ին և նրա աշխատակիցներին (Բաֆֆի (համեմատել է Վիկտոր Հյուգոյի հետ), Խաչատուր Սալումյան, Ա-Դո, Սիրական Տեր-Մարտիրոսյանց): Նրա այքից չեն վրիպել նաև մրցակից մյուս պարբերականները («Մանկավարժանոց», «Ոսակ»,

¹³ Հայելիական կուսակցության նշանաբանն է. «...ա)ծիծաղել բոլորի վրայ, բ)քաշել բոլորի էլ ականջները, գ)ցոյց տալ ամենի պատկերները, դ)օգուտ քաղել բոլորի խելօք անունով արած յիմարություններից, ե)օգտուել ամենի յիմար խելօքություններից, գ)միջնորդ լինել բոլորի մէջ, է)հաշտեցնել կռուողներին, ը)թէ այս և թէ այն կուսակցութեան ուշունցներ փոխ տալ, թ)խնամութիւններ հաստատել թէ մէկի և թէ միւսի մէջ, աղջիկ տալ, աղջիկ առնել. այս միջոցը ամենից շատ, կարծում ենք, դրանց հախից կըգայ. ժ)բոլոր կուսակցութիւններից էլ վիճակով ու հերթով ընտրել տալ տեսուչներ, հոգաբարձուներ, երեսփոխներ, ուսուցիչներ, քահանաներ, յաջորդներ, թեմակալներ, տիրացուներ, բարեգ. ընկ. վարչութեան անդամներ, դերասաններ և այլ այդպիսիք: Կարծում ենք հայելիական կուսակցութիւնը վերջ ի վերջոյ յաղթող կըհանդիսանայ և ի մի ձուլելով բոլորին մի հօտ մի հովիւ կըդարձնէ պառակտեալ գրագէտ-անգրագէտներին» [1894, փետրվար]:

«Առողջապահական թերթ», «Երևանի հայտարարություններ», «Մասիս», «Մուրճ», «Արևելք», «Աղբյուր-Տարագ», «Արձագանք», «Հայրենիք», «Արարատ», «Բյուզանդիոն», «Գործ»): Փառնակեսի՝ «Մշակ»-ի քննադատությունից տպավորություն ես ստանում, թե «Հայելի»-ն «Մշակ»-ի հայելին է, իսկ նրա խմբագրի գերնպատակը «Մշակ»-ին սևացնելն է: «Հայելի»-ի 1893-1894թթ. համարներում տպագրվել է «Անպատիժ հայհոյանքի բառարան», որտեղ գետեղված են «Մշակ»-ի «Նոր-Դար»-ին ուղղված 295 «հայհոյանք»:¹⁴ Փառնակեսը հաշվել է, թե որ բնակավայրերից քանի մարդ է շնորհավորել «Մշակ»-ի 25-ամյակը և ամենօրյա դառնալը, այդ առթիվ կազմել հետաքրքրաշարժ վիճակագրություն: «Ազատամիտ հայեր պարունակող» բնակավայրերի թիվը 94 է, իսկ ազատամիտներինը՝ 1523: Հատուկ նշել է, որ 1523 ազատամիտներից 18-ը ակեքսանդրապոլի կաթոլիկ հայեր են [1898, մարտ]:

¹⁴ Ընտրողաբար ներկայացնում ենք 30 բառ-բառակապակցություններ՝ հանդուգն մեծամիտ, եզուլիտ, խոզի ճուտ, փողոցային, շանտաժային, ստոր, անպատկառության մի փորձ, մեր տարտյուֆները, հետադեմների օրգան, կրկնակի սև նպատակ, զաքարեական պապանձումն, հանձարեղ հոսհոս, փտած լողգկա, մարդկային մտքի դահիճ խավարամիտներ, զարշահոտութիւն է փչում ձեր մտքերից, այլանդակ և անհեթեթ, փտած խավարամիտներ, գծուծ շահեր, կատաղի պաշտպաններ, անվերջ վայրահաշտություններ, հոշակավոր բթամիտ, աղվեսական խորամանկություններ, առանց ամաչելու, ձեր հոգու աղքատությունը, խավարի ծնունդներ, մեր փարիսեցիք, վարձկան խմբակ, դպիրներ, մեռելալների ոսկորներ, իժի ծնունդներ: Բառարանների թեման շարունակելով՝ կցենք նաև Փառնակեսի կազմած հատուկ անունների փոքրիկ բառարանը.

- «Աբարան=լու
- Ալեքսանդրապոլ=հայ (կեղծատր)
- Աշտարակ=հայհոյանք
- Ախայցիսա=ա՛խ, ալ չկայ (բարոյականութիւն)
- Անի=քանդի ու հանի
- Բորչալու=գող
- Բայազետ=քուրդ
- Բագու=երկրպագու (նաթի ու կրակի)
- Գորի=կորի (ըստ Ալիշանի)
- Գանձակ=գանձակի (ֆուրգոնի)
- Երևան=թուրք
- Ղարս=խարս-հարս
- Շամախի=փախի
- Վան=գաղթական
- Փոթի=փոթի
- Թմբուլ=խաչագող
- Փայաջուկ=տե՛ս Թմբուլ
- Թափաղուլակ (Ափսո՛ս, որ Ա.Եզեկեանի Հայրենիքն է)» [1893, հուլիս]:

Պահպանողականը երևում է մարդու, իր ապրած դարի մասին Փառնակեսի փիլիսոփայական դատողություններում, հայության ազգային հիմնահարցերի (Արևմտյան Հայաստանի ազատություն և ինքնավարություն, ռուս հասարակական գործիչ Վ.Լ.Վելիչկոյի հակահայկական պահվածք, հայերի կոտորած, գաղթականներ, անգլո-բուրական երկրորդ պատերազմի (1899-1902թթ.) պրիզմայով՝ Անգլիայի «հայասիրություն») նկատմամբ վերաբերմունքում: Սեղմ և իմաստալից է ասված. «Երկու միլիոն հայ է կորել Թիւրքիայում: Ոչ ոքի խորհուրդ չենք տալ գտնելու, որովհետև ինքն էլ կրկորչի» [1893, նոյեմբեր]: Կյանքում սահմանափակությանը դեմ, բայց ազգային դաստիարակության հարցերում պահպանողական Փառնակեսը գրում է. «...մեր գիժ իծուկներին խելքի բերելը ներկայ ազատանմտութեան դարում շատ էլ հեշտ չէ» [1893, հուլիս]: Սակայն, XIX դարի հանդեպ նրա վերաբերմունքը հեղհեղուկ է, ըստ որի՝ դարն այնքան էլ լուսավոր և ազատամիտ չէ, որ զգացմունքը հարզի և կրոնը արհամարհի [1892, №4]: XX դարի սկզբին գրում էր. «Երեկ մեր մատաղահաս սերնդին կրթութեան տաճարներն էինք դրկում..., այսօր նրանք վերադառնալով՝ այդ աղջամղջի, խաւարի սերնդի դէմ փողոցի մէջ դուրս են գալիս կոպիտ փայտով ու բռունցքով, վերք տալիս՝ վերք առնում: Այսպիսի դէպքերում, ընթերցող, խաւարը ես աւելի եմ սիրում քան շլացուցիչ կեղծ լուսաւորութիւնը...» [1901, հունվար]:

«Հայելի»-ն, որի բաժանորդների թիվը 999-ից հասել էր 1444-ի, ապա իջել 1001-ի, գնահատանքի կամ քննադատության խոսքեր է ուղղել հայ մշակույթի գործիչներ Գաբրիել Սունդուկյանին, Ղազարոս Աղայանին, Գևորգ Չմշկյանին, Պերճ Պռոշյանին, Տիգրան Ռաշմաճյանին, Աբգար և Սիմոն Գուլամիրյաններին, Հակոբ Պարոնյանին, Ռաֆայել Պատկանյանին, Ամբրոսիոս վարդապետ Ռուբինյանին, Տմբլաչի Խաչանին, Ալեքսանդր Երիցյանին, Խորեն Ստեփաննին, Միքայել Նալբանդյանին, Ծերենցին, Ստեփանոս Պալասանյանին, Խաչատուր Աբովյանին և ուրիշների:

Փառնակեսը երգիծաթերթում գովազդում և պրեմիաների տեսքով բաժանում էր իր ստեղծագործությունները: Նա ընթերցողների հետ կիսվել է անձնական կյանքի դրվագներով՝ խոհերով, տպավորություններով, ուրախություններով, հաջողություններով և ապրած տհաճ պահերով: Ինքնակենսագրական շատ կարևոր տեղեկություն է տալիս, երբ գրում է, որ իր հեղինակած 10000 տպագիր օրինակ դասագրքերից չի վաճառվել միայն 1500-ը [1894, փետրվար]: Ազգագրական տեսակետից հետաքրքիր է հետևել նաև 6 երեխաների (5 աղջիկ և 1 տղա) հոր գատկական ծախսերին:

«Հայելի»-ի հրատարակիչը օտարաբանությունների սիրահար է: Նրա որոշ ֆելիետոններ թիֆլիսահայ, Մալմաստի, Ալեքսանդրապոլի, Արցախի բարբառ-

ներով գրված բանասիրական մեծարժեք տեքստեր են: Գործածել է լատինատառ հայերենը (տրանսլիտ): Նրա կիրառած խոսքի պատկերավորման ոճական հնարանքները և սատիրայի արտահայտչական միջոցներն էին համեմատությունը, չափազանությունը, զվարճաբառերը, փոխանունությունը, հեզնանքը, զվարճասույթը, երկնքից նամակներ, ֆելիետոններ գրելը, պատահաբար փաստաթղթեր գտնելը, հյուր գնալը և այլն:

«Հայելի»-ում տպագրվել են սոցիալ-բարոյական սուր հարցադրումներով 10-ից ավելի բանաստեղծություններ և առակ,¹⁵ Վահագնի ծննդյան վիպերգը՝ ուրույն մշակման ենթարկված:

Որպես երգիծաթերթ՝ «Հայելի»-ում բացակայում են ծաղրանկարները: Բայց թղթակիցներ Վրձինը և Մատիտը կերտել են հրաշալի պատկերներ: Գովեստի է արժանի Վրձնի¹⁶ «Խելքաչափություն» կոչվող պատկերը, որի գաղափարը սովել էին Կ.Պոլսի ազգային գործիչներն իրենց դատարկաբանություններով [1883, №5]:

Առանձին տեղ են գրավում ավեբպոլյան և երևանյան տարեգրությունները: Ալեքսանդրապոլում դպրոցների և եկեղեցիների, հոգևոր իշխանության գանազան խնդիրներից գատ Փառնակեսն արձանագրում է, որ՝

կանայք անճաշակ են, արհեստական խալեր են կրում, տարածված է «մարդաթողությունը»,

խանութները և առևտրականները չափից դուրս շատ են,

200-ի չափ կատաղած շներ են ստերիլիզացվել,

արևածաղկի սերմեր շատ են օգտագործում,

բազմաթիվ բացօթյա արտաքնոցներ կան, որոնց վերացման ուղղությամբ քաղաքային ինքնավարության պաշտոնյաները չեն աշխատում,

տարածված է ստախտությունը, բամբասանքը, հարբեցողությունը, հայհոյանքը, դատարկապորտությունը, խաբարբզանությունը,

Երևանից քիչմիշ խաղող և կարմիր տաքդեղ են բերում Ալեքսանդրապոլ, այստեղից «նարինջի փոչլուկ»՝ գազար տանում,

մտավորականությունը թատերական ներկայացումների տոմսակներ չի գնում,

¹⁵ «Արի մի խաբիլ», «Ի՞նչ է քո անուն», «Ծաղիկների երգ», «Մեծատան վերջին բուպեն», «Նա ի՞նչ է սիրում», «Գրչի բողոքը», «Հեռու բարեկամ», «Լապտեր», «Բամբասանք», «Հին հավն ու կեղծ արծուիկները», «Ջախջախուած մի սայլ», «Առաջ և այժմ», «Մներես թողիչք»:

¹⁶ Պ. Վրձին. - Մա նկարիչ է. անդադար ներկում է ու ներկի տակ երբեմն ծածկում ամեն կեղտոտություններ, իսկ երբեմն էլ տեսնելով, որ մարդիկ (ի հարկե ոչխար մարդիկ) դժուարանում են այս և այն անձնատրուբեան երեսի գոյնը ճշտի որոշել՝ ինքն է որոշում «Հայելի»-ի մեջ, որ ամենքն էլ տեսնեն [1887, №1]:

*ցիրկապահ Ֆյուրերը¹⁷ դատարկել է շատերի գրպանները,
տրոյկայով¹⁸ երթնեկելը նման է դժոխքի ճանապարհի,
ստեղծվել է «Ծիածան» նավթավաճառների ընկերությունը,
բանաստեղծները երկար մազեր ունեն,
կազմարար Գևորգ Մանոյանը պարտաճանաչ է, իսկ կազմարար
Աբրահամ Մալխասյանը փնթի, քանի որ գրքերը ուշ է կազմում և այլն:*

Փառնակեսի ուշադրությունից չեն վրիպել նույնիսկ թուղթ խաղացողների ձայներից, պարահանդեսի մասնակիցների ոտքերի դոփյունից օրորվող, ալկոհոլային խմիչքների (գինի, օղի, կոնյակ, ռոմ, մանախորում, կոնուզ, կյուրասո, կասիս, գուրբովկա) հոտից հազեցած Երևանի և Ալեքսանդրապոլի կլուբների և Ալեքսանդրապոլի «Եվրոպա» հյուրանոցի արֆիանկաները¹⁹: Նա սրբտանց ծաղրում է նրանց կողմից կլուբներում խուզվող «միամիտ, չաղլիկ և բրդոտ ոչխարներին» [1886, №1]:

Եզրահանգում. Այսպիսով՝ 1883-1902թթ. Փառնակեսը բարդ և ծանր աշխատանքով կարողացել է հրատարակել մի երգիծաթերթ, որը տարբերվում էր իր յուրահատուկ ֆելիետոնային բնույթով: Նա մի մտավորական էր, որն ուզում էր հասարակության միջից արմատախիլ անել անբարոյականությունը, խաբեբայությունը, երեսպաշտությունը, կեղծավորությունը, ունենալ բարեկարգ դրարոցներ, կրթված, գիտակ, բարձր վարձատրվող ուսուցիչներ, խնամված քաղաքներ, գրագետ հասարակություն, բարեկեցիկ ու շեն Մայր Աթոռ և իրենց կոչմանն արժանի հոգևորականներ:

“ЗЕРКАЛО” - ПЕРВАЯ САТИРИЧЕСКАЯ ГАЗЕТА АЛЕКСАНДРОПОЛЯ Айвазян Г.С.

Ключевые слова: сатира, Эчмиадзин, Парнакес, церковь, школа, фельетон, Ереван, Миак, клуб, Александрополь.

Макар Тер-Саргсянц (Парнакес) - видный армянский учитель (геометрия, черчение, рисование) второй половины XIX-начала XX века. Он работал в школах Тифлиса, Александрополя и Еревана. В тифлиских газетах «Пчела Армении» и «Новый век» в 1883-1902 гг. в рубрике «Фельетон» была издана сатирическая газета «Зеркало». Парнакес - редактор-издатель «Зеркала» - в традициях великого сатирика Акопа Пароняна в восточноармянской среде развил фельетонный жанр.

¹⁷ XIX դարի երկրորդ կեսին և XX դարի սկզբին Հարավային Ռուսաստանի քաղաքներում հայտնի կրկեսախմբի սեփականատեր:

¹⁸ Եռաձի տրանսպորտային միջոց:

¹⁹ Հաճախորդներին իրենց երգով ու պարով զվարճացնող թեթևաբարո կանանց անվանումը:

Сатирическое творчество журналиста имело своеобразный характер. Его очерки, стихи, диалоги, ирония с остросоциальной проблематикой являлись замечательным синтезом художественных и публицистических форм фельетона.

**“MIRROR”- THE FIRST SATIRICAL NEWSPAPER IN
ALEXANDRAPOL
Ayuazyan G.S.**

Key words: *satire, Etchmiadzin, Parnakes, church, school, feuilleton, Yerevan, Mshak, club, Alexandrapol.*

Makar Ter-Sargsyants (Parnakes) is a prominent Armenian teacher (geometry, drawing) in the second half of the 19th and early 20th centuries. He worked in schools in Tiflis, Aleksandrapol and Yerevan. In the Tiflis newspapers “The Bee of Armenia” and “New Age” in 1883-1902 published the satirical newspaper “Mirror”. The newspaper fit in the feuilleton section. The editor-publisher of “Mirrors”, in the traditions of the great satirist Hakob Paronyan, developed the feuilleton genre in the Eastern Armenian environment.

The satirical work of the journalist had a peculiar character. His essays, poems, dialogues, irony with acutely social issues were a wonderful synthesis of artistic and journalistic forms of feuilleton.

R e f e r e n c e s

1. “Hayeli”, T’iflis, 1906, noyemberi 27, №3 **(In Armenian)**.
2. Hay nor grakanut’yan patmut’yun, hator 3, Yerevan, HSSH GA hratarakch’ut’yun, 1964 **(In Armenian)**.
3. Hay nor grakanut’yan patmut’yun, hator 4, Yerevan, HSSH GA hratarakch’ut’yun, 1972 **(In Armenian)**.
4. Hayots’ patmut’yun: Hator III: Nor zhamanakashrjan (XVII dari yerkrord kes-1918t’.): Girk’ yerkrord (1901-1918t’t’., hay gaght’avayrery, parberakan mamuly yev mshakuyt’y XIXd. yev XXd. skzbin), Yerevan, Zangak hratarakch’ut’yun, 2015 **(In Armenian)**.
5. **Hayrapetyan T’.**, Kostandin Melik’-Shahnazaryan (Tmblach’i Khach’an) 1857-1940: Kyank’n u gortsy:
6. Hay azgagrut’yun yev banahyusut’yun: Nyut’er yev usumnasirut’yunner, 24, Yerevan, HH GAA «Gitut’yun» hrat., 2007 **(In Armenian)**.
7. «Kran», Yerevan, 1911, №2, №4 **(In Armenian)**.
8. «Meghu Hayastani», T’iflis, 1875, marti 8, №9 **(In Armenian)**.
9. Mesrop Mashtots’i anvan hin dzerragreri gitahetazotakan institut, Kat’voghikosakan divan, t’ght’apanak 91, vaveragir 98 **(In Armenian)**.

10. Mihrdat: Voghbergut'iwn: **Yorineats' P.Sargis T.Margar Vanandets'ean**, K.Polis, i tparani H.Gayoli, 1858 (**In Armenian**).
11. **Mirzoyan Ye.**, Tmblach'i Khach'ani «Zurrna-Tmblayi» lezvakan arvesty, Step'anakert, «Dizak plyus» SPY, 2007 (**In Armenian**).
12. **Nazaryan S.S.**, Arevelahay yergitsakan mamuli patmut'yunits' (1906-1915) // Lraber hasarakakan gitut'yunneri, Yerevan, 2000, №1 (**In Armenian**).
13. **P'ap'azean V.**, Patmut'iwn hayots' grakanut'ean (banahiwsut'ean patmut'iwn): Skzbits' minch'ev mer orery, T'iflis, Elektrasharzh tparan or. N.Aghaneani, 1910 (**In Armenian**).
14. **Teghats'i**, Namak Alek'sandrapolits'//«Mshak», T'iflis, 1882, №62 (**In Armenian**).

Ընդունվել է՝ 27.10.2019
Գրախոսվել է՝ 12.11.2019
Հանձնվել է տպ.՝ 20.11.2019

Տեղեկություն հեղինակի մասին

Գևորգ ԱՅՎԱԶՅԱՆ՝ պատմ. գիտ. թեկնածու, ՀՀ ԳԱԱ Շիրակի
հայագիտական հետազոտությունների կենտրոնի գիտաշխատող,
Էլ. փոստ՝ Ayg.84@mail.ru

ՀՏԴ՝ 93.94

ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆԸ ԶՈՒԳԱՀԵՌԻ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ
ՀԱՅԵՐԻ ԶԱՆԳՎԱԾԱՅԻՆ ՈՒՆԵԶՐԿՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ
ԵՐԻՏԹՈՒՐՔԱԿԱՆ ՎԱՐՉԱԿԱՐԳԻ «ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ»

ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԸ

Արմեն Մարտիրյան

ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ

Բանալի բառեր՝ Հայոց ցեղասպանություն, Օսմանյան կայսրություն, Արևմտյան Հայաստան, երիտթուրքական կառավարություն, «Տեղահանության մասին» ժամանակավոր օրենք, «Լքյալ գույքի մասին» օրենք, «Լքյալ գույքի» հանձնաժողովներ, հայերի զանգվածային ունեզրկում, անշարժ և շարժական գույք, մահմեդական վերաբնակիչներ:

Հայոց ցեղասպանության տարիներին թուրքական իշխանությունները հայ բնակչության բնաջնջման հետ մեկտեղ զանգվածաբար բռնագրավում էին վերջինիս անշարժ գույքը և ունեցվածքը: Հայերի ունեզրկման այդ քաղաքականությունն առանձնահատկությունն այն է, որ թուրքական պետության կողմից ընդունվում էին մի շարք օրենքներ, որոնցով փորձ էր կատարվում օրինական տեսք հաղորդել այդ ապօրինի գործողություններին: «Լքված գույքի մասին» երիտթուրքական օրենքների ընդունման գործելակերպն ավելի ուշ ժառանգեցին քեմալականները: Թուրքական հաջորդ վարչակարգերը նույնպես շարունակեցին ոչմահմեդական համայնքների, այդ թվում՝ Թուրքիայի հայերի գույքի բռնագրավման նախկինների քաղաքականությունը:

Նախաբան. Ինչպես հայտնի է, հայերի ցեղասպանությանը զուգահեռ՝ թուրքական իշխանությունները հետևողականորեն իրականացնում էին վերջիններիս ունեցվածքի զանգվածային բռնագրավման քաղաքականություն: Այդ գործընթացին օրինական տեսք տալու նպատակով նախ երիտթուրքական, հետագայում նաև քեմալական իշխանությունները, այսպես կոչված, «Լքյալ գույքերի մասին» օրենքների մի ամբողջ շարք ստեղծեցին:

Հայերի ունեզրկածքի զանգվածային ունեզրկումն «օրինականացնող» մեխանիզմների ստեղծումը երիտթուրքերի վարչակարգի կողմից սկսվեց այն բանից հետո, երբ 1915 թ. մայիսի 30-ին ընդունվեց և հունիսի 1-ին ուժի մեջ մտավ «Պատերազմական շրջանում կառավարության գործողությունների դեմ հանդես եկող անձանց նկատմամբ ռազմական իշխանությունների կողմից ձեռնարկվելիք միջոցառումների մասին» կամ «Տեղահանության մասին» ժամանակավոր օրենքը¹:

«Տեղահանության մասին» ժամանակավոր օրենքը հիմք ծառայեց հունիսի 10-ին «Պատերազմական և քաղաքական արտակարգ պայմանների անհրաժեշտության բերումով տարագրված հայերին պատկանող անշարժ և շարժական լքյալ գույքերի, վարչական կարգադրությունների մասին» 34 հոդվածներից բաղկացած հրահանգների կամ, այսպես կոչված, «Լքյալ գույքի մասին» առաջին օրենքի ընդունման համար²:

Հայերի ունեզրկման քաղաքականության երիտթուրքական օրենսդրությունը

Հարկ է նշել, որ տվյալ օրենքով տեղահանված հայերի ունեզրկածքը «լքյալ» որակելը բացարձակ անօրինականություն էր, քանզի նույն «Տեղահանության մասին» օրենքից էլնելով՝ ակնհայտ էր, որ հայերը ոչ թե ինքնակամ, այլ հարկադրաբար էին լքել իրենց բնակավայրերը և չէին հրաժարվել իրենց ունեզրկածքի նկատմամբ իրավունքներից, ուստի այդ գույքերի նկատմամբ ամեն մի գործողություն, անգամ եթե դա կատարվում էր պետական մարմինների կողմից, չէր կարող համարվել օրինական:

«Լքյալ գույքի» մասին առաջին օրենքի 2-րդ հոդվածով նախատեսված էր, որ տեղահանված հայերի անշարժ և շարժական գույքը պետք է կնքվեր և ի պահ հանձնվեր պետության կողմից ստեղծվելիք վարչական հանձնաժողովներին, այսինքն՝ լինել անձեռնմխելի³: Սակայն շուտով պարզ դարձավ, որ իշխանությունների կողմից բռնազավթվում էր անգամ Օտտոման բանկին ի պահ հանձնված հայերի ունեզրկածքը: Այսպես՝ բանկի տնօրեն Լևոն Տահերը յուրաքանչյուր հաճախորդի տվել էր այն սենյակի բանալին, ուր պիտի փոխադրվեին նրանց գույքերը: Տիգրան Ամնյանն իր հուշերում գրում է, որ իրենց ընտանիքի՝ 4500 օսմանյան ոսկի գնահատված ունեզրկածքը համապատասխան ստացականով ի պահ հանձնվեց բանկին, որպեսզի նոր բնակավայրում հաստատվե-

¹ **Մաֆրաստյան Ռ.**, Օսմանյան կայսրություն. Յեղասպանության ծրագրի ծագումնաբանությունը (1876-1920 թթ.), Եր., 2009, էջ 180:

² **Աստոյան Ա.**, Դարի կողոպուտը. Հայերի ունեզրկումը Օսմանյան կայսրությունում 1914-1923 թթ., Եր., 2012, էջ 42:

³ **Baghdjian K.K.**, The confiscation of Armenian properties by the Turkish Government said to be abandoned, Antilias, Printing House of the Armenian Catholicosate of Cilicia, 2010, p. 167.

լուց հետո դրա դիմաց հատուցում տրամադրվի: Երկու ամիս անց նրա հայրը՝ Հարություն Ամմյանը, նամակ է գրում Բանկի կառավարիչ Լևոն Տահերին. նշելով իրենց տեղը և վիճակը՝ խնդրում է դրամ ուղարկել՝ իրենց պահանջները բարելավելու համար: Երկու շաբաթ անց Այնթափից պատասխան է գալիս, որ տեղ «բարեկամաբար» խնդրում էին գաղտնի պահել իրենց գտնվելու վայրը, հակառակ պարագայում, եթե այդ մասին տեղեկանար կառավարությունը, ապա աղետալի հետևանքներ կարող էին լինել: Միաժամանակ հորդորում էին Բանկի տնօրենությանն այդ հարցով այլևս չանհանգստացնել⁴: Դժվար չէ նկատել, որ հայերի տեղը կառավարությանը հայտնելու անուղղակի սպառնալիքով օրինական տերերին փաստորեն հարկադրում էին հրաժարվել Բանկում ի պահ հանձնված իրենց ունեցվածքից:

Բազմաթիվ էին դեպքերը, երբ հայերն իրենց ունեցվածքի մի մասը որպես կաշառք տալիս էին թուրք պաշտոնյաներին՝ իրենց բռնագաղթից ազատելու համար, սակայն այս կերպ նրանց բռնագաղթեցումը լավագույն դեպքում ընդամենը հետաձգվում էր այնքան ժամանակ, քանի դեռ նրանք միջոցներ ունեին վճարելու իրենց չտեղահանելու դիմաց, ինչն անխուսափելի էր:

«Լքյալ գույքի մասին» օրենքի 3-րդ հոդվածը վերաբերում էր հայերի շարժական գույքի պահպանմանը, որը պետք է սեփականատերերի անուններով հաշվառվեր, գնահատվեր և պահվեր եկեղեցիներում, խաներում (վաճառականների խանութներ), պահեստներում և մթերանոցներում⁵: Հասկանալի է, որ տներից դուրս բերված հայերի ունեցվածքի մի մասը պահեստարաններ չէր հասնում, քանզի ճանապարհին «անհետանում» էր՝ յուրացվելով տեղափոխությունն իրականացնող մահմեդականների և մանր ու միջին պաշտոնյաների կողմից: Հայերի շարժական գույքի տեղափոխման հետևանքով հայկական եկեղեցիները մահմեդական բնակչության կողմից հետագայում թիրախավորվում էին ոչ միայն որպես «անհավատների» կրոնական կառույցներ, այլ նաև որպես հայերի հարստության պահեստարաններ, որոնք առաջին հերթին էին ենթարկվում հարձակումների, ավերածությունների ու թալանի:

Հայերի անշարժ գույքին վերաբերող օրենքի 10-րդ հոդվածով սահմանվում էր, որ եթե հայերն իրենց սեփականությունը վաճառելու լիազորագիր են տվել որևէ մեկին, ապա թույլ չէր տրվում այդ փաստաթղթով որևէ գործողություն կատարել⁶: Օրենքում այս հոդվածի ներառումով թուրքական իշխանությունները փաստորեն անշարժ գույքի արդեն տեղահանված օրինական տերեր-

⁴ Լևոն Վարդան, Հայկական տասնհինգը եւ հայերու լքեալ գույքերը, Պէրուօ, 1970, էջ 113:

⁵ Տե՛ս Baghdjian K. K., նշվ. աշխ., էջ 167:

⁶ Տե՛ս Ղազարեան Հայկազն Գ., Հայոց լքեալ գույքերու և կալվածքներու թալանը թուրքերու կողմէ, Հայրենիք, Պոսթըն, 1964, թիվ 6-7:

րին զրկում էին անգամ լիազորված անձանց միջոցով այն վաճառելու իրավունքից և ստացված միջոցներով իրենց գոյությունն ապահովելու հնարավորությունից: Մյուս կողմից, չի կարելի բացառել նաև այն, որ տեղահանված հայերի լիազորագրերը կարող էին ստացված լինել վերջիններիս նկատմամբ նրանց ուղեկցող ժանդարմների կողմից՝ բռնություն գործադրելու կամ ինչ-որ պայմանավորվածությունների արդյունքում: Բոլոր դեպքերում օրենքում ամրագրված այս դրույթով թուրքական իշխանությունները կանխում էին հայերի անշարժ գույքի վաճառքից վերջիններիս եկամուտ ստանալու, ինչպես նաև դրանց՝ երրորդ անձանց փոխանցվելու հնարավորությունները՝ այս հարցում ամբողջական վերահսկողությունը վերցնելով իրենց ձեռքը:

Օրենքի հաջորդ հոդվածով, բացահայտվում էին հայերի անշարժ գույքի հետ կապված թուրքական իշխանությունների հեռահար ծրագրերը: 11-րդ հոդվածի համաձայն, տեղահանված հայերի տներում և նրանց հողերի վրա վերաբնակեցվելու էին մուհաջիրները, որոնք տնօրինելու էին նրանց սեփականությունը⁷: Այս դրույթը ոչ միայն ուղղակիորեն հակասում է տեղահանված հայերի անշարժ և շարժական գույքի անձեռնմխելի լինելու մասին նույն օրենքի 2-րդ հոդվածի պահանջին, այլև կոպտորեն խախտում է օրինական տերերի սեփականության իրավունքը, քանզի մահմեդական վերաբնակիչներին հայերի տների և հողերի թեկուզև օգտագործման իրավունքով տրամադրումը կատարվում էր առանց վերջիններիս համաձայնության:

Խիստ վիճելի պետք է համարել օրենքում տեղ գտած այն պնդումը, թե իբր «Լքյալ գույքի» հանձնաժողովի նախագահի և անդամների վարձատրությունը կատարվելու էր մահմեդական վերաբնակիչներից ստացված գումարներից, քանզի վերջիններիս փոխանցվել կամ գրոշներով նվիրաբերվել էր տեղահանված հայերի ամբողջ անշարժ գույքը՝ տները, խանութները, պահեստներն ու մթերանոցները, ինչպես նաև մշակելի հողերը, այգիներն ու ձիթաստանները: Մահմեդական վերաբնակիչների ստացած եկամուտը, որի մի մասը պետք է փոխանցվեր «Լքյալ գույքի» հանձնաժողովներին, փաստորեն գոյանում էր հայերի անշարժ գույքի՝ հողերի, այգիների, խանութների, ինչպես նաև շարժական գույքի՝ գյուղատնտեսական գործիքների և անասունների շահագործումից: «Լքյալ գույքի» հանձնաժողովների անդամները վարձատրվում էին նաև տեղահանված հայերի շարժական ու անշարժ գույքի, այսպես կոչված, աճուրդից, իսկ ըստ էության՝ «օրինականացված» թալանից ստացված միջոցների հաշվին: Ասվածը հաստատվում է նաև 1915 թ. հոկտեմբերի 26-ի «Լքյալ գույքի» կանոնա-

⁷ **Բարսեղով Յու.**, Հայերի ցեղասպանության համար նյութական պատասխանատվությունը, Եր., 1999, էջ 5:

դրության 13-րդ հոդվածի բ. կետով, որով կառավարությանն ի պահ հանձնված, տեղահանված հայերին պատկանող դրամական միջոցները, ապրանքները և ամեն տեսակի գույքերը փոխանցվում էին «Լքյալ գույքի» հանձնաժողովների տրամադրության տակ⁸: Այսինքն՝ թուրքական իշխանությունները ոչ թե պետական բյուջեի, այլ հենց տեղահանված հայերի ունեցվածքի իրացման հաշվին էին ապահովում օսմանահպատակ հայ բնակչության ամբողջ ունեցվածքի վերաբաշխման գործառույթն իրականացնող մարմինների՝ «Լքյալ գույքի» հանձնաժողովների գոյությունն ու գործունեությունը:

Բուրսայում Ավստրո-Հունգարիայի հյուպատոսը դեսպանին ուղարկված 1915թ. օգոստոսի 23-ի հաշվետվության մեջ բացահայտում է «Լքյալ գույքերի» հանձնախմբերի կողմից հայերի անշարժ գույքի «վաճառքի» կազմակերպման, իսկ իրականում նրանց ունեցրկման մեխանիզմը: Հյուպատոսը վկայում է, որ սահմանված ժամկետում հայերն իրենց անշարժ գույքը վաճառելու համար ներկայանում էին գրասենյակ, որտեղ պետական ծառայողները վկաների ներկայությամբ նրանց ստորագրել էին տալիս վաճառքի փաստաթղթերը, տեղում հաշվում էին գումարը, դնում պայուսակի մեջ և դուրս հրավիրում: Մուտքի մոտ, սակայն, վաճառողներին սպասող թուրքերը նրանցից խլում էին գումարով պայուսակը, որն օգտագործվում էր հաջորդների անշարժ գույքին տիրանալու «գործարքներում»⁹: Այս կերպ «Լքյալ գույքերի» հանձնախմբերը հայերի անշարժ գույքի վաճառքի օրինական գործողության տպավորություն էին ստեղծում, թե նրանք իբր ինքնակամ իրենց գույքը վաճառել և դրա դիմաց գումար են ստացել, սակայն իրականում այս մեքենայությամբ նրանց փաստորեն թալանում էին:

Այսպիսով, 1915 թ. հունիսի 10-ի «Լքյալ գույքի մասին» առաջին օրենքով մի կողմից պատրանք էր ստեղծվում, թե իբր պաշտպանվում էին գույքերի նախկին տերերի՝ հայերի իրավունքները, մյուս կողմից, սակայն, ակնհայտ երևում է հայերի գույքային իրավունքների լիարժեք փոխանցումը մուհաջիրներին: Օրենքով ոչ թե խնդիր էր դրվում հաշվառել ու գնահատել հայերի ունեցվածքը՝ հետագայում օրինական տերերին վերադարձնելու նպատակով, այլ «օրինական» գործողությունների իմիտացիայի միջոցով հիմքեր էին ստեղծվում հայերի ունեցվածքի բռնազավթման գործընթացը իշխանությունների լիակատար վերահսկողության տակ դնելու համար:

Տեղահանված հայերի ունեցվածքը բռնազավթելու հարցում երիտթուրքերի կառավարությունը չբավարարվեց միայն այս օրենքով: 1915 թ. սեպտեմբեր-

⁸ Տե՛ս Փափազյան Ա., Թուրքական վավերագրական նյութեր Օսմանյան կայսրության ոչ մահմեդական ժողովուրդների մասին (1839-1915 թթ.), Եր., 2002, էջ 217:

⁹ Տե՛ս Baghdjian K. K., նշվ. աշխ., էջ 194:

րի 13-ին ընդունվեց «Այլ վայրեր տեղափոխված անձանց ունեցվածքին, պարտքերին և լիազորագրերին վերաբերող նախնական» կամ «Լքյալ գույքի մասին» տասնմեկ հոդվածներից բաղկացած երկրորդ օրենքը¹⁰, ինչն, անշուշտ, ուներ իր պատճառները: Ի տարբերություն առաջին օրենքի, երկրորդի վերնագրից երևում է, որ դրանով որպես կարգավորման առարկա նշվում են ոչ միայն տեղահանված հայերի գույքի, այլև դրա պարտքերի ու լիազորագրերի հետ կապված հարցերը, թեև նախորդ օրենքի 10-րդ հոդվածով կարծես թե արդեն բացառվել էր լիազորագրեր ստացած անձանց կողմից տեղահանված հայերի գույքի նկատմամբ որևէ գործողություններ կատարելը: Բանն այն էր, որ չնայած այդ արգելքին, «Լքյալ գույքի» հանձնախմբերի, տեղական իշխանությունների, ռազմական նախարարության գրություններից պարզ է դառնում, որ կառավարությունը, այնուամենայնիվ, տեղերում չէր կարողանում ապահովել հայերի «լքյալ գույքի» ու հարստության կանոնավոր փոխանցումը պետական գանձարան, և չնայած արգելքներին ու սահմանված պատիժներին՝ կայսրության արևելյան նահանգներում տեղի էին ունենում հայերի ունեցվածքի թալանի բազում դեպքեր մահմեդականների կողմից: Ընդ որում, խոսքը ոչ միայն ավազակների, այլև մանր ու միջին պաշտոնյաների մասին էր, որոնք, պաշտոնական դիրքը չարաշահելով, նույնպես օգտվում էին ընձեռված հնարավորություններից և տեր դառնում հայերի ունեցվածքին:

Այդ մասին տեղեկություններ կան անգամ թուրքական ռազմական տրիբունալների դատավճիռներում: Այսպես՝ Տրապիզոնի դատավարության վճռում մանրամասն նկարագրվում է, թե ինչպես է ոստիկանապետ Նուրի Էֆենդիի հրամանով հափշտակվել հայերի «լքյալ գույքը»¹¹: Բույուք Դերեի դատավարության վճռում նույնպես նշվում էր, որ նախկին ոստիկանապետ Աբդուլ Քերիմ բեյը կողոպուտի ու հափշտակության է ենթարկել տեղահանվողների գույքը¹²:

Երկրորդ օրենքի ընդունումով երիտթուրքական կառավարությունը տեղահանված հայերի անշարժ գույքի պարտքերի և լիազորագրերի հարցերի արժարժմամբ փորձում էր ապագայում բացառել մահմեդական բնակչության կամ տեղի պաշտոնատար անձանց կողմից տեղահանված հայերի անշարժ գույքը հափշտակելու նոր դեպքերը և հայերի ունեցվածքի բռնազավթման գործընթացը բացառապես իրենց վերահսկողության տակ պահել:

¹⁰ Տե՛ս **Պեյլեքյան Ա.**, Մեծ տերությունները, Օսմանյան կայսրությունը և հայերը ֆրանսիական արիսիվներում (1914-1918), հ. I, Եր., 2005, էջ 197-199:

¹¹ Տե՛ս Հայերի ցեղասպանությունը ըստ երիտթուրքերի դատավարության փաստաթղթերի, առաջաբանը, թարգմանությունը և ծանոթագրությունները՝ Ա. Փափազյանի, Եր., 1988, էջ 169:

¹² Նույն տեղում, էջ 174:

Նոր օրենքի 2-րդ հոդվածով շրջանառության մեջ էր դրվում «լքյալ գույքերի» վրա եղած պարտքերի վճարման գաղափարը, ինչով, ըստ ամենայնի, փորձ էր կատարվում օրինական տեսք տալ նախկին օրենքի հիման վրա արդեն թափ առած հայերի գանգվածային ունեզրկման գործընթացին, կատարվածը ներկայացնելով այնպես, թե իբր պետական գանձարան փոխանցված գումարները գանձվել ու գանձվելու են գույքերի վրա եղած պարտքերի դիմաց: Այս դրույթի իմաստն այն էր, որ կայսրության հարավային տարածքներ տեղահանված օրինական սեփականատերերի բացակայության պայմաններում նրանց անշարժ գույքից գանձվող պարտքերի գործընթացը հանգեցնելու էր նրան, որ իբր թե չվճարված կամ ժամկետանց պարտքերի դիմաց նրանց գույքը, ի վերջո, պետականացվելու էր:

Օրենքի 5-րդ հոդվածով «Լքյալ գույքի» հանձնաժողովները յուրաքանչ-յուր անշարժ գույքի պարտքը վճարելուց հետո գումարի մնացորդի վերաբերյալ պետք է տեղեկացնեին շահագրգիռ անձանց, այսինքն՝ օրինական սեփականատերերին, որոնք 15-օրյա ժամկետում կարող էին այդ որոշումները բողոքարկել դատարաններում¹³: Այս դրույթը պարզապես ծաղր էր տեղահանված հայերի նկատմամբ, քանզի հազիվ թե «Լքյալ գույքի» հանձնաժողովներն իրենց պարտավորված էին զգում Օսմանյան կայսրության ծայրամասեր՝ Միթիայի և Միջագետքի անապատներ աքսորված հայերին տեղեկացնել, թե որքան պարտք են գանձել նրանց անշարժ գույքից և, ի վերջո, ինչ ճակատագրի է այն արժանացել: Առավել ևս դժվար է պատկերացնել, թե ինչպես պետք է անապատներում մի կերպ գոյատևող հայերը 15 օրվա ընթացքում վերադառնային, որպեսզի դատարաններում պաշտպանեին իրենց գույքային իրավունքները:

Սեպտեմբերի 13-ի օրենքի 8-րդ հոդվածի հիման վրա մշակվեց և հոկտեմբերի 26-ին «Թաքվիմ ի Վեքայի» պաշտոնաթերթում հրապարակվեց 25 հոդվածից բաղկացած «1915 թ. սեպտեմբերի 13-ին ընդունված ժամանակավոր օրենքի գործադրման համար այլ վայրեր տեղափոխված անհատների լքյալ գույքերին և պարտքերին վերաբերող կանոնադրությունը», որի 2-րդ հոդվածով տեղահանված հայերի անշարժ գույքի պարտքերից բացի արժարժվում է նաև հարկատվության ցուցակներով դրանցից պետական հարկեր գանձելու հարցը¹⁴: Ակնհայտ է, որ, կառավարության ժամանակավոր օրենքով իրենց բնակավայրերից տեղահանված լինելով, հայերը ո՛չ շահագործում և ո՛չ էլ առավել ևս եկամուտ էին ստանում իրենց անշարժ գույքից: Ավելին՝ նրանք այդ գույքից զրկվում էին կա՛մ շուկայականից անհամեմատ էժան գներով մահմեդական հարևաններին

¹³ Պեյերյան Ա., նշվ. աշխ., էջ 198:

¹⁴ Տե՛ս Փափազյան Ա., նշվ. աշխ., էջ 214-222:

զիջելու, կա՛մ «Լքյալ գույքի» հանձնաժողովների թալանչիական «աճուրդների» կազմակերպման հետևանքով: Այս ամենը որևէ կերպ հաշվի չէր առնվում թուրքական իշխանությունների կողմից, որոնք պահանջում էին վճարել այդ անշարժ գույքի պետական հարկերը և այդ անվան տակ փաստորեն շարունակում էին տեղահանված հայերի ունեցվածքի թալանի գործընթացը:

Ակնհայտ է, որ երիտթուրքերի կառավարության կողմից ընդունված «Լքյալ գույքի մասին» օրենքները հակասում էին երկրի Սահմանադրությանը: Օսմանյան խորհրդարանում «Տեղահանության» և «Լքյալ գույքի մասին» ժամանակավոր օրենքների քննարկումների ժամանակ բացահայտվեցին դրանց կիրառման բազմաթիվ չարաշահումներ: Խորհրդարանի 1915 թ. սեպտեմբերի 21-ի և հոկտեմբերի 30-ի նիստերում պատգամավոր Ահմեդ Ռիզան իր ելույթում, մեջբերելով օսմանյան Սահմանադրության 21-րդ հոդվածը, նշում էր, որ իրավունք չկա սեփականատիրոջ կամքին հակառակ վաճառել նրա ունեցվածքը: Արձանագրելով երկրի Սահմանադրությանը «Լքյալ գույքի մասին» ժամանակավոր օրենքի հակասությունը՝ Ռիզան առաջարկում էր առաջնորդվել Սահմանադրության 53-րդ հոդվածով և մինչև պատերազմի ավարտը չքննարկել ժամանակավոր օրենքի հաստատման հարցը¹⁵:

«Լքյալ գույքի մասին» ժամանակավոր օրենքների ընդունումն ու գործադրումը հակասում էին նաև 1858 թ. օգոստոսի 9-ին ուժի մեջ մտած և մի քանի անգամ փոփոխությունների ենթարկված օսմանյան Քրեական օրենսգրքին, որի համաձայն՝ զինված կամ անզեն, անհատական կամ խմբակային հարձակման, ինչպես նաև ընտանիքի անդամների վրա ճնշում գործադրելու եղանակով սնունդ, պաշար, ապրանք կամ առարկաներ թալանողների կամ ոչնչացնողների համար մահապատիժ էր սահմանված¹⁶:

Հայերին բնաջնջելու, նրանց հայրենիքին՝ Արևմտյան Հայաստանին և ունեցվածքին տիրանալու մոլուցքով տարված թուրքական իշխանություններին, սակայն, բացարձակ չէր հուզում, որ իրենց հանցագործությունները «օրինականացնելու» նպատակով ստեղծված ժամանակավոր օրենքները հակասում էին անգամ պետության հիմնական օրենքին և հենց միայն այդ պատճառով չէին կարող իրավական ուժ ունենալ:

Եզրահանգում. Որպեսզի ավելի հստակ պատկերացում կազմվի, թե ինչ նյութական օգուտներ է քաղել թուրքական պետությունը հայերի զանգվածային կոտորածներից ու տեղահանությունից, բավական է նշել, որ հակառակ պատերազմական ծանր պայմաններին և կայսրության տնտեսության կաթվածահար

¹⁵ Տե՛ս **Տառքյան Վ.**, Հայոց ցեղասպանությունը թուրքական պաշտոնական փաստաթղթերում, Եր., 2002, էջ 46-47:

¹⁶ Տե՛ս **Ղազարեան Հայկազն Գ.**, Տեղասպան թուրքը, «Համազգային», Պեյրուք, 1968, էջ 300:

վիճակին, երկրի պետական բյուջեն արձանագրեց աննախադեպ աճ: Այսպես՝ եթե 1913-1914 թթ. այն կազմում էր 35 մլն օսմ. ոսկի, ապա 1915-1916 թթ.՝ 38 մլն, իսկ 1917-1918 թթ.՝ 85 մլն¹⁷: Ակնհայտ է, որ պատերազմական պայմաններում կայսրության պետական բյուջեի նման աճը կարող էր ապահովվել միայն օսմանահպատակ հայերի և կայսրության քրիստոնյա այլ ժողովուրդների՝ հույների, ասորիների, ինչպես նաև հրեաների գույքի և ունեցվածքի բռնագրավման հաշվին: Այստեղ տեղին է արձանագրել դատապարտելի այն փաստը, որ թուրքական պետությունը, փաստորեն, օգտվում էր իր իսկ կողմից կազմակերպված ու իրագործված հանցագործության՝ Հայոց ցեղասպանության պտուղներից, ինչը նույնպես հանցագործություն է:

Այսպիսով, Թուրքիայի Հանրապետության տնտեսությունն այսօր էլ զարգանում է նաև տարբեր թուրքական վարչակարգերի կողմից այդ երկրի տարածքում բնակվող ոչ մահմեդական բնակչության, մասնավորապես՝ հայերի ունեցվածքի հետևողական բռնագրավման հաշվին:

**«ЗАКОНОДАТЕЛЬНЫЕ» МЕХАНИЗМЫ ЭКСПРОПРИАЦИИ
ИМУЩЕСТВА АРМЯН, ОСУЩЕСТВЛЕННОЙ МЛАДОТУРЕЦКИМ
РЕЖИМОМ ПАРАЛЛЕЛЬНО С ПОЛИТИКОЙ ГЕНОЦИДА**

Марукян А.Ц.

Ключевые слова: *Геноцид армян, Османская империя, Западная Армения, младотурецкое правительство, временный закон “О депортации”, закон “Об оставленном имуществе”, комитеты «оставленного имущества», массовая экспроприация имущества армян, недвижимость и движимое имущество, мусульманские переселенцы.*

Особенностью экспроприации имущества армян турецким государством в годы Геноцида армян являлось принятие целой серии законов, при помощи которых власти пытались придать законный вид своим незаконным действиям. Политика “узаконивания” экспроприации имущества армян проводилась планомерно и последовательно. Первые законы “Об оставленном имуществе” были приняты младотурками, а кемалисты продолжили эту практику. Безнаказанность этой преступной политики разнуздало турецкое государство. Следующие турецкие режимы продолжили политику экспроприации имущества немусульманских общин, в том числе армянской общины Турции.

¹⁷ **Աստուդյան Ա.**, Հայերի ունեզրկման գործընթացն Օսմանյան կայսրությունում 1915-1923 թթ., վկայություններ, փաստեր և փաստաթղթեր, «Վէմ» համահայկական հանդես, Եր., 2010, թիվ 3 (31), էջ XXIX:

**"LEGISLATIVE" MECHANISMS OF EXPROPRIATION OF
ARMENIAN'S PROPERTY CARRIED OUT BY YOUNG TURKS
REGIME IN PARALLEL WITH POLICY OF GENOCIDE**

Marukyan A.C.

Key words: *The Armenian Genocide, Ottoman Empire, Western Armenia, Young Turkish Government, temporary law "On Deportation," Law "On abandoned property", Committees of "abandoned property," Mass expropriation of Armenian property, Real estate and movable property, Muslim settlers.*

One of the aspects of the problem of Armenian property's expropriation by the Turkish state during the Armenian Genocide were the laws passed by it to try to legitimate this illegal action. This policy was carried out continuously and consistently: the first laws about "abandoned property" were adopted by Young Turks and Kemalists continued their practice. The next Turkish regimes expropriated the property of non-Muslim communities and, in particular, of the Armenian community.

R e f e r e n c e s

1. **Astoyan A.**, Dari kokhoputy. Hayeri unezrkumy Osmanyanyan kaysrutyunum 1914-1923 th., Yerevan, 2012 (**In Armenian**).
2. **Astoyan A.**, Hayeri unezrkumy Osmanyanyan kaysrutyunum 1915-1923 թթ., vkayutyunner, paster ev pastatkhter, «Vem» hamahaykakan handes, Yerevan, 2010, № 3 (31) (**In Armenian**).
3. **Barsegov Yu.**, Hayeri tsekhaspanutyany hamar nyutakan pataskhanatvutyuny, Yerevan, 1999 (**In Armenian**).
4. **Dadrian V.**, Hajots tsekhaspanutyuny turqakan pashtonakan pastatkhterum, Yerevan, 2002 (**In Armenian**).
5. Hayeri tsekhaspanutyuny yst eritturqeri datavarutyany pastatkhteri, arajabany, targmanutyuny ev tsanotagrutyunnery A. Papazyani, Yerevan, 1988 (**In Armenian**).
6. **Khazaryan Haykazn G.**, Hayots lqal guyqeru ev kalvatsqneru talany turqeru kokhme, «Hayreniq», Postyn, 1964, № 6-7 (**In Armenian**).
7. **Khazaryan Haykazn G.**, Tsekhaspan turqy, «Hamazgayin», Peyrut, 1968 (**In Armenian**).
8. **Levon Vardan**, Haykakan tasnyhingy ev hayeru lqal guyqery, Peyrut, 1970 (**In Armenian**).
9. **Papazyan A.**, Turqakan vaveragrakan nyuter Osmanyanyan kaysrutyan voch mahmedakan jokhovurdneri masin (1839-1915), Yerevan, 2002 (**In Armenian**).

10. **Peyleryan A.**, Mets terutyunnery, Osmanyany kaysrutyuny ev hayery fransiakan arkhivnerum (1914-1918), h. I, Yerevan, 2005 (**In Armenian**).
11. **Safrastyan R.**, Osmanyany kaysrutyun. Tsekhaspahutyany tsragri tsagumnabanutyuny (1876-1920), Yerevan, 2009 (**In Armenian**).

Ընդունվել է՝ 04.11.2019

Գրախոսվել է՝ 15.11.2019

Հանձնվել է տպ.՝ 20.11.2019

Տեղեկություններ հեղինակի մասին

Արմեն ՄԱՐՈՒՅՅԱՆ՝ պատմ. գիտ. դոկտոր., դոցենտ, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի Հայկական հարցի և Հայոց ցեղասպանության բաժնի վարիչ, էլ. փոստ՝ mararmts@yahoo.com

ՀՏԴ՝ 930.85

ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼԻ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԸ ՈՐՊԵՍ
ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄԻԱՎՈՐ

Ինգա Ավագյան

ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն,
Կումայրի պատմամշակութային արգելոց-թանգարան

Բանալի բառեր՝ *Ալեքսանդրապոլ, զինվորական եկեղեցիներ, Մի-
խայիլ Հրեշտակապետ, Սբ Մեծ նահատակ Ալեքսանդրա, Սբ Ար-
սենիի կամ Տիրոջ հայտնության, Սբ Աստվածածնի եկեղեցի:*

Ալեքսանդրապոլ քաղաքի և նույնանուն ամրոցի պատմու-
թյան մեջ կարևոր տեղ են գրավում զինվորական եկեղեցիները,
որոնք հիմնադրվել են XIXդ. վերջին-XX դ. սկզբին: Սույն հրապա-
րակման մեջ ներկայացվել են այս եկեղեցիների հիմնադրման
համառոտ պատմությունը, արխիվային փաստաթղթեր և լուսա-
նկարներ: Առանձնահատուկ տեղ է հատկացվում Միխայիլ հր-
բեշտակապետի մատուռի հարևանությամբ գտնվող Պատվո բլու-
րին, որտեղ հանգչում են ռուս-թուրքական պատերազմներում
գոհված սպաների աճյունները:

Նախաբան. Այսօր Ալեքսանդրապոլ-Գյումրու զբոսաշրջության զարգաց-
ման հիմնահարցերից է քաղաքում XIXդ. վերջի-XXդ. սկզբի ռուսական մշա-
կույթի պահպանությունը և ուսումնասիրությունը: Եթե վերջինս այժմ պատշաճ
վիճակում է, և լուրջ քայլեր են արվում այդ մշակույթը միջազգային հարթակ-
ներում ներկայացնելու ուղղությամբ, ապա դրանց պահպանությունը այսօր
գրեթե օրհասական վիճակում է և կարիք ունի ինչպես Ռուսաստանի Դաշնու-
թյան, այնպես էլ Հայաստանի Հանրապետության իշխանությունների կողմից
ավելի մեծ ուշադրության ու հոգատար վերաբերմունքի: Համեմատաբար բար-
վոք վիճակում են մի քանի մշակութային միավորներ, որոնց վերաբերյալ աշ-
խատանքի մեջ կարևոր տեղեկություններ են բերվում մինչհեղափոխական և
ժամանակակից աղբյուրներից:

Սուրբ Մեծ նահատակ Ալեքսանդրայի եկեղեցի¹

1804թ. հունիսի 12-ին ռուսական զորքերը իշխան Յիգիանովի հրամանատարությամբ մտան Գյումրի: 1805թ. մարտի 30-ին նվաճեցին Շորագյալը և նրա կենտրոն Արթիկը: Նույն թվականի մայիսին այս մասին Յիգիանովը զեկուցեց կայսր Ալեքսանդր I-ին: Մենատին ուղղված զեկույցում նշված է, որ նպատակահարմար է Գյումրուց ոչ հեռու հիմնադրել ամրոց: Զեկույցին կցված էր ամրոցի հատակագիծը, որը կազմել էր ճարտարագետ-ենթասպա Գոտշեդը²: Վ. Պոտտոն իր աշխատությունում գրում է. «Դեպի Թիֆլիս տանող ճանապարհները պաշտպանելու և արգելափակելու համար, Երմուլովի խնդրագրի համաձայն, որոշվում է կառուցել յոթ նոր ամրոց, այդ թվում՝ վեցերորդը պետք է կառուցվեր Գյումրիում՝ Թուրքիայի սահմանին»³: 1834 թ. հունիսի 2-ին կայսր Նիկոլայ I-ի հրամանով սկսում են Գյումրու նոր ամրոցի նախագծումը⁴: Վառոդի նկուղներով, զորանոցներով և պահեստներով ամրոցը կառուցվեց տասը տարիների ընթացքում⁵: Ղրիմի պատերազմից հետո այն լրացվեց առանձին ամրությամբ՝ «Սև բերդով», և ստացավ առաջին կարգի ամրոցի պաշտպանական լրիվ սպառազինություն:

Մինչև վերջին՝ 1877-1878թթ. ռուս-թուրքական պատերազմը Ալեքսանդրապոլը աշխարհագրական դիրքով և ռազմավարական նշանակությամբ Անդրկովկասի հարավային սահմանին գտնվող կարևոր հենակետ էր, որ փակում էր դեպի Թիֆլիս տանող ճանապարհը և Կարսն ու Էրզրումը գրավելու համար կարևոր բազա էր: Կարսի և Բաթումի՝ Ռուսական կայսրությանը միանալուց հետո Ալեքսանդրապոլի ամրոցն իր ռազմական կարևոր նշանակությունը կորցրեց և 1887թ. երկրորդ կարգի ամրոցից վերափոխվեց՝ ստանալով ամրոց-պահեստի կարգավիճակ⁶:

Ալեքսանդրապոլ ամրոցի Սուրբ Մեծ նահատակ թագուհի Ալեքսանդրայի⁷ եկեղեցին քարից է, խաչահիմք, պատարագի մեկ սեղանով: Տեղավորում է

¹ Պետցուցիչ 1.1: Տե՛ս Հավելված ՀՀ կառավարության 2004 թվականի սեպտեմբերի 9-ի N 1270-Ն որոշման, ՀՀ պատմական և անշարժ հուշարձանների պետական ցուցակ, Եր., 2004:

² Գաբրիելյան Վ., Լենինական, Եր., Հայաստան, 1984, էջ 11:

³ Потто В., Кавказская война в отдельных очерках, эпизодах, легендах и биографиях. Т. 2, Ермоловское время, Выпуск I, Издание второе, С.-Петербург, 1887, с. 637.

⁴ Новицкий В., Фон-Шварц А., Апушкин В., Фон-Шульц Г., Военная Энциклопедия в 18 томах, Т. I, Петербург, изд. И.Д. Сытина, 1911, с. 260.

⁵ Նույն տեղում, էջ 537:

⁶ Նույն տեղում, էջ 260:

⁷ Ալեքսանդրա Հռոմեացին՝ թագուհի Ալեքսանդրան (?-303թ. ապրիլի 21), քրիստոնեության սրբերից է, որին պաշտել են որպես նահատակի: Ուղղափառ եկեղեցում Սրբի հիշատակության օրն է հուլյան օրացույցով ապրիլի 23-ը, դպտական եկեղեցում՝ ապրիլի 10-ը:

800 մարդ: Քաղաքի անվանակոչության մասին ռուսական աղբյուրներից քաղված վարկածներից մեկի համաձայն՝ «...կայսր Նիկոլայ Պավլովիչը ...1837թ. լինելով Անդրկովկասում, ի պատիվ իր սրբազան տիկնոջ՝ քաղաքը անվանեց Ալեքսանդրապոլ, իսկ ամրոցում հոկտեմբերի 4-ին հիմնադրեց Սբ Մեծ նահատակ թագուհի Ալեքսանդրայի եկեղեցին (նկ. 1-4): Այն կառուցել է ճարտարագետ-գնդապետ Ռուդենկովը: Օծվել է 1842թ.: Եկեղեցին շրջապատված է քարե հիմքին ամրացված թուջե ճաղավանդակով, որը կառուցվել է 1911թ. Ալեքսանդրապոլ ամրոցի պարետ Ա.Դեդովի ջանքերով: Նիկոլայ I-ի մտերիմ ընկեր կոմս Բենկենդորֆը, որ համարվում է Նիկոլայ I-ի հուշագիրը և մանրամասն գրառել է այն ամենը, ինչ լսել է կայսրից, գրում է. «*Հոկտեմբերի 2-ին ... ես [Նիկոլայ I-ը-Բ.Ա..] գիշերը մեկնեցի Ախալքալաք, իսկ 3-ին՝ Գումրի, որտեղ հայերի ավագները ինձ ընդունեցին սովորական ողջույններով, նրանք այստեղ հաստատվել էին Կարսից գալով: Ինձ ցնցեցին հսկայածավալ աշխատանքները, որոնք կատարվել էին այդ նոր ամրոցը կառուցելու համար (Վրաստանի իրական պահապան և հիմնադետ, որտեղից միաժամանակ կարելի է սպասնալ և՛ Թուրքիային, և՛ Պարսկաստանին, որոնց սահմանները այստեղ գրեթե միաձուլվում են): Ուղղաձիգ ժայռի վրա եզակի է տեղադրությունը ամրոցի, որը վերահսկում է հեռվում գտնվող Օտոմանյան տիրույթները: Ավարտված է քարե պատյանի մանրակրկիտ կառուցումը, այն մանրամասնությամբ, որը մենք սովոր ենք տեսնելու մեր լավագույն ամրոցներում, և այստեղ արդարացի է նշել բարոն Ռոզենի և աշխատանքները ղեկավարող ճարտարագետի մասին, որոնք պատասխանատու էին ինչպես կառուցման արագության և գերազանց ուրվագծի համար, այնպես էլ անհավանական հոգատարության, որով այս ամենը կառուցվել էր: Ես ցանկացա անձամբ դնել եկեղեցու հիմքի առաջին քարը, որը կառուցվելու է հանուն Սուրբ նահատակ թագուհի Ալեքսանդրայի և վերամկրտեցի Գումրին Ալեքսանդրապոլ...»¹⁰:*

Սուրբ նահատակ Ալեքսանդրայի եկեղեցու հոյակապ իրերից են Տեր Սավառֆի (թարգմանաբար՝ Չորսհրամանատար) սրբապատկերը (4 ½ արշին x 2 ½ արշին կամ 320 սմ x 178 սմ), որը եկեղեցուն է նվիրաբերել տեր և կայսր

⁸ Православные храмы Армении, Наша среда/ <http://russian-church.ru/viewpage.php?cat=armenia&page=10>, <http://nashasreda.ru/pravoslavnye-xramy-armenii/> (24.03.2019) Ցավոք, այս տեսակետը այսօր գերակշռող է հին ռուսական աղբյուրներում, որի տարածմանը նպաստել է հետևյալ հեղինակավոր աղբյուրը՝ Новицкий В., Фон-Шварц А., Апушкин В., Фон-Шульц Г., Военная Энциклопедия в 18 томах, Т. I, с. 260.

⁹ Православные храмы Армении | Наша среда/<http://russian-church.ru/viewpage.php?cat=armenia&page=10>, <http://nashasreda.ru/pravoslavnye-xramy-armenii/> (24.03.2019)

¹⁰ Шильдер Н.К., Николай Первый его жизнь и царствование, т. II, С.-Петербург, изд. А.С.Суворина, 1903, с. 750, 753.

Նիկոլայ I-ը (սրբապատկերը պատկանում է նկարիչ Կ. Բրյուլովի վրձնին), և անհայտ անձի նվիրած արժեքավոր խաչվառները՝ «*Ի նշան 1877թ. մայիսի 6-ին Արդահան քաղաքի նվաճման*» մակագրություններով¹¹:

Նախկին գլխավոր հրամանատար Նորին կայսերական մեծություն իշխան Միխայիլ Նիկոլանիչի թույլտվությամբ տաճարում են թաղվել վերջին (1877-1878թթ.) ռուս-թուրքական պատերազմի երկու հերոսներ. Նորին մեծության շքախմբի գեներալ-մայոր Իլյա Չելոկանը (Չոլոկաշվիլի)¹², որը մահացել է Կարսի մատույցներում տեղի ունեցած ճակատամարտում ստացած վերքերից 1877թ. մայիսի 11-ին, և գնդապետ Իվան Մելիքովը, որը սպանվել է 1877թ. նոյեմբերի 6-ին՝ Կարսի գրոհի ժամանակ: Թե՛ մեկի, թե՛ մյուսի գերեզմանների վրա կան արձանագրություններով մարմարե սալեր:

Տաճարի արտաքին կողմում՝ բեմի մոտ, կանգնած է բրգաձև քառակոթող մի հուշարձան, որի տակ է թաղված նույն թուրքական պատերազմում արիության համար աչքի ընկած հրետանու հրամանատար գեներալ-մայոր Ֆյոդոր Ալեքսանդրովիչ Գուբսկին¹³՝ 1877-78թթ. ռուս-թուրքական պատերազմի մի այլ հերոս, որ մահացել է տիֆից 1878թ. Հասանկալայում, փետրվարի 14-ին՝ ռազմական գործողությունների ավարտից ընդամենը 5 օր առաջ:

¹¹ Православные храмы Армении/Наша среда/[http://russian_church.ru/viewpage.php? cat=armenia&page=10](http://russian_church.ru/viewpage.php?cat=armenia&page=10), <http://nashasreda.ru/pravoslavnye-xramy-armenii/> (24.03.2019)

Այս մասունքները և եկեղեցին հրդեհվել են 1918թ., Ալեքսանդրապոլը լքող թուրքերի կողմից, որոնք ամբողջությամբ թալանել էին Ալեքսանդրապոլի ամրոցը, գույքը տեղափոխել կայարան, ապա գնացքներով՝ Կարս, Էրզրում: Տե՛ս **Ավագյան Ի.**, Մեծ եղեռնը վերապրածները, Հիշողություն մեր ընտանիքի պատմության մի քանի պահերից. Ադասի Մակարյանի հուշապատումը, Գյումրի, 2015, էջ 47-49: Եկեղեցու քահանա Մատվեյ Միրոնովը 1918թ. թուրքական բռնազավթման ժամանակ հրաժարվեց թուրքերին եկեղեցի ներս թողնելուց և թուրքերի ձեռքով եկեղեցու հետ ողջ-ողջ այրվեց (Գյումրի քաղաքը և մարդիկ, Գյումրի, 2009, էջ 173): Այսօր էլ վերանորոգված եկեղեցու արևմտյան պատին այդ վասին վկայող մի հուշատախտակ է փակցված:

¹² Գեներալ իշխան Իլյա Չապովիչ Չելոկանը (Չոլոկաշվիլի) ռուս-թուրքական պատերազմի հերոս է: Մայիսի 4-ին Կարսի ամրոցի արվարձանների հետախուզման ժամանակ, վեց հարյուր դադստանցու գլուխ անցած, մասնակցել է ամրոցից արտագրոհ կատարած թուրքական դրագունների և հետևակային ջոկատի հետ թեժ ընդհարմանը: Դադստանցիները փայլուն սուսերագրոհով հաղթեցին թշնամուն, բայց նրանց հրամանատարը մահացու վիրավորվեց կողի մեջ պայթած գնդակից և մահացավ մայիսի 11-ին Կարսից 15 վերստ հեռավորության վրա՝ Չախմի մոտ գտնվող ճամբարում: Генерал Чолокашвили (Челокаев) Илья Заалович/<http://nobility.pro/ru/statya/623-cholokashvili-ilya-zaalovich.html> (3.31.2019)

¹³ Губский Федор Александрович, генерал-майор/<http://www.imha.ru/1144542407-gubskiy-fedor-aleksandrovich-general-mayor.html#.W21DNiQzbIU> (12.03.2019). **Старчевский А.**, Памятник Восточной войны 1877-78 гг., СПб., 1878, с. 74. Приказ артиллерии Кавказского военного округа 15 декабря 1878г., ном. 941.

Մբ Աստվածածնի ծննդյանը նվիրված եկեղեցի

Ալեքսանդրապոլում է կառուցվել նաև Մբ Աստվածածնի ծննդյանը նվիրված Սևերսկի 18-րդ դրագունական գնդի եկեղեցին (նկ. 5-6): Գնդի օրը տոնում էին սեպտեմբերի 8-ին: 1856թ. ապրիլի 3-ին Նիժեգորոդյան դրագունական գնդից առանձնացված չորս հեծելավաշտերին գումարվեցին Նովորոսիյսկի դրագունական գնդի սպաներ և ցածր կոչումներով ծառայողներ՝ ձևավորելով Ալեքսանդրապոլի Սևերսկի դրագունական գունդը: Այդ տարում էլ հիմնադրվեց գնդի եկեղեցին: Այս երթային եկեղեցին գնդին ուղեկցել է Կարսի գրոհի ժամանակ:

Գնդի (1907թ-ից՝ Դանիայի արքա Քրիստիան IX-ի անվան Սևերսկու 18-րդ դրագունական գունդ) եկեղեցին կառուցվել էր քաղաքից մեկ վերստ հեռավորությամբ բլրակի վրա, որտեղից հոյակապ տեսարան էր բացվում՝ ձյունածածկ Արագածը, Ալաջայի բարձունքները և Արփաչայ գետակի կիրճը: Եկեղեցու շենքը քարից է, միագմբեթ, երեսապատված է տեղական կարմիր տաշած քարով, տանիքը երկաթյա է, հատակը՝ նախշասալիկներով: Եկեղեցին կառուցվել է գանձարանի գումարներով՝ բարեխոսությամբ գնդի նախկին հրամանատարի՝ գնդապետ Ֆ.Գրյագնովի, որը սպանվեց Թիֆլիսում, 1906թ. հեղափոխականների կողմից: Եկեղեցին օծվել է 1901թ. հուլիսի 8-ին: Տեղավորում է մոտ 700 մարդ¹⁴:

Գնդի եկեղեցու դիտարժան իրերից են՝ Մբ Աստվածածնի ծննդյան սրբապատկերը՝ գնդի նախկին հրամանատարի, Նորին կայսերական մեծություն իշխան Նիկոլայ Ալեքսանդրովիչի նվերը 1859թ., քահանաների և սարկավագների հանդերձանք և մորեգույն թավշյա ծածկոցը, որի վրա ասեղնագործված ոսկե ուսապահերը պատրաստված էին ողորմած տեր, կայսր Ալեքսանդր II-ի դագաղը ծածկող վարչամակից: Հաստիքացուցակով եկեղեցուն հասնում էր մեկ հոգևորական, նրա համար՝ պետական բնակարան սպայական կողաշենքում:

Մբ Արսենիի կամ Տիրոջ Հայտնության եկեղեցի

Ուշագրավ է Բակինսկի 153-րդ հրաձգային գնդի՝ Տիրոջ հայտնության եկեղեցին (նկ. 7, 10): Գնդի տոնը նշում էին հոկտեմբերի 28-ին: Հրաձգային գունդը՝ բաղկացած էր ք գումարտակներից, ձևավորվել է 1863թ. նոյեմբերի 6-ին Ղրիմյան 6-րդ պահեստային գումարտակից և Կովկասյան 1-ին կանոնավոր գումարտակից՝ զորակոչիկների համալրումով: Գնդի երթային եկեղեցին գոյություն ունի այս ժամանակաշրջանից և նրան ուղեկցել է 1877-1878 թթ. ռուս-թուրքական պատերազմում:

¹⁴ <http://nashasreda.ru/pravoslavnye-xramy-armenii/> (12.03.2019).

Եկեղեցին գտնվում է Ալեքսանդրապոլ քաղաքից դուրս, այսպես կոչված, «Կազաչի պոստում»¹⁵: Կառուցվել է 1910թ. ռազմական եկեղեցիների օրինակով՝ գանձարանի գումարներով և օծվել է հաջորդ տարվա սկզբին՝ հունվարի 6-ին: Եկեղեցու մոտ գտնվում է 1877-1878 թթ. ռուս-թուրքական պատերազմում զոհվածների հուշարձանը: 1877թ. հոկտեմբերի 28-ին սերբ արքեպիսկոպոս Սբ Արսենիի հիշատակության օրը¹⁶ գունդը աչքի է ընկել Էրզրումի «Ազիզիե» ամրոցի գրոհի ժամանակ: Այդ պատճառով էլ եկեղեցին նաև կոչվում է Սբ Արսենիի անունով:

*Սբ Հրեշտակապետ Միխայիլի եկեղեցի-մատուռը և Պատվո բլուրը*¹⁷

Ամրոցի Սբ Մեծ Նահատակ Ալեքսանդրայի եկեղեցուն կից է Սբ Հրեշտակապետ Միխայիլի¹⁸ եկեղեցի-մատուռը (սկ. 8,9), որը գտնվում է ռազմական կայազորի Պատվո բլուր կոչվող գերեզմանոցում: Մատուռը մեծ չէ, ունի վայելուչ տեսք, օծվել է 1886թ. Վրաստանի նախկին Էկզարխոս¹⁹ արքեպիսկոպոս Պոդոսի կողմից²⁰: Մինչև 1853թ. այս գերեզմանոցում են հուղարկավորել մահացած ինչպես զինվորական, այնպես էլ քաղաքացիական դասերին պատկանող բոլոր ուղղափառ քրիստոնյաներին: 1853թ. գերեզմանոցը կոչվեց Պատվո բլուր և դարձավ միայն ռազմադաշտում զոհված կամ վերքերից մահացած զինվոր-

¹⁵ Պետցուցիչ 16.5: Տե՛ս Հավելված ՀՀ կառավարության 2004 թվականի սեպտեմբերի 9-ի N 1270-Ն որոշման, ՀՀ պատմական և անշարժ հուշարձանների պետական ցուցակ, Ե., 2004:

¹⁶ Арсений I Сербский/<https://drevo-info.ru/articles/4172.html> (12.03.2019).

¹⁷ Պետ ցուցիչ 4.892: Տե՛ս Հավելված ՀՀ կառավարության 2004 թվականի սեպտեմբերի 9-ի N 1270-Ն որոշման, ՀՀ պատմական և անշարժ հուշարձանների պետական ցուցակ, Ե., 2004:

¹⁸ «Եվ պատերազմ եղավ երկնքում. Միքայելը և նրա հրեշտակները պատերազմեցին վիշապի դեմ, և պատերազմեցին վիշապը և իր գորքերը. և չկարողացան դեմ կենալ, և ոչ էլ տեղ գտնվեցավ նրանց համար երկնքում: Եվ վայր զցվեցավ մեծ վիշապը՝ այն առաջին օձը, որ բանսարկու և սատանա է կոչվում, այն բովանդակ աշխարհքը մուրեցնողը վայր զցվեցավ երկրի վրա և իր հրեշտակներն էլ իր հետ վայր զցվեցան» (Հայտնություն.12:7-9), Միքայելի դերը նշանակալի է նաև քրիստոնեական վախճանաբանության (эсхатология) մեջ: Այս ակնարկը, որը ցույց է տալիս Միքայելի դերը բարու և չարի պայքարում, ազդել է քրիստոնեական վախճանաբանական մի շարք աշխատությունների վրա: Կրոնական ավանդույթը ոչ միայն հաստատում է Միքայելի հաղթանակը սատանայի դեմ, այլև նրա դերը որպես դատավոր Վերջին դատաստանի ժամանակ, որին նա փողի ձայնով կանչելու է հոգիներ:

Հրեշտակապետ Միքայելի մոտիվը, որը Վերջին դատաստանի ժամանակ կշռում է մեղավորների հոգիները, դարձել է ավանդական թեմա սրբագրության մեջ, իսկ Միքայելը ձեռք է բերել հանգուցյալներին հովանավորողի դեր. Միքայելի մասին այս պատկերացումը արտացոլվել է նրան վերաբերող հոգևոր օրհներգերում (гимнография). «Սբ հրեշտակապետ Միքայել, պահպանի՛ր մեզ պայքարում, մի՛ թույլ տուր, որ զոհվենք ահեղ դատաստանի ժամանակ»:

¹⁹ Экзарх

²⁰ Православные храмы Армении/Наша среда <http://nashasreda.ru/pravoslavnye-xramy-armenii/> (12.03.2019).

ների հավերժ հանգրվան: Ալեքսանդրապոլի կայագրի ներկայությամբ հանդիսավոր հոգեհանգիստ կատարվում էր սեպտեմբերի 17-ին (Կարսի գրոհ), հունիսի 24-ին (Բայանդուրի ճակատամարտ), նոյեմբերի 2-ին և 19-ին (Քյուրուկդարայի և Բաշթատրզլարի ճակատամարտեր): Մատուռ-եկեղեցուց ոչ հեռու սպաների և զինվորների նվիրաբերած միջոցներով կանգնեցվել է ռուս-թուրքական պատերազմներում զոհված սպաներին և զինվորներին նվիրված հուշարձանը:

Պատվո բլուրի կարևորության մասին Ս. Յա. Օլշեսկին «Կովկասը 1841թ. մինչև 1866թ.» աշխատության X՝ «Ալեքսանդրապոլը և Կարսի մարզը 1856թ.» գլխում գրում է. «Գնացի մոտակա բարձունքները, որպեսզի նայեմ Արփաշային. Այնտեղ ամեն ինչ անփոփոխ էր: Հասա «Պատվո բլուրին», որը այսպես էր կոչվել Բաշթատրզլարի ճակատամարտից հետո, քանի որ այստեղ էին հուղարկավորվում բոլորը, ովքեր ընկել էին ճակատամարտերում, միայն թե խաչերի և հուշարձանների քանակը զգալի աճել էր: Խաղաղ հանգչե՛ք, փառապանձ մարտիկներ: Թող չդիպչի թշնամու ոտքը ձեր խաղաղ կացարանին»²¹: Իսկ հաջորդ XI գլխում նա մանրամասնում է.

«Վերջում ես ինձ պարտավորված եմ զգում հիշատակել մի սուրբ գործի մասին, որը ի կատար էր ածվել իմ նախաձեռնությամբ: Ալեքսանդրապոլում՝ քաղաքի և նույնանուն ամրոցի միջև, կա մի բարձունք, որը դեռ մինչև պատերազմը ընտրվել էր որպես գերեզմանոցի վայր: Բայց մինչև 1853թ. այս բարձունքը այցի էր զարնում գերազանցապես հայերեն կամ վրացերեն մակագրություններով հարթ գույնզգույն քարից հուշարձաններով, և միայն հազվադեպ էին վեր խոյանում ռուսերեն մակագրություններով բրգաձև հուշարձանները, որոնք մատնանշում էին զինվորականի կամ այս քաղաքում ծառայած քաղաքացիական պաշտոնյայի հավերժ հանգրվանի վայրը: Այժմ հակառակն է, այս գերեզմանոցում վեր խոյացող ռուսերեն մակագրություններով հուշարձանները լիովին գերակշռում են հարթ, պրիզմայաձև հայերեն և վրացերեն մակագրություններով հուշարձաններին: Առանձին ավազաբլուրը, որը գտնվում է գերեզմանոցի հարավային ծայրամասում և այժմ հայտնի է Պատվո բլուր անվամբ, որի վրա մինչև պատերազմը ոչ մի գերեզման չկար, 1856թ-ից ամբողջությամբ ծածկվեց դրանցով:

Եվ քրիստոնյա բնակիչներից ո՞վ չգիտի այդ բլուրը, նրանցից ոմանք հետաքրքրասեր անցորդին անգամ կպատմեն այստեղ հանգչողների անունները և քաջագործությունները: Ո՞ւմ, ով ծառայել է թուրքական սահմանին գործող

²¹ **Ольшевский М.Я.**, Записки, Кавказ с 1841 по 1866гг., Русская старина, июль, ном. 9, 1894, с. 30 / <http://chechen.org/2009/06/02>. («ebook»)

կորպուսում, հիշարժան չէ Պատվո բլուրը, որպես քաջ հրամանատարների, մտերիմների կամ գուցե պաշտոնակից ընկերների հավերժ հանգրվան, որոնք ընկան և իրենց արյունը թափեցին Բայանդուրի, Բաշքատըզլարի, Քյուրուկդարայի և Կարսի ռազմադաշտերում:

1856թ. սեպտեմբերի 1-ին՝ առավոտյան ժամը 9-ին, Պատվո բլուրի արևմտյան մասում այն ժամանակ Ալեքսանդրապոլում առկա բոլոր գեներալների, բարձրաստիճան և ավագ սպաների, զորքերի ցածր աստիճանավորների ներկայությամբ կատարվում էր ժամերգություն: Այս աղոթքը կատարվում էր Ասիական Թուրքիայում պատվի և փառքի ռազմադաշտերում անցած պատերազմի զոհված ռազմիկների համար....


...Հոգեհանգստի վերջում ես հետևյալ միտքն արտահայտեցի. Դրամագումար հավաքել, յուրաքանչյուրն ըստ կարողության, և եթե այս կերպով հավաքված գումարը հասնի որոշակի թվի, ապա գլխավոր մասը հատկացնել պատկերի կառուցմանը, որի վրա փորագրված լինեն բոլոր սպանված և վերքերից մահացած գեներալների և սպաների անուն-ազգանունները, իսկ մյուս մասի տոկոսներով Պատվո բլուրում կատարվող ամենամյա հոգեհանգիստների ծախսերը անել, որոնք կատարվելու էին Բայանդուրի, Բաշքատըզլարի, Քյուրուկդարայի ճակատամարտերի և Կարսի գրոհի օրերի առթիվ: Եթե հավաքված գումարը մեծ չլինի, ապա մի կողմ դնել պատկերի կառուցումը և կատարել միայն զոհվածների համար հոգեհանգիստը, որի ժամանակ հիշատակվեն նշված ճակատամարտերում ընկած բոլոր գեներալների և սպաների անունները:

Այս առաջարկը շարադրեցի նամակներում, որոնք ուղարկեցի թուրք-կովկասյան սահմանի գործողություններին մասնակցած կորպուսի բոլոր առանձին զորամասերի հրամանատարներին»: Այս նամակներում, բացի գրածս գլխավոր մտքից, ավելացրի, որ սրբապատկերի արժեքը կախված է լինելու հավաքած գումարի չափից, և սրբապատկերի վրա են լինելու Նիկոլայ Հրաշագործի, Գեորգի Հաղթանակակրի, Միխայիլ Հրեշտակապետի պատկերները, որ սրբապատկերը միշտ մնալու է Ալեքսանդրապոլի ամրոցի եկեղեցում և միայն ճակատամարտերի օրերին՝ հունիսի 24-ին, սեպտեմբերի 17-ին, նաև նոյեմբերի 2-ին և 19-ին հոգեհանգիստ կատարելու համար դուրս է բերվելու Պատվո բլուր, որ սրբապատկերի առջև անընդհատ ճրագ է վառվելու, որ բոլոր գումարները ուղարկվելու են Ալեքսանդրապոլյան պարետին, դրա համար դուրս է գրվելու այդ պահին Ալեքսանդրապոլում եղած ներկա գեներալների ստորագրությամբ ժապավինյալ մատյան: Որպեսզի Ալեքսանդրապոլի բերդի հոգևորականը հոգեհանգիստների ժամանակ հիշատակելու ընթացքում իմանա Բայանդուրի, Բաշքատըզլարի, Քյուրուկդարայի, նաև Կարսի գրոհի ժամանակ սպանված և վերքերից մահացած գեներալների, բարձրաստիճան և ավագ սպաների անուն-

ները, զորամասերի հրամանատարները պարտավոր են անվանացանկերը հասցնել ալեքսանդրապոլյան պարետին:

Այս սուրբ գործն ունեցավ ամենաբարի հետևանքները: Կարճ ժամկետում տարբեր վայրերից և մարդկանցից ուղարկվեց 748 ռուբլի, որից 700 ռուբլին ուղարկվեց հասարակական խնամակալության պրիկազ, իսկ մնացած գումարը թողնվեց Ալեքսանդրապոլի եկեղեցում»:

Եզրահանգում. Այսպիսով, պատմական մի քանի սկզբնաղբյուրների քննությունից պարզ է դառնում, թե ինչ կարևորություն են ունեցել Ալեքսանդրապոլի համար զինվորական եկեղեցիները, և որքան ներդրում են ունեցել բարձրաստիճան սպաները այդ եկեղեցիների և մասնավորապես Պատվո բլուրի պահպանման ու բարեկարգման հարցերում: Այժմ թե՛ Պատվո բլուրը և թե՛ Ալեքսանդրապոլ քաղաքի ու ամրոցի տարածքում գտնվող երեք եկեղեցիները (Սբ Մեծ նահատակ Ալեքսանդրայի, Սբ Արսենիի եկեղեցիները և Միխայիլ Հրեշտակապետի մատուռը) համարվում են մշակութային պահպանական միավորներ և պահպանվում են Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության կողմից:





5



6



7



8



9



10

АЛЕКСАНДРОПОЛЬСКИЕ ВОЕННЫЕ ХРАМЫ
КАК ОХРАНЯЕМЫЕ КУЛЬТУРНЫЕ ЕДИНИЦЫ

Авагян И.Э.

Ключевые слова: *Александрополь, военные храмы, архистратиг Михаил, святая великомученица Александра, церковь Святого Арсения, или Богоявления, церковь во имя Св. Богородицы.*

В публикации представлена краткая история основания военных церквей города и крепости Александрополь. Особую роль в военной жизни города и крепости сыграли: церковь Святой Великомученицы Александры, основанная Николаем I в крепости Александрополь, часовня во имя архистратига Михаила на «Холме Чести», церковь во имя святого Арсения, или Богоявления, церковь во имя Св. Богородицы. Особую важность представляет «Холм Чести» и его история.

MILITARY TEMPLES OF ALEXANDRAPOL AS CULTURAL
PROTECTIVE UNIT

Avagyan I.E.

Key words: *Alexandrapol, military temples, Archangel Michael, the Great Martyr Alexandra, Church of St. Arseny or Theophany, the temple of the Holy Virgin.*

In the article the issues are highlighted that are devoted to the study of the military churches of the town and the history of the foundation of Alexandrapol. In the military life of the town and the fortress the following ones are worth mentioning: the church of Holy Martyr Alexandra, founded by Nicholas I in the fortress of Alexandrapol, a chapel named after Archangel Michael on the Hill of Honor, a church named after St. Arseny or the Theophany, a church in the name of St. Virgin Mary. Of particular importance is the Hill of Honor and its history.

References

1. **Astvatsashunch, Hovhannu Haytnutyun (In Armenian).**
2. **Avagyan I.E., Mets eghemy verapratsnery, Hishoghutyunner mer yntaniqi patmutyan mi qani paherits. Aghasi Makaryani hushapatumy, Gyumri, «Izd.Eldorado», 2015 (In Armenian).**
3. **Gyumri qaghaqy ev mardik, Gyumri, Gyumru qaghaqapetaran, 2009 (In Armenian).**
4. **Gabrielyan K., Leninakan, Yerevan, «Hayastan», 1984 (In Armenian).**

5. Havelvats HH Karavarutyanyan 2004 tvakani septemberi 9-i N 1270-N voroshman, HH patmakan ev ansharzh hushardzanneri petakan tsustak, Yerevan, 2004 **(In Armenian)**.
6. Novitskiy V., Fon-Shvarts A., Apushkin V., Fon-Shults G., Voennaya entsiklpedi v 18 tomakh, T. I, Peterburg, «izd. I.D. Sitina», 1911. («ebook») **(In Russian)**.
7. Novitskiy V., Fon-Shvarts A., Apushkin V., Fon-Shults G., Voennaya entsiklpedi v 18 tomakh, T. VIII, Peterburg, «izd. I.D. Sitina», 1911, («ebook») **(In Russian)**.
8. Potto V., Kavkazskaya voyna v otdelnikh ocherkakh, epizodakh, legendakh i biografiyakh, T 2, Ermolovskoe vremya, Vipusk I, Izdanie vtoroye, «izd. S.-Peterburg», 1887. («ebook») **(In Russian)**.
9. Prikaz artillerii Kavkazskogo voennogo okruga 15 dekabrya 1878g., nom.941 **(In Russian)**.
10. Schilder N.K., Nikolay Perwiy ego zhizn i tsarstvovanie, t. II, S.-Peterburg, «izd. A.S.Suvorina», 1903. («ebook») **(In Russian)**.
11. Starchevskiy A., Pamyatnik Vostochnoy voyni 1877-78 gg. «izd. S.-Peterburg», 1878 («ebook») **(In Russian)**.

Ընդունվել է՝ 25.06.2019

Գրախոսվել է՝ 03.07.2019

Հանձնվել է տպ.՝ 11.11.2019

Տեղեկություններ հեղինակի մասին

Ինգա ԱՎԱԳՅԱՆ՝ պատմ. գիտ. թեկնածու, Գյումրու «Կուսակառուցողական կուսակցության արգելից-թանգարանի տնօրեն, ՀՀ ԳԱԱ Շիրակի հայազիտական հետազոտությունների կենտրոնի գիտաշխատող, էլ. փոստ՝ inga.avagyan.76@mail.ru

ՀՏԴ՝ 902 .03

ՋՐԱՓԻԻ ԴԱՍԲԱՆԱԴԱՇՏԻ ՊԵՂՈՒՄՆԵՐԸ

Համազասպ Խաչատրյան, Լարիսա Եզանյան

ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն

Լևոն Պետրոսյան

ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ

Անդրեաս Տուրովանզեր, Դորոթեա Մաուերման

Հալլեի (Գերմանիա) Մարտին Լյութեր համալսարան

Բանալի բառեր՝ փրկարարական պեղումներ, կրոնիկներ, դամբարաններ, նյութական և հոգևոր մշակույթ, թաղման ծես:

Հոդվածում ներկայացված են Ջրափիի դամբարանադաշտերի հայտնաբերման պատմությունը և այնտեղ 2013-2017թթ. իրականացված փրկարարական պեղումների հիմնական արդյունքները: Մանրամասն քննվել են դամբարանների կառուցվածքի, թաղման ձևերի և ծեսերի խնդիրները: Ըստ ուղեկցող նյութերի ուսումնասիրության՝ թվագրվել են առանձին դամբարանները և դամբարանադաշտերը: Փրկարարական պեղումների արդյունքները նոր նյութ են տվել Ախուրյանի ափամերձ բնակչության վաղ երկաթի և երկաթի լայն տարածման ժամանակաշրջանների նյութական և հոգևոր մշակույթի վերաբերյալ:

Նախաբան. 2013 թվականից Շիրակի երկրագիտական թանգարանի և Հալլեի Մարտին Լյութեր համալսարանի հայ-գերմանական համատեղ հնագիտական արշավախումբը, Ազատանի երկաթիդարյան հուշարձանախմբի պեղումներին զուգընթաց, հնագիտական հետախուզություն է կատարել Շիրակի դաշտի հարավ-արևմուտքում՝ սահմանամերձ Ջրափի գյուղի վարչական տարածքում:

Շիրակի մարզի Ջրափի գյուղը 1977-1982թթ. Ախուրյանի ջրամբարի կառուցման կապակցությամբ տեղափոխված գյուղերից է: Տեղափոխվել է նաև երկաթգիծը, որը հիմա անցնում է նոր գյուղի միջով: Գյուղի հյուսիսային կողմում երկաթգծի պաստառի հորիզոնական անցնելու նպատակով կատարվել է հո-

դահեռացում, և երկաթգիծը մոտ 10 մետրով ավելի ցածր է շրջակա տարածքի մակարդակից:

Երկաթգծի արևելյան կողմում գյուղի գերեզմանոցն է, արևմտյան կողմում՝ քարերից մաքրված դաշտեր, որոնք տարածվում են մինչև «Ղալաչի բլուր» բազմաշերտ հուշարձանը:

Ախուրյանի ջրամբարի շինարարության ժամանակ տեղափոխվել է նաև սահմանապահ ուղեկալը, և նշված բլրի վրա տեղադրվել է սահմանային դիտաշտարակ: Որպես հետևանք՝ մասամբ ավերվել է բլրի գագաթից լանջ ձգվող բազմաշերտ հուշարձանը: Ըստ հնագիտական հետախուզության արդյունքների ու վերգետնյա նյութերի՝ կյանքն այստեղ սկսվել է վաղ բրոնզի դարում և շարունակվել մինչև միջնադար:

Գյուղի գերեզմանոցին հարող հատվածում՝ երկաթգծի համար պատրաստված արհեստական իջվածքի վերին եզրերին, հայտնաբերվեցին ինչպես քանդված և ներքև սահած, այնպես էլ կիսաբաց քարակղային մի քանի դամբարաններ: Դամբարանադաշտը տարածվում է դեպի արևմուտք, հյուսիս ու հարավ: Նախնական դիտարկմամբ՝ զբաղեցնում է մոտ 50 հա տարածք: Հարավային կողմում այն ընդհատվում է գյուղի բնակելի կառույցներով, սակայն վերգետնյա նշանները տեսանելի են նաև գյուղի հարավարևմտյան եզրին՝ երկաթուղային կիսակայարանին հարավից և արևմուտքից հարող տարածքներում: Փաստորեն երկաթգիծը դամբարանադաշտը բաժանել է երկու մասի:

2013թ. սկսվեցին երկաթգծի համար պատրաստված արհեստական իջվածքի վերին եզրերին դեռևս ամբողջովին չբացված և ներքև սահելու վտանգի տակ գտնվող երկու դամբարանների փրկարարական պեղումները: Երկաթգծի արևելյան կողմից մինչև «Ղալաչի բլուր» տարածքը պայմանականորեն անվանվեց **Ջրափիի երկաթիդարյան թիվ 1 դամբարանադաշտ:**

Դամբարան 1 (2013թ.) - Գյուղի գերեզմանոցի հարավային ծայրին՝ դեպի երկաթգիծ իջնող լանջի վերին եզրին, բացվեց կոտրված և երկու մասի բաժանված սալ: Հարավային կեսն ընկել էր դամբարանի մեջ՝ կոտրելով կմախքի գանգը, իսկ հյուսիսայինը պատով թեքությամբ սահել է ցած: Դամբարանն ունի հյուսիսային կողմից սեղմված շրջանի ձև, շարված է անկանոն, տարբեր չափերի քարերով, հարավային կողմում երկու շարքով, հյուսիսարևելյան անկյունը՝ երեք (Չափագրություն 1): Արևմտյան կողմի քարը բացակայում է, հավանաբար հանվել է լանջը կտրելիս: Դամբարանի երկ. 1,10մ է, լայն.-ը՝ 80սմ, խոր.-ը՝ 70սմ: Մանկան կմախքն ունի հյուսիս-հարավ կողմնորոշում, աջակողմյան կծկված դիրք: Գլուխը թեք՝ դեմքով դեպի արևելք, կոնքի տակ քար էր դրված: Գանգի դիմաց գտնվեց մի կճուճ՝ վզի տակ թեք գծերի շարքով: Դամբարանի արևմտյան պատին մոտ՝ կմախքի թիկունքից քիչ հեռու, կոթը դեպի կմախքը, դրված էր եր-

կաթից դանակ: Գանգը մաքրելիս միջից դուրս եկավ կարմիր սարդիոնից մի ուլունք:

Դամբարան 2 (2013թ.) Որպես ծածկասալ օգտագործվել է 80սմ x 75սմ և 120սմ x 100սմ երկու ժայռաբեկոր, նաև, 30սմ x 40սմ չափերով մի քար: Ծածկասալերի կողքերն ամրացված են միջին մեծության քարերով: Դամբարանը ձվածիր է. երկ. 2,30մ, լայն. գլխի հատվածում՝ 60սմ, կմախքի իրանի հատվածում՝ 100սմ, ոտքերի մոտ՝ 80սմ, խոր.՝ 50սմ ոտքերի մասում, 95 սմ՝ գլխի հատվածում (Չափագրություն 2): Դամբարանախցի տարբեր հատվածներում խորությունների տարբերությունները պայմանավորված են լանջի թեքությամբ: Ծածկասալը հեռացնելուց հետո հյուսիսային պատի տակ բացվեց խնցի, որից 20սմ խորը՝ մեկ այլ սալ՝ կողքերից ամրացված միջին մեծության քարերով: Սալի վրա գտնվեց տափակ, սրտաձև քար, որի վրա ընթերցվում է շրջանաձև աչքերով ու բերանով դեմք: Սալը հեռացնելուց հետո բացվեց երկու գանգ: Կմախքի ոտքերի տակ՝ դամբարանի արևելյան կողմում, բացվեց կիսված կամ կոտրված մի անոթ, որի մեջ կենդանու ոսկորներ են: Դամբարանի արևելյան հատվածում գտնվեց բրոնզյա ապարանջանի բեկոր:

Դամբարան 3 (2013թ.)- Երկաթգծի արևմտյան լանջին՝ թիվ 2 դամբարանից հյուսիս, շարված է նույն ձևի: Ծածկասալը բացակայում է: Դամբարանը կիսավեր է, պահպանված մասի լայն.-ը՝ 90սմ, խոր.-ը՝ 90սմ (Չափագրություն 3): Հյուսիսային պատի տակ բացվեց մի գավաթ՝ շրջված դիրքով, կողքին՝ կենդանու ծնոտ:

Դամբարան 1 (2014թ.) – Լանջի վերին եզրից ուղղահայաց դիրքով դուրս գցված կարմիր տուֆից սալը հուշում էր, որ դա դամբարանի կողասալ է: Պեղելիս պարզվեց, որ կարմրավուն տուֆի բարակ սալերից պահպանվել են հյուսիսային և արևմտյան կողասալերը: Հարավային կողասալը (բարձր.՝ 92սմ, երկ.՝ 110սմ) լրացված է եղել գետաքարերի շարքով, որի ստորին շարքն է պահպանվել: Արևելք-արևմուտք կողմնորոշմամբ դամբարանի արևելյան կեսը հավանաբար հեռացվել է երկաթգծի շինարարության ժամանակ կամ հետագայում ամբողջությամբ սահել է ցած: Դամբարանի երկ-ը 170սմ, խոր-ը 92սմ է: Արևմտյան սալի բարձր-ը 90սմ է լայն-ը 82սմ: Կմախքը քայքայված է, որոշ չափով պահպանված ոսկորները՝ տեղաշարժված: Արևմտյան կողասալին կիպ դրված բացվեց դաշույն և կլորավուն ծայրերով բրոնզյա անզարդ (երկ.՝ 50սմ, լայն.,՝ 5սմ) գոտի: Կապելու համար գոտու եզրերին մեկական անցք է արված: Դաշույնը երկաթից է, երախակալը և կոթի գլխիկը՝ բրոնզից: Ըստ պահպանված ոսկորների դիրքի՝ կարելի է եզրակացնել, որ դրանք դրված են եղել աճյունի գլխի մոտ (Չափագրություն 4):

Դամբարան 2 (2014թ.) – Գտնվում է 1-ինի հարևանությամբ: Հողի կտրվածքի մեջ տեսանելի էին իրարից մոտ 1 մ հեռավորությամբ դուրս գցված

քարեր, որոնց միջանկյալ տարածքում, հողի մեջ կային խեցեղենի բեկորներ: Ինչպես ցույց տվեցին պեղումները, ավերված դամբարան է, որից պահպանվել էին միայն արևելյան կողմի շարվածքի երեք շարքեր, իսկ արևմտյանից՝ լանջի եզրին ութ շարք: Դամբարանի չափերն են. դրսից երկ.-ը՝ 148սմ, ներսից՝ 107սմ, պահպանված ամենաբարձր մասը՝ 108սմ:

Դամբարան 3 (2014թ.) – Գտնվում է լանջի եզրին: Միջին մեծության քարերի 4-5 շարքով, ձվաձիրի ձևով կառուցված, արևելք-արևմուտք կողմնորոշմամբ դամբարանն ուներ ծածկասալ, որի կողքերն ամրացված էին մանր քարերով (Չափագրություն 5): Կմախքն ուներ աջ կողքի վրա կծկված դիրք, դեմքով դեպի հարավ: Գանգը և կմախքն ամբողջովին փշրված են, գանգի մոտ՝ մի անոթ դամբարանի արևելյան պատի տակ, ծնկների դիմաց՝ մի կճուճ: Դամբարանի կենտրոնում, կմախքի կոնքի հատվածում, խառը ոսկորների տակ գտնվեց դանակ:

Դամբարան 4 (2014թ.)- Նախորդ դամբարանների դիմաց՝ երկաթգծի արևելյան լանջին, կիսավեր պահպանված էր ծածկասալի արևելյան մի փոքր մաս, երևում էր արևմտյան պատի շարվածքի մի քանի քար: Ծածկասալը նստած էր հարավ-արևելք, հարավ-արևմուտք ուղղությամբ դրված քարերի վրա: Դամբարանի կողմնորոշումը հյուսիս-արևելք, հարավ-արևմուտք էր: Լանջի վերին հատվածում դամբարանի պատերի շարվածքից պահպանված է 4-5 շարք, իսկ դիմացը՝ 1-2 շարք: Կմախքի ոսկորները խառն էին: Հավանաբար կատարվել է դիամասնատում: Գանգը դամբարանի հարավարևելյան անկյունում էր՝ կոնքի մոտ: Կմախքի վրա կար խոշոր եղջերավոր կենդանու կողոսկր: Հարավային պատի մոտ, մարդու կողոսկրերի հետ խառնված էին անասունի ոսկորներ: Թաղմանն ուղեկցող նյութեր չկան: Ըստ նախկինում պեղված դամբարանների կառուցվածքի և թաղման ծեսի ընդհանրությունների՝ այս դամբարանը կարող է թվագրվել մ.թ.ա. 10-8-րդ դարեր (Չափագրություն 5):

2015թ. հնագիտական հետախուզությունը շարունակվեց սահմանային գոտում: «Ղալաչի» բլրից մոտ 300 մ հյուսիս-արևմուտք՝ սահմանային գոտին եզերող փշալարից ներս՝ Ախուրյանի ջրամբարի ափին, հայտնաբերվեց ևս մեկ դամբարանադաշտ, որի մեծ մասը ջրամբարի ջրի մակարդակի բարձրացման շրջանում ծածկվում է ջրով: Ջրից ազատված ափամերձ մասում, մակերեսին ընդգծվում են կանոնավոր շրջանով կրոմլեխի մեջ առնված, կենտրոնում պահպանված ծածկասալերով դամբարաններ: Որոշ դամբարաններ արդեն իսկ լվացված և ավերված են: Ջրի մակարդակի ամենամյա տատանումների և ալիքների ներգործության հետևանքով դամբարաններն աստիճանաբար լվացվում են և դատապարտված են ոչնչացման:

Դամբարան 1 (2015թ.) Թաղումը կատարվել է հատակին շարված մանր քարերի վրա հյուսիսային և հարավային կողմում երկուական սալերից, միաց-

ման տեղերում փոքր քարերով լրացված կողասալերով, արևմտյան և արևելյան կողմերն անկանոն քարերով շարված, արևելք-արևմուտք կողմնորոշված ուղղանկյուն սալարկղի մեջ և ծածկվել է 8-10սմ հաստությամբ բարակ սալերով: Դամբարանի արևելյան կողմում թաղումից հետո անկանոն քարերով շարված մուտքն է: Պատի ստորին մասում դրվել է հարթ մակերեսով քար, նախապես ընդգծվել է խցի չափը, դրվել շենք, այնուհետև թաղում կատարելուց հետո շարվել: Դամբարանի երկ-ը՝ 170 սմ, լայն-ը՝ 1, 07սմ, խոր-ը՝ 80սմ (Չափագրություն 7): Աճյունը դրվել է արևմտյան պատի տակ ձախ կողքին կծկված դիրքով: Գլուխը հյուսիսային պատին կիպ է, կոնքը գրեթե հաված է արևմտյան պատին, ձեռքերը դամբարանի հարավարևմտյան անկյունում են: Ուղեկցող ամբողջ խեցեղենը շարվել է կմախքի վրա: Գանգի աջ կողմում գտնվեց բարակ բրոնզալարից, իրար ազուցվող ծայրերով ականջող, քիչ ավելի հեռու՝ բրոնզյա նետասլաք, իսկ արևմտյան պատի մոտ՝ սևանյան տիպի դաշույն՝ առանց դաստակի գլխամասի վերին հատվածի:

Ուղեկցող նյութերից են նաև կողոսկրերի մոտ գտնված սեղմված գնդի ձև ունեցող սարդիոնից և սպիտակ մածուկից փոքրիկ ուլունքները և ոսկու բարակ թիթեղից, ծայրերը վրա բերված, գլանաձև ուլունքը՝ մատների ֆալանգների մեջ:

Թաղման խցի անկյուններում դրված էին մեկական տափակ քարեր: Ուղեկցող անոթները յոթն են: Խցի հյուսիսարևմտյան անկյունում՝ տափակ քարին դրված էր ծորակով մի անոթ, որի վրա կոնքի ոսկորն էր: Այս անոթի մոտ՝ հյուսիսային պատին կիպ, դրված էր մի անկանթ կճուճ, արևմտյան պատին կիպ՝ սեղմված գնդի ձև ունեցող իրանով, ուղիղ կտրված շուրթով, ուսերին արված շրջագծի տակ մեկ շարք թեք գծանախշերով (հատիկանախշի կեսի նման) անոթ: Անոթի մեջ ոսկոր կար: Դամբարանի հարավարևելյան անկյունում դրված սափորի մեջ ընկած քարերից անոթը կտրվել է, և մի կեսն ընկել է հատակին դրված կենդանական ոսկորների վրա:

Դամբարան 2 (2015թ.): Առաջին դամբարանից հարավ՝ նույնպես ավերված հատվածի կտրվածքի եզրին երևացող քարերի մասամբ բացված շարքի ուղղությամբ, դրվեց քառակուսի: Բացվեց մանր քարերի լիցքով շերտ՝ դամբարանի զրահը, կենտրոնում երեք հսկա սալերով ծածկված դամբանախցով: Կրոմլեխի չափերն են. հյուսիս-հարավ՝ 515սմ, լայն-ը 280սմ: Խցի երկ-ը 2,30մ, լայն-ը 125սմ, խոր-ը՝ 135սմ: Պարզվեց, որ թաղումը եղել է հիմնահողային, ունեցել է երեք կամ չորս քարից ծածկասալ, որի չորրորդ քարը երկաթզծի կառուցման ժամանակ փորված խորը խրամատի արևմտյան կողմում առաջացած իջվածքի հետևանքով եզրով քիչ ցած էր սահել:

Դամբարան 3 (2015թ.): Անմիջապես նախորդի կողքին է, քիչ ավելի խորը կատարված, դարձյալ ավերված սալարկղային թաղում: Դամբարանը կառուց-

վել է ուղղահայաց դրված բարակ սալերով, ունի արևելք-արևմուտք փոքր-ինչ շեղված կողմնորոշում, մուտքը եղել է արևելյան կողմից, որի վկայությունը, ի տարբերություն մյուս երեք կողմերը ձևավորող սալաքարերի, արևելյան կողմում հատակին, կողքկողքի դրված երկու համաչափ, նույն բարձրության քարերն են, որոնց վրա շարվել են մուտքը փակող մյուս քարերը: Դամբարանի երկ-ը 160սմ է, լայն-ը՝ 90սմ, սալերի բաձր-ը՝ 80սմ: Դամբարանը թալանված է: Հայտնաբերվեցին կմախքի մի քանի ոսկոր, փշրված անոթների հատուկենտ բեկորներ և բրոնզե իրի մաս:

Դամբարան 1 (2016թ.) - Ջրամբարի արևելյան բարձրադիր ափին է: Ջրերը լվացել են լանջի երկանքով կատարված թաղումների հողածածկույթը, և մակերեսին ընթերցվում են կողք կողքի դրված դամբարանները եզերող կրոմլեխներն ու ծածկասալերը:

Դամբարանի խոշոր քարերով շարված կրոմլեխի տրամ-ը 3,7մ է: Արևելքից-արևմուտք հաջորդաբար շարված երեք ծածկասալերի երկուսի չափերն են. երկ-ը՝ 140սմ, լայն-ը՝ 80սմ, մյուսը տափակ, անկանոն քար է: Դամբարանը արևելք-արևմուտք կողմնորոշում ունի, հիմնահողային է: Խուցն ունի 140սմ երկ., 80սմ լայն., խորությունը մակերեսից 110սմ, խցի խոր-ը՝ 60սմ (Չափագրություն 8): Կմախքն ունի աջ կողքին պառկած, ծնկները ծալած դիրք: Դաստակի ու ծնկոսկրերի միջակայքում գտնվեց նիզակ՝ շեղքն ուղղված դեպի գանգը: Կոնքոսկրի մոտ՝ գտնվեցին փոքր բերանով մի սափոր ու մի կարաս: Մեկ այլ՝ ավելի փոքր կարաս՝ հատակից քիչ բարձր դիրքով, դրված էր հարավային պատին կիպ: Վերջինիս մեջ գտնվեց ձվածիր իրանով և նեղ բերանով փոքր բաժակ՝ տակը երկաթից դանակ:

Դամբարան 2 (2016թ.)– Մոտ 2,60մ տրամագծով կրոմլեխից պահպանված է շրջանի կեսը՝ հյուսիսայինից մինչև հարավարևմտյան անկյունը (Չափագրություն 9): Խուցը փոքր ձվածիր է, երկ.-ը՝ 1,30մ, լայն.-ը՝ 100սմ, խոր.-ը՝ 1մ: Կմախքն ունի հյուսիս-հարավ, մեջքի վրա պառկած, ծնկները ծալված դիրք, դեմքը՝ հարավ: Մանկան մասամբ վնասված գանգի մոտ գտնվեցին գույգ ականջող, ծայրերն իրար մոտեցած, բարակ բրոնզալարից մեծ մեկ այլ ականջող, նույն ձևի բրոնզալարից մատանի: Վզի մոտ գտնվեցին ապակու մածուկից ուլունքներ, խխունջ և սարդիոնից բազմանիստ մեծ ուլունք: Աջ ձեռքին գտնվեց ծայրերը բաց բրոնզյա ապարանջան, գանգի դիմաց, կոնքի, ծոծրակի մոտ և ոտքերի տակ՝ մեկական փոքրիկ անոթ: Ոտքերի տակ՝ դամբարանի հյուսիս-արևելյան անկյունում, բացվեց իրանին հատիկազարդ նախշով մեծ կճուճ՝ մեջը մանր եղջերավոր անասունի կմախք՝ գրեթե բոլոր ոսկորներով (տախտ. 5):

Դամբարան 3 (2016թ.) - Նախորդից քիչ հարավ երևում էր տափակ, հարթ ծածկասալը: Դամբարանը սալապատ հիմքի վրա մանր քարերով կառուցված, հյուսիս-հարավ դիրքով, արևելյան ու արևմտյան կողմերում իրար

կիպ երկուական, հյուսիսայինում մեկ կողասալով ուղղանկյուն քարակղ է: Դամբարանն ավերված էր, հյուսիսարևմտյան անկյունում բացվեցին գանգը (առանց կառափի) և կմախքի խառնիխուռն կուտակված ոսկորներ, որոնց մեջ նաև դաշույնի կամ սրի ծայրամաս, օղակաձև երկաթյա իրի երկու բեկոր և երեք տարբեր ամանների նստուկների հատվածներ կային (տախտ. 6): Թալանված դամբարանը լցված էր կառույցի հետ կապ չունեցող քարերով: Դամբարանի երկ-ը 1,60մ, լայն-ը՝ 1մ. խոր-ը՝ 55-60սմ (Չափագրություն 10):

Դամբարան 4 (2016թ.) - Նախորդ դամբարաններից արևելք՝ մակերեսի հողածածկույթը բացված լանջի գրեթե եզրին էր, ծառերի արանքից երևում էր թափված քարերի մեջ ցցուն, տձև բազալտ: Մաքրելուց հետո պարզվեց, որ փոքր կրոմլեխի մեջ առնված քարակղային թաղում է: Արևելք-արևմուտք կողմնորոշմամբ դամբարանի հատակը սալապատ էր, կողասալերը՝ հարթեցված երեսով քարեր, որոնց վրա մինչև հարթ մակերեսով թերթաքարից ծածկասալ դնելը միջին մեծության քարեր են դրել, բերել նույն մակարդակի, այնուհետև ծածկասալի շուրջը քարեր շարել, ամրացրել, ապա ծածկել հողով և առել քարաշար շրջանի մեջ: Դամբարանի կրոմլեխի տրամագիծը 2,20մ, խցի երկ-ը՝ 120սմ, լայն-ը՝ 90սմ. Խոր-ը 70սմ (մուտքի մոտ 80սմ) (Չափագրություն 11):

Թիվ 4 դամբարանի մուտքը արևելյան կողմից էր: Շարվածքի անկանոնությունը հուշում է, որ այն հապշտապ դրվել է թալանելուց հետո: Գրեթե ամբողջությամբ փշրված գանգը գտնվեց խցի հարավային պատի տակ, մյուս ոսկորները խառնիխուռն ցրված վիճակում էին դամբարանով մեկ: Խցի հյուսիսային պատի տակ գտնվեցին կողք կողքի դրված նույն ամանի երկու մասեր: Ամանը տանձաձև իրանով, ուղիղ կտրած շուրթով և փոքր, լեզվականման ծորակով, շուրթի տակ խորակոս զարդանախշով անոթ է: Շուրթից ներքև արված են հանդիպակաց երկու անցքեր: Կուտակված ոսկորների հետ գտնվեց տափակ բրոնզալարից, ծայրերը իրար սեղմված բրոնզյա ապարանջան:

2017 թվականին շարունակվեցին ափամերձ հատվածի պահպանված և մասամբ լվացված դամբարանների փրկարարական պեղումները:

Դամբարան 1 (2017) - Ջրի իջած հատվածում, ծառերի և թփուտների միջև տեսանելի էին արևելք-արևմուտք կողմնորոշմամբ հաջորդաբար շարված երեք ծածկասալեր (Չափագրություն 12): Մաքրելուց հետո պարզվեց, որ արևելք-արևմուտք կողմնորոշմամբ հիմնահողային թաղման խուցը եզրող կրոմլեխը չի պահպանվել: Խուցն ունի 1,8մ երկ., 1մ լայն., խորությունը՝ մակերեսից 1,1մ: Կմախքը պառկած էր աջ կողքին, կծկված վիճակում: Ոտքերի մոտ դրված էր 3 կավանոթ, գլխի տակ՝ մեկ դաշույն:

Դամբարան 2 (2017) - Գտնվում է թիվ 1 դամբարանից մի քանի մետր արևելք: Մակերեսին տեսանելի էին մի մեծ, տափակ ժայռաբեկոր և մի քանի քարեր: Խուցը փոքր-ինչ ձվածիր է, երկ. 1,30մ, լայն. 100սմ, խորությունը մակե-

րեաից 1մ (Չափագրություն 13): Հյուսիս- հարավ կողմնորոշմամբ կծկված դիրքով կմախքը պատկած էր աջ կողքին: Կմախքի դիմաց՝ խցի հատակին, դրված էին 6 կավանոթներ:

Դամբարան 3 (2017) Ջրամբարի մակարդակի աննախադեպ իջնելու հետևանքով ափամերձ հատվածում բացվել էին դամբարանների հետքեր, որոնք նախկինում տեսանելի չէին: Ջրից ազատված բաց տարածքում ամենուր անկանոն թափված փոքր ու միջին մեծության սպիտակած քարերի մեջ երևում էին հողի մեջ թաղված՝ *in situ* և տեղաշարժված տափակ, մեծ քարեր: Մաքրելուց հետո պարզվեց, որ արևելք-արևմուտք ուղղությամբ դրված են 4 խոշոր, անմշակ բազալտյա սալեր, որոնց ընդհանուր երկարությունը մոտ 4,5մ էր (Չափագրություն 14): Ծածկասալերը հեռացնելուց հետո բացվեց դամբանախուցը, որը հյուսիսային ու հարավային կողմերում ուներ մշակված տուֆե սալերով կառուցված պատեր: Խցի արևելյան և արևմտյան կողմերը բաց էին: Արևելյան կողմում՝ խցի հատակից բավականին բարձր, դրված էր մի ժայռաբեկոր: Դամբարանում տարբեր ժամանակ կատարվել է երեք թաղում: Տասնամյակներ շարունակ ջրի տակ մնալու հետևանքով կմախքները քայքայված են: Բացի այդ, չնայած խցի մեծությանը՝ 4մ x 0,8մ x 1,1մ, նոր թաղում կատարելիս նախկին կմախքները տեղաշարժվել են: Հետագայում թաղումներ կատարելու համար բացվել են դամբարանի արևելյան ու արևմտյան եզրերը, տեղաշարժվել նախորդ թաղման կմախքը, որի վկայություն են արևմտյան կողմում մնացած նյութերից շատ բարձր դրված թասը, իսկ արևելյանում գրեթե նույն մակարդակից հայտնաբերված մարդու ազդուկը և խցի վերին հատվածի ժայռաբեկորը, որը, հավանաբար, նորաբաց մուտքը փակելու համար էր դրվել: Դամբարանից հայտնաբերվեցին վեց կավանոթ, սարդիոնից ուլունքներ, սևանյան տիպի մեկ դաշույն՝ դաստակի գլխիկով, մեկ առանձին դաստակի գլխիկ և բրոնզյա չորս նետասլաք: Առանձնապես ուշագրավ է առաջին՝ ստորին կմախքի կողոսկրերի միջև հայտնաբերված, բեղիկները դեպի ներս ծալված նետասլաքը:

Ըստ հայտնաբերված նյութերի՝ դամբարանները թվագրվում են վաղ երկաթի ժամանակաշրջանով: Նկատի ունենալով հարևանությամբ գտնվող դամբարանների խտությունը և արտաքին նշանների ընդհանրությունը՝ հիմք կա ենթադրելու, որ նորահայտ ամբողջ դամբարանադաշտը վերաբերում է նույն ժամանակաշրջանին:

Դամբարանի արևմտյան մասում՝ գլխի մոտ, բացվեց մի կճուճ՝ մեջը ոսկորներ, այս մասում բազմաթիվ են կենդանիների ոսկորները: Ընդամենը վեց անոթ (մեկի կեսը կտրված ընկած էր կողքը): Գանգը հյուսիսային պատի կենտրոնում է՝ կիպ պատին դրված, որի վրա էլ ընկել էր հարավարևելյան անկյունում դրված սափորի կեսը. մեջը քարեր էին, որոնցից էլ հավանաբար անոթը կտրվել է: Դամբարանի արևմտյան պատի մոտ՝ կոնքի ոսկորի տակ, բացվեց

սրի զանգակաձև կամ հատած կոնաձև բռնակի գլխամաս: Արևմտյան պատին կիպ դրված էր փոքր-ինչ ձվաձև, ուղիղ կտրված շուրթով անոթ, սրա տակ էլ՝ դաշույն: Գնդաձև իրանով ուսերի վրա՝ շրջագծի տակ, մեկ շարքով հատիկանախշ կճուճ կար:

2013 թ. արշավախմբի կողմից պեղման ենթարկվեց երեք դամբարան: Թիվ 1 դամբարանում հայտնաբերվեցին երկաթե դանակ (աղ. 1, նկ. 1) և կճուճ (աղ. 1, նկ. 7): Դանակը կրկնում է Հայաստանի մինչուրարտական ժամանակաշրջանի նմանատիպ նյութերին, հայտնի են Քեթիի համաժամանակյա թիվ 39¹ և Արթիկի վաղերկաթիդարյան դամբարաններում²: Ջրափիի գտածոյի կրկնօրինակը հայտնաբերվել է Թալինում³: Երկաթե նման դանակներ հայտնի են Թոեդքի մ.թ.ա. IX դարով թվագրվող⁴ մի շարք դամբարաններում, նաև Նորատուսի նյութերում⁵: Ջրափիի նշված դամբարանում գտնված խեցանոթը (աղ. 1, նկ. 7) որոշ ընդհանրություններ ունի Շիրակավանի առաջին պեղավայրից հայտնաբերված, IX-VIII դարերով թվագրվող նյութերի հետ⁶: Նույն թվականին հիշյալ դամբարանադաշտի երկրորդ դամբարանում գտնվել են խնոցի, խոհանոցային կճուճ, քարից կտեխս և սլաքանման եռանկյունաձև քար (աղ. 1, նկ. 2, 3, 4, 6): Խնոցին երկաթի ժամանակաշրջանին բնորոշ օրինակ է (աղ. 1, նկ. 6), որի նմանակները հայտնի են Թալինի վաղերկաթիդարյան 1 և 77 դամբարաններից⁷, Շիրակավանի համաժամանակյա թիվ 114 և 121⁸, Արթիկի թիվ 631⁹ և Հայաստանի համաժամանակյա այլ հուշարձաններից: Մյուսը ուշ բրոնզի և վաղ երկաթի ժամանակաշրջաններում տարածված խոհանոցային կճուճ է: Տուֆից կտեխսի նմանակը գտնվել է Ախուրյանի շրջանի Մայիսյան գյուղի մոտակայքում պեղված ուշբրոնզիդարյան դամբարանաբլուրից¹⁰: 2013թ. պեղված մյուս թիվ երեք դամբարանում գտնվել է մի փոքր վաղ թվագրվող Շիրակավանի թիվ 114

¹ **Петросян Л.А.**, Раскопки памятников Кети и Воскеаска (III-I тыс. до н. э.), Изд.-во АН Армянской ССР, Ер., 1989, табл. 64, рис. 9.

² **Хачатрян Т.С.**, Древняя культура Ширака, Изд.-во Ереванского университета, Ер., 1975, с. 237, рис. 151.

³ **Ավետիսյան Հ.Գ., Ավետիսյան Պ.Ս.**, Արարատյան դաշտի մշակույթը մ.թ.ա. XI-VI դարերում, Երևանի պետական համալսարանի հրատ., Եր., 2006. աղ. 59, նկ. 13:

⁴ **Менабде М., Давлианидзе Ц.**, Могильник Триалети, Каталог I, Изд.-во «Мецниереба», Тбилиси, 1968, табл. I-VII.

⁵ **Мартirosян А.А.**, Армения в эпоху бронзы и раннего железа, Изд.-во АН Армянской ССР, Ер., 1964, с. 210, рис. 82.

⁶ **Թորոսյան Ռ.Մ., Խնկիկյան Օ.Ս., Պետրոսյան Լ.Ա.**, Հին Շիրակավան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., Եր., 2002, աղ. XLIX, նկ. 14, 15, 19 և այլն:

⁷ **Ավետիսյան Հ.Գ., Ավետիսյան Պ.Ս.**, նշվ. աշխ., աղ. 7, նկ. 8, աղ. 53, նկ. 2:

⁸ **Թորոսյան Ռ.Մ., Խնկիկյան Օ.Ս. և այլք.** նշվ. աշխ., աղ. XLVII, նկ. 4:

⁹ **Хачатрян Т.С.**, Артикский некрополь, Каталог, Изд.-во Ереванского университета, Ер., 1979, с. 398.

¹⁰ Պեղումները՝ հայ-գերմանական արշավախմբի, նյութերը պատրաստված են հրատարակության:

դամբարանի կճուճին¹¹ վզի և ուսերի բարձրությամբ առավել մոտ մեկ կճուճ (աղ. 1, նկ. 5):

Ջրափիի առաջին դամբարանադաշտի՝ 2014 թ. պեղված երեք դամբարաններից առաջինում հայտնաբերվել են բրոնզե դաշույն և ճակատակալ: Դաշույնը (աղ. 2, նկ. 3) վաղ երկաթի վաղ փուլից սկսված և Հայաստանի երկաթիդարյան տարբեր փուլերով թվագրվող Տոլորսի,¹² Վարդաքարի¹³, Շիրակավանի¹⁴, Թալինի¹⁵ և Արևելյան Հայաստանի, Շիկահողի¹⁶, Նորավանի¹⁷, Սիսիանի¹⁸ և բազմաթիվ այլ հուշարձաններից լավ հայտնի սևանյան տիպի օրինակ է:

2014 թ. պեղված երկրորդ դամբարանը ամբողջովին ավերված էր: Թափված հողերի մեջ գտնվեց երկաթե անոթոջ իրի բեկոր (աղ. 2, նկ. 2): Ի տարբերություն առաջին դամբարանի՝ երկրորդում միայն խեցանոթներ էին՝ ուսին սեղմումով արված եռանկյունաձև զարդերով, միջանցիկ անցքով բռնակ ունեցող մեկական սափոր, կճուճ և բաժակ (աղ. 2, նկ. 4-6): Սափորների այս տեսակի ամենամոտ օրինակներ հայտնի են Շիրակից: Ջրափիից ոչ հեռու գտնվող Ոսկեհասկի կատակոմբային թիվ 4 և 5 դամբարաններում¹⁹: Կարծես Ջրափիի կրկնակը լինի Թռեղքի թիվ 49 դամբարանի օրինակներից մեկը²⁰ և զգալի մոտ է նաև Արթիկի թիվ 209 դամբարանի երկկանթ կճուճներին²¹: Ջրափիի սափորի հետ զգալի ընդհանրություններ ունեն նաև Թալինի թիվ 51²² և Արթիկի 209 դամբարանների սափորները²³: Ջրափիի նշված դամբարանի մյուս կավամանը վաղ երկաթի ժամանակաշրջանում հայտնի գլանաձև բաժակն է (աղ. 2, նկ. 5), որը հայտնի է ինչպես Շիրակի տարածաշրջանի Շիրակավանի 5-8-րդ դարերին պատկանող բնակատեղիի շերտերից²⁴, այնպես էլ Քեթիի թիվ 32 և 37 համաժամանակյա դամբարաններից²⁵, նաև Թալինի թիվ 42, 50 և այլ դամբարաններ:

¹¹ Թորոսյան Ռ.Մ., Խնկիկյան Օ.Ս. և այլք, նշվ. աշխ., էջ 101, աղ. XLVII, նկ. 4:

¹² Мартirosյան А.А., Армения в эпоху бронзы и раннего железа, Изд.-во АН Армянской ССР, Ер., 1964, табл. XIV, рис.1.

¹³ Նույն տեղում, աղ. XVI, նկ. 5.

¹⁴ Թորոսյան Ռ.Մ., Խնկիկյան Օ.Ս. և այլք, նշվ. աշխ., էջ 101, աղ. XIX, նկ. 151:

¹⁵ Ավետիսյան Հ.Գ., Ավետիսյան Պ.Ս., նշվ. աշխ., աղ. 62, նկ. 3:

¹⁶ Хnkikյան Onnik S., During the Bronze, նշվ. աշխ., աղ. XXIX, նկ. 12, 13.

¹⁷ Նույն տեղում, աղ. XXXV, նկ. 1, 2.

¹⁸ Նույն տեղում, աղ. XLII, նկ. 1.

¹⁹ Петросյան Л.А., նշվ. աշխ., տախտ. 66, 67:

²⁰ Менабде М., Давлианидзе П., նշվ. աշխ., տախտ. IV, նկ. 195:

²¹ Хачатրյան Т.С., նշվ. աշխ., էջ 195:

²² Ավետիսյան Հ.Գ., Ավետիսյան Պ.Ս., նշվ. աշխ., աղ. 33, նկ. 5, 6:

²³ Хачатրյան Т.С., նշվ. աշխ., էջ 194:

²⁴ Թորոսյան Ռ.Մ., Խնկիկյան Օ.Ս. և այլք, նշվ. աշխ., աղ. XLIX.

²⁵ Петросյան Л.А., նշվ. աշխ., տախտ. 57, 61:

րից²⁶: Ներկայացվող դամբարանի կճուճը (աղ. 2, նկ. 6) աչքի է ընկնում ուսերի սահուն անցումով և իրանի քիչ ձգվածությամբ, որի նմանակները Ոսկեհասկի թիվ 5 կատակոմբի²⁷ և Քեթիի դամբարանների նյութերն են²⁸: Նշենք նաև, որ կճուճների այս տեսակը հատկանշական է մինչուրարտական ժամանակաշրջանին:

Այսպիսով, չնայած ուսումնասիրվող դամբարաններում նյութերի սղությանը, եղածները բավարար են դրանք ընդգրկելու Հայաստանի մինչուրարտական ժամանակաշրջանի մշակույթում:

Ջրափիի թիվ 1 դամբարանադաշտում վերջին միակ դամբարանը պեղվել է 2015 թվականին: Ի տարբերություն նախորդի՝ այս դամբարանը համեմատաբար հարուստ է ինչպես տարատեսակ կավամաններով, այնպես էլ բրոնզե զինատեսակներով և սարդիոնից ու շաղախից ուլունքներով (աղ. 4): Դամբարանում գտնված չորս կճուճներից փոքր-ինչ առանձնանում է մեկը (աղ. 3, նկ. 2), որի զուգահեռները կան Շիրակավանի մ.թ.ա. 9-8-րդ դարերով թվագրվող թիվ 111²⁹ և մի շարք համաժամանակյա դամբարաններում՝ նույն թվականին Ագատանում բացված թիվ 5³⁰, Չեմշանիսի 17³¹, Թալինի 18³² և այլ դամբարաններում: Մյուս երեք կճուճները (աղ. 3, նկ. 4, 6-7) բրոնզ-երկաթիդարյան ժամանակաշրջանում հայտնի խոհանոցային անոթներ են: Ջրափիի թիվ 15 դամբարանում գտնված միակ քրեղանի (աղ. 3, նկ. 5) բազմաթիվ օրինակներ հայտնի են հատկապես Թալինի դամբարանային համալիրներում³³, Քեթիի թիվ 34, 38³⁴, Ագատանի վերը հիշատակված հավաքածուում: Հետաքրքիր է նաև տվյալ համալիրի երկկանթ կճուճը (աղ. 3, նկ. 3), որի տեսակը, սկսած վաղ երկաթի ժամանակաշրջանից, հայտնի է գրեթե բոլոր հուշարձաններում: Ջրափիի ներկայացվող դամբարանից գտնվել է նաև ծորակով կավանոթ (աղ. 3, նկ. 1): Անոթների այս տեսակը հատկապես բնորոշ է Հայաստանի արևելյան շրջանների երկաթիդարյան հուշարձաններին (Միսիան, Չորաց քարեր, Խնածախ, Եղեգնաձոր, Մոզ)³⁵, Արարատյան դաշտում՝ Կարմիր բլուր³⁶, Շիրակի դաշտում՝ Ոսկե-

²⁶ Ավետիսյան Հ.Գ., Ավետիսյան Պ.Ս., նշվ. աշխ., աղ. 42, նկ. 42, 50:

²⁷ Петросян Л.А., նշվ. աշխ., տախտ. 67:

²⁸ Նույն տեղում, աղ. 70:

²⁹ Թորոսյան Ռ.Մ. և այլք, նշվ. աշխ., աղ. XLVII, նկ. 4:

³⁰ Պեղումները՝ Հայ-գերմանական արշավախմբի, նյութերը պատրաստված են հրատարակության:

³¹ Դևեջյան Ս.Հ., Հնագիտական հետազոտություններ Տաշիր-Չորագետում, «Նաիրի» հրատ., Երևան, 2001, աղ. VII, նկ. 4-7:

³² Ավետիսյան Հ.Գ., Ավետիսյան Պ.Ս., նշվ. աշխ., աղ. 13, նկ. 2, 4, 6:

³³ Նույն տեղում, աղ. 7, նկ. 3-5:

³⁴ Петросян Л.А., նշվ. աշխ., տախտ. 59, 62:

³⁵ Хнкккккк О., նշվ. աշխ., աղ. XLII, XLIII, LIII, LVII, LXI, LXII.

հասկ³⁷, Շիրակավանում³⁸ և Թոեղքի թիվ 44 դամբարանում³⁹: Դամբարանում գտնվել են նաև զենքեր ու զարդեր (աղ. IV): Ուշագրավ է սևանյան տիպի բրոնզից դաշույնը (աղ. 4, նկ. 1): Հայտնի են Սևանի ավազանից⁴⁰, Թալինից⁴¹, Եվկլուից⁴², Ադիամանից⁴³, Մակարաշենից⁴⁴, Ջորաց քարերից⁴⁵, Միսիանից⁴⁶ և Արևելյան Հայաստանի մի շարք այլ հնավայրերից: Այս դաշույնի ուշ տարբերակն է Թրեխլիի թիվ 76 դամբարանում գտնված երկմետաղ օրինակը⁴⁷: Այսպիսով, նշված զուգահեռները ցույց են տալիս տվյալ զինատեսակի տարածված լինելը Հայաստանի ողջ տարածքում: Մյուսը բրոնզից երկթև նետասլաքն է, որի մի տեսակն էլ հայտնի է ներկայացվող թիվ 4 դամբարանում (աղ. 4, նկ. 3): Նետասլաքների տվյալ տեսակն առանձնանում է թևիկների կիսակլորությամբ, որով և մեր օրինակը մի փոքր տարփերվում է վաղերկաթիդարյան նույնատիպ մյուս խմբից, (թևիկներն ուղիղ են և թեքված են դեպի դուրս): Ջրափիի օրինակը թևիկների ձևով մոտ է Չեմշանիսի որոշ օրինակներին⁴⁸, Սևանի ավազանից գտնվածներին⁴⁹, ինչպես նաև «Ջորաց քարերից»⁵⁰ և Թալինի թիվ 35⁵¹ դամբարաններից հայտնի գտածոներին: Նետասլաքների այս տեսակը, սկիզբ առնելով վաղ երկաթի ժամանակաշրջանում, հասնում է մինչև զարգացած երկաթի ավարտը:

2015 թ. թիվ 4 դամբարանում գտնվել են նաև բրոնզի լարից պատրաստված մեկ մատանի (աղ. 4, նկ. 2) և շաղախից ու սարդիոնից ուլունքներ (աղ. 4, նկ. 4): Նշված զարդատեսակները Հայկական լեռնաշխարհի բնակիչների կողմից օգտագործվել են՝ սկսած մ.թ.ա. III հազ. մինչև ուրարտական ժամանակաշրջան:

³⁶ Եսայան Ստ., Երևան քաղաքի պատմության թանգարանի հնագիտական իրերի կատալոգ, հ. III, Երևան քաղաքի պատմության թանգարանի հրատ., Եր., 1972, աղ. X, նկ. 6:

³⁷ Петросян Л.А., նշվ. աշխ., տախտ. 69:

³⁸ Թորոսյան Ռ.Մ., Խնկիկյան Օ.Ս. և այլք, նշվ. աշխ., աղ. XLV, նկ. 6:

³⁹ Менабде М., Давлианидзе П., նշվ. աշխ., տախտ. IV, նկ. 181:

⁴⁰ Լալայան Ե., Դամբարանների պեղումներ Խորհրդային Հայաստանում, «Պետհրատ», Ցերևան, 1931, 157, նկ. 108:

⁴¹ Ավետիսյան Հ.Գ., Ավետիսյան Պ.Ս., նշվ. աշխ., աղ. 62, նկ. 3:

⁴² Мартirosян А.А., նշվ. աշխ., էջ 143, նկ. 59:

⁴³ Նույն տեղում, էջ 158, նկ. 64:

⁴⁴ Նույն տեղում, էջ 205, նկ. 79a:

⁴⁵ Хnkikyan Onnik S., նշվ. աշխ., աղ. XLI:

⁴⁶ Նույն տեղում, աղ. XLII:

⁴⁷ Хnkikyan Օ., նշվ. աշխ., աղ. XLI, նկ. 2-6:

⁴⁸ Դևեջյան Ս.Հ., նշվ. աշխ., աղ. XI, նկ. 11:

⁴⁹ Լալայան Ե., նշվ. աշխ., էջ 163, նկ. 121, էջ 164, նկ. 126, 128:

⁵⁰ Хnkikyan Օ., նշվ. աշխ., աղ. XLI, նկ. 2-6:

⁵¹ Ավետիսյան Հ.Գ., Ավետիսյան Պ.Ս., նշվ. աշխ., էջ 256, աղ. 60, նկ. 5-9:

Ջրափիի երկրորդ դամբարանադաշտը. 2016 թ.

Ջրափիի երկրորդ դամբարանադաշտը գտնվում է առաջինից մոտ մեկ կմ արևմուտք՝ զբաղեցնելով հյուսիս-հարավ ձգվող ջրամբարի մոտավորապես 300 մ երկարությամբ ձգվող, 80-100մ լայնությամբ ավաներձ տարածքը: 2016-2017 թթ. հայ-գերմանական արշավախմբի կողմից ջրերից ազատված տարածքում հայտնաբերվեցին և պեղվեցին յոթ դամբարաններ:

2016թ. սույն դամբարանադաշտում պեղված թիվ մեկ դամբարանում գտնվել են չորս կավանոթ, բրոնզից դաշույն, նիզակի ծայր և երկաթից դանակ (աղ. 5): Անոթներից երկուսն (աղ. 5, նկ. 2, 3) ունեն առավել փքուն իրան, որպիսիք հայտնի են նաև նույն դամբարանադաշտում 2017թ. պեղված երրորդ և առաջին դամբարանների նյութերում, որոնց կանդրադառնանք ստորև: Մյուս կճուճը բրոնզ-երկաթիդարյան հուշարձաններում հայտնի խոհանոցային կճուճների օրինակ է: Չորրորդ կավանոթը զլանաձև իրանով բաժակն է (աղ. 5, նկ. 1): Բաժակների այս տեսակը երևան է գալիս վաղ երկաթի վաղ փուլից և գոյատևում է մինչև երկաթի դարաշրջանի վերջ: Դրանք հայտնի են Շիրակավանի բնակատեղիի մ.թ.ա. 9-8-րդ դարեր թվագրվող շերտից,⁵² Թալինի թիվ 62⁵³ և այլ դամբարաններից՝ Թագաքենդից⁵⁴, Քեթիի թիվ 32⁵⁵ և երկաթի դարաշրջանի մի շարք այլ հուշարձաններից:

Այստեղից հայտնի բրոնզից պատրաստված հարթ, առանց ուղղահայաց միջնաշերտի դաշույնի (աղ. 5, նկ. 5) միակ, առանց միջնաջիղի զուգահեռը Շիրակավանի թիվ 6⁵⁶ դամբարանի օրինակն է: Ուսումնասիրվող դամբարանի մյուս զինատեսակը բրոնզից նիզակի⁵⁷ ծայրն է (աղ. 5, նկ. 6), որի աշխատող մասը և կոթառի երկարությունները գրեթե հավասար են: Նման համամասնությամբ երկաթից նիզակի ծայրեր հայտնի են մ.թ.ա. 7-6-րդ դարերին պատկանող Խրտանոցի դամբարաններից⁵⁸: Սույն դամբարանում հայտնի գործիքը երկաթի դանակի բեկորն է (աղ. 5, նկ. 7), որի բազմաթիվ զուգահեռները գտնվել են Թռեղքի մ.թ.ա. X դարով թվագրված դամբարաններում⁵⁹:

2016թ. Ջրափիի երկրորդ դամբարանադաշտի թիվ 2 դամբարանում հայտնաբերվել են վեց խեցանոթ, բրոնզից, սարդիոնից ու շաղախից զարդարանքի առարկաներ (աղ. 6): Կճուճներից մեկը (աղ. 6, նկ. 3) մոտ է նախորդ

⁵² Թորոսյան Ռ.Մ., Խնկիկյան Օ.Ս. և այլք, նշվ. աշխ., աղ. XLIX, նկ. 1-4:
⁵³ Ավետիսյան Հ.Գ., Ավետիսյան Պ.Ս., նշվ. աշխ., էջ 238, աղ. 42, նկ. 4:
⁵⁴ Եսայան Ստ., Երևան քաղաքի պատմության թանգարանի հնագիտական իրերի կատալոգ, Եր., Երևան քաղաքի պատմության թանգարանի հրատ., 1967 թ., աղ. XIV, նկ. 26:
⁵⁵ Петросян Л.А., նշվ. աշխ., տախտ. 54, նկ. 5:
⁵⁶ Թորոսյան Ռ.Մ., Խնկիկյան Օ.Ս. և այլք, նշվ. աշխ., աղ. XLIII, նկ. 10:
⁵⁷ Хачатрян Т.С., նշվ. աշխ., էջ 400:
⁵⁸ Мартиросян А.А., նշվ. աշխ., էջ 272, նկ. 105:
⁵⁹ Менабде М., Давлианидзе Ц., նշվ. աշխ., տախտ. I-VII:

դամբարանի անոթին, իսկ երկրորդը (աղ. 6, նկ. 6) պատկանում է երկաթիդարյան խոհանոցային խմբի անոթների տեսակին: Երրորդ կճուճը (աղ. 6, նկ. 5) նմանակներ ունի վաղերկաթիդարյան հուշարձաններում՝ Թալինի 8⁶⁰, Քեթիի 38⁶¹, Օշականի 49⁶² դամբարաններ: Չորրորդ երկկանթ կճուճի վաղ օրինակներ հայտնի են Արթիկի թիվ 48 և 209⁶³, Ագատանի թիվ 4 դամբարաններում⁶⁴, Սևանի ավազանում⁶⁵, Թագաքենդում⁶⁶: Կճուճների այս տեսակը լավ հայտնի է հենց Ջրափի երկրորդ դամբարանադաշտի նյութերից, որոնց մասին կխոսվի սույն աշխատանքում: Նշենք միայն, որ տվյալ համալիրները պատկանում են վաղ երկաթի ուշ փուլին:

Այստեղ հայտնի են երկու տարբեր ձևերի բաժակներ (աղ. 6, նկ. 2, 4): Աղ. 2, նկ. 4 բաժակի նմանը հայտնի է Թագաքենդից⁶⁷, Թռեղքից⁶⁸, Քարաշամբից: Երկրորդ բաժակը միանգամայն այլ ձևի է՝ հայտնի Քեթիի թիվ 33 դամբարանից⁶⁹, Սևանից⁷⁰, Ոսկեհասկի թիվ 4 դամբարանից⁷¹ և այլ հնավայրերից⁷²:

Ջրափիում 2016 թ. պեղված թիվ 2 դամբարանում հայտնաբերված բրոնզե ականջօղերը (աղ. 7, նկ. 7) և շաղախից ու սարդիոնից տարատեսակ ուլունքները տիպական են երկաթիդարյան Շիրակավան⁷³, Թաքիա⁷⁴, Թագաքենդ⁷⁵, Թռեղք⁷⁶ հնավայրերին: 2016թ. նույն դամբարանադաշտում պեղված թիվ 3 դամբարանը բավականին աղքատ է. գտնվել է երկաթի ինչ-որ գործիքի բեկոր (աղ. 7, նկ. 8) և վերը նկարագրված թիվ 2 դամբարանի արդեն ներկայացված երկկանթ կճուճի ևս մի օրինակ (աղ. 8, նկ. 3): Այստեղ նույն թվականին պեղված թիվ 4 դամբարանում ևս գտնվել են մեկ ապարանջան և միանգամայն նոր տեսակի մեկ խեցանոթ (աղ. 8, նկ. 1, 4): Ապարանջանը կտրվածքում կիսակլոր

⁶⁰ Ավետիսյան Հ.Գ., Ավետիսյան Պ.Ս., նշվ. աշխ., աղ. 13, նկ. 9:

⁶¹ Петросян Л.А., նշվ. աշխ., տախտ. 62, նկ. 1:

⁶² Есаян А.А., Калантарян А.А., Ошакан И, Основные результаты раскопок 1971-1983гг. Изд.-во АН Армянской ССР, Ер., 1988, табл. LXXII, рис. 5.

⁶³ Хачатрян Т.С., նշվ. աշխ., էջ 131 և 195:

⁶⁴ Նյութերը պատրաստված են հրատարակության:

⁶⁵ Լալայան Ե., նշվ. աշխ., էջ 142, նկ. 73:

⁶⁶ Եսայան Ստ., Կատալոգ... 1967, նշվ. աշխ., աղ. XIV, նկ. 14:

⁶⁷ Եսայան Ստ., Կատալոգ... 1972, նշվ. աշխ., աղ. XVII, նկ. 2, 3:

⁶⁸ Менабде М., Давлианидзе Ц., նշվ. աշխ., տախտ. IV, նկ. 179:

⁶⁹ Պետրոսյան Լ.Ս., Պեղումները Քարաշամբում (2010 թ.), «Լրաբեր հասարակական գիտությունների», 2014, №2, էջ 289, աղ. IV, նկ. 2:

⁷⁰ Петросян Л.А., նշվ. աշխ., տախտ. 58, նկ. 6:

⁷¹ Լալայան Ե., նշվ. աշխ., էջ 139, նկ. 67:

⁷² Петросян Л.А., նշվ. աշխ., տախտ., 66, նկ. 8:

⁷³ Թորոսյան Ռ.Մ. և այլք, նշվ. աշխ., աղ. XLIII:

⁷⁴ Мартиросян А.А., նշվ. աշխ., էջ 135, նկ. 55:

⁷⁵ Եսայան Ստ., Կատալոգ... 1967, նշվ. աշխ., աղ. XV:

⁷⁶ Менабде М., Давлианидзе Ц., նշվ. աշխ., տախտ. I-VII:

է: Այն ևս երկաթիդարյան ժամանակաշրջանում հայտնի նյութերից է, իսկ կավամանր իր ձևով մի փոքր մոտենում է Շիրակավանի ամրոցի կացարաններից մեկում գտնվածին⁷⁷: Ինչպես նոր ձևի անոթի, այնպես էլ բրոնզե հարթ, նոր ձևի կոթառով դաշույնների երևան գալը հուշում է նշված դամբարանային համալիրների մ.թ.ա. 9-8-րդ դարերի ուշ փուլին պատկանելու մասին:

Ջրափիի երկրորդ դամբարանադաշտում 2017 թ. հայ-գերմանական արշավախմբի կողմից պեղվեցին ևս երեք դամբարաններ (ադ. 4-7):

Թիվ 1 դամբարանի նյութերը գրեթե ամբողջությամբ կրկնում են նույն դամբարանադաշտում պեղված և վերը ներկայացված 2016թ. առաջին դամբարանի նյութերը՝ միայն այն տարբերությամբ, որ գլանաձև բաժակի փոխարեն գրեթե ուղղահայաց վզով և սեպաձև զարդերով կճուճն է, իսկ դաշույնը նույն տեսակն է, միայն ունի միջնաջղեր: Ինչպես նշվեց երկկանթ կճուճը (ադ. 9, նկ. 2) և փքուն իրանով փոքր գլանաձև կճուճը (ադ. 9, նկ. 1) ամբողջությամբ նույնական են 2016թ. նույն դամբարանադաշտում պեղված, վերը ներկայացված թիվ 1 դամբարանի նյութերին, որոնց զուգահեռները, բացի նշվածներից, գտնվել են նաև Թալինի թիվ 14⁷⁸ դամբարանից: Ինչ վերաբերում է բրոնզե դաշույնին, ապա նախորդ դամբարանի գտածոյից տարբերվում է վրայի ուղղահայաց ակոսներով (ադ.9, նկ. 4):

Նշենք, որ երկու դաշույններն էլ, պատկանելով միևնույն տեսակին, միմյանցից տարբերվում են միայն առանձին մանրամասներով: Ջրափիի օրինակներին մոտ են հատկապես Շիրակավանի պատահական գտածոն⁷⁹ և թիվ 114 դամբարանում հայտնաբերվածը⁸⁰, ինչպես նաև Բեշտաշենից հայտնի օրինակը⁸¹: Արդեն նշվեց, որ այս դամբարանի միակ նոր տեսակի կավամանր (ադ. 9, նկ. 3) ևս իր զուգահեռներն ունի Օշականի թիվ 96 և 97⁸², Թալինի 89⁸³ ու Թռեղքի թիվ 6⁸⁴ դամբարաններում:

2017 թ. պեղված երկրորդ դամբարանի նյութերը փոքր-ինչ ավելին են, քան նախորդինը: Վերջինում գտնվել են վեց խեցանոթներ (ադ. 10): Կճուճներից մեկը (ադ. 10, նկ. 1) ամբողջությամբ կրկնում է 2016 թ. Ջրափիի թիվ 2 դամբարանի նյութերը, որոնց նմանակները, ինչպես նշվեց, գտնվել են մի քանի հուշարձաններում (Թալին, Քեթի, Օշական և այլն): Այս դամբարանում առկա մյուս

⁷⁷ Թորոսյան Ռ.Մ., Խնկիկյան Օ.Ս. և այլք, նշվ. աշխ., ադ. LXXVIII, նկ. 19:

⁷⁸ Ավետիսյան Հ.Գ., Ավետիսյան Պ.Ս., նշվ. աշխ., ադ. 11, նկ. 1:

⁷⁹ Թորոսյան Ռ.Մ., Խնկիկյան Օ.Ս. և այլք, նշվ. աշխ., XLII, նկ. 19:

⁸⁰ Նույն տեղում, ադ. XLVIII, նկ. 1:

⁸¹ Кухтин Б.А., Археологические раскопки в Треалети, I, Изд.-во АН Грузинской ССР, Тбилиси, 1941, с. 72, рис. 77 (4-6).

⁸² Есаян А.А., Калантарян А.А., նշվ. աշխ., տախտ. XCIII, նկ. 1, տախտ. XCIX, նկ. 11:

⁸³ Ավետիսյան Հ.Գ., Ավետիսյան Պ.Ս., նշվ. աշխ., ադ. 13, նկ. 4:

⁸⁴ Менабде М., Давлианидзе Ц., նշվ. աշխ., տախտ. I, նկ. 26:

կճուճը ևս ունի ներձկված վիզ և ուռուցիկ իրան: Չարդարված է իրար մեջ հազած եռանկյունիների խմբերով (աղ. 10, նկ. 2), նման կճուճներ են հայտնի Թալինի վաղերկաթիդարյան թիվ 18⁸⁵ և 49,⁸⁶ 59,⁸⁷ 78⁸⁸ դամբարաններից և Կարմիր բերդից⁸⁹: Նշենք, որ կճուճների նշված տեսակը հատկանշական է երկաթի ժամանակաշրջանի մշակույթին: Մյուսը զարգացած երկաթի ժամանակաշրջանում տարածված երկկանթ անոթն է (աղ. 10, նկ. 3): Այս դամբարանում գտնվել են միսյանցից քիչ տարբերվող 3 քրեղաններ (աղ. 10, նկ. 4,5,6): Անհրաժեշտ է նշել, որ քիչ ներս թեքված շուրթով քրեղանները հայտնի են վաղ երկաթի վաղ փուլին պատկանող Չեչմանիսի թիվ 14⁹⁰ և ավերված դամբարանից⁹¹: Դրանք հետագա դարերում գտնվել են Շիրակավանի IX-VIII դարերով թվագրվող երկրորդ պեղավայրից⁹², Քուչակից:⁹³ Այդպիսիք մեծ թիվ են կազմում Օշականի թիվ 60 դամբարանում⁹⁴ ու այլ հնավայրերում և հետագայում ստանում են ավսեի տեսք:

Ջրափիի երկրորդ դամբարանադաշտում 2017 թ. պեղված երրորդ դամբարանում հայտնաբերվել են վեց կավաման և բրոնզյա զենքերի մի փոքր հավաքածու (աղ. 11, 12): Կավամաններից մեկը (աղ. 11, նկ. 1) ուշ բրոնզի վերջին փուլին բնորոշ, վաղ երկաթի շրջանում քիչ հանդիպող անոթ է: Դրանք ավելի շատ են Թագաքենդում⁹⁵ և Թալինի թիվ 32,⁹⁶ Շիրակավանի երկրորդ դամբարանադաշտի թիվ 120,⁹⁷ Թրիալեթիի 49⁹⁸, Չեչմանիի⁹⁹ վաղերկաթիդարյան թիվ 4 և 20 դամբարաններում: Մյուս չորս կճուճները (աղ. 11, նկ. 2-5) դասվում են 2016թ. նույն դամբարանադաշտում պեղված թիվ 1 դամբարանի փքուն իրանով, քիչ բարձր վզով տեսակի խմբին: Դրանցից երկուսն առանձնանում են եռանկյունաձև զարդապատկերներով (աղ. 11, նկ. 4, 5): Այս նյութերը մինչուրարտական ժամանակաշրջանին բնորոշ առարկաներ են: Մյուսը նախորդ դամբարա-

⁸⁵ Ավետիսյան Հ.Գ., Ավետիսյան Պ.Ս., նշվ. աշխ., աղ. 13, նկ. 4:

⁸⁶ Есаян С.А., Калантарян А.А., նշվ. աշխ., տախտ. CVI, նկ. 1:

⁸⁷ Նույն տեղում, աղ. LXXIII, նկ. 5:

⁸⁸ Նույն տեղում, աղ. LXXVIII, նկ. 2:

⁸⁹ Եսայան Ստ., Կատալոգ... 1972, նշվ. աշխ., աղ. VIII, նկ. 13:

⁹⁰ Դևեջյան Ս.Հ., նշվ. աշխ., աղ V, նկ. 6:

⁹¹ Նույն տեղում, աղ. X, նկ. 12:

⁹² Թորոսյան Ռ.Մ., Խնկիկյան Օ.Ս. և այլք, նշվ. աշխ., աղ. XLIX, նկ. 11:

⁹³ Պետրոսյան Լ.Ա., Քուչակ-1 դամբարանադաշտի մշակույթը (մ.թ.ա. IX-V դդ.), «Լրաբեր հասարակական գիտությունների», 1916, № 3, էջ 260, աղ. III, նկ. 6:

⁹⁴ Есаян С.А., Калантарян А.А., նշվ. աշխ., տախտ. CXII:

⁹⁵ Եսայան Ստ., Կատալոգ... 1967, նշվ. աշխ., աղ. XIII, նկ. 14:

⁹⁶ Ավետիսյան Հ.Գ., Ավետիսյան Պ.Ս., նշվ. աշխ., էջ 215, աղ. 19, նկ. 12:

⁹⁷ Թորոսյան Ռ.Մ., Խնկիկյան Օ.Ս. և այլք, նշվ. աշխ., աղ. LXII, նկ. 1:

⁹⁸ Менабде М., Давлианидзе П., նշվ. աշխ., տախտ. IV, նկ. 193:

⁹⁹ Դևեջյան Ս.Հ., նշվ. աշխ., աղ III, նկ. 1, 2:

նի կճուճի ձևը կրկնող, թեթևակի ներճկված շուրթով քրեղանն է (աղ. 11, նկ. 6): Դրանց նմանակները հայտնի են վաղերկաթիդարյան մի շարք հուշարձաններից (Չեշմանիս, Թալին, Շիրակավան, Թագաքենդ և այլն): Ուսումնասիրվող դամբարանում առկա են միմյանցից քիչ տարբերվող բրոնզե նետասլաքներ (աղ. 12, նկ. 2, 3, 5, 6) և բրոնզե դաշույն (աղ. 12, նկ. 1):

Ինչպես տեսանք, վերը նման մի դաշույն էլ հայտնաբերվել է նույն դամբարանադաշտում 2015 թ. պեղված թիվ 1 դամբարանում, որի հետ գտնված կլորացող թևիկներով նետասլաքի համեմատական ուսումնասիրությունը տե՛ս նախորդ համապատասխան բաժնում: Ջրափիի նշված դամբարանի մյուս տեսակի նետասլաքները (աղ. 12, նկ. 2, 3, 5, 6) նույնպես վաղ երկաթի ժամանակաշրջանում հայտնի տեսակներից են, որպիսիք կան Շիրակավանի երկրորդ դամբարանադաշտի մ.թ.ա. XI-IX դարերով թվագրվող թիվ 120¹⁰⁰ և 100 դամբարաններում¹⁰¹ ու Թոեղքում¹⁰²: Նետասլաքների հետաքրքիր խումբ է հայտնի Ջորաքարերի թիվ 5 դամբարանում: Դրանց մեջ առկա է նաև սևանյան տեսակի դաշույն¹⁰³:

Այսպիսով, Ջրափիի երկու դամբարանադաշտերից պեղումներով հայտնաբերված նյութերի սույն ուսումնասիրությունը հավաստում է, որ դրանք համաժամանակյա են և համապատասխանում են Հայաստանի վաղերկաթիդարյան նյութերին և ժամանակագրվում են մինչուրարտական ժամանակաշրջանով՝ մ.թ.ա. X դարի վերջ - VIII դարով:

Եզրահանգում. Հայ-գերմանական համատեղ արշավախմբի կողմից Ջրափիի հուշարձանախմբի հնագիտական հետախուզությունը ցույց տվեց, որ այն կազմված է «Ղալաչի բլրի» վրա ու ստորոտում գտնվող բնակավայրից և դրա շրջակայքում տարածված դամբարանադաշտերից: Ջրափիի հուշարձանը Ախուրյանի ափամերձ իր տեղադրությամբ և կազմակերպման ձևով շատ նման է մոտ 12կմ հյուսիս գտնվող Շիրակավանի համաժամանակյա հուշարձանախմբին¹⁰⁴:

Հնագիտական հետախուզությունը, 1-ին և 2-րդ դամբարանադաշտերի փրկարարական պեղումները ցույց տվեցին, որ վաղ երկաթի ժամանակաշրջանում այստեղ եղել է մարդաշատ և տնտեսապես զարգացած բնակավայր: Դրա լավագույն ապացույցներից է դամբարանների մեծ խտությունը: Երկու դամբար-

¹⁰⁰ Թորոսյան Ռ.Մ., Խնկիկյան Օ.Ս. և այլք, նշվ. աշխ., աղ. LXXII, նկ. 26-29:

¹⁰¹ Նույն տեղում, աղ. LXXV, նկ. 13, 14:

¹⁰² Менабде М., Давлианидзе П., նշվ. աշխ., տախտ. IV, նկ. 193:

¹⁰³ Хнкикян Онник С., նշվ. աշխ., աղ. XLII, նկ. 1-8.


¹⁰⁴ Թորոսյան Ռ.Մ., Խնկիկյան Օ.Ս. և այլք, նշվ. աշխ., էջ 66-74:

րանադաշտերում էլ դրանց հեռավորությունը միմյանցից չի գերազանցում երկու մետրը, իսկ բազմաթիվ կրումլեխներ կպած են իրար:


Դամբարանների կառուցվածքի հիմնական տիպերն են՝ միջին մեծության քարաշար կրումլեխի մեջ վերցված 1. հիմնահողային, 2. սալարկղային, 3. քարարկղային դիաթաղումները:

Դամբարանների գերակշռող մասում կատարված է 1 անձի թաղում, երկու դամբարաններում՝ տղամարդու և կնոջ զույգ, համաժամանակյա թաղում, 1 դամբարանում իրար հաջորդող երկու թաղում: Դամբարաններում, անկախ դրանց կառուցվածքից, թաղումները կատարվել են տղամարդիկ աջ, կանայք՝ ձախ կողքին պառկած կծկված դիրքով: Թաղմանն ուղեկցող խեցեղենը հայտնաբերվել է կմախքների ոտքերի կամ գլխի մոտ, երկու դամբարաններում դրանք դրվել են դիակի վրա: Դամբարաններից հայտնաբերված նյութերի գերակշռող մասը խեցեղենն է: Հայտնաբերվել են նաև աշխատանքային գործիքներ, արդուզարդի առարկաներ, զենքեր: Հատկանշական է, որ տղամարդկանց բոլոր թաղումներում կան տարբեր զինատեսակներ՝ երկաթից կամ բրոնզից դաշույններ, նետասլաքներ, նիզակներ: Մա վկայում է նախաուրարտական շրջանում տեղի բնակչության ռազմականացված լինելու մասին:


Ջրափիի դամբարանադաշտերի փրկարարական պեղումները, չնայած փոքր ծավալին, նոր նյութեր են տալիս Ախուրյանի ափամերձ տարածքներում վաղ երկաթի ժամանակաշրջանում բնակավայրերի տեղադրության ընդհանուրության, բնակավայր-դամբարանադաշտ հարաբերակցության, բնակչության խտության, տնտեսական բարձր մակարդակի, Հայաստանի համաժամանակյա այլ հուշարձանների հետ թաղման ձևերի, ծեսի, նյութական ու հոգևոր մշակույթի ընդհանրության ուսումնասիրության համար:




Չափագրություն 1



Չափագրություն 2




Չափագրություն 3




Չափագրություն 4




Չափագրություն 5




Չափագրություն 6




Չափագրություն 7




Չափագրություն 8




Չափագրություն 9




Չափագրություն 10











Չափագրություն 11




Չափագրություն 12




Չափագրություն 13




Աղյուսակ 1




Աղյուսակ 2




Աղյուսակ 3




Աղյուսակ 4




Աղյուսակ 5




1




2




3



4




5




6


Աղյուսակ 6




Աղյուսակ 7




Աղյուսակ 8




Աղյուսակ 9



Աղյուսակ 10



Աղյուսակ 11



Աղյուսակ 12

РАСКОПКИ НЕКРОПОЛЯ ДЖРАПИ
Хачатрян А.А., Еганян Л.Г., Петросян Л.А.
Фуртванглер А., Маурман Д.

Ключевые слова: *спасательные раскопки, кромлехи, погребения, материальная и духовная культура, ритуальный обряд.*

Археологическая разведка, произведенная совместной армяно-немецкой экспедицией в Джрапи, выявила, что памятник состоит из поселения, которое находится как на холме «Калачи», так и у его подножия, и некрополей, которые окружают поселение. Дислокация памятника Джрапи в прибрежной зоне реки Ахурян по своей организации поселения и некрополей имеет принципиальное сходство с древним Ширакаваном, который находится около 12 км севернее Джрапи. Археологическая разведка и раскопки некрополей показали, что в эпоху железа здесь было густонаселенное и экономически развитое поселение. Лучшим доказательством этого является большая плотность захоронений. В обоих некрополях расстояние между захоронениями не превышает двух метров, а многие кромлехи соприкасаются. Захоронения по конструкции в основном трех типов: первый -грунтовые захоронения, второй - в каменных ящиках и третий - в ящиках, сооруженных из обработанных каменных плит. На поверхности все три типа окружены кромлехами. В погребениях в основном захоронен один человек, в двух погребениях вместе захоронены мужчина и женщина, в одной гробнице обнаружены два захоронения, проведенные в разное время. Независимо от конструкции гробниц, захоронения производились в скрюченном виде: мужчины на правом, женщины на левом боку. Сопутствующие материалы, основной частью которых является керамика, были расположены в основном у ног или у головы скелетов. Только в двух случаях керамика была расположена на теле. Были также найдены орудия труда, украшения и оружие. Характерно, что во всех мужских погребениях найдены разные виды оружия: изготовленные из бронзы или железа кинжалы, наконечники стрел и пики копий. Это свидетельствует о военизированном характере местного населения.

Спасательные раскопки некрополей Джрапи выявили интересные материалы о принципах организации и дислокации прибрежных поселений реки Ахурян, а также общность соотношения поселений и некрополей в эпоху железа. Материалы сообщают новые сведения о густонаселенных пунктах побережья реки Ахурян и о высоком культурно-экономическом развитии региона. Формы и ритуалы захоронений, характер материальной и духовной культуры имеют много общего с данными из других памятников Ширака той же эпохи и предоставляют новые сведения для изучения истории и культуры древней Армении.

EXCAVATIONS OF JRAPI NECROPOLIS

*Khachatryan H.H., Eganyan L.G., Petrosyan L.A.
Furthwangler A., Mauerman D.*

Key words: *rescue excavations, cromlechs, burials, material and spiritual culture, rite.*

Archaeological exploration carried out by the Armenian-German joint expedition in Jrapi revealed that the monument consists of a settlement located on Kalachi Hill as well as at its foot and the necropolises that surround the settlement. By the organization of the settlement and the necropolises the location of Jrapi monument in the coastal zone of the Akhuryan river has a fundamental resemblance to ancient Shirakavan, about 12 kilometers north of Jrapi. Archaeological exploration and excavations of the necropolises showed that in the Iron Age there was a densely populated and economically developed settlement. The best proof of it is the high density of burials. In both necropolises, the distance between burials does not exceed two meters, and many cromlechs come in contact. Burials in the construction are mainly of three types: the first is soil graves, the second is in stone crates and the third is in crates constructed from processed stone slabs. On the surface, every type is surrounded by cromlechs. Mainly, one person was buried in the burials, a male and a female were buried together in two burials, and two burials made at different times were found in the same tomb. Regardless of the design of the tombs, burials were made in a cramped position: men on their right side, while women on their left side. Associated utilities were located mainly at the feet or at the head of the skeletons. Only in two cases ceramics were placed on the body. The main part of the accompanying material is ceramics. Tools, jewelry and weapons were also found. It is typical that in all the male burials different types of weapons were found: daggers made of bronze or iron, arrowheads and spearheads. That indicates the paramilitary nature of the local population.

The rescue excavations of Jrapi necropolises provided interesting material on the principles of organization and deployment of coastal settlements at the Akhuryan river, the generality of the ratio of settlements and necropolises in the Iron Age. The materials provide new information on the densely populated areas at the coast of the Akhuryan River, and on their high cultural and economic development. The forms and rituals of burials, the nature of material and spiritual culture have much in common with those of other monuments of the same era in Shirak and provide new information concerning the history and culture of ancient Armenia.

References

1. Avetisyan H.G., Avetisyan P.S. Araratyan dashti mshakuyt m.t.a. XI-VI darerum. (Yerevani petakan hamalsarani hrat.) Yerevan, 2006 (**In Armenian**).
2. Devedjyan S.H. Hnagitakan hetazotutynner Tashir-Dzoragetum. (HH GAA, «Nairi» hrat.) Yerevan, 2001(**In Armenian**).
3. Yerevan qagaki patmutyan tangarani hnagitakan ireri katalog. III, (Yerevani patmutyan tangaran hrat.) Yerevan, 1967 (**In Armenian**).

4. Yerevan qagaki patmutyan tangarani hnagitakan ireri katalog. III, (Erevani patmutyan tangaran hrat.) Yerevan, 1972 **(In Armenian)**.
5. **Esayan S.A. Kalantaryan A.A.** Oshakan I, Osnovnie rezultati raskopok 1971-1983gg. «Izd. AN Arm.SSR.» Yerevan, 1988 **(In Russian)**.
6. **Khatshatryan T.S.** Artiksi nekropol. Katalog. Izd. Erevanskogo universiteta, Yerevan, 1979 **(In Russian)**.
7. **Kuftin B.A.** Arkheologitsheskie raskopki v Trialeti I, (Izd. AN Gruz. SSR) Tbilisi, 1941 **(In Russian)**.
8. **Lalayan E.** Dambanneri pegumner Khorhrdayin Hayastanum. (Pethrat), Yerevan, 1931 **(In Armenian)**.
9. **Menabde M., Danlianidze C.** Mogilnik Trialeti. (Izd., «Mecniereba») Tbilisi. 1968 **(In Russian)**.
10. **Martirosyan A.A.** Armeniya w epokhu bronzi i rannego jeleza. Izd. AN Arm.SSR, Yerevan, 1964 **(In Russian)**.
11. **Petrosyan L.A.** Pegumner Qarashambum (2010t.), «Lraber hasarakakan gitutunneri,» 2014, 2. Yerevan **(In Armenian)**.
12. **Petrosyan L.A.** Qutshak-1 dambaranadashti mshakujt (m.t.a. IX-Vdd.) «Lraber hasarak- akan gitutunneri» 2016, 3, Yerevan **(In Armenian)**.
13. **Petrosyan L.A.** Raskopki pamyatnikow Ketu i Voskeaska (III-I tis. do.n, e.), Izd. AN Arm.SSR, Yerevan, 1989 **(In Russian)**.
14. **Torosyan R.M., Khnkikyan O.S. Petrosyan L.A.** Hin Shirakavan. (Gitutyn hrat.) Yerevan, 2002 **(In Armenian)**.

Ընդունվել է՝ 13.10.2019

Գրախոսվել է՝ 28.10.2019

Հանձնվել է տպ.՝ 21.11.2019

Տեղեկություններ հեղինակների մասին

Համազասպ ԽԱՉԱՏՐՅԱՆ՝ ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնի ավագ գիտաշխատող, էլ. փոստ՝ smuseum@web.am

Լարիսա ԵԳԱՆՅԱՆ՝ պատմ. գիտ. թեկնածու, ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնի առաջատար գիտաշխատող, էլ. փոստ՝ larisayeganyan@gmail.com

Լևոն ՂԵՏԻՈՍՅԱՆ՝ պատմ. գիտ. թեկնածու, ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի առաջատար գիտաշխատող, էլ. փոստ՝ galstyan-1966@mail.ru

Անդրեաս ՖՈՒՐՏՎԱՆԳԼԵՐ՝ Հալլեի Մարտին Լյութեր համալսարանի պրոֆեսոր, էլ. փոստ՝ andreas.furtwaengler@altertum.uni-halle.de

Դորոթեա ՄԱՈՒԵՐՄԱՆ՝ Հալլեի Մարտին Լյութեր համալսարանի ասիստենտ, էլ. փոստ՝ dorothea.mauermann@web

ՀՏԴ՝ 902.30

ՏԻՐԱՇԵՆԻ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԼԱՆԴՇԱՑՏԸ.

ՆԱԽՆԱԿԱՆ ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐ

Քենիկ Վարդանյան

ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն

Լևոն Մկրտչյան

«Մեծամոր» պատմահնագիտական արգելոց-թանգարան

Բանալի բառեր՝ *Ախուրյանի ավազան, մշակութային լանդշաֆտ, աշտարակատիպ կառույցներ, կոմպլեքսային հասարակություն, ուշ բրոնզ-վաղ երկաթի դար, թաղման ծես:*

Սույն աշխատանքով քննության է առնվել Ախուրյանի ավազանի միջին շրջանում տեղորոշվող Տիրաշեն հնավայրի մշակութային լանդշաֆտը: Այս հետազոտությունը միտված է առանձին ուսումնասիրելու Շիրակի բրոնզ-երկաթիդարի ժամանակաշրջանի հասարակությունների պատմամշակութային լանդշաֆտը ձեւավորող բաղադրատարրերը: Ուսումնասիրության համար դաշտային հետախուզության տվյալներին զուգորդվել են օդային լուսանկարահանումները, որոնք ավելի լայն հնարավորություն են ընձեռել արձանագրելու տարածքի մշակութազման փուլերն ու փոփոխությունները:

Նախաբան. *Դիրքը և ուսումնասիրության պատմությունը*

Ախուրյանի ձախ ափին՝ Մարմաշեն գյուղից 2-3 կմ հարավ՝ Գյումրի քաղաքից 10 կմ արևմուտք, գտնվում է Տիրաշեն հնավայրը¹: Քննվող համալիրը բաղկացած է մի քանի հուշարձաններից, որոնք ժամանակագրվում են վաղ բրոնզից մինչև զարգացած միջնադար:

Տիրաշենում հնագիտական առաջին պեղումները կատարել է հնագետ Ս. Հարությունյանը: Սկսած 1970-ական թվականներից՝ այստեղ կատարված լայնածավալ պեղումների արդյունքում բացվել են տարածամանակյա հնագիտական շերտեր՝ ուշ բրոնզի, վաղ և ուշ երկաթի դարեր, հելլենիստական, միջ-

¹ Շիրակի մարզի Մարմաշեն գյուղի պատմության և մշակույթի հուշարձանների ցանկ, պետհամարանիշ՝ 8.78.1-1.2.2:

նադար և այլն²: Առանձնահատուկ հիշատակելի են Տիրաշենի միջնադարյան բերդն ու բնակավայրը, երկու եկեղեցիներն ու դամբանադաշտը:

Ամրոցի հրվանդանից արևմուտք և հարավ-արևմուտք նկատելի են վաղ շրջանի կացարանների հետքեր, ինչպես նաև ՈՒԲ և ՎԵ-ՈՒԵ դարաշրջանին բնորոշ վերգետնյա առատ խեցեղեն: Դեպի լիճ (հայտնի է *Ճլե լիճ կամ գյուլ անվամբ*) իջնող ճանապարհի ձախ կողմին՝ տարածքի եզրային հատվածում, տեսանելի են մի պեղված շինության հետքեր, որտեղ նկատվում են սյան խարխիսներ և ՈՒԵ շրջանին բնորոշ առատ խեցեղեն:

Լճից սկիզբ առնող վտակից արևմուտք նկատելի են եկեղեցու մնացորդներ: Եկեղեցու շրջակայքն առատ է զարգացած միջնադարին բնորոշ տապանաքարերով: Լճի արևելյան ափին՝ հրվանդանի ստորոտին, պեղվել է ևս մի եկեղեցի, որը հարուստ է արձանագրություններով³:

Ս. Հարությունյանը, նկարագրելով Տիրաշենի դամբանադաշտերը, նշում է, որ արևելյան դամբանադաշտում բացվել է քարարկղային տիպի դամբան, որտեղ դրված է մարդու կիզված գլուխ, իսկ օրորոցաձև սև տուֆի վրա թաղվել է ձիու գլուխ⁴: Մի այլ դեպքում հիշատակվում է նաև միջին բրոնզիդարյան դամբանի գոյության մասին⁵: Դատելով ՇԵԹ-ում Տիրաշենից պահվող որոշ առարկաների հրատարակությունից՝ այստեղ գործ ունենք բրոնզ-երկաթիդարյան ժամանակաշրջանի ընդարձակ դամբանադաշտի հետ⁶: Հրատարակված այլ

² Եյութերը հրատարակված չեն, պահվում են Շիրակի երկրագիտական թանգարանում (ՇԵԹ): Հնագետներ Լ. Եգանյանի և Հ. Խաչատրյանի կողմից Տիրաշենում տարբեր տարիներին կատարվել են փրկարարական և նյութերի հավաքչական աշխատանքներ:

³ **Մանուչարյան Ա.**, Խաչի Ձորի վիմագրերը, Շիրակի պատմամշակութային ժառանգությունը՝ միջազգային գիտական նստաշրջանի նյութեր, Գյումրի, հոկտեմբերի 22-24, Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն (Ս. Հայրապետյան, գլխ. խմբ.), Եր., «Գիտություն» հրատ., 2010, էջ 54-59, Դիվան հայ վիմագրության, Շիրակի մարզ, պր. 10 (Պրակը հրատարակության պատրաստեցին՝ պատմ. գիտ. թեկնածու Գ. Գ. Սարգսյան, պատմ. գիտ. թեկնածու Ա. Է. Հարությունյան, գիտաշխատող Կ. Տ. Ասատրյան), ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ, Եր., «Գիտություն» հրատ., 2017, էջ 107-108:

⁴ **Հարությունյան Ս.**, Տիրաշենի պեղածո ծիսա-արարողական նյութերը (ըստ բնակատեղիի և դամբարանադաշտի 1986-1987թթ. գտածոների) // Հանրապետական գիտական նստաշրջան, 1986-1988 թթ. ազգաբանական և բանագիտական դաշտային հետազոտությունների հիմնական արդյունքները: Ձեկուցումների հիմնադրույթներ, հունիս 5-7, 1990, Երևան, էջ 39:

⁵ **Հարությունյան Ս.**, Մարմաշենի պեղումները, Հայկական ՍՍՀ-ում 1975-1976 թթ. դաշտային հնագիտական աշխատանքների արդյունքներին նվիրված զեկուցումների թեզիսներ, ՀՍՍՀ ԳԱ, Երևան, 1977, էջ 40-41:

⁶ **Աղեկյան Հ.**, Շիրակի հնագիտական հուշարձաններից հայտնաբերված մի խումբ գտածոների շուրջ // «Շիրակի պատմամշակութային ժառանգությունը» միջազգային գիտական նստաշրջանի նյութեր, Գյումրի, հոկտեմբերի 22-24, Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն (Ս. Հայրապետյան, գլխ. խմբ.), Երևան, «Գիտություն» հրատ., 2010, էջ 144-148:

տեղեկություններ Տիրաշեն հնավայրի վերաբերյալ մեզ հայտնի չեն:

Հետախուզական աշխատանքներ

Քննվող տարածքներում, հատկապես միջնադարյան բնակավայրից արևելք, հեղինակների կողմից տարբեր ժամանակներում կատարված բազմաթիվ հետախուզական աշխատանքների ընթացքում հայտնաբերվել, քարտեզագրվել և ուսումնասիրվել են հուշարձաններ, որոնք ներկայացված չեն Հայաստանի Հանրապետության պատմության ու մշակույթի անշարժ հուշարձանների ցանկում: Սրանց մեջ առանձնակի կարևորություն են ներկայացնում ճանապարհների եզրերին, առուների մոտ տեղադրված անկյունային հատվածներում միջանցիկ անցքերով քարերը, տուֆ քարի մեջ փորված ավազանները (ուղղանկյունաձև և շրջանաձև), ինչպես նաև զոհասեղան անվանված հարթակը և մեզալիթյան այն համալիրը, որի մասին կխոսվի ստորև:

Գյումրի քաղաքի Շերամ թաղամասից դեպի Տիրաշեն տանող հողային ճանապարհի ձախ կողմում՝ «Զինվորական լճից» հյուսիս տեղորոշվող երկարավուն բլրակի վրա և շուրջօրոքը, 2018 թվականին նկատվել էին հենապատկրովելիներով շրջապատված դամբաններ և հիմքում ուղղանկյուն ու քառակուսի կառույցների մնացորդներ: Ըստ երևույթին, Ս. Հարությունյանի հիշատակած «արևելյան դամբարանադաշտը» այս և սրան հարող հատվածների դամբանների կուտակումն է:

Նշված երկարավուն բլրի արևելյան ծայրին նկատելի է մի կառույց, որի հյուսիսային ու հարավային եզրերից քարաթափվածքով դուրս են գալիս «բեղեր» և եզրագծում այն բլրի ստորոտում՝ կազմելով փակ շրջան (նկ. 1): Կենտրոնական կառույցը հիմքում քառանկյուն է (երկ. և լայն. 3.40 մ), կառուցված է տարածքում հարուստ սև տուֆ քարից ու բազալտից: Շարը հորիզոնական է (պատերի տեսանելի պահպանված բարձրությունը՝ 50-60 սմ): Նշված կառույցից արևելք անցնում է ոչ խորը ձորակ, որի երկու ափերին նկատելի են 3-7 մ տրամագծով հենապատկրովելիներով շրջագծված դամբաններ՝ ծածկված 3-4 սալերով: Նշված կառույցից արևմուտք՝ հողային ճանապարհի ձախ կողմում, նկատելի են կենտրոնական կառույցի շարվածքը կրկնող կիսավեր 3 շինությունների հիմքեր, որոնց ամբողջական կառուցվածքը խաթարվածության պատճառով չի ուրվագծվում:

Երկարավուն բլրի հարավարևմտյան կողմում տեսանելի է երկխցանի մի կառույց (կառույց 02) (նկ. 2): Այստեղ հստակորեն նկատվում է, որ գազաթամերձ հատվածում առկա տուֆի շերտը մշակվել և վերածվել է հարթակի: Այս հարթակի հարավարևմտյան եզրում էլ գտնվում է համալիրի մյուս կառույցը, որը, ինչպես նշվեց, բաղկացած է երկու «խցից»: Արևմտյանն ունի հյուսիս-հարավ կողմնորոշում: Պատերի շարը, ինչպես և առաջին կառույցում, հորիզոնա-

կան է, կառուցված տեղական սև տուֆից. պատերի արտաքին կողմը հարթեցված է: Խցի հյուսիսարևելյան և հարավարևմտյան անկյուններում ուղղահայաց դրված են մեծ քարաբեկորներ, որոնց և գալիս միանում են կողային պատերի շարերը: Խուցն ունի մուտք, որը բացված է հյուսիսարևելյան կողմում: Կառույցի ներքին չափերն են՝ երկարությունը՝ հյուսիս-հարավ՝ 2.60 մ, արևելք-արևմուտք՝ 1.80 մ, խորությունը՝ 1.50 մ:

Երկրորդ կառույցի արևելյան կողմում նկատելի է ուղղանկյուն «խուց» (երկ.՝ 2, լայն.՝ 1.50, խոր.՝ 2 մ), որի մուտքը հյուսիսային կողմից է: Շարվածքը նույնն է, ինչ նախորդ կառույցների դեպքում: Նշված երկու «խցերն» իրար են միանում միջանցք-պատով, որը ուրվագծվում է, սակայն տեսանելի չէ՝ մեծ քանակությամբ թափված քարաբեկորների պատճառով: Այս կառույցից արևմուտք անցնում է փոքր ձորակ, որի ձախ կողմում՝ բլրի գագաթամերձ հատվածում, նկատելի է նմանատիպ ևս մեկ կառույց, որը, սակայն, խաթարված է (նկ. 3-5):

Այն, որ քննվող երկու կառույցները համաժամանակյա են, վկայում է նախ՝ դրանց շինարարական տեխնիկան (հորիզոնական շար, շարքի քարերի միաչափություն և այլն), ապա՝ միջավայրը: Այս կառույցը աղերսվում է Հայաստանի այլ տարածքներում լավ վկայված նմանատիպ կառույցների հետ, որոնք մասնագիտական գրականության մեջ ընդունված են կոչել *աշտարակներ* կամ ընդհանրացված՝ *աշտարակատիպ շինություններ* անունով:

Աշտարակատիպ շինությունները արդեն մի քանի տարի է՝ ուսումնասիրվում են որպես առանձին հնագիտական օբյեկտներ⁷: Արդեն հավաստանշվել են այդ կառույցների մոտ 200 օրինակ: Եղած տվյալներով որոշակիորեն կարելի է հասկանալ այս կառույցների դասակարգման ու շինարարական տեխնիկային վերաբերող հարցեր: Այսպես՝ Տիրաշենի աշտարակատիպ կառույցը հիշեցնում է Կոշում և Ուջանում հայտնաբերված կառույցները⁸, որոնք սովորաբար տեղակայված են ժայռոտ բլրակների, բարձրությունների լանջերի կամ ստորոտների կտրած դարավանդներին: Սրանց մի պատը (հիմնականում հյուսիսային) ավելի ցածր է՝ դարավանդին կիպ, իսկ մնացածներն ստանում են տեսանելի բարձրություն: Կարծես թե օրինաչափություն է նման կառույցների առկայությունը բնական կամ արհեստական քարայրերի կամ խորշերի հետ: Սրանք ունենում են չափերով տարբերվող երկու սրահ, որոնք իրար միանում

⁷ Մկրտչյան Լ., Հայաստանի Հանրապետության տարածքի աշտարակատիպ հուշարձանների հաշվառումը և բնութագիրը, «Հայագիտության հարցեր» 2018 թ. N 3, էջ 108-119: Հայաստանի աշտարակատիպ շինությունների ուսումնասիրության պատմությունից // Լրաբեր հասարակական գիտությունների, N 3, 2018 թ., էջ 357-365:

⁸ Ուսումնասիրությունը՝ Լ. Մկրտչյանի: Նյութերը հրատարակված չեն:

են թունելատիպ նեղ միջանցքերով: Տիրաշենի քննվող համալիրը իր բոլոր չափորոշիչներով համընկնում է արագածյան աշտարակատիպ կառույցներին: Հետաքրքիր է, որ Արագածի հարավային լանջերի այս կառույցների շուրջը տարածվում են մ.թ.ա. II-I հզ. դամբանադաշտեր: Ինչը նաև երևում է Ս. Հարությունյանի պեղած «արևելյան դամբարանադաշտի» հրատարակված նյութերում, որտեղ այս հատվածի դամբանները նույնպես պիտի թվագրվեն մ.թ.ա. II-I հազարամյակով: Մակայն թվագրության հարցերը կօգնի պարզելու տարածքում նախատեսվող հնագիտական պեղումները:

Եզրահանգում. Ախուրյանի գետի միջին հոսանքում տեղորոշվող Տիրաշեն հնավայրում հետախուզական աշխատանքների ընթացքում հայտնաբերվեցին աշտարակատիպ շինություններ, որոնք Շիրակի մարզում փաստվում են առաջին անգամ: Համալիրը տեղադրված է Տիրաշենի միջնադարյան ամրոցից արևելք՝ «Զինվորական լճից» հյուսիս: Այն բաղկացած է արևելյան և հարավարևմտյան կառույցներից (նկ. 1-2): Շինություններից պահպանվել են 50-60 սմ բարձրության պատեր: Շարը հորիզոնական է (նկ. 3-5): Կառույցների համատեքստում առկա են մեծ քանակությամբ մ.թ.ա. II-I հազարամյակներին վերաբերող հենապատ-կրոմլեխով եզրագծված դամբաններ: Քննվող կառույցները զուգահեռներ ունեն Արագած լեռան հարավային լանջերում:



Քարտեզ 1 Տիրաշեն հնավայրը (Google Earth Pro)

Նկարներ



Նկար 1 Տիրաշենի համալիրի արևելյան աշտարակատիպ կառույցը (©Հեղինակներ)



Նկար 2 Տիրաշենի համալիրի հարավարևմտյան հատվածի աշտարակատիպ կառույցը (©Հեղինակներ)



Նկ. 3 Արևելյան կառույցի մանրամասն



Նկ. 4 Հարավարևմտյան կառույցի I խուցը



Նկ. 5 Կոճ-16 կառույցը



Նկ. 6 Կոճ-15 կառույցի մուտքը

КУЛЬТУРНЫЙ ЛАНДШАФТ ТИРАШЕНА: ПРЕДВАРИТЕЛЬНОЕ НАБЛЮДЕНИЕ

Варданян Б.В., Мкртчян Л.А.

Ключевые слова: *Бассейн реки Ахурян, культурный ландшафт, башнеобразные сооружения, комплексное общество, эпоха бронзы и железа, погребальный обряд.*

В среднем течении реки Ахурян находится памятник Тирашен, где авторами были обнаружены первые в своем роде в Ширакской области башнеобразные сооружения. Комплекс находится к востоку от средневековой крепости Тирашен, в центре «восточного некрополя». Комплекс состоял из множества сооружений, из которых до нас дошли лишь два - восточное и юго-западное (высота стен достигает 50-60 см). Кладка стен горизонтальная. Рядом выявлены множественные погребения с каменными кольцевыми обкладками. Изучаемые башнеобразные сооружения имеют свои параллели на южном склоне горы Арагац.

THE CULTURAL LANDSCAPE OF TIRASHEN:
PRELIMINARY STUDY

Vardanyan B.V., Mkrtchyan L.A.

Key words: *Akhurian river basin, tower-shaped buildings, cultural landscape, complex society, Late Bronze and Early Iron Age, Burial practice.*

In the middle course of the river Akhuryan there is a monument to Tirashen, where the authors found the first of its kind in the Shirak region tower-shaped buildings. The complex is located to the east of the medieval fortress of Tirashen, in the center of the "eastern necropolis". The complex consists of multiple constructions; of which only two-eastern and south-western ones have reached us (the height of the walls reaches up to 50-60 cm). The walls are laid horizontally. Next to it there are multiple burials with stone rings. The studied tower-like constructions have their parallels in the southern slope of Aragats Mountain.

R e f e r e n c e s

1. **Aghekyan H.**, Shiraki hnagitakan hushardzannerits' haytnabervats mi khumb gtatsoneri shurj//«Shiraki patmamshakut'ayin zharrangut'yuny» mijazgayin gitakan nstashrjani nyut'er, Gyumri, hoktemberi 22-24, Shiraki hayagitakan hetazotut'yunneri kentron, Yerevan, «Gitut'yun» hrat., 2010, ej 144-148(**in Armenian**).
2. **Divan hay vimagrut'yan, Shiraki marz**, Pr. 10 HH GAA Hnagitut'yan yev azgagrut'yan institut, Yerevan, «Gitut'yun» hrat., 2017(**in Armenian**).
3. **Khach'atryan H.**, Akhuryani avazani mijnadaryan amrashinakan karruyts'neri // Shiraki hayagitakan hetazotut'yunneri kentron. Gitakan ashkhatut'yunner, 2017, № 20, ej 209(**in Armenian**).
4. **Harut'yunyan S.**, Marmasheni peghumneri, Haykakan SSH-um 1975-1976 tt. dashtayin hnagitakan ashkhatank'neri ardyunk'nern nvirvats zekuts'umneri t'ezisner, HSSH GA, Yerevan, 1977, ej 40-41(**in Armenian**).
5. **Harut'unyan S.**, Tirasheni peghatso tsisa-araroghakan nyut'ery (yst bnakateghii yev dambaranadashti 1986-1987t't'. gtatsoneri) // Hanrapetakan gitakan nstashrjan, 1986-1988 t't'. azgabanakan yev banagitakan dashtayin hetazotut'yunneri himnakan ardyunk'neri: Zekuts'umneri himnadrut'ner, 1990, Yerevan, ej 38(**in Armenian**).
6. **Manuch'aryan A.**, Khach'i Dzori vimagrery, Shiraki patmamshakut'ayin zharrangut'yuny // mijazgayin gitakan nstashrjani nyut'er, Gyumri, Shiraki hayagitakan hetazotut'yunneri kentron, Yerevan, «Gitut'yun» hrat., 2010, ej 54-59(**in Armenian**).

7. **Mkrтч'yan L.**, Hayastani Hanrapetut'yan taratsk'i ashtarakatip hushardzanneri hashvarrumy yev bnut'agiry, «Hayagitut'yan harts'er» 2018 t'. N 3, ej 108-119. Hayastani ashtarakatip shinut'yunneri usumnasirut'yan patmut'yunits' // Lraber hasarakakan gitut'yunneri N 3, 2018 t'. ej 357-365(**in Armenian**).

Ընդունվել է՝ 03.10.2019

Գրախոսվել է՝ 23.10.2019

Հանձնվել է տպ.՝ 11.11.2019

Տեղեկություններ հեղինակների մասին

Բենիկ ՎԱՐԴԱՆՅԱՆ՝ ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական
հետազոտությունների կենտրոնի զիտաշխատող, հայցորդ,
ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ
Էլ. փոստ՝ vbenik@yahoo.com

Լևոն ՄԿՐՏՉՅԱՆ՝ «Մեծամոր» պատմահնագիտական
արգելոց-թանգարանի հայցորդ
Էլ. փոստ՝ levoncultur@gmail.com

ԲԱՆՍԻՐՈՒԹՅՈՒՆ
ФИЛОЛОГИЯ
PHILOLOGY

ՀՏԴ՝ 811.19

ԱՆԱՆԻԱ ՇԻՐԱԿԱՑԻՆ ԵՎ ՆՐԱ «ՏԻԵԶԵՐԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ
ԵՎ ՏՈՄԱՐ» ԱՇԽԱՏՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԲԱՐԲԱՌԸ

Հայկանուշ Հովհաննիսյան

ՀՀ ԳԱԱ լեզվի ինստիտուտ

Բանալի բառեր՝ *Անանիա Շիրակացի, Համարող, տիեզերագիտություն, մոլորակ, արև, աստղ, երկնային զարդեր, տոմար, կենդանակերպ, Համարաբառ.*

2004 թվից անընդմեջ պարբերաբար պատիվ ենք ունեցել մասնակցելու Գյումրիում պարբերաբար գումարվող Շիրակի պատմամշակութային ժառանգություն և արդիականություն» հանրապետական, ապա և միջազգային գիտաժողովներին և ունկընդդեմ բազմաթիվ հրաշալի, բովանդակալից գիտական զեկուցումներ: Բայց ցավոք սրտի, այդ ընթացքում քիչ է հնչել Շիրակի մեծագույն զավակներից մեկի, յոթից ութերորդ դարի սկզբի մեծ գիտնական, «համարող»՝ մաթեմատիկոս, աստղագետ, բնագետ և տոմարագետ Անանիա Շիրակացու՝ Շիրակունու վերաբերյալ զեկուցում:

Եվ քանի որ մեր կողմից է կազմվել նրա «Տիեզերագիտություն և տոմար» աշխատության համարաբառը, այդ պակասը լրացնելու նպատակով որոշեցինք անդրադառնալ, հաղորդակցվել այդ Մեծությանը, ապա և ներկայացնել մեր կատարած ուսումնասիրության արդյունքը և աշխատանքը:

Նախաբան. Անվերապահորեն հաստատված է այն իրողությունը, որ Շիրակ աշխարհը, մասնավորապես Գյումրին, արվեստների և արհեստների երկիր է: Բայց ի լրումն այդ ամենի, պետք է ավելացնել, որ Շիրակը նաև գիտության, պատմագրության երկիր է, որը նոր շրջանի մեծությունների հետ մեկտեղ տվել է Անանիա Շիրակացու պես բնական գիտությունների մեծ գիտնականի, Շապուհ Բագրատունու, Սամվել և Մխիթար Անեցիների նման մատենագիրների: Ի դեպ, Շապուհ Բագրատունու վերաբերյալ ուսումնասիրությամբ էլ 2004

թվից սկսվել է մեր մասնակցությունը «Շիրակի պատմամշակութային ժառանգություն» գիրաժողովին, իսկ Սամվել Անեցու վերաբերյալ տարբեր ժամանակներում ներկայացվել է երկու ուսումնասիրություն:

Շիրակացու կյանքի մասին տեղեկություններ ենք ստանում իր իսկ ձեռքով գրված ինքնակենսագրականից, ինչպես նաև թվաբանական խնդիրների տվյալներից, որոնցում հաճախ է հիշատակվում Կամսարական իշխանական տան ներկայացուցիչների անուններ, որից կարելի է եզրակացնել, որ նա կապեր է ունեցել այդ նախարարական տան հետ: Կենսագրության մեջ հաղորդված տվյալներից կարելի է եզրակացնել, որ այն գրվել է ավելի ուշ տարիքում, երբ Մեծ Համարողն արդեն հասցրել էր դառնանալ իր և իր մասնագիտության հանդեպ եղած մարդկանց ապերախտությունից և անտարբերությունից:

Նրա մասին որոշակի տեղեկություններ են հաղորդում նաև Գրիգոր Մագիստրոսն ու Սամվել Անեցին:

Անանիա Շիրակացու՝ Շիրակունու ծնունդը համարվում է յոթերորդ դարի առաջին տասնամյակը, մոտավորապես 610 թվականը: Ինչպես արդեն անունն է հուշում, Անանիա Հովհաննեսի որդի Շիրակացին ծնվել է պատմական Շիրակ աշխարհի այն ժամանակների կենտրոն Շիրակավանում՝ Կամսարական իշխանական նստավայրում, որից էլ հետագայում ստացել է իր մականունը՝ Շիրակունի: Հոր անվան հիշատակումը կատարել է տոմարագիտության մասին իր աշխատանքի մեջ: «Քանի որ շատերը չեն, որ ծանոթ են հաշիվների հետ, մանավանդ շինականները ...այդ պատճառով ես՝ Անանիա, որդի Հովհաննեսի Շիրակունի, կազմեցի հինգ հարյուր երեսուն տարիների բոլորակը...»¹: Պատմաբան Աշոտ Աբրահամյանը, որը կազմել է նրա «Տիեզերագիտություն և տոմար» ընդհանուր խորագրով քննական գրաբար բնագիրը Հ.Աճառյանի խմբագրությամբ, հենվելով Շիրակացու՝ իր ուսուցչի մասին հայտնած մի տեղեկության վրա, նրա ծննդյան մոտավոր տարեթիվը համարում է 610-ական թվականները:

Սակայն Սամվել Անեցու հաղորդած՝ Շիրակացուն վերաբերող երկու թվականներից կարելի է եզրակացնել, որ նրա ծնունդը վերը նշված ժամանակից ավելի ուշ է: Թվերից մեկը՝ ՈԿԹ./669/ այն է, երբ Անաստաս Հայոց կաթողիկոսը նրան առաջարկում է կազմել նոր տոմար, իսկ երկրորդը՝ ՉԺԲ./712/, երբ պատմում է նրա աշակերտների մասին: Այս երկու թվերի միջև 43 տարվա միջոց է: Եթե դրան էլ գումարենք նրա հասունացման, ուսման նպատակով ճանապարհորդության, արտերկրում ուսումնառության, ապա և հայրենիք վերա-

¹ Անանիա Շիրակացի, Եր., 1979թ., էջ 173/

դառնալուց հետո մեծ համբավ ձեռք բերելու նրա կյանքի մի քանի տասնամյակ, ապա վերջին՝ ՉԺԲ. տարեթվի հիշատակման ժամանակ նա առնվազն կլիներ 75-80 տարեկան: Եվ եթե 712-ից հանենք այս 75-80 տարիները, կստացվի 637 կամ 632 թվականներ: Քանի որ մեր ուսումնասիրության նյութը մեծահամբավ Համարողն է, մենք էլ հետևելով նրա մեթոդաբանությանը, կատարել ենք նման վերլուծություն և եկել այսպիսի եզրահանգման, որ նա ծնված պետք է լինի մոտավորապես 630-ական թվականներին: Ապա թե ոչ, վերջին՝ ՉԺԲ թվագրության ժամանակ, երբ Շիրակացիի ապրում ու դեռ շարունակում էր վարդապետական՝ ուսուցչական աշխատանքը, նա, ըստ գիտնականի վերը հայտնած կարծիքի, կլիներ մոտ 100 տարեկան: Եվ ՉԺԲ /712/ թվականն էլ նրա կյանքի վերջնաժամկետը չէ:

Անանիա Շիրակացիի սկզբնական կրթությունն ստացել է իր հայրենի Շիրակավան գյուղում, ապա մեկնել Բյուզանդիա իր նախասիրած բնական գիտությունների, մասնավորապես համարողական՝ հաշվողական արվեստի բնագավառում ուսում ստանալու և հմտանալու նպատակով: Այս հանգամանքը, որ նա հնարավորություն է ունեցել ուսանելու, կրթություն ստանալու, թեկուզ տեղական մակարդակով, ապա և արտերկիր՝ Բյուզանդիա մեկնելու, ուսումը շարունակելու համար, խոսում է այն մասին, որ սոցիալական առումով նա առնվազն ազատ դասին է պատկանելիս եղել, որ կարողացել է Հայաստան երկրից անարգել դուրս գալ, ինչպես նաև իր կյանքի և ուսման հարցերը կարգավորել: Մի հանգամանք ևս, սա ցույց է տալիս նաև, որ նա բավականին հասուն երիտասարդ է եղել ուսման մեկնելիս և ինքնուրույն է մեկնել, նրան չեն տարել, ինչպես Ղազար Փարպեցուն, որը տարիքով ավելի փոքր է եղել Հռոմ տարվելիս. «Տարեալ զիս ըստ վարդապետաց իմոց հրամանի ի Հռոմս՝ ժամանակեցի անդ ամս...» գրում է Փարպեցին²:

Ճանապարհին հանդիպելով Քրիստոսատուր անունով մի վարդապետի, նրա մոտ վեց ամիս ուսանելուց հետո, տեսնելով որ նա չի բավարարում իր հետաքրքրություններն ու չի հագեցնում գիտության հանդեպ ծարավը, Շիրակացիի մեկնում է Կոստանդնուպոլիս, բայց բանիմաց մարդկանց խորհրդով ճանապարհը շարունակում է դեպի Տրապիզոն՝ մեծահամբավ գիտնական Տյուքիկոսի մոտ ուսումը խորացնելու համար: Տյուքիկոսը ծանոթանալով նրա ուշիմությանն ու բանիմացությանը, գիտության հանդեպ ձգտմանը, նրան որդու պես է ընդունում և հոգ տանում նրա հանդեպ: Տյուքիկոսի մոտ ուսանելու էին գալիս տարբեր տեղերից, իշխանական ընտանիքների զավակներ, իսկ Անա-

² Ղազարայ Փարպեցույ «Պատմութիւն Հայոց» և «Թուղթ առ Վահան Մամիկոնեան» Տիդիս, 1904. էջ 187:

նիան միակն էր իր ոչ իշխանական ծագմամբ, բայց մեծ իմացությամբ: Նա ութ տարի մեծ ջանադրությամբ հետևում է իր մեծանուն ուսուցչի տված ուսմանը և խորանում գիտության մեջ, հատկապես համարողական արվեստում, քանի որ Շիրակացին մաթեմատիկան՝ համարողական արվեստը համարել է բոլոր գիտությունների մայրը: Ահա թե ինչպես է բնութագրում նա թվի արվեստը. «...յոժ կարօտեալ արուեստիս համարողական, խորհեցայ թէ ոչինչ համարի բան իմաստութեան առանց թուոյ, կարծելով զնա մայր ամենայն իմաստից»³:

Նա այնքան է հմտանում և առաջադիմում ուսման մեջ՝ վայելելով իր ուսուցչի սերն ու հարգանքը, որ բարձր իշխանական ընտանիքներին պատկանող նրա դասընկերները նախանձով են լցվում նրա հանդեպ:

Անանիա Շիրակացին Տյուփիկոսի մոտ ութ տարի ուսում ստանալուց հետո, հարուստ գիտելիքներով վերադառնում է հայրենիք՝ իր գիտելիքները հայրենիքին ծառայեցնելու ոգևորությամբ: Բայց ինչպես հաճախ է պատահում /Այդ մասին նաև Խորենացին է իր «Ողբում» ցավով նշել:/, նրա խորը գիտելիքները հայրենիքում մեծ ոգևորությամբ չեն ընդունվում և չեն գնահատվում: Ընդհակառակը, իր աշակերտներից ոմանք, դեռ կարգին ուսում չստացած, բայց իրենց ամենագետ կարծելով, թերուս հեռանում են նրանից, ինքնուրույն գործելու և նույնիսկ զրպարտալից հերյուրանքներ են տարածում նրա վերաբերյալ: Նա այդ մասին խորը ցավով է ասում: «Եւ ես տրուպս ի Հայաստանեայց ուսայ ի նմանէ /Տյուփիկոսից. Հ.Հ./ զհզօր արուեստս զայս, որ թագաւորաց է ցանկալի, և բերի յաշխարհն մեր, առանց ուրուք լինելով ձեռնտու, միայն ջանիւ օգնականութեամբն Աստուծոյ և աղօթիք Ս.Լուսաւորչին. թէպէտ և ոչ ոք եղև շնորհակալ իմոյ աշխատութեանս ... զի իբրև եկի ի Հայս, բազումք էին առ իս յուսումն և սուղ ինչ խելամտեալ՝ ոչ մնացին կատարման արուեստիս, թողին զիս և մեկնեցան, և սկսան ուսուցանել՝ զոր ոչն գիտէին, և ոչ էին հասու: Կեղծաւորք և սնափառք, ցուցանել կերպարանս գիտութեան և կոչիլ ի մարդկանէ ռաբբի: Եւ ասեն ի վերայ իմ պարսաւանս, որք յինքենէն յերիւբեալք...»⁴:

Թեև ըստ 12-րդ դարի մատենագիր Սամվել Անեցու վկայության, հայոց Անաստաս կաթողիկոսը հանձնարարում է Շիրակացուն՝ կազմել նոր տոմար, որն համապատասխաներ ուրիշ ազգերի տոմարին, տոմարական բարդություններից խուսափելու համար, և նա ամենայն ջանադրությամբ կատարում է հանձնարարությունը, բայց Հայրապետի մահից հետո անտեսվում է նոր տոմարը՝ Շիրակացու մեծաջան աշխատանքը, որը 11-րդ դարում փաստել է նաև

³ **Անանիա Շիրակացի**, Տիեզերագիտություն և տոմար. Առաջաբան Ա.Աբրահամյանի, էջ 6. 1940., Յերևան:

⁴ **Պատկանյան Ք.**, Անանիայի Շիրակունույ մնացորդք բանից, Ս.Պետերբուրգ, 1877, էջ 3:

Գրիգոր Մագիստրոսը: Մի թե Անանիա Շիրակացու հանդեպ այսպիսի վարմունքը Հայոց կաթողիկոսի կողմից նրա գիտելիքների ու հմտությունների բարձր գնահատում չէ: Ներկայացնում ենք այդ հատվածը. «Հայրապետն Անաստաս կոչե առ իւր զմեծ վարդապետն Անանիայ Անէից գեղջէ՝ անշարժ ըստ այլոց ազգաց դնել տօմար և մերոյ ազգիս. զոր արարեալ մեծաւ ջանիւ, և մինչև կամէին ժողովով հաստատել զնոյն՝ վախճանի սուրբն Անաստաս՝ անփոյթ եղեալ իրն զկնի եկելոցն, այլ առաջին կարգան վարէին»⁵: Սամվել Անեցին նույնիսկ նշում է Շիրակացու այն աշակերտների անունները, որոնք հեռանալով նրանից, ապերախտորեն նրա մասին հերյուրանքներ էին տարածել. «Աշակերտքն Անանիայի՝ Հերմոն և Տրդատ՝ և Ազարիա, Եզեկիէլ և Կիրակոս՝ երթեալ յԵրուսաղէմ հաւանեցան երկարակացն, և ի դարձին ո՛չ ընկալաւ զնոսա ճշմարիտ վարդապետն Անանիա: Իսկ նոքա ուր հասանէին՝ զնա ասէին պատճառ հայհոյութեան՝ զոր մի ոք իշխեսցէ ասել կամ հաստատել»⁶:

Սակայն մեծարգո գիտնականների /Չ.Աճառյան, Ա.Աբրահամյան/ աչքից վրիպել է այն, որ Անաստաս անվան փոխարեն Առաջաբանի հեղինակ Ա.Աբրահամյանը սկզբում նշել է Կոմիտաս կաթողիկոսի անունը, ապա Սամվել Անեցու «Հավաքմունք...»-ից մեջբերել է վերը նշված նույն հատվածը: «Շիրակացին այստեղ /Հայաստանում. Չ.Չ. /Կոմիտաս կաթողիկոսի պատվերով առաջին անգամ կազմում է հայկական տոմարը, վորը սակայն չի հաստատվում հայ յեկեղեցու կողմից»⁷: Իսկ Կոմիտաս կաթողիկոսը Անաստասից մոտ հիսուն տարի առաջ է աթոռակալել հայոց եկեղեցում՝ մինչև 625 թիվը: Եվ եթե հիմք ընդունենք Ա.Աբրահամյանի՝ Շիրակացու ծննդյան մոտավոր թվականը, այն է 610-ականի սկիզբը, Մեծ Համարողն այդ ժամանակ դեռ չէր էլ կարող մեկնած լինել արտասահման կրթություն ստանալու՝ տարիքի փոքրության պատճառով, ուր մնաց թե կատարել կաթողիկոսի պատվերը: Իսկ ըստ մեր քննության ստացված տարեթիվը՝ մոտ 630-ականի կեսերը, լրիվ կհամապատասխանի Անաստաս կաթողիկոսի և Անանիա Շիրակացու ժամանակակցությանը՝ ավագ-կրտսեր հարաբերությամբ:

Սամվել Անեցուց առաջ՝ 11-րդ դարում Գրիգոր Մագիստրոս կաթողիկոսն է վկայել Շիրակացու մասին՝ բարձր գնահատելով և՛ նրա անձը, և՛ նրա վաստակը: Իրեն նախորդած Պետրոս Գետադարձ կաթողիկոսին ուղղված նամակում նա գրում է. «Փոխան Յիսուսի համարձակիմք, միշտ սովորեալ յառա-

⁵ Սամուէլի քահանայի Անեցոյ Հաւաքմունք ի գրոց պատմագրաց, Վաղարշապատ, 1893, էջ 84:

⁶ Նույն տեղում, էջ 85:

⁷ **Անանիա Շիրակացի**, Տիեզերագիտություն և տոմար, Առաջաբան Ա.Աբրահամյանի, Յերևան, 1940, էջ 7:

տաճիր պարզևս, զկարևորսն և զպիտանացուն յարատևական բաշխելով քեզ, որ ոչդ երբեք դանդաղիս զգիրս Անանիայի Շիրակայնոյ՝ որ բազում աշխատութեամբ և յաճաչու խոնջմամբ հաւաքեալ ի բազմազան և յոգնաբեղուն մատենից՝ յորում և ենթակայացեալ են ո՛չ միայն քառօրե արհեստք, այլ բոլոր էակացն խոկմունս, որ են այժմ ի տան տէրունեան, զոր նախ քան զքեզ՝ խրթնացեալ և թագնի ընդ գրուանաւ ծածկէին. զոր և ինքն իսկ, որ մատենագրեաց զայդոսիկ, յառաջնումն իւրոյ տրամաբանութեան բազում տարակուսանս և կեղերջականս սակս մերոյ ազգային անփոյթ առնելոյ զայդպիսի գործառնութիւնս, յորում մթերեալ են տոգորք աստուածային և են ենթակայացեալ ամենայն արհեստ մակացութեան. և նախդասեալ է թուականութեանն և երաժշտականութեանն, որք են ի տարորոշ քանակէ տարակացեալք. իսկ երկրաչափութեանն և աստեղաբաշխութեանն, որք են ի շարունակ քանակէ, և զկնի այսոցիկ յարամանեալք արհեստք. և մակացութիւնք, մատենագրութիւնք. և գրէ եթէ ամենայն բոլոր վարժումն հռետորական, թէպէտ և մասնաւոր զփոշէտեսական զօրէն գործասէր մեղուի ամբարեաց ի մեղունոցի անդր ի բազմավէպ մատենագրից Քաղդէացոց և յունաց և ամենայն ազգաց առ ի ծանօթ լինելոյ...»⁸: Թէն մեջբերման համար՝ ընդարձակ այս հատվածում միջնադարյան մեծ գիտնականը՝ Գրիգոր Մագիստրոսը, որը բազում գիտական ուսումնասիրությունների հեղինակ է և մի քանի լեզուների էր տիրապետում, կարծես յուրատեսակ վերլուծության է ենթարկել Շիրակացու կատարած տքնաջան և գիտական աշխատանքը՝ գործերն ու բարձր գնահատանքի արժանացրել հեղինակին:

Անանիա Շիրակացին հայ մատենագրության գործիչներից այն երջանիկ քչերից է, որի գործերը բազմաթիվ ընդօրինակումների են արժանացել մեր միջնադարյան գրիչների կողմից: Մա խոսուն ապացույց է նրա գործերի կարևորության և կիրառելիության փաստի մասին:

Նոր ժամանակներում ևս առավել է դարձել հետաքրքրությունը նրա անձի և գործերի հանդեպ: Շիրակացու, բնական և տիեզերական երևույթների քննության, աշխարհագրության, տոմարագիտության մասին նրա գործերի ուսումնասիրությամբ զբաղվել են հայագիտության մեծ երախտավորներ Քերովրե Պատկանյանը, Գալուստ Տեր-Սկրտչյանը, Հովսեփ Օրբելին, Հակոբ Մանանդյանը, Սեն Արևշատյանը, Աշոտ Աբրահամյանը և ուրիշներ, որոնք հրատարակել կամ թարգմանել են /գրաբարից ռուսերեն, աշխարհաբար/ նրա առանձին գործեր, կազմել են քննական բնագրեր:

⁸ Գրիգոր Մագիստրոսի՝ Մատենադարանի թիվ 3062 ձեռագիր, էջ, էջ՝ 247բ, 248ա: Տե՛ս նաև՝ Անանիա Շիրակացի. Տիեզերագիտություն և տոմար. Առաջաբան Ա.Աբրահամյանի, Յերևան, 1940, էջ 7-8:

Ա.Աբրահամյանը Գ.Պետրոսյանի հետ միասին ոչ միայն գրաբարից աշխարհաբար է թարգմանել թվաբանությանը, տիեզերագիտությանը, տոմարագիտությանը, աշխարհագրությանը վերաբերող նրա գործերը՝ ամփոփելով «Անանիա Շիրակացի» խորագրի տակ /Երևան, 1979թ./, այլև դեռևս 1940 թվին բազմաթիվ ձեռագրերի համադրությամբ կազմել է բնական երևույթներին, տիեզերագիտությանը, տոմարագիտությանը վերաբերող Մեծ Համարողի գործերի քննական գրաբար բնագիրը, ծավալուն առաջաբանով՝ «Տիեզերագիտություն և տոմար» ընդհանուր վերնագրումով:

Եթե որևէ մեկը փորձ անի Անանիա Շիրակացուն վերաբերող տասնյակների հասնող ձեռագրերի մեջ փնտրել նրա գործը համանուն՝ «Տիեզերագիտություն և տոմար» գլխագրով, ժամանակի զուր կորուստ կունենա: Քանի որ նման ամփոփ վերնագրում կատարել է մեծավաստակ գիտնական, պատմաբան Աշոտ Աբրահամյանը գրքի 1940թ. հրատարակության ժամանակ՝ ելնելով այնտեղ տեղ գտած նյութերի բնույթից. «Յեղնելով տեքստի բովանդակությունից, մենք նպատակահարմար համարեցինք զիրքը վերնագրել «Տիեզերագիտություն և տոմար»⁹: Այսպիսի բացատրություն է տալիս քննական բնագիրը կազմող հեղինակը:

Ձեռագրերում աշխատանքներն ամփոփված են «Առ խոստացեալսն» խորագրի տակ: Դրանից կարելի է եզրակացնել, որ երևի նրանից խնդրել են գրել նման բովանդակության մի գործ, և նա հանձն է առել կատարելու այն ու կատարել է: Իսկ իրականում այդ վերնագիրը ընդհանուր գործի մի գլուխն է:

Գրքում խոսվում է երկրի, երկնքի, արևի, լուսնի և մյուս մոլորակների փոխհարաբերության, արևի ու լուսնի խավարման, և երկրում ընթացող երևույթների վրա այդ ամենի ազդեցության, աստղերի շարժերի, նրանց գոյացման ու վերացման, կենդանակերպերի և մարդկանց ճակատագրի հարցում նրանց թվացյալ կանխորոշիչ նշանակության և այդ տարածված կարծիքի՝ Շիրակացու հերքման, ժամանակի և ժամանակաչափերի, նահանջ և ոչ նահանջ տարիների, տոմարագիտության, հայկական ամսանունների հիմքի բացահայտման, ծովերի ու նրանց՝ ընդերքում խոռոչների միջոցով միմյանց հետ գոյություն ունեցող ներքին կապերի (թեև արտաքինից նրանք շատ հեռու են իրարից), բնական երևույթների՝ ամպերի, անձրևների, կարկուտի, ձյան ու եղյամի և բնության հետ կապված շատ այլ իրողությունների մասին:

Անանիա Շիրակացին ուսումնասիրել է իրենից առաջ եղած շատ փիլիսոփաների գործեր և նյութեր քաղել նրանցից: Եվ այդ մասին չի էլ թաքցնում,

⁹ Անանիա Շիրակացի. Տիեզերագիտություն և տոմար. Առաջաբան Ա.Աբրահամյանի, Յերևան, 1940, էջ՝ 17:

այլ վկայակոչում է նրանց, ինչպես ս.Բարսեղին, Փիլոնին, որի «Ճառք» գործի Համաբարբառի կազմման վրա ենք աշխատում և այս ընթացքում շատ ընդհանրություններ ենք նկատել երկու հեղինակների գործերում: Ընդհանրություններ ենք նկատել նաև Զենոն Իմաստասերի «Յաղագս բնութեան» գործի հետ, թարգմանությունը՝ հունաբան դպրոցի ներկայացուցիչների, որի բնագրային համաբարբառը ևս կազմվել է մեր կողմից: /

Շիրակացին դեմ է գնում քաղղեական տարածված ու կարծրացած այն կարծիքին, թե մարդու կյանքը, ճակատագիրը, հաջողակ կամ անհաջողակ, երջանիկ կամ դժբախտ լինելը կախված է այն բանից, թե ո՞ր աստղի տակ է ծնվել: Եվ բացատրում է՝ որ այդպես լինել, էլ ո՞վ կայաքարեր կյանքում իր տեղը գտնելու համար, չէ՞ որ աստղերն արդեն կանխորոշել են մարդու ապագան: Կամ երբ իր արտահայտությամբ՝ չար փիլիսոփաները մարդկանց բարի կամ չար լինելը կապում են այդ նույն աստղերի հետ, այսինքն մարդն ինքը չէ մեղավոր իր կատարած հանցանքի համար, այլ այդպես են կանխորոշել աստղերը: Շիրակացին հակադրվում է այդ գաղափարին և հարցադրում անում, այդ դեպքում ինչի՞ համար են մարդկանց կողմից հաստատված կարգ ու կանոնը, օրենքներն ու դատավորները, չէ՞ որ եթե հանցագործը իր կամքով չի կատարել հանցագործությունը, այլ այդպես են կանխորոշել աստղերը, ուրեմն նա մեղավոր չէ, այլ աստղերն են մեղավոր: Եվ, քանի որ, ըստ իր տեսակետի, ամեն ինչ, այդ թվում և աստղերը ստեղծել է միակ արարիչը, ուրեմն աստվածն է մեղավոր: Մարդը չար է դառնում իր բնույթով ու վարած կյանքով, և ոչ թե աստղերի կանխորոշմամբ:

Այստեղ բացահայտ երևում է իրատես մտածողը՝ ոչ ամեն ինչ աստծո, նախախնամության հետ կապող բնագետ գիտնականը, որ առարկայական ձևով բացատրություն է տվել նաև Երկրի, Լուսնի, Արեգակի փոխհարաբերության, փոխկապվածության վերաբերյալ և եզրահանգել Երկրի՝ Արևի շուրջ դառնալու հանգամանքին: Ապրելով հանդերձ յոթերորդ դարում, երբ իշխող գաղափարախոսությունը քրիստոնեությունը, աստվածապաշտությունն էր, նա իր տեսակետները բացատրում ու մեկնաբանում է գիտական, այլ ոչ ենթադրյալ նախախնամության գաղափարներով: Եվ ընդունելի է համարում այն ճշգրիտ գաղափարները, որոնք բնական երևույթները ցույց են տալիս իրական լույսի տակ և ոչ թե վերացական, անհիմն բացատրություններով:

Իր գաղափարները նա մատուցում է համեմատությունների ու հարադրումների միջոցով, որպեսզի համոզիչ լինի, և հասու անգամ հասարակ մահկանացուին: Եվ երբ ընթերցում ես գրվածքը, թվում է, ոչ թե գիտական գործ ես ուսումնասիրում, այլ գեղարվեստական գիրք ես կարդում:

Սակայն լինելով իր դարաշրջանի մարդ, ինչ որ չափով կրելով նաև նրա գաղափարախոսությունը՝ ամեն ինչի հիմքն աստվածն է, երբեմն, երբ անհնար է տվյալ հարցի պարզաբանումը, ինչպես երկրի դիրքի՝ ինչի վրա հիմնված լինելը, կամ ծովի ջրերի՝ իրենց սահմանի մեջ և նույն մակարդակին մնալը՝ հակառակ նրա մեջ լցվող գետերի, և չթափվելը երկրի պտույտի ժամանակ, նա ապավինում է բարձրյալին, նման երևույթները վերագրելով արարչությանը, աստվածային հրամանին՝ հաստատելով իր միտքը Սուրբ Գրքից օրինակներ բերելով:

Աստղերի մեծ կամ փոքր, լուսավոր, կամ թույլ լույս արձակող լինելու երևույթը նա բացատրում է Երկրին նրանց մոտ կամ հեռու գտնվելու հանգամանքով: Երբ խոսում է արեգակի շուրջ երկրի շրջադարձության մասին, փորձում է այն ներկայացնել արևի հետ իր կիսարթմնի գրույցի ձևով, երևի խուսափելու համար կղերականների հնարավոր հալածանքներից: Ահա այդ հատվածը.

«Եւ արդ մի՛ զիս եպերեք, սիրելիք, գիտե՛ ծածկագէտն, զի ո՛չ ստեմ: Մինչդեռ էի յադօթս առ առաւօտուն ի վկայարանի Սրբոյն Եւգինեայ, և միտք իմ յա՛յս խորհուրդս ծփեին, քուն էառ զիս: Եւ տեսանէի որպէս թէ արեգակն ի ծագելն խոնարհեալ յերկիր իջաներ: Եւ ես յառաջն ընթանայի և ի գիրկս ընդունէի զնա. և նա էր պատանի անմորուս, ոսկեգիսակ, և շրթունք բերանոյ նորա որպէս թէ ոսկով լինէր օծեալ, և ինքն սպիտակս և փայլունս զգեցեալ հանդերձս. և լոյս սաստիկ ելանէր ի բերանոյն: Եւ ես ասացի ցնա՛ եթէ ի վաղնջուց ցանկացեալ էի ի քէն լսել բան. արդ՝ աղէ՛ պատմեա ինձ. եթէ յորժամ ի մէնջ ծածկիս ու՛մ տաս լոյս, գո՞ն այլ կենդանիք ի ներքոյ երկրի՛ եթէ ոչ: Եւ նա ասէ ոչ, այլ լերանց և ափափայից ձորոց և անձաւաց անկենդանեաց տամ լոյս¹⁰»:

Գուցե հենց այդպէս էլ եղե՞լ է: Պատմությանը հայտնի քիչ մեծություններ չեն, որոնք իրենց գլուխգործոցները, հայտնագործությունները տեսել են երագում և իրականություն դարձրել արթմնի վիճակում, կամ կանխատեսել հետագա դարերում կատարվելիք իրադարձությունները՝ անգամ համաշխարհային նշանակությամբ: Այսպէս օրինակ.

Ղազար Փարպեցին իր «Պատմութիւն Հայոց» երկասիրության ԺԷ գլխում ներկայացրել է Հայոց կաթողիկոս Սահակ Պարթևի կիսարթմնի տեսիլն ու նրա մեկնաբանությունները Արշակունյաց թագավորության անկման, ապա հայոց թագավորության վերահաստատման, Գրիգոր Լուսավորչի տոհմից կաթողիկոսության ընդհատման, ապա նորից վերականգնման, նույնիսկ տարիների քանակն էլ է նշված՝ 350, թե քանի տարի հետո կնորոգվի կաթողիկոսական աթոռը

¹⁰ Անանիա Շիրակացի, Տիեզերագիտություն և տոմար, 1940թ., Յերևան, էջ՝ 13-14:

նրա ժառանգորդների կողմից, կանխատեսում գալիք արյունահեղությունների՝ պատերազմների մասին, զգուշացում անապատից եկող համաշխարհային վտանգից և շատ այլ բաների մասին: Իսկ այդ տեսիլի մեկնաբանություններն արվել են դեռևս այն ժամանակ, երբ իշխում էին Արշակունիները, Հովվապետական աթոռին էր Մեծն Ներսեսը, և Սահակ Պարթևն էլ դեռ Հայրապետ չէր օծվել: Եվ սա ոչ թե Պատմիչի գեղարվեստական երևակայության արդյունք է, այլ ըստ երևույթին նա ձեռքի տակ ունեցել է Սահակ Պարթևի՝ իր տեսիլքի և նրա մեկնաբանությունների գրի առած բնագիրը, որից էլ վերցրել է նյութը, ապա թե ոչ, այն կվերագրվեր հենց Փարպեցուն: Ահա մեր ասածի ապացույցը. «Եւ արդ պատմեցի ձեզ ոչ միայն առ նեղել սրտիս, այլև թաքուցանել երկուցեալ զի մի երբէք իբրև զլացող պատուհասեալ դադարեցայց ի ցուցողէ յայտնութեանս այսորիկ. որ և գրով իսկ հրամայեաց ինձ զաւանդս զայս թողուլ աշխարհի»¹¹: Եվ ինչպես գիտենք Հայոց և համաշխարհային պատմությունից, այդ ամենը տեղի է ունեցել՝ թե՛ Հայոց Արշակունիների թագավորության անկումը, ապա և վերականգնումը Բագրատունիների, Արծրունիների կողմից, ապա նաև Կիլիկյան թագավորության հաստատումը, թե՛ Գրիգոր Լուսավորչի տոհմից կաթողիկոսության ընդհատումը, ապա և կաթողիկոսական աթոռին նորից Լուսավորչի ժառանգորդների բազմումը՝ ի դեմս Վահրամ Գրիգոր Պահլավունու և նրա հաջորդների, թե՛ խաչակրաց արյունահեղ պատերազմները, թե՛ անապատներից եկող աշխարհակործան սամումը՝ արաբների ու մոնղոլների արշավանքների տեսքով: Սա ևս մի հանիրավի անտեսում է՝ այս անգամ արդեն Սահակ Պարթևի հանդեպ, նրան հին մատենագրության մեջ հայտնի և համաշխարհային Տեսանողների՝ մարգարեների շարքը դասելու փոխարեն:

Շիրակացին իր կիսարթմնի երազը տեսել է «Մինչդեռ էի յաղօթս առ առաւօտուն ի վկայարանի Սրբոյն Եւզինեայ, և միտք իմ յա՛յս խորհուրդս ծփէին, քուն էառ զիս»,¹² իսկ Սահակ Պարթևը՝ Վաղարշապատի եկեղեցում՝ կաթողիկոս օծվելուց էլ առաջ: «Յառաջ քան զամս բազումս խորհուրդք անմխիթաբք նեղէին զիս, անդադար զմտաւ ածելով և աղաչելով զԲարձրեալն շնորհել ինձ արու որդի... Եվ ես նստէի մերձ առ սեղանն Աստուծոյ ի սուրբ եկեղեցուջն Վաղարշապատ քաղաքի»¹³ - պատմում է նա՝ Հայոց Հայրապետը: Այդպես էլ՝ Մաշտոցը հայոց տառերն ստեղծելիս, հետագայում էլ Մենդելեևը՝ քիմիական տարրերի իր աղյուսակը կազմելու ժամանակ:

¹¹ Ղազարայ Փարպեցույ Պատմություն Հայոց, Երևան, 1982. էջ 82:

¹² Անանիա Շիրակացի, Տիեզերագիտություն և տոմար, 1940, Յերևան. էջ 13:

¹³ Ղազարայ Փարպեցույ ... էջ 64, 66:

Երբ հանձնառություն էինք վերցնում կազմելու Անանիա Շիրակացու «Տիեզերագիտություն և տոմար» աշխատության բնագրային համաբարբառը, հարց տրվեց՝ ինչու՞ Շիրակացի: Ստիպված էինք պատասխանելու, որ ինչպես ասում են, «*հայի բախտ*», Կոպեռնիկոսից ութ հարյուր տարի առաջ՝ դեռևս յոթերորդ դարում, Մեծ Հայոց Շիրակ աշխարհի Շիրակավան գյուղից մի հայ գիտնական, որը պատմության և գիտության մեջ հայտնի է Անանիա Շիրակացի անունով, այն միտքն էր հայտնել և դիտարկումներ, ուսումնասիրություններ կատարելով, տրամաբանական զուգահեռներ անցկացնելու օրինակներով ապացուցել իր միտքը, որ երկիրը պտտվում է իր և արեգակի շուրջ:

Եթե Կոպեռնիկոսի հայրը 15-րդ դարում խնդրում էր որդուն, որ կենդանության օրոք չհրապապակի իր տեսակետը՝ վախենալով որդու նկատմամբ ինկվիզիցիայի հալածանքներից, Շիրակացին նրանից ութ դար առաջ ազատ ու անկաշկանդ արձանագրել է այդ փաստը: Այն դեպքում, երբ 16-րդ դարում այսօրվա լուսավորչալ կոչված Եվրոպայում ինկվիզիցիան նման համարձակ միտք արտահայտելու համար խարույկի վրա այրում էր Ջորդանո Բրունոյին, կամ տնային կալանքի դատապարտում Գալիլեո Գալիլեին, որոնց չկարողացավ փրկել անգամ նրանց հզոր հովանավորներ Մեդիչիների զորեղ իշխանությունը, մեր թագավորագուրկ ու պետականագուրկ Հայաստան աշխարհում Անանիա Շիրակացին համարձակվել է հայտնել բազում ուսումնասիրություններով ու փորձերով հիմնավորված իր գաղափարները, որոնք հակասում էին տիրող գաղափարախոսությանը՝ ինչ որ չափով նաև դեմ ամեն ինչ աստծուն վերագրելուն: Բայց մեզանում, ինչպես միշտ, անհարկի կերպով անտեսվել, տեր չի կանգնվել մեր ունեցած գանձերին՝ ոչ նյութական, դրանց տեր կանգնողներ շատ կան, այլ հոգևոր, տվյալ դեպքում՝ գիտությանն ու գիտնականին՝ բարձրացնելու նրան համաշխարհային մակարդակի և ճանաչման: Եվ երբեք ձայն չի բարձրացվել՝ աշխարհի ականջին ու մտքին հասցնելու համար նման մեծ երևույթի գոյության փաստը: Ճիշտ է Շիրակացու գործերը քննության են առնվել, հրատարակվել են, նաև թարգմանվել վերը հիշատակված գիտնականների կողմից, բայց որ հատուկ, գրավոր ձևով շեշտվի այն փաստը, որ Կոպեռնիկոսից առաջ, Շիրակացին է յոթերորդ դարում արտահայտվել երկրի՝ արևի և իր շուրջը պտտման վերաբերյալ, չի նշվել:

Համաբարբառի կազմումով մեր նպատակն է եղել, թեկուզ արդարացի ընդվզմամբ վեր հանել և հանրությանը ներկայացնել այդ անարդարացի վերաբերմունքը մեծ Գիտնականի հանդեպ և մեր գնահատանքի ու հարգանքի տուրքը գոնե այդպես մատուցել Գիտության Մեծ Մարդուն:

Անանիա Շիրակացու «Տիեզերագիտություն և տոմար» գործի Համաբարբառը կազմվել է 1940 թվի հրատարակության հիման վրա, որի քննական գրա-

բար բնագիրը բազմաթիվ ձեռագրերի համեմատությամբ, ինչպես վերը նշվեց, կազմել և ծավալուն առաջաբանով հրատարակության է պատրաստել մեծ գիտնական, պատմաբան Աշոտ Աբրահամյանը՝ հիմք ընդունելով հիմնականում Մատենադարանի 2180 և 2762 թվահամարները կրող ձեռագրերը:

Համաբարբառը տվյալ հեղինակի, տվյալ գործի յուրատեսակ, ընդարձակ բառարան է, որտեղ ոչ միայն առանձին բառն է ներկայացվում նաև իր բազմիմաստությամբ, այլև բառակապակցություններն ու բայական հարադրությունները՝ տալով դրանք ամփոփ նախադասության մեջ: Համաբարբառի կազմումով յուրատեսակ ձևով երկրորդ կյանք է հաղորդվում տվյալ ստեղծագործությանը, գործին: Երբ գործը կա, լավագույն դեպքում այն կարդացվում և դրվում է մի կողմ: Իսկ երբ ուսումնասիրության համար անհրաժեշտություն է առաջանում հաճախակի անդրադառնալ բնագրին, նրա համաբարբառն արդեն դառնում է երկրորդ անփոխարինելի աղբյուր ուսումնասիրողի համար՝ բազմակի անգամ հեշտացնելով վերջինիս գործը, քանի որ նա այլևս ստիպված չի լինի մի բառի, հատվածի համար նորից վերընթերցել ամբողջ բնագիրը: Իսկ քանի որ բառարանից մարդիկ հաճախ են օգտվում, ուրեմն և վերհիշում տվյալ հեղինակին, ապա Շիրակացու «Տիեզերագիտություն և տոմար» գործի Համաբարբառի կազմումը մի նպաստ է, գնահատման ու մեծարանքի յուրատեսակ մի տուրք Մեծ Գիտնականի հանդեպ:

Եթե դրան էլ ավելացնենք, որ Համաբարբառները օդ ու ջրի պես պետք են հայագիտությամբ զբաղվողներին ոչ միայն Հայաստանում, այլև առավելապես արտերկրի հայագետներին, և ոչ միայն հայագետներին, ապա կատարված բազմազան աշխատանքը արդարացված կլինի և իր նպատակին կծառայի:

Համաբարբառները կարող են աղբյուրագիտական մեծ արժեք ունենալ նաև պատմաբանների, բնագետների, ճշգրիտ գիտությամբ զբաղվողների, աստղաֆիզիկների, բժշկագիտության և արվեստի բնագավառի մասնագետների, նույնիսկ արհեստավորների համար, եթե նրանք ցանկանան իրենց արհեստի մասին տեղեկություններ իմանալ հին ժամանակներից:

Շիրակացու «Տիեզերագիտություն և տոմար» աշխատության համաբարբառը միտումնավոր կերպով կազմված է համեմատաբար ավելի ընդարձակ բառահոդվածներով՝ ելնելով նյութի յուրահատկությունից: Այն դեպքերում, երբ խոսվում է բնության ու երևույթների փոխկապակցվածության, նրանց պատճառահետևանքային կապի մասին՝ չբավարարվելով միայն ստորոգում արտահայտելով, ինչպես կանոնակարգված է համաբարբառների կազմման սկզբունքներում, բառահոդվածները վերցված են ավելի ընդարձակ, չընդհատելու համար այդ կապը:

Աշխատության մեջ բազմաթիվ են թվերն ու թվականները, որոնք արտահայտված են հայկական այբուբենի տառերով: Շատ են այն թվականները, որոնց թեքման կամ ածանցման դեպքում ածանցյալները գրքում զատված են ներկայացված տվյալ բառից: Այսպիսի գրությունները նույնությամբ թողնել չէր կարելի: Հակառակ դեպքում ստիպված պետք է լինեինք այդ զատված մասնիկները ևս ներկայացնել որպես գլխաբառեր, որը և՛ սխալ կլիներ, և՛ անհասկանալի կմնար որպես առանձին բառ, քանի որ դրանք իրականում մասնիկներ են՝ ածանցյալներ, և ոչ թե բառեր: Այդ պատճառով համապատասխան թվականը՝ որպես գլխաբառ, ներկայացրել ենք կից գրությամբ, իսկ բառահոդվածում, կողքին՝ փակագծերում տվել գրքում եղած ձևը: Այդպես ենք վարվել միայն տվյալ թվական գլխաբառի դեպքում՝ համաբարբառը ծանուցումներով չձանրաբեռնելու նպատակով:

Ինչպես օրինակ.

ԲԺ. - Իսկ այլ ախտաբք և ապախտաբք ըստ **ԲԺիցո** /գրքում՝ ԲԺ իցո. Հ.Հ./ ասեն բաժանեալ: - 20.

ԲԺ.ԱՆ - Զխոյէ ասեն թե՛ գլուխ է աստեղատանց **ԲԺանիցն** /գրքում՝ ԲԺ անիցն. Հ.Հ./, և շնորհատու. - 20. Եւ գրոլորակ պատկերացն աստեղատանցն, **ԲԺ.ան** /գրքում՝ ԲԺ. ան. Հ.Հ./ մասն բաժանեն. քանզի ըստ թուոյ, Լ աւուր կազմեալ է գրոլորակն. և արեգակն տարւոյ ի տարի յոր գայ ի շուրջ **գ.ԲԺ.-ան** աստեղատամբն բոլորակին: - 24.

Վերջին հասվածը թողել ենք, որպեսզի ցույց տանք նման կառույցների գրության ճիշտ ձևը, որ թվականների թեքման կամ ածանցման դեպքում ավելացած մասնիկները՝ ածանցյալները կից են գրվում:

Զ.ԵԱԿ - Քանզի այս է յայտնի պատճառ. վերին և ներքին կիսագունդքն առ Է պարունակացո գեր ի վերոյ երկրիս յերկուս բաժանեալ գիշերոյ և տունջեան քառեակ **Զ.եկօք**: /գրքում՝ Զ եկօք. Հ.Հ./ - 45.

Ձեռագրերի ուսումնասիրությունը ևս հաստատել է մեր վարվեցողության ճշտությունը: Մատենադարանի 2762 թվակիր ձեռագրում, որը, ի թիվս այլ ձեռագրերի, հիմք է հանդիսացել քննական բնագրի կազմման համար, թվականները ածանցման և թեքման դեպքերում գրված են միասին՝ կից:

Հակառակ այն բանի, որ յոթերորդ դարում օ տառը այդպիսի պատկերով դեռ գործածության մեջ չէր մտել, այն գրվում էր աւ երբարբառի տեսքով, տպագիր բնագրում այն լայն կիրառություն ունի՝ ելնելով այդ ժամանակվա /1940թ./ ընդունված ուղղագրական կանոններից: Այդ իսկ պատճառով էլ յոթերորդ դարի հեղինակի գործի Համաբարբառն ունի նաև օ տառով սկսվող բառեր: Սրանով ևս նա տարբերվում է մինչ այդ մեր կազմած համաբարբառներից:

Աշխատանքի ընթացքում բնագիր հրատարակության մեջ նկատել ենք երկու տասնյակից ավելի սխալագրություններ, տպագրական վրիպակներ: Սխալագրությունները տեղի են ունեցել նաև ժամանակին իշխող ուղղագրության հետևանքով: Թեև համաբարբառի կազմության սկզբունքներում արգելվում է բնագրի համեմատ փոփոխություններ կատարել, սակայն այդ բացահայտ վրիպակները նույնությամբ թողնել համաբարբառում, սխալ կլիներ՝ թյուրընթերցումների տեղիք տալու իմաստով: Այդ պատճառով էլ ստիպված ենք եղել շտկել սխալները՝ համապատասխան բառի կողքին, փակագծերի մեջ տալով գրքում եղած բառաձևը: Համաբարբառի վերջում ծանուցման կարգով տրված է այդ ուղղումների ցանկը:

Եզրահանգում. Եթե նկատի ունենանք, որ աշխատանքն իբրև զեկուցում ներկայացվել է «Շիրակի պատմամշակութային ժառանգություն և արդիականություն» խորագիրը կրող հեղինակավոր միջազգային գիտաժողովում, ապա աներկբա կարող ենք ասել, որ Անանիա Շիրակացին իր գործերով Շիրակի /և ոչ միայն/ պատմամշակութային մեծագույն արժեքներից է, և արդի ժամանակներում նրա գործերի և անձի գնահատությունն է նաև նրա լավագույն գործի Համաբարբառի կազմումը: Եվ սա հենց մի կապ է, նետված մի կամուրջ անցյալի ժառանգության և ներկայի միջև:

АНАНИЯ ШИРАКАЦИ И АМАБАРБАР (КОНКОРДАНС) ЕГО РАБОТЫ “ КОСМОЛОГИЯ И КАЛЕНДАРЬ”

Оганисян А.

Ключевые слова: *Анания Ширакаци, Хамарох, космология, планета, солнце, звезда, небесные украшения, календарь, зодиакальный, Конкорданс.*

В контексте рассмотрения личности А. Ширакаци в рамках международной конференции “Историко-культурное наследие Ширака: актуальные вопросы арменоведения” можно с уверенностью утверждать, что Анания Ширакаци является одним из величайших деятелей и важной историко-культурной ценностью Ширака /и не только Ширака/. В наши дни своеобразной оценкой его личности и работ является также составление “Амабарбара” (конкорданса) на основе его лучшей работы.

Это и есть та самая связь - мост между наследием прошлого и настоящим.

**ANANIA SHIRAKACI AND CONCORDANCE
"COSMOLOGY AND CALENDAR"
*Hovhannisyan H.***

Key words: *Anania Shirakaci, Hamarog, cosmology, planet, sun, star, celestial jewel, calendar, zodiac, Concordance.*

Taking into consideration that the international conference bears the headline of "Historical and cultural heritage and modernity of Shirak", we can certainly say that Anania Shirakatsi is one of the most prominent historical and cultural values of Shirak region. The creation of "Hamabarbar"-Concordance based on his best work is also another act of evaluation of his works and his figure, in our times.

And this is also another link, a bridge between the heritage of the past century and the present.

R e f e r e n c e s

1. **Anania Shirakaci**, Tiezeragituthyun ev tomar. Yerevan, Izd. Haypethrat. 1940 /In Armenian/.
2. **Anania Shirakaci**, Yerevan. Izd. Sovetakan grox. 1979 /In Armenian/.
3. **Grigor Magistros**, Matenadarani no. 3062 dzeragir /In Armenian/
4. **Lazara Pharpecvo** Patmuthyun Hayoc ev Thukhth ar Vahan Mamikonyan, Tphkhis, 1904 /In Armenian/.
5. **Lazar Pharpeci**, Hayoc patmuthyun, Yerevan, Izd. Yerevani Hamalsaran, 1982 /In Armenian/.
6. **Samvel Aneci**, Havaqmunq i groc patmagrac. Vagarshapat, 1893 /In Armenian/.
7. **Qerovbe Patkanyan**, Ananiayi Shirakunvo mnacordq banic. S.Peterburg, 1877 /In Armenian/.

Ընդունվել է՝ 05.10. 2019

Գրախոսվել է՝ 12.11.2019

Հանձնվել է տպ.՝ 21.11. 2019

Տեղեկություններ հեղինակի մասին

Հայկանուշ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ՝ ՀՀ ԳԱԱ լեզվի ինստիտուտի
գիտաշխատող, էլ փոստ՝ mtatev@mail.ru

ՀՏԴ՝ 811.19

ՆԵՐԽՈՍՔԻՄԱՍԱՅԻՆ ՏԱՐԱՐԺԵՔՈՒԹՅՈՒՆ ԱԾԱԿԱՆՆԵՐԻ
ԻՄԱՍՏԱՅԻՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔՈՒՄ

(Համաժամանակյա և տարժամանակյա հայեցակետ)

Լալիկ Խաչատրյան, Մարգուշ Միրումյան

Երևանի Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ

Բանալի բառեր՝ ներխոսքիմասային տեղաշարժեր, տարարժեքություն, համաժամանակյա տարարժեքության, տարժամանակյա տարարժեքության, լիակատար տեղաշարժեր, մասնակի տեղաշարժեր:

Սույն հոդվածում բառույթի ներխոսքիմասային տարարժեքությունը քննվում է ածականների իմաստային կառուցվածքում. ընդ որում՝ երևույթը դիտարկվում է երկու կտրվածքով՝ *համաժամանակյա*, որի դեպքում ածականները լեզվի նույն գոյավիճակում համատեղում են տարբեր կարգային նշանակություններ, և *տարժամանակյա*, որի դեպքում ածականները լեզվի տարբեր գոյավիճակներում հարաբերակական տեսակից անցել են որակականի շարքը:

Նախաբան. Լեզվի ներբառության իրողություններից է բազմիմաստությունը, որ դրսևորվում է ինչպես բառական, այնպես էլ քերականական մակարդակում: Բառական բազմիմաստությունը դրսևորվում է միևնույն բառույթի իմաստային կառուցվածքում, որի հետևանքով տվյալ բառական միավորը ցուցաբերում է ներբառության բազմիմաստություն¹: Քերականական բազմիմաստությունը դրսևորվում է միջխոսքիմասային և ներխոսքիմասային հարթություններում: Միջխոսքիմասային բազմիմաստությունն առաջ է բերում ձևաբանական տարարժեքություն, որի դեպքում միևնույն բառույթը, պայմանավորված բառաքերականական երկատված իմաստներով, հանդես է գալիս մեկից ավելի ձևաբանական արժեքների համատեղումով²:

¹ Տե՛ս **Խաչատրյան Լ.Մ.**, Լեզվաբանության ներածություն, Եր., 2008, էջ 139-140:

² Խոսքիմասային տարարժեք բառերի ձևավորման ուղիների մասին, տե՛ս **Խաչատրյան Լ.Մ.**, Տեղաշարժեր բառերի ձևաբանական իմաստի մեջ, Եր., 1985, էջ 20-26: **Խաչատրյան Լ.Մ.**, Խոս-

Ներխոսքիմասային բազմիմաստությունը ներկարգային տեղաշարժերի միջին օղակն է, որի ժամանակ միևնույն խոսքի մասը կարող է համատեղել մեկից ավելի ներկարգային նշանակություններ: Վերջին իրողությունը դիտարկելի է ինչպես նյութական, այնպես էլ սպասարկու խոսքի մասերի ներսում: Գոյականի ներսում այդպիսի համատեղում նկատելի է հատուկ և հասարակ տեսակի կամ հոգնակի և հավաքական թվի միջև, բայի ներսում՝ սեռային իմաստների միջև, ածականի դեպքում՝ որակական և հարաբերական տեսակների միջև, նույնը կարելի է դիտարկել մակբայի տարբեր տեսակների միջև և այլն³:

Ներխոսքիմասային տեղաշարժերը կարող են բնութագրվել անցման լիակատար բնույթով, որի դեպքում միևնույն խոսքի մասը կարող է իր կարգային նշանակությունից անցնել մեկ այլ նշանակության: Վերջին հանգամանքը կրում է տարժամանակյա բնույթ. կարգային նշանակության փոփոխությունն արձանագրվում է լեզվի պատմության ընթացքում, որ իր հերթին պայմանավորված է իմաստափոխական որոշակի գործոններով: Այդ նույն գործոնների հետևանքով է բառույթի կարգային նշանակությունը երկփեղկվում (լեզվի համաժամանակյա կտրվածքում). հետագա զարգացումը կարող է հանգեցնել այն բանին, որ վերանա բառույթի կարգային երկատվածությունը, և նրա իմաստային կառուցվածքում տիրապետող դառնա կարգային մեկ այլ նշանակություն (լեզվի տարժամանակյա կտրվածքում):

Սույն հոդվածում բառույթի ներխոսքիմասային տարաբժեքությունը քննելու ենք ածականների իմաստային կառուցվածքում. ընդ որում՝ երևույթը դիտարկելու ենք երկու կտրվածքով՝ *համաժամանակյա*, որի դեպքում ածականները լեզվի նույն գոյավիճակում համատեղում են տարբեր կարգային նշանակություններ, և *տարժամանակյա*, որի դեպքում ածականները լեզվի տարբեր գոյավիճակներում հարաբերական տեսակից անցել են որակականի շարքը:

Ելնելով այն հանգամանքից, որ ուսումնասիրության առարկա են հարաբերական ածականները (և նրանց իմաստային փոփոխությունները), բնականաբար դիտարկվելու են ածանցավոր կազմությունները: Հարաբերական ածականների արտահայտության պլանում ածանցները միանշանակ բառակազմական նշանակություններ չունեն, որոնք իրենց հերթին պայմանավորում են ներկարգային տեղաշարժերի գործընթացները⁴:

Ա. Համաժամանակյա տարաբժեքություն ածականների

քիմասային տարաբժեքությունն արդի հայերենի կայուն կապակցություններում, Եր., 1996, էջ 36-83:

³ Տե՛ս **Խաչատրյան Լ.Մ.**, Տեղաշարժեր բառերի ձևաբանական իմաստի մեջ, էջ 119-126:

⁴ Ածականների ածանցական կաղապարներում ածանցների իմաստային նշանակությունների մասին տե՛ս **Ջահուկյան Գ.Բ.**, Ժամանակակից հայոց լեզվի իմաստաբանություն և բառակազմություն, Եր., 1989, էջ 197-198:

Իմաստային կառուցվածքում

Ժամանակակից հայերենում կան զգալի թվով ածական անուններ, որոնք իրենց իմաստային կառուցվածքում համատեղում են հարաբերական և որակական ածականներին հատուկ նշանակություններ⁵:

Այդ կարգի ածականների իմաստային կառուցվածքի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ ներկարգային իմաստային փոփոխությունները տեղի են ունեցել տարբեր գործոնների ազդեցության հետևանքով:

Դիտարկելով *երկաթյա* -1. երկաթե (հարաբ.), 2. փխբ. ամուր, պինդ (որ.), *անսանձ* – 1. սանձ չունեցող (հարաբ.), 2. փխբ. անզուսպ, կատաղի (որ.), *առասպելական* – 1. առասպելին հատուկ (հարաբ.), 2. փխբ. մտացածին (որ.), *անլեղի* – 1. առանց լեղիի (հարաբ.), 2. փխբ. վախկոտ (որ.), *կապարային* – 1. կապարե (հարաբ.), 2. փխբ. ճնշող, ծանր (որ.) և այլ բառերի իմաստային կառուցվածքները՝ նկատում ենք, որ դրանց երկրորդ նշանակությունը պայմանավորված է փոխաբերական գործածության հանգամանքով:

Այնուհետև քննարկելով *մարդկային* – 1. մարդուն վերաբերող (հարաբ.), 2. բարի, վեհ (որ.), *գրքային* – 1. գրքին՝ գրավոր խոսքին վերաբերող (հարաբ.), 2. շինծու, արհեստական (որ.), *տարրական* – 1. նախնական գիտելիքներ տվող (հարաբ.), 2. հասարակ, պարզ (որակ.) և այլ ածականների իմաստները՝ կարելի է եզրակացնել, որ դրանց որակական նշանակությունը լրացուցիչ իմաստավորում է, որ առաջացել է ածականի հարաբերական տեսակի վերաիմաստավորման հետևանքով:

Համեմատելով առաջին և երկրորդ խմբերի ածականների իմաստային նշանակություններն ու դրանց ձևավորման գործոնները՝ կարելի է հանգել այն եզրակացության, որ նախ՝ այդ բառերը գործառվում են ժամանակակից հայերենում, երկրորդ՝ դրանց երկատված նշանակություններն իրար հարաբերակից են, երրորդ՝ որոշ դեպքերում տարարժեքությունը պայմանավորված է փոխաբերացման կամ վերաիմաստավորման գործոններով:

Հետևաբար, անհրաժեշտություն է առաջանում վեր հանել երևույթի պատճառակցական հիմքերը կամ գործոնները և, ըստ այդմ, բացատրել ածականի ներկարգային տարարժեքություն պայմանավորող հանգամանքները:

Այդ կարգի բառերի վերաբերյալ կատարելով իմաստագործառական քննություն՝ կարելի է հիմնավորել ներկարգային տարարժեքություն պայմանավորող հետևյալ գործոնները՝ փոխաբերացում և վերաիմաստավորում:

⁵ Որակական և հարաբերական ածականների իմաստային որոշակի ընդհանրությունների մասին տե՛ս Աբրահամյան Ս.Գ., Պառնայան Ն.Ա. և ուրիշներ. Ժամանակակից հայոց լեզու, հ. 2, Ձևաբանություն, Եր., 1974, էջ 146:

1. **Փոխաբերացման գործոնով** պայմանավորված՝ հարաբերական ածականները կարող են ձեռք բերել նաև որակականի նշանակություն և շարահյուսական մակարդակում հանդես գալ տարբեր կարգային նշանակություններով:

Դիտարկենք այդ կարգի բառերի իմաստային առումները.

արմատական – 1. (բառերի) արմատներին վերաբերող (հարաբ.). *արմատական* բառարան, 2. փխբ. խորքային, սկզբունքային, հիմնական (որ.). *արմատական* փոփոխություններ,

նյարդային – 1. նյարդերին վերաբերող (հարաբ.). *նյարդային* հիվանդություն, 2. փխբ. զայրացկոտ (որ.). *նյարդային* վերաբերմունք,

բանաստեղծական – 1. բանաստեղծությանը հատուկ (հարաբ.). *բանաստեղծական* ոտք, 2. փխբ. նուրբ (որակ.). *բանաստեղծական* ոգի,

դրամատիկական – 1. դրամային վերաբերող (հարաբ.). *դրամատիկական* երկ, 2. փխբ. ծանր, անտանելի որակ.). *դրամատիկական* վիճակ,

ողբերգական – 1. ողբերգության հատուկ (հարաբ.). *ողբերգական* ժանր, 2. փխբ. ողբալի, սգալի (որակ.). *ողբերգական* կերպար,

ներվային – 1. ներվերին հատուկ (հարաբ.). *ներվային* հիվանդություն, 2. փխբ. բռնկվող, չհանդուրժող (որակ.). *ներվային* բնավորություն,

փողոցային – 1. փողոցին հատուկ (հարաբ.). *փողոցային* երթևեկություն, 2. փխբ. անբարո (որակ.). *փողոցային* վերաբերմունք,

տիեզերական – 1. տիեզերքին հատուկ (հարաբ.). տիեզերական հրթիռ, 2. փխբ. հանրահոշակված, անսահման մեծ (որակ.). *տիեզերական* ոգի և այլն:

2. **Վերաիմաստավորման գործոնով** պայմանավորված՝ բառերի իմաստային կառուցվածքում տեղի է ունենում նոր նշանակության հավելում, որ դիտվում է բառի նախնական նշանակության ծավալային ընդլայնում: Այլ մոտեցումով՝ այն կարելի է համարել բառիմաստի ընդլայնման հետևանք, սակայն մենք նպատակահարմար ենք համարում այն անվանել վերաիմաստավորում:

Այդ կարգի բառերից են՝

ռեալիստական -1. ռեալության հատուկ, ռեալիզմին հետևող (հարաբ.). *ռեալիստական* ուղղություն, 2. ռեալիզմի սկզբունքներին համապատասխանող (որակ.). *ռեալիստական* գրող,

ժողովրդական -1. ժողովրդից բաղկացած, ժողովրդին հատուկ (հարաբ.). *ժողովրդական* զանգված, 2. ժողովրդի հոգեբանության՝ ոգուն՝ մտայնությանը համապատասխանող (որակ.). *ժողովրդական* նկարիչ,

հարվածային – 1. հարված հասցնող, հարվածի համար նախատեսված (հարաբ.). *հարվածային* գործիք(ներ), 2.մեծ լարվածություն պահանջող (որակ.). *հարվածային* աշխատանք,

մարդկային – 1. մարդկանցից բաղկացած (հարաբ.). *մարդկային* հասարակություն, 2. մարդուն վայել, մարդավարի (որակ.). *մարդկային* վերաբերմունք,

քնարական – 1. քնարերգությանը՝ լիրիկային վերաբերող (հարաբ.). *քնարական* բանաստեղծություն, 2. հուզական, հուզիչ (որակ.). *քնարական* հոգի և այլն:

Դիտարկված բառերի իմաստների համեմատությունն ու հակադրությունը ցույց են տալիս, որ որոշ հարաբերական ածականներ արտահայտում են նաև որակականի հատկանիշներ՝ ցուցաբերելով ներխոսքիմասային (ներկարգային) տարաբժեքություն. որակական իմաստը բառի երկատված հարաբերական նշանակության զարգացման հետևանք է:

Վկայված բառակապակցական օրինակների քննարկման ճանապարհով պարզ է դառնում, որ թե՛ հարաբերական և թե՛ որակական ածականների շարքին դասվող հատկանշային բառերի իմաստային բաշխումը կատարվում է խոսքաշարում. այդ բառերն արդի հայերենում հանդես են գալիս մերթ որպես հարաբերական, մերթ որպես որակական ածականներ: Ուստի այդ կարգի բառերը համարվում են *համաժամանակյա տարաբժեք բառեր և հատկանշվում են տեղաշարժերի մասնակի բնույթով*:

**Բ. Տարժամանակյա տարաբժեքություն ածականների
իմաստային կառուցվածքում**

Ժամանակակից հայերենում կան որոշակի ածականներ, որոնց հարաբերական և որակական նշանակությունները բաշխվում են լեզվի տարբեր գոյավիճակների շրջանակներում. լեզվի տարժամանակյա կտրվածքում դրանք դիտվում են ներկարգային տարաբժեք բառեր: Այդ կարգի բառերը արդի հայերենին են փոխանցվել հին հայերենի բառային կազմից. հին հայերենում դրանք ունեն հարաբերական ածականի նշանակություն: Լեզվի պատմական զարգացման ընթացքում դրանց բառիմաստները ենթարկվել են զանազան փոփոխությունների, որոնց հետևանքով նրանց իմաստային կառուցվածքից հարաբերական նշանակությունը դուրս է եկել, և դրա փոխարեն զարգացել է որակական նշանակություն:

Ներկարգային այդօրինակ տեղաշարժերը հնարավոր է բացահայտել՝ համեմատելով այդ բառերի գրաբարյան և արդիհայերենյան բառիմաստները:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ ածականի ներսում ներկարգային այդպիսի տեղաշարժերն ընթացել են հարաբերական ածականի

հիմքում եղած նյութական (առարկայական) բառիմաստի վերացարկման և հիմքի կամ արմատի մթագնման ուղիներով⁶:

1. **Բառերի նյութական իմաստի վերացարկման** գործոնով պայմանավորված՝ հարաբերական ածականի հիմքում ընկած առարկայական նշանակությունը (գոյականական հիմքը) ժամանակի ընթացքում կարող է վերացարկվել՝ զրկվելով նյութական նշանակությունից: Այդ գործընթացը կարող է հանգեցնել նրան, որ ածականը հարաբերական տեսակից անցնի նոր՝ որակական նշանակության:

Բնականաբար այդ կարգի բառերի իմաստային անցումներն ու տարաբժեքությունը պետք է դիտարկել գրաբարի և աշխարհաբարի լեզվական նյութի համեմատության համատեքստում:

Այսպես, գրաբարի բառային կազմում *կախարդական*, *աստվածային*, *մոգական*, *դիվական*, *դիվային*, *դժոխական*, *դժոխային* ածականներն ունեն հարաբերականի կարգային նշանակություն⁷, մինչդեռ արդի հայերենում դրանք արտահայտում են որակականի տեսակային նշանակություն: Հմմտ.

Աստուածային – «Աստծուն պատշաճող՝ վայելող» (հարաբ.) – Մատենից *աստուածայնոց* (ՆՀԲ, 1, 526): Նորից երգում-մորմոքում է *աստվածային* Կոմիտասը. Ուրիշներին գինու կարաս, մեզ հերիք է քո մի թասը (ՊՄ, Ա, 201) – (աստծու նման բացառիկ ձիրք ունեցող) – որակ.:

Դժոխային – «դժոխքին հատուկ՝ վերաբերող» (հարաբ.) – *Դժոխային* գործովք գրաւեալս՝ ի լոյսն (ՆՀԲ, 1, 616): Ճանապարհն այս *դժոխային* կարող էր և անվերջ տևել (ՊՄ, Դ, 194) – (չափազանց ծանր, տաժանելի) – որակ.:

Դիւական – «դևերին հատուկ՝ վերաբերող» (հարաբ.)– Որ *զդիւական* գունդսն (զլեզեռն դիւաց) ընկղմեցեր ի տարտարոսն (ՆՀԲ, 1, 628): Օլիմպիայի խաժ աչքերում ինչ-որ *դիվական*, դավաճան բան կար (ԴԴ) – (չար, նենգ) – որակ.:

Դիւային – «դևերին հատուկ՝ վերաբերող» (հարաբ.) – *Դիւային* բազմաստուածութեան նուէրք (ՆՀԲ, 1, 628: Նրա նիհարած դեղնած դեմքը ցույց էր տալիս, որ նա կատարում է *դիվային* ծանր գործ (ԴԴ) – (խիստ ծանր, դժվարին) – որակ.:

Կախարդական – «կախարդներին՝ կախարդությանը հատուկ» (հարաբ.) – *Կախարդական* արուեստ (ՆՀԲ, 1, 1034): Ծաղիկը էն *կախարդական* դոնից ներս է մտնում թե չէ, դուրս է գալիս մի դրախտային այգի (ՀԹ) – (ոչ երկրային, զարմանահրաշ) – որակ.:

⁶ Տե՛ս **Խաչատրյան Լ.Մ.**, Տեղաշարժեր բառերի ձևաբանական իմաստի մեջ, էջ129-130:

⁷ Այստեղ չենք դիտարկում այն հանգամանքը, որ այդ ածականների մի մասը գրաբարում ևս ունեն որակականի նշանակություն:

Մոզական – «մոզերին՝ մոզությանը հատուկ» (հարաբ.) – Ետես *մոզական* կախարդութեանն զօրութեամբ (ՆՀԲ, 2, 192): Ռուստամի երգը մի *մոզական* զորությամբ ազդեց պարոն Աշխարհունու վրա (Բաֆֆ.) – (կախարդական, դյութական) – որակ.:

2. Հիմքի (արմատի) մթագնման հետևանքով հարաբերական ածականները կարող են անցնել որակականի. արդի հայերենում այդ կարգի բառերի հիմքի իմաստը մթագնել է, այդ հիմքերը նախկին իմաստով չեն գիտակցվում, որի հետևանքով փոխվել է նաև դրանց առարկայական հարաբերության իմաստը, և բառերն անցել են որակական ածականների շարքը: Դիտարկենք այդ կարգի բառերի հիմքերի գրաբարյան և արդիհայերենյան իմաստները:

Բնական – «բնությանը հատուկ, բնությունից առաջ եկած». Ջօրէնսն յաւելուած *բնականացն* արարեալ (ՆՀԲ, 1, 495)- հարաբ.: Արդի հայերենում *բուն* արմատը «բնություն» իմաստով չի գիտակցվում. Բայց դա նույնքան *բնական* է, որքան այն հարցը, թե ո՞վ ենք մենք՝ նաիրցիներս (ԵՉ, 198)- (իրական)-որակ.:

Ղյուցագնական – «ղյուցագունների հատուկ». *Ղիւցագնական* օրէնք (ՆՀԲ, 1, 636)-հարաբ.: Արդի հայերենում *ղյուցագն* արմատը *աստվածների ծնունդ* իմաստով չի գիտակցվում. Մեր աշխատանքը *ղյուցագնական* նրան թվում էր սին մի երագ (ԵՉ) – (հերոսական, սխրանքի արժանի) -որակ.:

Տարրական – «տարրերից բաղկացած». Ամենայն *տարրականացն* նիւթք (ՆՀԲ, 2, 858)-հարաբ.: Արդի հայերենում *տարր* արմատը *նյութ* իմաստով չի գիտակցվում. Կարո՞ղ են նրանք հասկանալ արդյոք... թեկուզ *տարրական* մի միտք (ԵՉ)-(պարզ, պարզունակ)-որակ.:

Առաքելական – «առաքյալների ձևով եղած». Իբրեւ ընդ ամուր պարսպաւ պահէ զնոսա իւրով *առաքելական* զօրութեամբն (ՆՀԲ, 1, 297): Արդի հայերենում *առաքել* (առաքեալ) հիմքը «(Աստծու կողմից) ուղարկված» իմաստով չի գիտակցվում. (Պարզ է, որ) քրիստոնեությունը տարածելու *առաքելական* ոգին չէր, որ մղում էր նրանց դեպի Հայաստան (Բաֆֆ.)- (առաքյալների հատուկ)-որակ.:

Պարթևական – «պարթևների (պարթևների ազգին) հատուկ». Ջբնակութիւն *պարթեւական*՝ զձեր սեպհական պահլան ի ձեզ դարձուցից (ՆՀԲ, 2, 635): Արդի հայերենում *պարթև* արմատը «Պարթևների ցեղանուն» իմաստով չի գիտակցվում. Այդ ինչքան էս մեծացել. *պարթևական* ի՛նչ հասակ (ԱԲ) – (հաղթանդամ)- որակ.:

Բսկական – «ինքն իրեն գոյացած». *Բսկական* որդին Աստուծոյ եղեալ ըստ ժամանակին և որդի մարդոյ (ՆՀԲ, 1, 868): Արդի հայերենում *բսկ* արմատը «բուն, հատուկ» իմաստով չի գիտակցվում. *Բսկական* մարմին ստացած՝ կանգնեց խանդավառ Նաիրին (ԵՉ)-(իրական)-որակ.:

Եղերական – «եղեռնին՝ չարագործությանը հատուկ»։ Եւ ոչ եղերականք ջայլից ... կանանց լավականք (ՆՀԲ, 1, 654)⁸: Արդի հայերենում *եղեր* (եղեռն) հիմքը «սպանդ» իմաստով չի գիտակցվում։ Եվ կան անձայն գրքեր, որ լռին սրսկում են սիրտը *եղերական* կրքեր (ԵԶ)-(ողբալի, ցավագին) –որակ.:

Քերթողական – «քերթողներին՝ քերթությանը հատուկ»։ Ոչ երբեք թշնամենալ ընդ առն *քերթողականի* (ՆՀԲ, 1, 1004): Արդի հայերենում *քերթող* հիմքը «քերթողական արվեստի գիտակ. քերական» իմաստներով չի գիտակցվում։ Ո՛, ճարտար ճորտեր մեր քերթության, Եղել էք ակունքը իսկական մեր նոր արվեստի *քերթողական* (ԵԶ) - (բանաստեղծական) – որակ.:

Արարչական – «արարչին հատուկ՝ վերաբերող»։ *Արարչական* մարդասիրութիւն (ՆՀԲ, 1, 340): Արդի հայերենում *արարիչ* հիմքը «Աստված» իմաստով չի գիտակցվում։ Ծեր գգրարների ու մագմանների երգեցիկ զարկեր՝ Մի *արարչական* նվագ... (ՊՄ) - (աստվածային) - որակ.:

Հաւանական - «համոզիչ, հրապուրիչ»։ Քահանայական շնորհի *հաւանական* կամօք արժանի լինել (ՆՀԲ, 2, 72): Արդի հայերենում *հաւան* արմատը «համաձայն» իմաստով չի գիտակցվում։ Ոչ որ *հավանական* խոսք չէր ասում (ՍԶ) – (ճշմարտանման, խելքին մոտ) – որակ.:

Սովորական – «սովորություն եղած»։ Նկուն եղեալ՝ գտաւ ի ներքոյ քան *զսովորական* բնութիւն (ՆՀԲ, 2, 730): Արդի հայերենում *սովոր* արմատը «ծանոթություն» իմաստով չի գիտակցվում։ Եվ այդ հին երկրում ապրում են այսօր շատ *սովորական* մարդիկ՝ *սովորական* մարդու *սովորական* հատկություններով (ԵԶ, 299):

Հական – «ինքն իրեն գոյացած, Աստծու ձեռքով ստեղծված»։ Մի է պատճառ ամենեցուն, և նոյն *հական*, և մշտնջենաւոր (ՆՀԲ, 1, 758): Արդի հայերենում *է* արմատը «գոյություն» իմաստով չի գիտակցվում։ Դու՛ 20-րդ և, անտարակույս, հորեյանական, Դու՛ հյուլեական, կարծես *հական*, Եվ ավելի քան կարծես բանական (ՊՄ, Բ, 105) – (էություն կազմող) – որակ.:

Հայերենի զարգացման համապատկերի շրջանակներում այդ կարգի բառերը համարվում են *տարժամանակյա տարաբժեք բառեր և հատկանշվում են տեղաշարժերի լիակատար բնույթով*:

Այսպիսով, դիտարկելով ածական անվան ներխոսքիմասային տարաբժեքության երևույթը՝ կարելի է եզրակացնել.

ա) տարաբժեքությունը ձևավորվում է ժամանակային երկու կտրվածքներում՝ համաժամանակյա և տարժամանակյա,

⁸ *Եղեռնական* ածականը ժամանակակից հայերենում պահպանում է արմատի նախնական՝ նյութական նշանակությունը, հմմտ. Ղողանջ *եղեռնական* (ՊՄ, Դ, 184):

- բ) ներխուսքիմասային տարարժեքությունը, անկախ ժամանակային գործոններից, ունի իր պատճառակցական հիմքերը կամ գործոնները,
գ) համաժամանակյա տարարժեքության դեպքում կարևորվում են փոխաբերացման և վերաիմաստավորման գործոնները,
դ) տարժամանակյա տարարժեքության դեպքում կարևորվում են բառերի նյութական իմաստի վերացարկման ու հիմքի (արմատի) մթագնման գործոնները:

Համառոտագրություններ

ԱԻ – Ավ.Բասիակյան, *Երկեր, Եր.*, 1955:

ԴԴ – Դ.Դեմիրճյան, *Վարդանանք, հ. 1, Եր.*, 1968:

ԵԶ – Ե.Չարենց, *Ընտիր երկեր, Եր.*, 1955:

ՀԹ – Հովհ. Թումանյան, *Երկերի ժողովածու, հհ. 1-4, Եր.*, 1969:

ՆՀԲ – Նոր բառգիրք Հայկազեան լեզուի, հհ. 1-2, *Վենետիկ, 1836-1837:*

ՊՄ – Պ.Սևակ, *Երկերի ժողովածու, հհ. 1-4, Եր.*, 1972-1973:

ՍԶ – Ստ. Ջորյան, *Երկերի ժողովածու, հ. 1., Եր.*, 1960:

Բաֆֆ.- Բաֆֆի, *Երկերի ժողովածու, հ. 2, Եր.*, 1983:

ВНУТРИЧАСТЕРЕЧНАЯ ПОЛИСЕМИЯ В СМЫСЛОВОЙ СТРУКТУРЕ ПРИЛАГАТЕЛЬНЫХ

Хачатрян Л.М., Мирумян М.В.

Ключевые слова: *внутричастеречные переходы, полисемия, полисемия синхроническая, полисемия диахроническая, частные сдвиги, полные сдвиги.*

Статья посвящена явлению внутричастеречной полисемии в смысловой структуре прилагательных, которая характеризуется срезами синхронии и диахронии.

а/ При синхронической полисемии прилагательные совмещают разные лексические значения в рамках одного и того же этапа развития языка. В этом процессе важное значение имеют факторы метафоризации и переосмысления.

б/ При диахронической полисемии прилагательные из ряда относительных переходят в ряд качественных в разных этапах развития языка. В этом процессе важную роль имеют факторы абстрагирования материального значения слова и затемнение значения основы (корня).

Синхроническая полисемия носит частный характер сдвигов, а диахроническая полисемия – полный характер.

MORPHOLOGICAL POLYSEMY IN THE SEMANTIC
STRUCTURE OF ADJECTIVES

Khachatryan L.M., Mirumyan M.Y.

Key words: *morphological shifts, polysemy, simultaneous polysemy, consecutive polysemy, entire shifts, partial shifts.*

The morphological polysemy of adjectives is formed in two time patterns, which are classified as simultaneous and consecutive. These time patterns are based on certain factors:

a) In case of simultaneous polysemy the adjectives combine different orderly meanings in the same linguistic condition, in the process of which the factors of metaphorization and re-interpretation are highlighted.

b) In case of consecutive polysemy the adjectives shift from the relative type into the qualitative one in different linguistic conditions. The factors of the loss of the word meaning and obscuration of the root are highlighted in this process.

The simultaneous polysemy is characterized by partial shifts, while the consecutive polysemy is characterized by entire shifts.

R e f e r e n c e s

1. **Abrahamyan S.G.**, Parnasyan N.A., Ohanyan H.A., Jamanakakiz hayoz lezu, h.2, Ye., «Izd. GA», 1974 (**In Armenian**).
2. **Jahukyan G.B.**, Jamanakakiz hayoz lezvi imastabanutyun ev barakazmutyun, Ye., «Izd. GA», 1989 (**In Armenian**).
3. **Khachatryan L.M.**, Texasharjer bareri dzevabanakan imasti mej, Ye., «Izd. lujs», 1985 (**In Armenian**).
4. **Khachatryan L.M.**, Khosqimasayin tararjequtjunn ardi hayereni kayun kapakzutyunnerum, Ye., «Izd. GA», 1996 (**In Armenian**).
5. **Khachatryan L.M.**, Lezvabanutyun nerazutyun, Ye., «Izd. Zangak», 2008 (**In Armenian**).

Ընդունվել է՝ 18.10.2019
Գրախոսվել է՝ 25.10.2019
Հանձնվել է տպ.՝ 20.11.2019

Տեղեկություն հեղինակների մասին

Լայիկ ԽԱՉԱՏՐՅԱՆ՝ բան. գիտ. դոկտոր., պրոֆեսոր,

Խ.Աբովյանի անվ. ՀՊՄՀ-ի լեզվաբանական հետազոտությունների
լաբորատորիայի տնօրեն, էլ. փոստ՝ lingualal51@mail.ru.

Մարգարե ՄԻՐՈՒՄՅԱՆ՝ մանկ. գիտ. թեկնածու., դոցենտ,

Խ.Աբովյանի անվ. ՀՊՄՀ-ի դոցենտ, էլ. փոստ՝ mirumyan1951@mail.ru

ՀՏԴ՝ 811.19

Ճ ՄԿԶԲՆԱՀՆՉՅՈՒՆՈՎ ՄԻ ՔԱՆԻ ԲԱՌԵՐԻ

ՄՏՈՒԳԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Հովհաննես Չաքարյան

«Տաթև» գիտակրթական համալիր

Բանալի բառեր՝ *հայոց լեզու, ստուգաբանություն, հնդեվրոպական նախալեզու, արմատ, ածանցյալ, ածական, ձայնդարձ, արմատային տարբերակներ, շարժուն s-, սկզբնահնչյուն:*

Սույն հոդվածում առաջարկվում է հայերենի ճ սկզբնահնչյունի հնդեվրոպական ծագման մի նոր վարկած, որն է՝ ճ < *sk'h համապատասխանությունը, որտեղ հ.-ե. նախաձևը բաղկացած է շարժուն s- և քմայնացած ու շնչեղացած k հնչյուններից: Այդ վարկածի հիման վրա առաջարկված է ճեղք, ճիւղ, ճաղ, ճղել, ճոլտել, ճողփել, ճողոպրել, ճողոպուր, ճաք, ճաթել, ճախ, ճակ, ճիւ, ճուռն, ճուռճուռ բառերի ստուգաբանությունը:

Նախաբան. Հ. Աճառյանը հայերեն ճ-ի հնդեվրոպական ծագման վերաբերյալ փաստել է բառավերջի ճ < g²y (g^wy) համապատասխանությունը երեք բառի օրինակով՝ *աճել, աճիւն, լիճ* (ԼՔՀԼ, 535-536): Գ. Ջահուկյանը նույն բառավերջի դիրքի համար ավելացրել է ճ < *d(io) (*խեճ-եւյ, խիճ, խիղճ, շիճ, շոճ* նն) համապատասխանությունը (ՀՄԲ): Նա նաև առաջարկել է բառասկզբի համար ճ < *g համապատասխանությունը միայն երկու արմատի համար՝ *ճվլ-ել, ճնշ-ել* (ՀՄԲ): Ակնհայտորեն այսքանը բավարար չէ հայերենի ճ հնչյունի ծագումը համակողմանիորեն բացատրելու համար: Դրա հետ կապված՝ Է. Աղայանը նկատել է, որ առհասարակ հստակ չէ հայերենի ճ հնչյունի ծագումը (Աղ., 113-115): Նրա այս դիտարկման առիթը Հ. Աճառյանի նկատած (ՀՄԲ, 3, 203-204) *ճիւղ, ճեղ, ճիղ, ճող, ճուղ(ն)* ձայնդարձային շարքի քննարկումն է, որի արդյունքում, շարունակելով Պետերսոնին (ինչպես նաև Վալդեին ու Պոկոնոն), այդ բառերը կապել է հ.-ե. *(s)k(h)el- «կտրել, ճեղքել» արմատի հետ (նույն տեղում)՝ սակայն առանց հստակեցնելու ճ-ի նախաձևը: Այս եզրահանգումը կարելի է ամրապնդել *ճեղ(ք), ճիղ, ճիւղ և ճեղք, շիղ, շիւղ* ձայնդարձային շարքերի զուգահեռությամբ: Իսկ *ճեղք*-ը Է. Աղայանը (նաև Գ. Ջահուկյանը) բխեցրել են նույն *(s)k(h)el- «կտրել, ճեղքել» արմատից (Աղ. 126-127, ՀՄԲ, 585): Հ. Աճառյանը

նկատել է նաև դրանց զուգահեռությունը *ծիլ-ծիղ-ծիւղ* շարքի հետ (ՀԱԲ, նույն տեղում):

Ըստ Յ. Պոկոռնու, Հ. Աճառյանի, Գ. Ջահուկյանի, Ս. Նիկոլյանի ստուգաբանական բառարանների (Պոկ., ՀԱԲ, ՀՄԲ, Նիկ.) տվյալների՝ հ.-ե. բառասկզբի **(s)k'(h)*- հնչյունակապակցություն՝ իր շարժուն (սահող) *s*-ով/առանց *s*-ի¹, շնչեղացած/շնչեղացած, քմայնացած/չքմայնացած *k*-ով տարբերակներով, հայերենում արտացոլվել է հետևյալ համապատասխանություններով:

1. **(s)k > p* (*քերել, քիւ, քորել, քուրջ, քաղել նն*),
2. **(s)k' > u* (*սենեակ, սկրթել, սալարիլ նն*),
3. **(s)kh > h* (*խելք, խել, խիլ, խոր, խուղ, խաւ նն*),
4. **sk > k* (*կեղել, կոփ, կուրտ, կտել նն*),
5. **sk' > g* (*ցեղ, ցիր, ցուպ, ցախ, ցլեպ նն*),
6. **skh > z* (*շիւղ, շերտ, շիւ, շոր, շարշլել նն*):

Այս շարքում բացակայում են **(s)k'h* և **sk'h* կապակցությունները:

Հիմք ընդունելով վերոհիշյալ զուգահեռները՝ կարծում ենք, թե նշված բառերում *ճ*-ի նախաձևը կարող է լինել **sk'h* (շարժուն *s*-ով, քմայնացած ու շնչեղացած *k*-ով) տարբերակը: Ինչ վերաբերում է **(s)k'h* (շարժուն *s*-ի անկումով և քմայնացած ու շնչեղացած *k*-ով) տարբերակին, ապա կարծում ենք՝ դրա հայերեն արտացոլումը կարող է լինել *ծ* սկզբնահնչյունը: Մի այլ առիթով փորձել ենք օրինակներով ու զուգահեռներով փաստարկել ու հիմնավորել **(s)k'h > ծ* վարկածը (Չաք.-3):

Ստորև կփորձենք փաստարկել ու հիմնավորել **sk'h > ճ* վարկածը՝ նկատի ունենալով ոչ միայն *ճիւղ – շիւղ, ճեղ – շեղք*, այլ նաև *ճիւ «ցողուն» – շիւ, ճորճոր – շորոր, ճկ-ոյթ – ծկ-իկ, ճոռ – ծուռ, ճախ – ցախ, ճողճել – ցոլալ, ճուռն – կուռն, ճուռճուռ – կուռկուռ, ճոռ – խոռ, ճզմզել – խզմզել* և նման այլ զուգահեռներ:

Արդյունքում առաջարկվում են մի շարք նոր ստուգաբանություններ կամ ստուգաբանական վերանայումներ ու ճշգրտումներ: Օրինակները հիմնականում հ.-ե. **sek-* «կտրել, հատել, ճեղքել» պարզական արմատից սերած բառեր են: Ինչպես հայտնի է, այդ արմատը և դրա՝ սղված, ապա զանազան աճականներով ընդլայնված, ձայնդարձի տարբեր աստիճաններով արտահայտված

¹ Շարժուն **s*-ի մասին տե՛ս, օրինակ Աճառյան Հ.Հ., ԼՔՀԼ, 563; **Макаев Э. А.**, *Структура слова в индоевропейских и германских языках*. М., «Наука», 1970, էջ 217-253; **Семереньи О.**, *Введение в сравнительное языкознание*. М., «Прогресс», 1980, էջ 119-120, 108-109; https://ru.wikipedia.org/Закон_Зибса (մարտ, 2019); https://en.wikipedia.org/wiki/Indo-European_s-mobile (մարտ, 2019):

տարբերակները լայն տարածում ու ճյուղավորումներ ունեն դուստր լեզուներում, այդ թվում՝ հայերենում²:

1. *Ճեղք, ճիւղ, ճաղ, ճղել, ճոլտել, ճողփել, ճողոպրել, ճողոպուր*

Նախ՝ Է. Աղայանի մատնանշած *ճեղ(ք), ճիղ, ճիւղ, ճող, ճուղն* շարքի մասին³: Դրանց համար առաջարկում ենք *sk'hel-/*sk'hēl-/*sk'heul-/*sk'hol-/*sk'hōl- նախաձևը (<*(s)ke-l- <*sek- «կտրել, ճեղքել»)՝ վանկարար հնչյունի երկար ու կարճ տարբերակներով, ձայնդարձի տարբեր աստիճաններով: Այս շարքին անշուշտ պետք է ավելացնել *ճաղ*⁴ «1. ձող, 2. կտոր, շերտ» <*sk'həl- բառը՝ որպես նշված նախաձևի ստորին ձայնդարձի արտահայտություն: Ածանցյալներից պետք է հիշել *ճղել (ճեղել)* «1. պատռել, ճեղքել, 2. ճողոպրել, փախչել, ծլկել», *ճողել* «1. պոկել, զատել, ճղել, 2. ճյուղ-ճյուղ անել, 3. մազերը փետել, 4. բուրդ զզել, 5. ձգելով երկարացնել, 6. աղեթափել» և *ճողքել* «բզկտել, փետել, պոկոտել» բայերը⁵: Այլ ածանցյալներ են՝ *ճղօն* «ճեղքված փայտի կտոր» (Մալխ., 3, 216), *ճղակ* «1. ճեղք, 2. պատառաքաղ» (ՀԼԲԲ, 3, 398), *ճղլակ* «երկճղի» (Մալխ., 3, 215), *ճելատ* «պոչը կտրած» (Մալխ. 3, 206)՝ *-օն, -ակ, -լակ, -ատ* ածանցներով (հմմտ. *հատ-ակ, սուղ-ակ, կտր-օն, կրճ-օն, քաղ-լակ, մղ-լակ, պոչ-ատ, միջ-ատ* և այլն):

Ճոլտել «պոկել, ոլորելով կտրել» (Մալխ., 3, 321) բառը, որ չկա ստուգաբանական բառարաններում, ոչ միայն հոմանիշ է, այլև նույնարմատ է *ճղել, ճողել, ճողքել* բառերին՝ տարբերվելով –տ- ածականի առկայությամբ և ուշ շրջանի ղ/լ հերթագայությամբ՝ ճոլտել <*sk'hol-d-:

Ճողփել «ջուրը ճեղքել՝ պատռել» բառի *ճողփ* արմատը Հ. Աճառյանը համարել է բնաձայնություն (ՀԱԲ, 3, 211): Նույնը կրկնել է Գ. Ջահուկյանը (ՀԱԲ, 496): Սակայն այդպիսի տպավորություն թողնում է դրա ածանցյալ *ճողփյուն* «ջուրը ճեղքելու ձայն» բառը, որը իմաստային հետագա զարգացման արդյունք է: Իսկ *ճողփ-* արմատի համար պետք է վերականգնել հ.-ե. *sk'ho-l-ph- (<*sek-

² Ածանցյալների այդ հսկա բազմությանը ծանոթանալու համար տե՛ս Պոկ., Նիկ.՝ մասնավորապես *sken- «կտրել, պոկել», *(s)ken-(d)- «մաշկել, ճեղքել», *(s)ker-4, (s)kerə-, (s)krē- «կտրել», *(s)ker-p- «կաշվի կտոր, կոշիկ», *(s)keu-2, (s)keuə, (s)kū- «ծածկել, թաքցնել, փաթաթել, ծածկոց», *(s)keu-l-(kh-) «ծածկ, թաղանթ, կաշի, մորթի», *(s)ko-l- «կտրել» և այլ գլխաբառերի տակ:

³ Այս բառերը Հ. Աճառյանը (ՀԱԲ, 3, 194, 195, 203-204) և Գ. Ջահուկյանը (ՀԱԲ, 491, 493-494) չեն ստուգաբանել: Այդ բացը, ինչպես նշված է վերը, մասամբ լրացրել է Է. Աղայանը:

⁴ Այս բառի ստուգաբանության խնդրում տարակարծություն կա: Հ. Աճառյանը համարել է փոխառություն վրացերենից (ՀԱԲ, 3, 178), իսկ Գ. Ջահուկյանը, իրավացիորեն առարկելով Հ. Աճառյանին («վրացերեն čali-ն համաքարթվելական չէ»), վրացերենի հետ միասին կասկածով հա-մարել է իրանական փոխառություն՝ սակայն առանց աղբյուր և սկզբնաձև մատնանշելու (ՀԱԲ, 486):

⁵ Սրանք Հ. Աճառյանը (ՀԱԲ, 3, 194, 210-211) և Գ. Ջահուկյանը (ՀԱԲ, 491, 495, 496) չեն ստուգաբանել, ընդամենը նշել են դրանց կապը *ճիւղ, ճեղք, ճող* բառերի հետ: Է. Աղայանը չի հիշատակել *ճղել, ճողել, ճողքել* բառերը (նույն տեղում), թեև դրանք ինքնըստինքյան ենթադրելի են:

«կտրել, ճեղքել») նախաձևը, որ նախորդներից տարբերվում է միայն –փ- աճականով:

Ճողոպրել «1. փրցնել, խլել, պոկել, 2. փախչելով փրկվել, պրծնել, ծլկել» բառը Հ.Աճառյանը և Գ. Ջահուկյանը համարել են անհայտ ծագման (ՀՄԲ, 3, 211, ՀՄԲ, 496): Սակայն նկատենք այս բառի թե՛ իմաստային, թե՛ ձևային նմանությունը վերոհիշյալ *ճղել* «1. պատռել, ճեղքել, 2. ծլկել, փախչել, անհետանալ» բառին (Մալխ., 3, 215):⁶ Հատկապես կարևոր է սրանց իմաստային զարգացման նույնությունը: Ակնհայտ է, որ սրանք նույնական են նաև ծագմամբ, ուստի *Ճողոպրել*-ի համար պետք է վերականգնել **ճողոպուր-* հիմքը, որ ածանցավոր է՝ *ճողոպուր-*: Արմատի համար կարելի է առաջարկել հ.-ե. **sk'holo-b-* <**sk'ho-l-* նախաձևը: Իսկ –*ուր* ածանցի համար հմմտ. *թափ-ուր*, *մր-ուր*, *բլ-ուր*, *բար-ուր*, *կտ-ուր* և այլն: Կա նաև *ճլկել* «ծլկել» բառը (Մալխ. 3, 212), որի հիմքը *ճողոպ-* հիմքից տարբերվում է ձայնավորմամբ, աճականով և ղ/լ հերթագայությամբ, ուստի *ճլկ-* արմատի համար կարելի է ենթադրել <**ճուլուկ* <**sk'hōlō-g^w*- <**sk'hō-l-* նախաձևը: Իսկ *ճղկել* բառը դրա նույնարմատ տարբերակն է՝ *ճղկ-* <**ճուլուկ* <**(s)k'hōlō-g^w*- <**(s)k'hō-l-* (Չաք.-3):

Ճողոպուր(տ) «ընկույզ» բառը, որ համանուն է նախորդ բառի հիմքին, Հ.Աճառյանը համարել է փոխառություն կովկասյան լեզուներից (<*ճուրբուրի*)՝ չնայած հնչյունական մեծ տարբերություններին (ՀՄԲ, 3, 211): Գ. Ջահուկյանը համաձայն է այդ կարծիքին (ՀՄԲ, 496), թեև այլ առիթով կ/ճ հերթագայությամբ բառազույգերի շարքում նշել է նաև՝ *կաղին/ճողոպուրտ*:⁷ Այս վերջինի տրամաբանությամբ Հ. Մարտիրոսյանը *ճողոպուրտ*-ի համար ենթադրել է **ճեղ-* արմատը և դա բխեցրել հ.-ե. **g^welh₂-* «կաղին» նախաձևից⁸, որից ծագած է համարվում նաև *կաղին* բառը (ՀՄԲ, 377): Թեև սա հավանական տեսակետ է, բայց առաջարկում ենք մեկ այլ վարկած: Կարծում ենք, թե *ճողոպուրտ* «ընկույզ» բառի բնիմաստն է «պոկել, փրցնել, ճեղքել, կեղևել», ինչպես որ *պոպոկ* և *կաղաղ* հոմանիշների դեպքում: Ինչպես նշել է Հ. Աճառյանը (ՀՄԲ, 4, 98-99), *պոպոկ*-ի կրկնված արմատը *պոկ-*ն է (որից՝ *պոպոկել* «կեղևել, կճպել»), իսկ *կաղաղ*-ի առաջնային իմաստն է՝ «կեղև»: Խնդիրն այն է, որ ընկույզը հավաքում են այն ժամանակ, երբ նրա կիսաչորացած կանաչ կեղևը դեռ վրան է, այնուհետև պո-

⁶ Նույնպիսի իմաստային զարգացում է առկա ռուս. *удрать* «ծլկել, ճողոպրել, փախչել» բառում, որը *драть* «պատառոտել, ճղճղել, քերթել, պոկել, փրցնել» բառի ածանցյալն է (ՎԲՌ): Նույնը՝ անգլ. *lat* «ջարդել, ծեծել» բառը, որ ունի նաև «փախչել, ծլկել, ճողոպրել» իմաստը (ՎԲՄ):

⁷ Տե՛ս *Джаукян Г.Б., Очерки по истории дописьменного периода армянского языка*, Ե., Изд-во АН Арм ССР, 1967, стр. 167:

⁸ Տե՛ս *Martirosyan H.K., Etymological dictionary of the Armenian inherited lexicon*, «Leiden Indo-European Etymological Dictionary Series, Volume: 8», Brill, 2008, p. 98-99.

կում են այդ կանաչ կեղևը, ավելի ուշ ճեղքում են չոր կեղևը և հանում միջուկը: Կարելի է կարծել նաև, որ *ճողոպուր* «ճողվող, ճեղքելի» կոչվել է դյուրաբեկ կեղևով, հեշտ կոտրվող, դյուրին ճեղքվող ընկույզը: Հիշենք, որ հայերենում՝ *ընկույզ* բառի հոմանիշների կամ ընկույզի ածականների շարքում տարբեր բառեր կան, որոնք նշում են ընկույզի հեշտ կամ դժվար կոտրվող կամ միջուկը հեշտ կամ դժվար դուրս եկող լինելու հատկանիշը: Օրինակ՝ *կռու (կռն)* «դժվար կոտրվող», *կրկիտ* «միջուկը դժվար դուրս եկող», *կցիպ (քցիպ)* «կռու», *խեճեճ* «բարակ՝ դյուրաբեկ կեղևով»: Հետևաբար *ճողոպուր* «ընկույզ» բառի համար հնարավոր է նույն ստուգաբանությունը, ինչ *ճողոպրել* բառի հիմքի համար: Իսկ *ճողոպուրտ* տարբերակի տ վերջնահնչյունը հայերենի նաև գրային շրջանին բնորոշ ածական է (հմմտ. *Լաստիվերտ, շրեշտ, ճուլպանտ* են) և բանավոր խոսքում կցվում է անգամ փոխառյալ բառերին (*կռանտ, կալբաստ, ալմաստ, փարդախտ* են): Ի դեպ, ոչ միայն վերոհիշյալ *կաղաղ*, այլև *կակալ* «ընկույզ» բառերի կրկնված *կաղ-կալ-* արմատը ակնհայտորեն կապված է *կեղև (կլեպ)* [*<*(s)kel-eb-* «կտրել, անջատել»] (ՀՄԲ, 398) բառի հետ: Մնում է պարզել դրանց առնչությունը *կաղին-*ի հետ:

2. Ճաք, ճաթել, ճախ, ճակ, ճիւ

Նշված հ.-ե. *sek- արմատի իմաստային զարգացումների թվում կան ոչ միայն «կտրել, հատել, ճեղքել» իմաստով, այլև դրանից ճյուղավորված «կտոր, բեկոր, մաս, հատված» իմաստով բառեր: Դրանցից հիշենք *ցախ* «կտրտած վառելիքայտ» [*<*(s)k'-kho-* «ճյուղ»] (ՀՄԲ, 4, 446-447)⁹, *խրխր* «1. փշուր, մանր կտոր, չնչին բան, 2. փուխր» [*<խոր-խոր <*(s)khor-*՝ կրկնությամբ] (ՀՄԲ, 355), *խշուր* «կտորտանք, խոփվ, փշուր, մանրուք, տաշեղ» [*<*(s)khd-skh-*ուր] (Չաք.-2, 86), *կրկուտ* «փայտի կտորտանք, խոփվ» *<կուր-կուր-տ <*(s)kō-r-*] (Չաք.-2, 89), իռլ. *cert* «մանր, փոքր», հ.անգլ. *sceard* «փշուր» (Պոկ, 938-947), ցելուկ «ճեղքել, պատռել» (ՀՄԲ, 4, 542), ռուս. *щель* «ճեղք», անգլ. *shilling* «մանրադրամ», հուն. **σκάλλω** «փորում եմ», լիտվ. *skėlti, skeliù* «ճեղքել», ռուս. *осκόлок* «բեկոր», իեթ. *iškallāi-* «կտրել» (ՎԲՌ, щель), *խզել (խուզ)* «պոկել, կտրել» [*<*(s)khu-g'h-*] (ՀՄԲ, 328), *խիզար* «կտրիչ, մեծ սղոց» [*<*(s)khēi-g'h-*] (ՀՄԲ, 329), *խրալ* «փոս, առու, ճեղք» [*<*(s)khrəm-*] (ՀՄԲ, 354), *ցլեպ (ցլեփ)* «փոքր սրածայր բեկոր» [*<*(s)k'(ē)leb-*] (ՀԼՊ ԵԺ, 148), *կոտոր/կտոր/կտրել* «հատել» [*<*(s)ko-t-*] (Չաք.-1, 89-90), *քարթ*

⁹ Այս բառի նախաձևը ներկայացնում ենք ըստ Պետերսոնի (տե՛ս ՀՄԲ, նույն տեղում): Հ. Աճառյանի նշած *k'ākā- (ըստ Բարթոլոմեի) և Գ. Չահուկյանի առաջարկած *k'āk- (ՀՄԲ, 741) տարբերակները հարմար չեն, քանի որ հ.-ե. *k'-ն հայերենում դատնում է ոչ թե ց, այլ ս: Ասվածին համահունչ է *ցարատ* «ճյուղ կտրելու գործիք» [*<*(s)k'ak-*] (ՀԼՊ ԵԺ, 130) ստուգաբանությունը (*ցար-* և *ցախ* արմատները Հ. Աճառյանը համարել է տարբերակներ (ՀՄԲ, 4, 446-447):

(*քառթ*) «խազ, կտրվածք, քերծվածք» [$\langle *(\text{s})\text{k}\text{ər}-\text{t}-\rangle$] (Չաք.-1, 90)¹⁰ բառերը: Այս շարքին կարելի է ավելացնել հետևյալ բառերը, որոնք ներկայացնում են «ճեղք» և «կտոր, բեկոր, հատված» իմաստներն ու դրանց հետագա զարգացումները:

Ճաք «փոքր ճեղք» բառը (Մալխ., 3, 205) չկա ստուգաբանական բառարաններում: Հոմանիշ է վերոհիշյալ *ճեղք* բառին, որի հ.-ե. արմատն է $*\text{sk}'\text{h}\text{e}-$ ($\langle *(\text{s})\text{ek}-$ «կտրել, ճեղքել»)՝ $*1$ ածականով: *Ճաք* բառի դեպքում առկա է նույն արմատը՝ այլ ձայնավորմամբ և այլ ածականով՝ $*\text{sk}'\text{h}\text{ə}-\text{k}-$: Նույն արմատի մեկ այլ ածանցյալ է *քերծել* [$\langle *(\text{s})\text{ker}-\text{g}'-\rangle$] բառը (ՀԱԲ, 4, 573): Կարելի է հիշել նաև *խոր-խորել* «հողը չորանալուց ճաքճքել» բառը, որի արմատն է՝ *խոր* $\langle *(\text{kho}-\text{r}-$ «կտրել» (հնչյունափոխված կրկնությամբ) (ՀԱԲ, 343) (կազմության համար հմմտ. *Խար-խլել, շարշլել*):

Ճաթել «ճաքել» (Մալխ., 3, 190) բառը, որ չկա ստուգաբանական բառարաններում, նույնարմատ է *ճաք* բառին՝ այլ ածականով՝ *ճաթել* $\langle *(\text{sk}'\text{h}\text{ə}-\text{t}-$: Այդ նախաձևի իմաստային մեկ այլ զարգացում է *ճաթ* «պատարոտված շոր, ցնցոտի, քուրջ» (Մալխ., 3, 190) բառը:

Ճախ (*ճեխ*) «1. մանր ցախ, խոփ, կրկուտ, 2. սարի, 3. լայն, ճողված (բերան)» բառը (Մալխ., 3, 190, 206), որ չկա ստուգաբանական բառարաններում, տարածված է բարբառներում և հոմանիշ է վերոհիշյալ *ցախ* բառին: Այս նույն-իմաստ բառերի ձևային նմանությունն այնքան մեծ է, որ մնում է ենթադրել դրանց նույնարմատ լինելը՝ *ճախ* $\langle *(\text{sk}'\text{h}\text{ə}-\text{kh}-$: Նկատենք, որ նույն նախաձևի այլ տարբերակներից են սերել վերոհիշյալ *խշուր, կրկուտ* հոմանիշները: Հիշենք նաև *ճախավել* – *ցախավել* նույնանիշները (Մալխ., 3, 190): Ինչ վերաբերում է *ճախի-ի խոփ* հոմանիշին, ապա Գ. Ջահուկյանը դրա համար ենթադրել է հ.-ե. $*(\text{s})\text{kr}\text{ēbh}-$ «ծռել, կծկվել» նախաձևը (ՀԱԲ, 351): Սակայն իմաստից ելնելով՝ կարծում ենք, թե ավելի կպատշաճեր համանուն $*(\text{s})\text{khre}-\text{bh}-$ (կամ $*(\text{s})\text{khre}-\text{p}-$) «կտրել, ճեղքել» նախաձևը, որ նախորդ բառերի նախաձևերի մի տարբերակն է: Դրա նույնարմատ մեկ այլ տարբերակ է *խոփ* «խոփ, խուշուր» (Մալխ. 2, 303) բառը [$\langle *(\text{s})\text{khre}-\text{g}-\rangle$]: Անշուշտ, նույն հ.-ե. արմատից են *խոփնձ* «չորացած՝ խանձված՝ խոփ դարձած բույս» և *խոնձվել* «խճճվել, թնջկել» (Մալխ. 2, 303) բառերը [$\langle *(\text{s})\text{khre}-\text{n}-\text{g}'\text{h}-\rangle$]:

Ճակ «կտոր, փերթ, շառաշիղ» արմատը Հ. Աճառյանը դուրս է բերել *աղուճակ* «աղի մեծ կտոր» բառից¹¹ (ՀԱԲ, 3, 175): Գ. Ջահուկյանը ենթադրել է, որ *ճակ*-ը փոխառություն է անստույգ աղբյուրից (ՀԱԲ, 485): Սակայն այս բառի

¹⁰ Տե՛ս նաև *Միմոնյան Ն. Մ., Ստուգաբանական դիտարկումներ // «Բանբեր Երևանի համալսարանի. բանասիրություն», 2016, հմ. 1, էջ 26-32:*

¹¹ Այս բառի ու ձայնավորի համար հմմտ. *աղուփոխ* «բարեկամությունը նենգող» բառը (ՀԱԲ, 1, 115)՝ նույն աղ բաղադրիչով:

թե՛ ձևը, թե՛ իմաստը հուշում են, որ նա նույնարմատ է նախորդ բառերին՝ աճականի տարբերությամբ՝ *ճակ* <*skʰə-g-: Ի դեպ, աղուճակ-ի հոմանիշն է անհայտ ծագման համարված *շառաշիղ* (*շառաշեղ*) «աղի մեծ կտոր» (ՀԱԲ, 3, 496, ՀՄԲ, 581) բառը: Սա ըստ երևույթին բարդ բառ է, որի *շառ-* և *շիղ* բաղադրիչները կարելի է համարել հ.-ե. վերոհիշյալ *sek- «կտրել, ճեղքել» արմատի տարբերակված ածանցյալների հոմանիշ ժառանգներ՝ «կտոր» իմաստով՝ *շառ-* <*skhə-r-so- և *շիղ* <*skhē-l-, այսինքն՝ ունենք արմատի տարբերակներով կազմված յուրատեսակ կրկնավոր (հմմտ. բարձրաբերձ, աղջամուղջ, տարտամ և այլն): Սրանց նույնարմատ մեկ այլ հոմանիշ է շերտ «տափակ կտոր» [<*skhe-r-d-] բառը (ՀՄԲ, 586):

Ճիլ «1. մաս, կտոր, 2. վերջույթ (թև, ճուռ, ոտք, կճղակ, սմբակ, ամորձիք), 3. թռչուն, 4. ցողուն, 5. ականջօղի կանթ, վզնոցի կեռիկ, 6. ընկույզի կճեպ» (ՀԼԲԲ, 3, 390, Մալխ. 3, 211, ՀՄԲ, 3, 202, ՀՄԲ, 493) բառը մինչ այժմ համարվել է անհայտ ծագման: Դրանից են կազմված *ճիվ-ճիվ անել* «կտոր-կտոր անել, մասնատել, հոշոտել», *ճվոն-ճվոն* «ճիվ-ճիվ բաժանած, ճվատած, բզկտած» հարադրությունները, *ճվատել* (*ճուատել, ճվտել*) «1. քաշելով պոկել, 2. փետրել, 3. ճեղքել, ճաքեցնել», *ճվտկել* «ծառի ճյուղերը կտրտել, էտել» և այլ ածանցյալներ: Առաջարկում ենք այս *ճիլ* արմատը ևս կապել նախորդների հետ՝ այլ աճականով՝ *ճիլ* <*skʰē-p-: Որպես հիմնավորում նկատենք, որ այս արմատի ու նրա ածանցյալների այս կամ այն իմաստային զարգացմանը զուգահեռ են նույն նախաձևի այլ տարբերակներից սերած *շիլ* «ղալար ճյուղ, շյուղ» [*skhē-p-] (ՀՄԲ, 588-589), *շիղ* (*շեղ, շիւղ*) «շիվ, դալար ճյուղ» [*skhē-l-] (ՀՄԲ, 587), *ճիւղ* «1. ոստ, 2. մաս, կտոր, բաժին, հատված, 3. վտակ, 4. կողմ, թև, 5. բնագավառ, ուղղություն, գիծ» [*skʰeu-l-] (տե՛ս վերը), *ծիւղ* (*ծիղ, ծիլ, ծեղ*) «ընձյուղ, շյուղ, ցողուն» [*(s)kʰeu-l-] (Չաք.-3), *խեղբ* (*խիղբ*) «ծիլ, ընձյուղ» [<*khe-l-p-] (ՀՄԲ, 326), *ցավատ* «ծվեն, պատառ» [*skəu-aat] (ՀՄԲ, 742), *կեղեւ* (*կեղեք, կլեպ, քեղեփ*) [*kel-eb(h)-կամ *kel-ep(h)-] (ՀՄԲ, 398), *ցիտ* «բզկտված, պատառոտված» [<*skʰid-] (ՀՄԲ, 4, 455-456), *քաղել* «պոկել» [<*(s)kɫ-] (ՀՄԲ, 4, 541-542), *շորթել* «խլել, կորզել, հափշտակել» [*skhort-] (ՀՄԲ, 593), *շարշլել* «պատառոտել» [*skhər-՝ հնչյունափոխված կրկնությամբ] (ՀՄԲ, 583) և այլ բառեր: Այս բառերի հղումներով կարելի է գտնել նաև մի շարք այլալեզու զուգահեռներ, որ չենք կրկնում տեղի սղության պատճառով:

3. *Ճուռն, ճուռճուռ*

Այս խմբի բառերի ընդհանուր իմաստն է «թև»:

Ճուռն «1. կուռ, թև, ոտք» բառը Հ. Աճառյանը և Գ. Ջահուկյանը համարել են անհայտ ծագման (ՀՄԲ, 3, 214, ՀՄԲ, 497): Նկատի ունենալով *ճիլ* բառի հետ իմաստային ընդհանրությունը («1. թև, 2. ոտք»)՝ ենթադրում ենք, որ դրանք նաև

հ.-ե. նախաձևի արմատով են ընդհանուր՝ տարբերվելով ձայնավորմամբ և աճականներով՝ <*sk'hōr-s-no- <*sk'he-r- (<*sek-): Իր հիմնական իմաստով այս բառի հոմանիշն է *կուռն* «1. թև, 2. ուսահող, 3. կողք, 4. կոնակ, մեջք, թիկունք, 5. կրունկ» բառը: Հետևելով Յ. Պոկոռնուն՝ Գ. Ջահուկյանը սա բխեցրել է հ.-ե. *gur-no-s-՝ *geu- «ծռել, կամար կազմել» նախաձևից (ՀՄԲ, 428), որը Հ. Աճառյանը չի ընդունել (ՀՄԲ, 2, 663): Մինչդեռ *կուռն* բառը օրինաչափորեն կարող էր ծագել *skōr-s-no- նախաձևից:¹² Մանավանդ որ կան *ճուռն* և *ճիւ* բառերը՝ «1. թև, 2. ոտք» իմաստներով: Մի կարևոր հանգամանք էլ այն է, որ ունենք *կ-ճ* անցման ևս մի քանի դեպք՝ հմմտ. *ճուռճուռ* – *կուռկուռ* «հնդկահավ» (Մալխ., 3, 225, 2, 484), *ճուռիկ* – *կուռիկ* «կավե փոքր աման» (ՀԼԲԲ, 3, 424), *ճայթել* – *կայթել* «ցատկոտել, թռչկոտել» (ՀՄԲ, 3, 181): Այսինքն՝ *կուռն* և *ճուռն* բառերը ծագումով նույնական են՝ որպես միևնույն արմատի սկզբնահնչյունի հերթագայությամբ տարբերակներ:

ճուռճուռ (*ճուրճուր*, *կուռկուռ*) «1. հնդկահավ, 2. վախկոտ փոքր թռչուն» դեպքում ունենք կրկնավոր կազմություն, որի արմատը նույնն է, ինչ *ճուռ(ն)* (*կուռն*) բառինը՝ «թև» իմաստով: Այսինքն՝ *ճուռճուռ* (*կուռկուռ*) տառացի նշանակում է «թևավոր, թռչուն»¹³: *ճուռ* (*կուռ*, *ճուր*) արմատը նաև «փոքր, հատված, կտրված» իմաստն ունի ոչ միայն *ճուռճուռ* (*կուռկուռ*) դեպքում, այլև *ճուռնիկ* «զինու գլանաձև կավե փոքր բաժակ» (Մալխ., 3, 225), *ճուռիկ* (*կուռիկ*) «կավե փոքր աման» (ՀԼԲԲ, 3, 424), *ճուռիկ* «կարճ մարդ» (ՀԼԲԲ, 3, 424), *ճուրիկ* «փոքր դանակ» (ՀԼԲԲ, 3, 425), *ճուռա(յ)* «փոքր սրինգ» (ՀԼԲԲ, 3, 424), *ճուռեկ* «պոչատ հավ» (Մալխ., 3, 225), *ճուռճիկ* «անթև բաճկոն» (Մալխ., 3, 225), *ճուռիկ* «ձագար»¹⁴ (ՀԼԲԲ, 3, 424) բառերում:

Եզրահանգում. Ճ սկզբնահնչյունով հայերեն բառերի ստուգաբանությունների այս շարքը շարունակելի է ոչ միայն այս, այլև հ.-ե. ուրիշ արմատների առնչությամբ: Սակայն տեղի սղության պատճառով առայժմ սահմանափակվում ենք այսքանով:

Այսպիսով եզրակացնում ենք, որ հայերենի ճ սկզբնահնչյունը մի շարք դեպքերում կարող է ծագած լինել հ.-ե. *sk'h նախաձևից, որ բաղկացած է շար-

¹² Այս բառի «թիկունք» իմաստի զարգացումն է *կոթունք* (*կոթնել*) «կոնակ» <*skōr-t-no- բառը:

¹³ Նույն կառուցվածքով ևս երեք բառ կա՝ «հնդկահավ» նշանակությամբ՝ *ճուռճու* (Մալխ. 3, 205), որը թերևս վերոհիշյալ *ճիւ* «թև» արմատի ձայնդարձային տարբերակի կրկնավորն է (թեև Մտ. Մալխասյանցը համարել է բնաձայնություն), *կուլկուլ* (ՀԼԶԲ, 393) և *քելքել* (Մալխ. 4, 568), որոնք թերևս *կուռկուռ*-ի բարբառային տարբերակներ են: Նույն նշանակությամբ կան նաև *ճուրկ* (Մալխ. 3, 221), *ճուլուխ* (ՀԼԶԲ, 393) բառերը, որոնց *ճուլ/ճուլ* արմատը կարելի է համադրել *կուլկուլ*-ի արմատին (ինչպես վերոհիշյալ *կուռ* – *ճուռ* լծորդության դեպքում):

¹⁴ Ձագարը ըստ էության ծայրը հատած կոնն է:

ժուն s-ից և քմայնացած ու շնչեղացած k-ից: Այդ վարկածի հիման վրա ստուգաբանված են ձեռք, ճիւղ, ճաղ, ճղել, ճոլտել, *ճողփել*, *ճողոպրել*, *ճողոպուր*, ճաք, ճաթել, ճախ, ճակ, ճիւ, *ճուռն*, *ճուռճուռ* բառերը:

Հ ա մ ա ռ ո ռ տ ա գ ռ ո թ յ ո ն ն ե ր

ՀԱԲ – Աճառյան Հ.Հ., *Հայերեն արմատական բառարան*, հհ. 1-4, Եր., 1971-1979:
 ԼՔՀԼ – Աճառյան Հ.Հ., *Լիակատար քերականություն հայոց լեզվի*, հ. 6, Եր., 1971:
 ՀԼՀԲ – Սուրբիսայան Ա.Մ., *Հայոց լեզվի հոմանիշների բառարան*, Եր., 1967:
 ՀԼԲԲ – *Հայոց լեզվի բարբառային բառարան*, հհ. Ա-Է, Եր., 2001-2012:
 Մալիւ. – Մալիսասեանց Ա.Մ., *Հայերեն բացատրական բառարան*, հհ. 1-4, Եր., 1944-1945
 ՀՄԲ – Ջահուկյան Գ. Բ., *Հայերեն ստուգաբանական բառարան*, Եր., 2010:
 ՀԼՊ ՆԺ – Ջահուկյան Գ.Բ., *Հայոց լեզվի պատմություն. նախագրային ժամանակաշրջան*, Ե., 1987:
 ՎԲԱ – Wiktionary (<https://en.wiktionary.org/wiki>) (մարտ – մայիս, 2019).
 ՎԲՌ – Викисловарь (<https://ru.wiktionary.org/wiki>) (մարտ – մայիս, 2019).
 Նիկ. – Nikolaev S., *Database of Indo-European etymology* / <http://starling.rinet.ru/cgi-bin/responscgi?root=config&morpho=0&basename=data\ie\piet&first> (մարտ – մայիս, 2019).
 Պոկ. – Pokorny J., *Indogermanisches etymologisches Wörterbuch*. Bern-München, 959 / <http://dnglu.org/indoeuropean.html> (մարտ – մայիս, 2019).
 Աղ. – Աղայան Է.Բ., *Բառարանական և ստուգաբանական հետազոտություններ* Եր., 1974:
 Ջաք.-1 – Ջաքարյան Հ.Լ., *Կարիճ, կարճ, կիրճ և մի քանի այլ բառերի ստուգաբանություն // «Լեզուն և գրականությունը միջմշակութային հաղորդակցության համատեքստում» IV միջազգային գիտաժողովի (Վանաձոր) գիտական նյութերի ժողովածու*, Եր., ԱԶ «Արման Աստանգույան», 2016, էջ 87-91:
 Ջաք.-2 – Ջաքարյան Հ.Լ., *Խխունջ, քրքիր, կոպիտ և մի քանի այլ բառերի ստուգաբանություն // «Արևելյանական ընթերցումներ - 2» հանրապետական գիտական նստաշրջանի հոդվածների ժողովածու*, Եր., ԵՊՀ հրատ., 2018, էջ 79-93:
 Ջաք.-3 – Ջաքարյան Հ. Լ., *Ծ սկզբնահնչյունով մի քանի բառերի ստուգաբանություն // «Ջահուկյանական ընթերցումներ» (գիտական հոդվածների ժողովածու)*, Եր., «Գիտություն», 2019, էջ 35-45:

**ЭТИМОЛОГИЯ НЕКОТОРЫХ АРМЯНСКИХ СЛОВ,
С НАЧАЛЬНЫМ ЗВУКОМ Կ**

Закарян О. Л.

Ключевые слова: армянский язык, этимология, праиндоевропейский язык, корень, дериват, детерминатив, чередование, корневые варианты, *s-mobile*, начальный звук

В настоящей статье на основе фонетического, словообразовательного и семантического анализов предлагаются следующие новые этимологии: ձեռք

"щель" <*sk'he-l- <*sek- "резать, раскалывать", ճիղ "ветвь" <*sk'heu-l-, ճաղ "спица" <*sk'hə-l-, ճղել "порвать" <*sk'hē-l-, ճղնալի "удрять" <*ճղնալ-նւր <*sk'holo-b- <*sk'ho-l-, ճւր "трещина" <*sk'hə-k-, ճախ "хворост" <*sk'hə-kh-, ճի "1. часть, 2. рука, 3. нога, 4. стебель, 5. птица" <*sk'hē-p-, ճլնն "1. рука, 2. нога" <*sk'hōr-s-no- и т. д.

ETYMOLOGY OF SOME ARMENIAN WORDS WITH THE INITIAL SOUND Ճ

Zakaryan H.L.

Key words: *the Armenian language, etymology, Protoindoeuropean, root, derivative, determinative, vowel gradation, root variants, s-mobile, initial sound.*

The article, dwelling upon phonetic, morphemic and semantic analyses, puts forward the following new etymologies: ճեղք "cleft, slit" <*sk'he-l- <*sek- "to cut, to split", ճիղ "branch" <*sk'heu-l-, ճաղ "spoke" <*sk'hə-l-, ճղել "to rupture" <*sk'hē-l-, ճղնալի "to run away, scoot, lam" <*ճղնալ-նւր <*sk'holo-b- <*sk'ho-l-, ճւր "crack" <*sk'hə-k-, ճախ "brushwood" <*sk'hə-kh-, ճի "1. piece, 2. forearm, 3. foot, 4. stalk, 5. bird" <*sk'hē-p-, ճլնն "1. forearm, 2. foot" <*sk'hōr-s-no- etc.

References

1. **Aghayan E.B.**, Baraqnnakan yev stugabanakan hetazotuthyunner, Yerevan, HH GA hrat., 1974 (in Armenian).
2. **Atsharyan H.H.**, Hayeren armatakan bararan, hh. 1-4, Ye., Yerevan, PH hrat., 1971-1979 (in Armenian).
3. **Atsharyan H.H.**, Liakatar qerakanuthyun hayoc lezvi, h. 6, Yerevan, HH GA hrat., 1971 (in Armenian).
4. Hayoc lezvi barbarayin bararan, hh. A-E, Yerevan, «Gituthyun», 2001-2012 (in Armenian).
5. **Jahukyan G.B.**, Hayeren stugabanakan bararan, Yerevan, «Asoghik», 2010 (in Armenian).
6. **Jahukyan G.B.**, Hayoc lezvi patmuthyun. Nakhagrayin zhamanakashrjan, Yerevan, HH GA hrat., 1987 (in Armenian).
7. **Jaukyan G.B.**, Ocherki po istorii dopismennogo perioda armyanskogo yazika, Yerevan, Izd-vo AN Arm. SSR, 1967 (in Russian).
8. **Makayev E.A.**, Struktura slova v indoyevropeyskikh i germanskikh yazikakh. M., "Nauka", 1970 (in Russian).

9. Malkhaseanc S.S., Hayeren bacatrankan bararan, hh. 1-4, Yerevan., HSSR pet. hrat., 1944-1945 (in Armenian).
10. Simonyan N.M., Stugabanakan ditarkumner // «Banber Yerevani hamalsarani: banasiruthyun», 2016, hm. 1, ej 26-32 (in Armenian).
11. Suqiasyan A.M., Hayoc lezvi homanishneri bararan, Yerevan, HH GA hrat., 1967 (in Armenian).
12. Szemerényi O., Vvedenie v sravnitelnoe yazikoznaniye. M., “Progress”, 1980 (in Russian).
13. Vikislovar (<https://ru.wiktionary.org/wiki>) (in Russian).
14. Zakaryan H.L., *Karitsh, kartsh, kirtsh* yev mi qani ayl bareri stugabanuthyun // «Lezun yev grakanuthyun@ mijmshakuthayin haghordakuthyan hamateqstum» IV mijazgayin gitazhoghovi (Vanadzor) gitakan nyutheri zhoghovatsu, Yerevan, ADz «Arman Asmangulyan», 2016, ej 87-91 (in Armenian).
15. Zakaryan H.L., *Khkhunj, qraqir, kopit* yev mi qani ayl bareri stugabanuthyun // «Abeghyanakan @nthercumner - 2» hanrapetakan gitakan nstashrjani hodvatsneri zhoghovatsu, Yerevan, YePH hrat., 2018, ej 79-93 (in Armenian).
16. Zakaryan H.L., *TS skzbnahnchyunov* mi qani bareri stugabanuthyun // «Jahukyanakan @ntherthsumner» (gitakan hodvatsneri zhoghovatsu), Yerevan, «Gituthyun», 2019, ej 35-45 (in Armenian).

Ընդունվել է՝ 04.10. 2019
Գրախոսվել է՝ 31.10.2019
Հանձնվել է տպ.՝ 20.11. 2019

Տեղեկություններ հեղինակի մասին

Հովհաննես ՉԱՔԱՐՅԱՆ՝ բան.գիտ.թեկնածու, դոցենտ,

«Տաթև» գիտակրթական համալիր, էլ. փոստ՝ hovzakaryan@yahoo.com,

ՀՏԴ՝ 81-26

ՊԱՐՄԿԵՐԵՆ ԲԱՌԵՐԸ ԱԲԻԳ ԱՎԱԳՅԱՆԻ ԱՐՁԱԿՈՒՄ

Մաթենիկ Եղիազարյան

ՀԱՊՀ լեզուների գիտակրթական կենտրոն

Բանալի բառեր՝ պարսկերեն բառեր, տեղանուններ, անձնանուններ, խոսքային միջավայր, էկզոտիզմներ տարաշխարհիկ բառեր, գեղարվեստական գրականություն:

Գրական գործունեության ընթացքում Ա. Ավագյանը հաճախ էր անդրադառնում իր ծննդավայրին, այն դեպքերին ու իրադարձություններին, հերոսներին, որոնք անջնջելի հետք են թողել իր հիշողություններում, և բնական է, որ նրա պատմվածքներում և վեպերում տեղ են գտել պարսկերեն բառեր ու կապակցություններ, որոնք նպաստում են տպավորիչ ներկայացնելու արևելյան միջավայրը, այն առանձնահատուկ կոլորիտը, որը բնորոշ է պարսկական կենցաղին: Ծննդավայրն իր կնիքն է դրել նրա գրական աշխարհայացքի ու լեզվամտածողության վրա:

Նախաբան. 20-րդ դարի երկրորդ կեսի հայ գրականությունը նշանավորվեց թեմատիկ-գաղափարական և կառուցվածքային-արտահայտչական ձևերի ինքնատիպ տեղաշարժերով, որոնք կարևոր նշանակություն ունեցան գրականության զարգացման համար: Գրական ասպարեզ եկան անվանի գրողներ, մտավորականներ, որոնցից յուրաքանչյուրը յուրովի ներդրում ունեցավ հայ նորագույն գրականության զարգացման գործում: Գեղարվեստական գրականության մեջ հաստատուն տեղ ունեցավ Արևելքի և սփյուռքահայության կյանքի թեմատիկան, որը հայտնաբերեց այդ աշխարհի շատ բնութագրական կողմեր, նաև գրական նոր անհատականություններ: Այդ անհատականությունների առաջին շարքում էր շնորհալի մի արձակագիր, անհավասար մի գրող՝¹ Աբիգ Ավագյանը, որը գրականություն բերեց «տաք հարավի» շունչն ու զգացողությունը, արևակեզ գույներ ու երանգներ²:

¹ Տե՛ս Աղաբաբյան Ս., «Մովեստական գրականություն», Եր., 1958, №8, էջ 193:

² Տե՛ս Արզումանյան Լ., «Գարուն», Եր., 1985, №6, էջ 66:

Որպես գրող՝ Ավագյանը ձևավորվել է իրանական միջավայրում: «Իրանական թեմատիկան Ա.Ավագյանի պատմվածքների մեծ մասի նյութն է: Կենցաղի նկարագրության մեջ լինելով բավականաչափ ճշգրիտ, մարդկային փոխհարաբերությունների պատկերման մեջ սևեռուն դիտող՝ Ավագյանը իրանական կյանքի երևույթների վերարտադրության մեջ հրաժարվեց արևելյան էկզոտիկայի ու արտաքին պոեմատիզմի մանրամասն տարածված գայթակղությունից: Առեղծվածային արկածայնությունն Ավագյանի լավագույն պատմվածքներում փոխարինեց երևույթների հոգեբանական մեկնաբանությանը»³:

Աբիգ Ավագյանը մեր գրականության մեջ բերեց նոր կյանքի նկարագիր, նոր թեմատիկա, որում ամբողջապես արտացոլեց Իրանի կյանքը, այդ աշխարհի «խեղդվելու չափ հեղձուցիչ ու գաղջ» առօրյան, մարդկային հարաբերություններն ու սոցիալական հակասությունները: «Պետք է խոստովանեմ,-գրում է նա,-որ ես Իրանում խորապես ծանոթացա հասարակ ժողովրդի կյանքին և կենցաղին, նրա երգերին ու վերքերին, որոնք, ինչպես գիտեք, հետագայում իմ լույս տեսած գրքերի մեծ մասի բովանդակությունը կազմեցին: Առանց Իրանի հարավը գնալու, իհարկե, ինձ չէր հաջողվի գրել «Հարավային տենդ» հուշագրությունների շարքը»⁴: Իրանի հասարակական-քաղաքական կյանքին հեղինակն անդրադառնում էր հաճախակի, ստեղծագործական որոնումների ողջ ընթացքում:

Իրանի կյանքի և կենցաղի մանրամասնությունների նկարագիրը Ավագյանի ստեղծագործություններում ունի նաև ճանաչողական նշանակություն:

Գեղարվեստական ստեղծագործություններում գրողներից շատերը տարբեր ազգերի հերոսների, միջավայրի, ինչպես նաև տեղական կոլորիտ ստեղծելու նպատակով օգտագործում են օտար բառեր: Իրենց ոճական ինքնատիպ երանգի շնորհիվ այդ բառերը կարևոր դեր են կատարում կերպարների խոսքի տիպականացման գործում: Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ հեղինակն այդպիսի բառեր հիմնականում օգտագործում է օտարազգի հերոսների բառապաշարում՝ նրանց սոցիալական, ազգային պատկանելությունն ընդգծելու և խոսքը ոճավորելու նպատակով:

Ավագյանի վեպերում և պատմվածքներում տեղ գտած պարսկերեն բառերը կարելի է բաժանել մի քանի խմբի.

ա) Պարսկական միջավայրի երանգավորմանը նպաստում են համապատասխան առօրյան և կենցաղն արտացոլող ստեղծագործություններում գործածված պարսկական անձնանուններն ու տեղանունները, որոնք տարածված

³ Աղաբաբյան Մ., Մովեստահայ գրականության պատմություն, հ. 2, Եր., 1965, էջ 446:

⁴ «Գրական թերթ», 1979, 21 սեպտեմբերի:

են մահմեդական ժողովուրդների մեջ: Օրինակ՝ «Եկե՛ք ծանոթանանք. այս ընկերը, որ հիմա նստել է մեր դիմաց, *Ղոչամին* է, այս *Ահմադիանն* է, այս *Բալաշին*, այս մեր *Ռազեդին* է, մեկը, որ երբ ասում էս «Օդաքս», քիչ է մնում մարդ խժոխ, այս *Ռեզան* է, այս *Փարվիզին...*» «Պ, 122, 1965»:

Պարսկական տեղանունների բաղադրիչների սեռական հոլովի իմաստն արտահայտվում է հատկացուցիչ-հատկացյալ իզաֆետային կապով⁵: Օրինակ՝ *Թանգե-Մալավի* «Պ, 141, 1965», *Շահրե-Շադ* (Պ, 174, 1962), *Քուհե-Մար* «ՎՀ, 489» և այլն:

Պարսկական որոշ անձնանուններ և տեղանուններ համապատասխան խոսքային միջավայրում բացատրվում են հայերեն համանշանակներով: Օրինակ՝ «Աղջկա անունը տարօրինակ էր՝ *Ֆեթնե*, հայերեն այդ նշանակում է «*Դավ*» (ՎՀ, 485), «Ճաշարանը կոչվում է «*Բանաֆշե*», այսինքն՝ «*Մանուշակ*» (ՎՀ, 468) և այլն:

բ) Խոսքը հավաստի, համոզիչ դարձնելու նպատակով հեղինակը հերոսների խոսքում օգտագործում է ողջույնի պարսկերեն ձևեր, բացականչական բառեր և արտահայտություններ, որոնք պատկերավոր են դարձնում պարսկական միջավայրի նկարագիրը: Վերջիններիս կիրառությամբ գրողը խոսքին հաղորդում է ընդգծված արտահայտչականություն: Օրինակ՝ «*Մալա՛մ ալեյքում*, Առուստա՛մ աղա,-ասաց մարդը» (ՎՀ,86), «*Ալլահը վկա*» (Պ,107,1958), «*Ալլահի՛ սիրույն*» (Պ, 82, 1950), «-*Քոֆր մի անի, դերվի՛ շ՛ բաբա*,-թախանձեց անցորդը,-մե՛ դք է» (ՎՀ, 543), «*Աֆֆերիմ, սալամ օլլահ*» (ՎՀ, 554) և այլն:

գ) Հերոսների խոսքում կարելի է հանդիպել *զլուխ և լեզու* բառերով կազմված դարձվածային միավորների, որոնք կրում են պարսկերենի ազդեցությունը: Օրինակ՝ *զլուխ քաշել-նայել, տեսնել*՝ «Ուստա Գեղամ, ե՞րբ էս գալու Մեղրիչայի նոնենիներին *զլուխ քաշելու*» (Պ, 65, 1958), *լեզվի բերել-խոսեցնել*⁶ «Դե, նրանք կարծում են, որ իրենց մամլակով կարող են մարդկանց *լեզվի բերել*, սակայն այդ նրանց չի հաջողվում» (ՇՀ, 320):

դ) Վեպերում և պատմվածքներում տեղ գտած պարսկերեն բառերի, անձնանունների, տեղանունների մի մասի բացատրությունը տրվում է հեղինակի կողմից տողատակի հղումներով կամ խոսքաշարային բացատրությամբ: Օրինակ՝ «Եթե նրանք Իրան են մտել հատկապես մեզ կաթսայի մեջ խաշելու համար, կխաշեն, ուզում էս գնա Ահվազ կամ թե չէ բարձրացիր *Դամավանդի*⁷

⁵ Տե՛ս Բախշիկյան Ք., Բիանջյան Հ., Ղազարյան Լ., Մելիքյան Գ., Պարսկերենի դասագիրք, Եր., 2011, էջ 52:

⁶ Իրանագետ, թարգմանիչ Է. Բեգիջանյան (բանավոր հաղորդում):

⁷ Դամավանդ-ամենաբարձր լեռը Իրանում, տե՛ս Ավագյան Ա., Շիկացած հող, Եր., 1955, էջ 39:

զագաթը» (ՇՀ, 39), «Գեղամը գնաց գետում լողացավ, եկավ սնդուկից հանեց սև շավվարն ու սպիտակ վերնաշապիկը, բեղերին ու մազերին *գոլաբ*⁸ քսեց և *Թուրթի*⁹ աղջկան ձեռքերով ասաց...» (ՎՀ, 21), «-Ես *սահաբ*¹⁰ Գրիգորի սովերն եմ, -ասում էր խոհարարը,-եթե նա գնա աշխարհի ծայրը, ես էլ կգնամ նրա ետևից» (Պ, 185, 1965), «Ռուսները հասել են *Միանե*»¹¹ (ՇՀ, 46), «Նա գյուղից հեռացրեց բոլոր գործակատարներին, հարկահավաքներին ու մի տասնյակ կանանց, որոնց հանգուցյալը պահում էր որպես *սիդե*»¹² (ՇՀ, 359):

Մակայն միշտ չէ, որ ստեղծագործություններում տեղ գտած պարսկերեն բառերը բացատրվում են, հաճախ ընթերցողը համատեքստից է հասկանում բառի բուն իմաստը: Օրինակ՝ *մոլլա*¹³-*հոգևորական*՝ «Գյուղատերը համբուրեց Ղուրանը և մետաքսյա թաշկինակի մեջ ծաված ինչ-որ բան մեկնեց *մոլլային*» (ՇՀ,430), *ջեննաթ-դրախտ*՝ «Թուրթի աղջկան դարձրել էին *ջեննաթի* կանաչ, կանաչ թռչուն» (ՎՀ, 21), *Ֆինջան-բաժակ, գավաթ*՝ «Գյուղացիները նստել էին գետափին և փոքրիկ *ֆինջաններով* թեյ էին խմում» (Վ, 63), *դադաշ-եղբայր*՝ «*Ռադաշ*, թեքվելու ժամանակ ինչո՞ւ էս գազը սեղմում, ախր այդ ճիշտ չէ» (Պ, 139, 1965), *մեջիդ-մահմեդականների աղոթատեղի*՝ «-Իմ կինը խիստ աստվածապաշտ է, ուրբաթ օրերը *մեջիդ* է գնում, հինգշաբթի գիշերները ննջասենյակում Ղուրան է կարդում» (ՇՀ, 79), *մզկիթ-մահմեդականների աղոթավայր, մինարե-մահմեդական մզկիթներին կից աշտարակ*՝ «Եվ Մամեդը կերկերուն ձայնով սկսում է մի պատմություն՝ վիուկի զավազանով կախարդված, ոսկե *մզկիթներով* ու կապույտ *մինարեներով* քաղաքի մասին, յոթ աղբյուրների ու կորցված Յուսուֆի մասին» (Պ,82,1958), *շահի-պարսկական դրամ*՝ «-Կգնա՛մ,-ձչաց Մարքը,-կտանեմ բոլոր հարստությունս, ոչ մի *շահի* չեմ ձգի ձեզ» (Վ, 60): Այս բառերը *էկզոտիզմներ*¹⁴ (*տարաշխարհիկ բառեր*) են, որոնք ունեն ընդգծված արևելյան երանգավորում, բնորոշ են օտար միջավայրին և հազվադեպ են կիրառվում այդ համատեքստից դուրս:

⁸ Գոլաբ-վարդաջուր, տե՛ս Ավագյան Ա., Վերջին հանգրվան, Եր., 1982, էջ 21:

⁹ Թուրթի-աղջկա անուն, նաև նշանակում է թուրթակ (պրակ.), տե՛ս Լույն տեղում, էջ 16:

¹⁰ Սահաբ-տեր, այդպես են կոչում բնիկներն օտարականներին, տե՛ս Ավագյան Ա., նշվ. աշխ., էջ 487:

¹¹ Միանե-գյուղաքաղաք, Թեհրանից մոտ 350 կիլոմետր հյուսիս-արևմուտք, Ավագյան Ա., Շիկացած հող, Եր., 1955, էջ 359:

¹² Միդե-հարձ, տե՛ս Ավագյան Ա., Շիկացած հող, 1955, էջ 359:

¹³ Նալբանդյան Մ., Պարսկերեն-հայերեն բառարան, Եր., 1987, էջ 667:

¹⁴ Էկզոտիզմները մանրամասնորեն ուսումնասիրված են ուսու լեզվաբանության մեջ: Տե՛ս Կրիշնա Վ.Ն., Большой энциклопедический словарь, Языкознание, М., 1998, с. 158, Жеребило Т.Б., Словарь лингвистических терминов, М., 2010, с. 461.

Էկզոտիզմները, ի տարբերություն սովորական փոխառությունների, մեծ մասամբ չեն դառնում փոխառու լեզվի ակտիվ բառապաշարի մաս¹⁵, իսկ գեղարվեստական գրականության մեջ դրանք ստեղծում են համապատասխան կոլորիտ, միջավայր: Այսինքն՝ սրանք այն օտար բառերն են, որոնք գոյություն չունեն փոխառող ազգի, ժողովրդի պատկերացումների, կյանքի, կենցաղի նկարագրություններում, բայց ունեն հատուկ ոճական-արտահայտչական երանգավորում. ստեղծում են օտար միջավայրի ճշգրիտ գունավորում: Հարկ է նշել նաև, որ Ֆ. Խլղաթյանը, խոսելով օտար ժողովուրդների կյանքին և կենցաղին վերաբերող բառերի մասին, դրանք անվանում է *տարաշխարհիկ բառեր*¹⁶, իսկ ըստ Էդ. Աղայանի՝ այս կարգի բառերը *հատկական փոխառություններ* են, որոնց առանձնահատկությունն այն է, որ նրանք մեծ մասամբ գործածվում են այն դեպքերում, երբ խոսքը վերաբերում է սվյալ երկրին կամ ժողովրդին¹⁷:

Ավագյանի արձակում էկզոտիզմների կիրառությամբ պարսկական միջավայրի նկարագրությունը դառնում է համոզիչ, ինքնատիպ և պատկերավոր:

Եզրահանգում. Այսպիսով՝ Ավագյանի արձակի բառապաշարի քննությունը ցույց է տալիս, որ հեղինակի խոսքարվեստում տեղ գտած պարսկերեն անձնանունների, տեղանունների, առարկա կամ երևույթ արտահայտող բառերի գործածությունը պայմանավորված է հեղինակի անհատականությամբ, քանի որ վերջինիս գրական աշխարհայացքը ձևավորվել է Թեհրանում, որտեղ ստեղծագործել և տպագրել է նրա առաջին շրջանի ստեղծագործությունները:

ПЕРСИДСКИЕ СЛОВА В ПРОЗЕ АБИГА АВАГЯНА

Егиазарян С.Э.

Ключевые слова: *персидские слова, топонимы, имена собственные, речевая среда, экзотизмы (иноязычные слова), художественная литература.*

В процессе литературной деятельности А.Авагян часто обращался к своей родине, к тем случаям и событиям, героям, которые оставили неизгладимый след в его воспоминаниях, и, естественно, в его рассказах и романах употребляются персидские слова и словосочетания, способствующие яркому представлению восточной действительности, особого колорита, который присущ персидскому быту. Родина наложила свой отпечаток на его литературное мировоззрение и языковое мышление.

¹⁵ Տե՛ս Կոжемякина В.А., Колесник Н.Г., Крючкова Т.Б., Парфенова О.С., Трушкова Ю.Б., Словарь социолингвистических терминов. М., 2006, с. 243.

¹⁶ Տե՛ս Խլղաթյան Ֆ., Ոճարանական բառարան, Եր., 2000, էջ 159:

¹⁷ Տե՛ս Աղայան Էդ., Ընդհանուր և հայկական բառագիտություն, Եր., 1984, էջ 169:

PERSIAN WORDS IN ABIG AVAGYAN'S PROSE

Yeghiazaryan S.E.

Key words: Persian words, toponymes, personal names, verbal milieu, exotisms (foreign words), fiction.

In his literary activity A. Avagyan often recalled his birth place, the cases and circumstances, heroes that had made a great impression in his memory. It's natural that Persian words and expressions are used in his stories and novels that contribute to represent the eastern environment and the special culture characteristic to Persian common life so spectacularly. His birth place had made a great impression on his literal viewpoint and language thinking.

R e f e r e n c e s

1. Aghababyan S., Sovetahay grakanutyun patmutyun, h. 2, Yerevan, 1965 (in Armenian).
2. Aghababyan S., Sovetakan grakanutyun, Yerevan, 1958, №8 (in Armenian).
3. Arzumanyan L., Garun, Yerevan, 1985, №6 (in Armenian).
4. Aghayan Ed., @ndhanur ev haykakan baragitutyun, Yerevan, 1984 (in Armenian).
5. Baxshinyan Q., Bianjyan H., Ghazaryan L., Meliqyan G., Parskereni dasagirq, Yerevan, 2011 (in Armenian).
6. Khlghatyan F., Vojabanakan bararan, Yerevan, 2000 (in Armenian).
7. Nalbandyan M., Parskeren-hayeren bararan, Yerevan, 1987 (in Armenian).
8. Avagyan A., Vagh@, Yerevan, 1951 (in Armenian).
9. Avagyan A., Shikacac hogh, 1955 (in Armenian).
10. Avagyan A., Nazeli Dalaryan, Yerevan, 1959 (in Armenian).
11. Avagyan A., Patmvacqner, Yerevan, 1962 (in Armenian).
12. Avagyan A., Patmvacqner, Yerevan, 1965 (in Armenian).
13. Avagyan A., Haravayin tend, Yerevan, 1971 (in Armenian).
14. Avagyan A., Yeghel e chi yeghel, Yerevan, 1973 (in Armenian).
15. Kojemyakina V. A., Kolesnik N. G., Kryuchkova T. B., Parfenova O. G., Trushkova Y. B., Slovar sociolingvistichekix terminov, M. 2006 (in Russian).

Ընդունվել է՝ 05.10. 2019

Գրախոսվել է՝ 30.10.2019

Հանձնվել է տպ.՝ 21.11. 2019

Տեղեկություններ հեղինակի մասին

Մաթենիկ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ՝ բան. գիտ. թեկնածու,

ՀԱՊՀ լեզուների գիտակրթական կենտրոնի դասախոս,

Էլ. փոստ՝ esatenik@mail.ru.

ԱԶԳԱԳՐՈՒԹՅՈՒՆ
ЭТНОГРАФИЯ
ETHNOLOGY

ՀՏԴ՝ 392.9

ԽԱՂԸ ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼԻ ԱՎԱՆԴԱԿԱՆ
ՔԱՂԱՔԱՅԻՆ ՄՇԱԿՈՒՅԹՈՒՄ

Կարինե Բազեյան

ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն

Բանալի բառեր՝ *Ալեքսանդրապոլ, քաղաքային մշակույթ, խաղ, հասակակիցների խումբ, սոցիալականացում, մրցակցություն, խաղային բանահյուսություն:*

Ալեքսանդրապոլի ավանդական մշակույթի ամբողջական նկարագիրը թերի կլինի առանց մանկապատանեկան խաղերի ներկայացման: Այս հոդվածով փորձ է կատարվել որոշ չափով լրացնել գոյություն ունեցող բացը Ալեքսանդրապոլի խաղային մշակույթի ուսումնասիրության մեջ: Մեր նպատակն է ներկայացնել խաղի դերը և նշանակությունը երեխաների հասունացման և սոցիալականացման գործընթացում, վերլուծել խաղի սոցիոկարգավորիչ գործառույթները և դրա հարաբերությունները տոնական ծիսաշարի արարողակարգում:

Նախաբան. Առօրյա մշակույթի և, մասնավորապես, խաղային մշակույթի ուսումնասիրությունը կարևոր է ժողովրդի էթնոմշակութային անցյալի տարբեր կողմերը վեր հանելու առումով: Խաղերը, լինելով ծիսական արարողությունների անբաժանելի մաս, կարող են շատ բան ասել տվյալ ժողովրդի հավատալիքների ու գաղափարական պատկերացումների համակարգի մասին: Ժողովրդական խաղերում կողավորված են տեղեկություններ հասարակության հնագույն սոցիալական կառուցվածքի, ազգային տոնացույցի, ֆիզիկական կրթության ձևերի, էթնոմշակութային փոխհարաբերությունների և այլնի մասին: Հետևաբար անհնար է պատկերացնել ժողովրդի էթնիկական կերպարը, առանց հաշվի առնելու ժամանցային վարքի պատմական ձևերը, այն բազմազան փորձը, որ կուտակվել է նրա խաղային մշակույթում:

Աշխատանքի համար որպես սկզբնաղբյուր են ծառայել Հ. Գյուլեցյանի և հատկապես Ն. Նիկողոսյանի ձեռագիր հուշերը, որտեղ առանձին բաժնով նկարագրված են քաղաքի երեխաների մեջ տարածված երեք տասնյակից ավելի

խաղեր, որոնք առաջին անգամ են դրվում գիտական շրջանառության մեջ, ինչպես նաև ազգագրական գրականության մեջ ցայժմ հայտնի նյութերը:

Խաղի ազգաբանական-մշակութաբանական բնութագիրը

Խաղը հսկայական տեղ է գրավում երեխայի կյանքում, մանկական աշխարհընկալման մեջ, այն երեխայի միջանձնային շփման կարևոր գործիք է, որն օգնում է հասնելու սոցիալական իրազեկության: Որպես ավանդական մշակութի մաս՝ ժողովրդական խաղերն այլաբանորեն արտահայտում են հասարակական, քաղաքական, սոցիալ-տնտեսական, կենցաղային, ծիսական, սովորույթային և այլ երևույթներ՝ մարդու գործունեությունը վերարտադրելով զանազան կերպավորումներով: Խաղում իրականացվում է մեծերի սոցիումին բնորոշ միջանձնային հարաբերությունների, էթիկետային-վարքագծային նորմերի յուրատեսակ մոդելավորումը, և վերջապես, խաղային վարքը երեխայի յուրատեսակ հոգեբանական վիճակն է՝ իր տարիքային ֆիզիոլոգիական պահանջներին համարժեք: Մշակութաբանական տեսանկյունից խաղը համարվում է մարդու կողմից իրեն շրջապատող իրականությունը յուրացնելու, ժամանակի և տարածության մեջ հարմարվելու մեթոդ:

Խաղը՝ որպես էթնիկ մշակութի բաղադրիչ, կարևորվում է ոչ միայն որպես ժամանցի ձև, այլև, որ ամենակարևորն է, դաստիարակության յուրօրինակ մեթոդ և լավագույն միջոց՝ երեխաների մտավոր ու ֆիզիկական կարողությունների զարգացման գործում: Սերտորեն կապված լինելով ժողովրդի ապրելակերպին և կենսագործունեությանը՝ խաղն ուղղորդում է երեխային դեպի ապագա՝ սոցիալականացնելով նրան տվյալ հասարակության մեջ: Եթե մեծահասակ մարդու համար խաղը հանգստի և ժամանցի միջոց է, երեխայի համար իր ապրելակերպն է:¹

Ցանկացած ավանդական մշակույթում երեխայի սոցիալականացման գործընթացի մեջ որպես ինքնազարգացման և փոխադարձ դաստիարակության գործոն շատ մեծ ազդեցություն ունեն հասակակիցների խումբն իր յուրահատուկ հարաբերություններով ու մշակույթով: Այն առաջին հերթին բավարարում էր երեխաների՝ մեծերի վերահսկողությունից դուրս, ազատ հարաբերություններ հաստատելու պահանջը. փոխադարձ հետաքրքրությունները, շրջապատող աշխարհն ու միմյանց ճանաչելու միասնական ջանքերը բացառիկ կարևոր նշանակություն ունենին: Ընտանիքից դուրս նույնպես պայմաններ էին ստեղծվում անհատի ձևավորման համար, և դրանում կարևոր դաստիարակչական դեր էին խաղում տարբեր տարիքային խմբերը, որտեղ երեխաները խաղի միջո-

¹ Магомедов, М. З., Народные игры лезгин в XIX-начале XX века : автореферат дис. кандидата исторических наук, Махачкала, 1994. - 23 с. <http://www.dslib.net/etnografia/narodnye-igry-lezgin-v-hih-nachale-xx-veka.html> (վերջին դիտում 20.06.2019թ.):

ցով յուրացնում էին մեծահասակների տնտեսական գործունեության եղանակները, զարգացնում մտավոր և ֆիզիկական ունակությունները, ձեռք բերում կամային հատկանիշներ և յուրացնում հասարակական վարքի նորմերը:²

Մանկական խաղերը խիստ բազմազան են իրենց բովանդակությամբ, բնույթով, կազմակերպման ձևերով, ուստի դրանց ճշգրիտ դասակարգումը բարդ է: Որպես կանոն՝ դասակարգման համակարգերը լրացնում են մեկը մյուսին և շատ ուղղություններում՝ խաչվում: Օրինակ, խաղերն առանձնացվում են ըստ երեխաների երեք տարիքային խմբերի՝ մանկիկային շրջան (0-4 տարեկան), մանկություն (5-7 տարեկան) և պատանեկություն (8-12 տարեկան): Գոյություն ունի նաև այսպիսի բաժանում. փակ տարածքում անցկացվող և բացօթյա խաղեր կամ լայն ճանաչում ստացած ձմեռային և ամառային խաղեր: Ելնելով խաղերի բնույթից՝ դրանք դասակարգվում են հետևյալ կերպ.

- *Շարժական (սպորտային) խաղեր*, որոնք անցկացվում են նախապես մշակված հատուկ կանոններով: Սրանք միշտ համարվել են սոցիալապես ամենաօգտակարը, քանի որ ուղղված են ֆիզիկական տարբեր հմտությունների և մտավոր կարողությունների ձևավորմանը: Դրանք բնութագրվում են մրցակցայնությամբ, մարզվածության վառ արտահայտմամբ:

- *Դրամատիկականացված (դերային, ստեղծագործ) խաղեր*, որոնք կանոններ չունեն, տարբերվում են իրենց բովանդակությամբ (կենցաղի, մեծերի աշխատանքի, հասարակական կյանքի դեպքերի վերարտադրություն), կազմակերպման ձևերով, մասնակիցների թվով (անհատական, խմբային և կոլեկտիվ): Ստեղծագործական խաղերի ողջ բազմազանությամբ հանդերձ, դրանք ունեն ընդհանուր գծեր՝ երեխաներն իրենք են ընտրում խաղի թեման և զարգացնում սյուժեն:³

Հայկական ժողովրդական խաղերին նվիրված իր եռահատոր ուսումնասիրության մեջ ազգագրագետ Վարդ Բոդյանը դրանք, ըստ իրենց հիմնական նշանակությունների, դասակարգել է հետևյալ կերպ.

- *Արտադրական խաղեր*, որ ներկայացնում են շինարարությունը, որսորդությունն ու ձկնորսությունը, անասնապահությունը, երկրագործությունը, առևտուրը և այլն:

- *Հասարակական խաղեր*, որոնք արտացոլում են սոցիալ-տնտեսական հարաբերությունները, հասարակական-քաղաքական անցքերը, ամուսնության ձևերը, ընտանեկան հարաբերությունները և այլն:

² Морозов И.А., Слепцова И.С., Круг игры: Праздник и игра в жизни северорусского крестьянина (XIX-XX вв.), М., 2004., с. 17-18.

³ Русские дети: Основы народной педагогики. Иллюстрированная энциклопедия, СПб, 2006, с. 350-357, 85-94.

- *Դրամատիկական խաղեր*, որոնց մեջ գտնվում են թատերական ներկայացումների նախնական, միջնադարյան և նոր շրջանի տարրեր: Դրանց թվում են դատավարությունները, վանական արեղաթողի խաղերը, կրկեսային խաղատեսակները, ծաղրախաղերը և այլն:

- *Մարզական խաղեր*՝ ռազմամրցակցային-մարմնամարզական խաղեր,
- *Զվարճախաղեր*,
- *Մեղանախաղեր*,
- *Մտավարժական խաղեր*,
- *Օրսական խաղեր*:⁴

Մանկիկային շրջանի խաղերին են պատկանում մայրերի ու տատիկների կողմից մանուկների հետ անցկացվող անհիշելի ժամանակներից եկած մատնախաղերը, ձեռնախաղերը, թոցնոցիները, մանկախաղացները, գրկային պարախաղերը, շալակախաղերը և այլն, որոնք ուղեկցվում էին նաև որոշակի հանգավորված տեքստերով: Մեկուկես-երկու տարեկան մանուկները յուրացնում էին մոր և իրենց միջև դրսևորվող խաղերը և դրանք փոխանցում մանկական միջավայր: Թվով երկու և ավելի երեխաները խաղում էին *նստկան խաղեր*՝ *մատնախաղեր*, *ձեռնախաղեր*, *ոտնախաղեր*, *հանելուկանման խաղեր* (բուռպահուկներ), իսկ այնուհետև՝ սենյակային շարժական խաղեր (մուկ ու կատու և այլն):

Կրտսեր տարիքային խմբերի համար բնորոշ էին այն խաղերը, որոնցում մասնակցում էին երկու սեռի երեխաները միասին: Դրանք իրենց կառուցվածքով չունենին ավարտուն խաղային սյուժե. հիմքում ընկած էր մեծերի վարքը կրկնօրինակելը: Այդ խաղերը կառուցված էին կերպարային, զգացմունքային հիմքի վրա, որի միջոցով երեխաները ավելի լավ էին ճանաչում իրենց շրջապատող աշխարհը, իրենց մարմնի հնարավորությունները, ձեռք էին բերում խոսակցական հմտություններ և կյանքի համար անհրաժեշտ այնպիսի սոցիալական որակներ, ինչպիսիք էին խմբային վարքը, շփվողականությունը և այլն:

Միջին տարիքային խմբի երեխաները խաղում էին այնպիսի խաղեր, որոնք զարգացնում էին ուշադրությունը, համբերատարությունը, հնարամտությունը:

Բարձր տարիքային խմբի երեխաների կամ պատանեկան խաղերն ավելի բազմազան էին: Այս տարիքում ի հայտ են գալիս այնպիսի խաղեր, որտեղ հստակ տարանջատվում էին երկու սեռերը, և որոնք խիստ վերահսկվում էին: Այս խմբի խաղերի մյուս բնորոշ հատկանիշը ռազմամրցակցային խաղերի թվի աճն է:

⁴ Բոդյան Վ., Հայ ազգագրություն, համառոտ ուրվագիծ, Եր., 1974, էջ 185:

Ժողովրդական շարժական խաղերն ունենին կուռ ներիմաստ, ընթանում էին խիստ մշակված կանոններով, որոնք ժամանակի ընթացքում, կապված տարիքային առանձնահատկությունների հետ, փոփոխվում էին: Կանոնները, անհատի մեջ զարգացնելով բարոյականային բարձր հատկանիշներ (հայրենասիրություն, ազնվություն, մարդասիրություն, ընկերասիրություն, նվիրվածություն և այլն), նպաստում էին հասարակության ապագա անդամի բարոյական կերպարի ձևավորմանը: Հայ ժողովրդի կենցաղում մեծ նշանակություն ունենին հատկապես խաղ-մրցումները, որոնք դաստիարակում էին ուժ, ճարպկություն, առնականություն, դիմացկունություն, զսպվածություն, տարբեր իրադրություններում սեփական վարքի գիտակցում ու գնահատում:⁵

Ալեքսանդրապոլի մանկապատանեկան խաղերը

Ալեքսանդրապոլի մանկապատանեկան խաղերի մասին Ն. Նիկողոսյանը գրում է. «Նրանք /երեխաները/ ամբողջ օրը խաղում էին մենակ կամ խմբով, և նրանց խաղալիքներն էին քարի, ոսկրի կտորներ, կճղակներ, փայտեր և այլն: Առանձին աշխուժություն ու կենդանություն ուներ խմբական խաղը: Խմբական խաղերին երեխաներն անձնատուր էին լինում ամբողջ թափով, եռանդով: Ճարպիկ, լավ խաղացողը գրավում էր ամենին, և բոլորը սիրով հետևում էին նրա խաղին, նրան ընտրում էին խաղի մեծը՝ ուստաբաշի, որին լսում, կատարում էին նրա հրամանները, կարգադրությունները: Հասակավոր մարդիկ անգամ հետևում էին լավ խաղացողին, գովում ու խրախուսում էին նրան: Խաղերի մեծ մասը, մանավանդ խմբականը, կատարվում էր զարնան սկզբին, հաջորդաբար՝ *Աստուրնա, Ղազախթոփի, Հյուսամմա-դուբբա, Ախսեքս դյուրգար* և այլն: Այս խաղերը պահանջում էին ուժ, ճարպկություն, մասնակցում էին սրանց ավելի տարիքավոր երիտասարդները: Իսկ *Քարթոփի, Աստուրնա, Ես տարա, Ղսրբով մտա* և այլն խաղում էին պատանիները: Մեր հիշած խաղերում, հասկանալի է, որ այն ժամանակներում աղջիկները չէին մասնակցում, և նրանց խաղերում էլ մի առանձին կենդանություն չկար:»⁶

Հարկ է նշել, որ շարժական խաղերը ցանկացած էթնոսի ավանդական դաստիարակության մեջ երեխաների ֆիզիկական զարգացման համար առավել կարևոր նշանակություն ունեն: Դրանք ամրացնում են առողջությունը, նպաստում են երեխայի ֆիզիկական զարգացմանը, կյանքի համար կարևոր հմտությունների ձեռքբերմանը և ձևավորում են բարոյականային որակներ:

⁵ **Բազեյան Կ.**, Հայ ժողովրդական խաղերը որպես պատանիների սոցիալիզացիայի և ռազմահայրենասիրական դաստիարակման գործոն, Ազգային բանակին՝ առողջ զինվոր, Հանրապետական գիտաժողովի նյութերի ժողովածու, Գյումրի, 2002, էջ 64-67:

⁶ **Նիկողոսյան Ն.**, Լենինական, ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի բանահյուսության արխիվ, FF II, էջ 7193-7194:

Երեխաների ամենօրյա շարժական խաղերից են ամբողջ աշխարհում հայտնի «բոնոցի»-ները, «թաքնվոցի»-ները, «դուրս հանոցի»-ները, «աչքակապուկ»-ները և այլն: Այս բոլոր խաղերը նպաստում էին երեխաների մեջ զարգացնելու որոշակի ֆիզիկական հմտություններ՝ ճարպկություն, արագ արձագանքում, կողմնորոշում և այլն:⁷

Ալեքսանդր Լեսկո, ինչպես ընդունված է խաղային մշակույթում ընդհանրապես, յուրաքանչյուր խաղից առաջ խաղացողները բաժանվում էին երկու հավասար խմբերի: Նախ ընտրվում էին դրանց ղեկավարները, որոնք խաղակիցների մեջ ամենատարիքովն էին, ճարպիկը և արագաշարժը: Ի տարբերություն գյուղական միջավայրի, որտեղ նրանք կոչվում էին *իշխաններ* կամ *բեկեր*, այստեղ, ինչպես վերը հիշվեց, անվանվում էին *ուստաբաշի*:⁸ Խմբերը կազմելու համար խաղացողները զույգ-զույգ առանձնանում, իրենց համար անուններ էին ընտրում, մոտենում էին ուստաբաշիներին և հարցնում՝ «Թա՞ցն ես, թե՞ չորը»: Թացը մեկն էր վերցնում, չորը՝ մյուսը, և այսպես՝ մնացյալները: Այս ձևով կազմվում էին երկու հակառակորդ խմբերը: Խումբը կազմելուց հետո խաղը սկսելու փուլն էր, որն այստեղ հայտնի էր «ատում-քյաստում»⁹ անունով և կատարվում էր հայոց խաղային մշակույթին բնորոշ վիճակահանության հետևյալ ձևերով.

ա/ *Թաց ու չոր* - ուստաբաշիներից մեկը մի փոքրիկ քարի վրա թքում, հարցնում էր մյուսին՝ «Թա՞ցն ես, թե՞ չորը», ու քարը շարտում օդի մեջ, և ընկնելուց հետո, ըստ ընտրության, մի խումբը դառնում էր *քյաստոտող*/հարձակվողը, իսկ մյուսը՝ պաշտպանվողը:

բ/ *Գիր ու պատկեր* - այս դեպքում դեպի վեր էր նետվում պղնձե մետաղադրամը՝ նախապես որոշվելով «Գի՞րը, թե՞ պատկերը», և ըստ այդմ որոշվում էր խմբերի դերերը:

գ/ *Քար ու փուչ* - ուստաբաշիներից մեկը մի փոքր քար պահում էր բռան մեջ ու երկու բռունցքը առաջ բերելով՝ մյուսին հարցնում էր. «Քա՞րն ես, թե՞ փուչը»: Վերջինս ընտրում էր դրանցից մեկն ու խփում դիմացինի ձեռքին: Երբ ընտրությունը ճիշտ էր լինում, հաղթող կամ հարձակվող կողմը դառնում էր իր խումբը:

⁷ Блинова А.Н. Детские игры немцев Западной Сибири // Культурология традиционных сообществ. – Омск, 2007. – С. 79-85. http://www.rukukla.ru/article/kuhi/game_nem.htm (վերջին դիտում 20.06.2019թ.)

⁸ Ուստաբաշի-գլխավոր վարպետ:

⁹ Նիկողոսյան Ն., էջ 7195:

դ/ *Ուտնաչափով* - ուստաբաշիները հեռանում էին իրարից որոշ տարածություն ու ոտքը ոտքի առաջ բերելով՝ մոտենում էին իրար. ում ոտքը մյուսի ոտքին կպավ, այդ կողմը դառնում էր *քյառստոդը*:

ե/ *Փայտով* - փայտը մեկը նետում էր վեր, մյուսը բռնում էր այն, այնուհետև հաջորդաբար ձեռքով բռնելով՝ շարունակում էին մինչև փայտի ծայրին հասնելը: Ով հասավ ծայրին, նրա խումբը դառնում էր հաղթողը:¹⁰

Որոշակի կարգ գոյություն ուներ նաև խաղի ավարտի ժամանակ. եթե նույն խաղը երկար խաղալուց ձանձրանում էին և ուզում էին այլ խաղ խաղալ, ապա նոր վիճակահանություն էր կատարվում: Իսկ եթե ուզում էին ցրվել, այդ դեպքում լավ խաղացողները ծաղրում էին պարտվողներին և գետնին թքելով՝ ասում. «Թյու՛ օյինը խաղը, ոտքերիս տակը»: Դրանից հետո նրանց չէր կարելի ստիպել խաղալ: Խաղացողներն էլ, միմյանցից բաժանվելով ասում էին. «Ամեն մարդ իր տունը, ոսկի սնդուկը մեր տունը»:¹¹

Ալեքսանդրապոլում տարածված շարժական խաղերից էին գնդակախաղերը (*Թուփ խաղալ, Քարթոփի, Ղազախ-թոփի, Ախպերս դյուրգար, չատր կշի-նե*), լախտախաղերը (*Ճիզ թուրա*), նշանառության խաղերը (*Մատանի հոր, Թութ*), իծաշարունկները (*Ատտուրմա*), վեզախաղերը, պահմտուկները, հետապնդիչ, խույս տալու խաղերը և այլն:

Անդրադառնանք դրանց առանձին-առանձին: Գնդակախաղերը առավել տարածված խաղաձևերից էին, որոնց մասնակցում էին տարբեր տարիքի և սեռի երեխաները: Դարձյալ վկայաբերենք Նիկողոսյանին, որը, նկարագրելով *թոփ խաղալը*, գրում է. «Քանի ռեզինե գնդակները չկային, բրդից կամ բամբակից գնդակ էին շինում, թելով փաթաթում, երբեմն էլ գույնզգույն գարոս թելով նախշում էին: Գնդակը գետին էին խփում, բարձրանալիս նորից ու նորից ձեռքով էին խփում, մինչև գնդակի հեռանալը կամ ընկնիլը: Հետո էլ հաշվում էին 1,2,3 ն. այդ ձևի խաղը կոչվում էր «Մայի»: Իսկ եթե բարձր էին խփում ու պտտում, կոչվում էր «չարխ»:¹² Այս խաղը տարբեր անուններով ու կանոններով տարածված էր ողջ Հայաստանում և հայաբնակ բնակավայրերում:¹³

Քարթոփի խաղը որոշ տարբերակներով ներկայացված է Վ.Բդոյանի աշխատության մեջ:¹⁴ Ալեքսանդրապոլում այն խաղում էին հետևյալ կերպ. «Բնում կանգնեցնում էին մի տափակ, մեծ քար. խաղացողներից մեկը փայտով գնդակին էր խփում, մյուսները հեռու ցրված աշխատում էին գնդակը բարձրից

¹⁰ Նիկողոսյան Ն., էջ 7196:

¹¹ Նույն տեղում, էջ 7197:

¹² Նույն տեղում, էջ 7218:

¹³ Բդոյան Վ., Հայ ժողովրդական խաղեր, հ. II, №№ 238, 239, 245, 246, 247, 248, 249:

¹⁴ Նույն տեղում, №№ 213, 214, 215, 216:

բռնել, կամ եթե բռնել չէր կարողանում, գնդակը ձեռքն ընկնելուն պես խփում էր քարին: Եթե գնդակը բռնվել էր կամ քարին դիպել, դիպցնողը կամ բռնողը վեր կգնար գնդակը զցելու: Խաղով վարժվում էր նշան բռնել կամ հեռվից եկող առարկան դիտել»:¹⁵

Ղազախ-թոփի խաղը «կատարվում էր գնդակով ու տափակ ձեռնափայտով, որով խփում էին գնդակին: Քյաստողները կանգնում են վերը, որից քիչ հեռու գտնվում է լակամանը,- գնդակին խփողները, որ մեռած են համարվում: Քյաստվողները գնում են վար և ցրված կանգնում ու սպասում գնդակը բռնելու: Գնդակին խփողը կանգնում էր լակամանում և սպասում հարմար դեպքի, որ ցած փախչի, կենդանանա ու փախչելով գա ընկերների մոտ: Քյաստվողներից մեկը գնդակ է տալիս խփելու, բայց այնպես, որ «փրստ» գա, չկարողանա գնդակին զարկել, կամ այնպես տա, որ գնդակը հեռու թռչի, ընկերները բռնեն:

Եթե գնդակը բռնում էր լակամանում կանգնած «մեռնողը», կենդանանում էր, իսկ եթե ցածում կանգնածներն էին բռնում, իրանք կանցնեին վեր, իսկ վերինները կգային վար: Վերջը գնդակը խփում էր ուստաբաշին: Մա երեք անգամ իրավունք ուներ խփելու, բայց այնպես էր խփում, վոր գնդակը ցածրից կամ բարձրից գնա, չկարողանան բռնել: Եթե բոլորն էլ լակամանում մեռած էին լինում, գնդակ տվողը գնդակը վեր էր թոցնում, բռնում, վոր սրանց խափ տա փախչելու, որ գնդակով խփե: Այդ միջոցին եթե մեռածներից մեկը վրա հասներ ու բռներ գնդակը, բոլորը կկենդանանային, ու խաղը կնորոգվեր: Մեռածների փախչելու ժամանակ եթե գնդակը դիպչեր մեկին՝ լակամանին չհասած, ցածինները վեր կգային, և խաղը կանցներ մյուս կողմին: Խաղի բնույթն էր լավ գնդակ խփել, արագ վազել և մարմինն այնպես ճկել, որ գնդակը չդիպչեր»:¹⁶

Այս խաղը Ախալքալաքում գրեթե նույն կանոններն ուներ և որոշ տարբերություններով հայտնի էր նաև Նոր Բայազետում՝ *Սեթակ*, Սասունում՝ *Թոփ*, Ապարանում՝ *Թոփ չորեցի* անունով:¹⁷ Ընդ որում, Ախալքալաքում և Սասունում, ինչպես Ալեքսանդրապոլում, խաղում էին 17-18 տարեկան տղաները, իսկ Ապարանում խաղին մասնակցում էին նաև աղջիկները:

Ախալքալաքում, չատր կշիներ խաղը ևս հայոց մեջ տարածված խաղերից է, հայտնի տարբեր անուններով՝ *Գծագնդակ*, *Շրջան*, *Հոլ գնդակով*, *Ջղեզ*, *Խփոցիկ* անուններով:¹⁸ Ալեքսանդրապոլում խաղը կատարվում էր հետևյալ կերպ. «Գետնի վրա գծում էին մի մեծ շրջան: Քյաստվողները, քամակ-քամակի սոված, երեսները դեպի խաղացողները դարձրած, սպասում էին: Քյաստողները

¹⁵ Նիկողոսյան Ն., էջ 7216:

¹⁶ Նույն տեղում, էջ 7209-7210:

¹⁷ Բոդոյան Վ., ՀԺԽ, հ. II, №№ 227, 228, 229, 231:

¹⁸ Նույն տեղում, №№ 202, 203, 204, 206, 207:

զծից հեռու, մի գնդակ պահում էին փեշերի տակ, մոտենում էին զծին, պտտում էին զծի շուրջն ու ասում.- Ախպերս դյուրզյար, չատր կշինե: Մի քանի պտույտ կատարելուց ու խոսքերը կրկնելուց հետո հանկարծ մեկը պահած գնդակը խփում էր մեկին, և ամենքն սկսում էին փախչել: Եթե գնդակը գետին չընկավ, բռնեցին, նրանք դուրս կգային զծից, մյուսները կմտնեին զծի մեջ: Եթե գնդակը զծից դուրս եկավ, խաղացողները նորից կշարունակեին նույն ձևով: Եթե գնդակը զծի մեջ մնաց, նրանով կաշխատեին փախչողներին դիպցնել, որ իրանք զծից դուրս գան: Իսկ եթե գնդակը չէր դիպչում, զծից դուրս եղողները կշարունակեին նույնը կրկնել: Խաղացողների հմտությունը նրա մեջ էր, որ գնդակը խփելիս ներսինները չբռնեն, և զծից դուրս գա, ու իրանք երկար նույն դերը կատարեն»:¹⁹

Լախտախաղերից Ալեքսանդրապոլում հայտնի էր *Ճիզ թուրա (լախտի)-ն*: Խաղն իր հիմնական կառուցվածքով ու ընթացքով նման է Հայաստանի այլ բնակավայրերում տարածված լախտախաղերին.²⁰ «Կազմում էին 4-5 զույգից բաղկացած երկու խումբ: Գծում էին մի մեծ շրջան: Քյաստվողները գոտիկները կամ ոլորած լախտեր էին դնում շրջանի մեջ իրարից հեռու, զծի եզրին ու ոտքով պաշտպանում լախտը, վոր դրսինները չփախցնեն: Դրսինները հարձակվում էին լախտը խփելու, և եթե հաջողվեր մի լախտ դուրս պրծցնել, սկսում էին նրանով խփել լախտին կամ պաշտպանողին, մինչև որ մյուսներն էլ դուրս կորզեին ու այնուհետև ամեն կողմից կսկսեին ձաղկել զծի մեջ գտնվողներին: Գծի մեջ եղածներն էլ առանց զծից դուրս գալու պիտի ձեռքը պարզեին, ներս քաշեին զծի մեջ ու ոտքով մեկին կամ մյուսին խփեին, որ իրանք ազատվեին, խաղացողները զծի մեջ անցնեին: Խաղի մեջ պահանջվում էր ձեռքի ու ոտքի ուժ և մարմնի ճկունություն»²¹»:

Նշանառության խաղերը չափազանց բազմազան են ինչպես կատարման եղանակներով, այնպես էլ թեմաներով: Դրանք որևէ առարկայի նշան բռնելու, թիրախն անպայման տապալելու, շրջագծերի ու փոսերի մեջ գնդեր գլորելու և շրջաններից գնդերը դուրս մղելու, գլորելով, մետելով ու սորելով նշան բռնելու խաղերն են:

Ալեքսանդրապոլում տարածված նշանառության խաղերից *Թուր* և *Սատանի հոր* խաղերը, որ նկարագրել է Նիկողոսյանը, նույն անուններով ներկայացված են նաև Բդոյանի գրքում:²²

Նշանառության խաղերին են պատկանում նաև վեգախաղերը, որոնց մասին Նիկողոսյանը գրում է. «Անցյալ դարի 70-80-ական թվերին (*խոսքը XIX դ.*

¹⁹ Նիկողոսյան Ն., նշվ. աշխ., էջ 7197:

²⁰ Բդոյան Վ., Հայ ժողովրդական խաղեր II, № 161, էջ 90:

²¹ Նիկողոսյան Ն., նշվ. աշխ., էջ 7212:

²² Բդոյան Վ., ՉժԽ II, № 272, էջ 124, № 325, էջ 140:

մասին է-Գ.Բ.) երեխաները կանոնավոր խաղալիքներ չունենին: Նրանց միակ խաղալիքը կազմում էին վեգը, կճղակը և քարը: Վեգով խաղում էին երկու երեխա: Վեգը ունի չորս կողմ. հարթ կողմը կոչվում էր թոխան, որի հակառակ կողմը կոչվում էր ալշու, ուռուցիկ կողմը՝ բոգ, և սրա հակառակ կողմը՝ ջիգ: Թոխանը տանում էր (կրում էր) բոգը, իսկ ալշուն՝ ջիգը: Եթե մի-մի վեգ էին գցում՝ խաղը կոչվում էր մտար, իսկ եթե գույգ-գույգ, կոչվում էր ջխտար: Եթե վեգ գցելիս մեկի վեգը թոխան կանգնեց, մյուսինը ալշու, թոխան բերողը տանում էր ալշուն: Եթե մեկը ալշու էր կանգնում, մյուսը բոգ, ալշու վեգով պետք է խփեր բոգին, որ ջիգ դառնա, տանի: Ջխտար խաղալիս նետում էին երկու-երկու եգ. թոխան բերողը վերցնում էր բոգը, դարձնում էր ջիգը, հետո վերցնում:

Վեգերով խաղում էին *Ալշնալու*: Նախապես պայմանավորվում էին, թե քանի վեգով են խաղալու: Գծում էին շրջան ու կենտրոնում շարում էին 2-ական կամ 3 - ական վեգ: Սկսում էին գծի մոտիկ աչքել վեգերին: Եթե հաջողվեր շարած վեգերը տեղից դուրս գցել ու բավական հեռացնել, վեգը կվերցներ. իսկ եթե մնար գծի մեջ, այնքան պետք է չարչարվեր, մինչև շրջանից դուրս բերեր:

Կճղակով նույնպես *Ալշնալուն* էին խաղում: Քարերով խաղը կոչվում էր *Փամփաստ*: Վերցնում էին հինգ հատ ողորկ կլոր փոքր քարեր, գցում էին օդում և ձեռքի երեսը դեմ անում. եթե մեկ կամ երկու քարը կանգնեին ձեռքի երեսին, մնացած երեք քարերն էլ գետնից էին վերցնում, մի քարը օդում գցելով: Փամփաստի խաղը շատ ձևեր ուներ, բայց անունները մոռացել են, չեմ կարող նկարագրել»:²³

Այս խաղը ևս, *Ջխտար* անունով, մի քանի տարբերակով ու բավականին մանրամասն նկարագրված է Վ.Բդոյանի կողմից.²⁴

Խաղերի մյուս խումբը կազմում են իծաշարուկները և հեծնոցիկ խաղերը, որոնցից Ալեքսանդրապոլում տարածված էին *Ատտուրմա*, *Էրկան էջ*, *Էրկան գոմեջ*, *Թամբուլում-թամբուլում-թամբալակ*, *Պոչ-թախլասի*, *Հյուսամմա դուբբա*, *Մատանի չախչախ* խաղերը: Սրանք մանկապատանեկան խաղեր էին, որ կատարվում էին հիմնականում գարնանը:

Ատտուրման իծաշարուկ խաղ էր և այստեղ երեք տարբերակ ուներ. «ա/ Սրով (հերթով) ատտուրմա, բ/ Ոտով ատտուրմա և գ/ Կտի-կտի մաստանա:

ա. Սրով ատտուրմա. մինը կռանում էր, մյուսները վրայից թռչում էին: Վերջին թռչողը կռանում էր, իսկ կռացողը թռչում էր առաջինը: Նորից վերջինը կռանում էր, իսկ կռացողը թռչում էր ամենից առաջ և այլն:

²³ Նիկողոսյան Ն., էջ 7216-7219:

²⁴ Բդոյան Վ., նշվ. աշխ., № 371, էջ 153:

բ. Ոտով ատտուրմա. կատարվում էր ատում-քյաստում, վերջին քյաստ-վողը կռանում էր նշանակված տեղում: Առաջին քյաստողն ուստաբաշին էր. երկրորդը՝ արտուկ, երրորդը՝ գստիկ, իսկ մյուսները անուն չունեին: Առաջ խաղում էր ուստաբաշին, հետո՝ արտուկը, հետո՝ գստիկը և հետո մյուսները. շարքը վերջանալուց հետո խաղացողը բնից չափում էր մի ոտք ու կես, կռանում էր, մյուսները կարգով թռչում էին: Կռացողը նորից մի վոտք ու կես հեռանում էր, կռանում, մյուսները նույն կարգով թռչում էին: Էլի մի վոտք ու կես չափելով կռանում էր, էլի նույն կարգով թռչում էին: Կռացողը շարունակ հեռանում էր:

Խաղի պայմանն էր. թռչողը զույգ ոտքը պետք է բնի վրա դներ և առանց կռացողին դիպչելու վրայից թռներ, իսկ եթե բնի վրա ոտքերը չդներ կամ չկարողանար առանց դիպչելու անցներ, կամ վար ընկներ, այն դեպքում ինքը պիտի կռանար: Կռացողը կդառնար ուստաբաշի, ուստաբաշին՝ արտուկ, արտուկը՝ գստիկ:

Լավ խաղացողը կթռչեր 10 ոտք (մոտ 3,5 մետր) և կհամարվեր հայտնի խաղացող»²⁵:

Խաղի երրորդ՝ *Կտի-կտի մաստանա* տարբերակը, որ կատարվում էր որոշակի տեքստ արտասանելով, նկարագրել է Քաջբերունին՝ տալով միաժամանակ չափածո տեքստը:²⁶ Հիշյալ տեքստը, որոշ տարբերություններով, ներկայացրել է նաև Նիկողոսյանը՝ բացատրելով խաղը. «Քյաստվողը կռանում էր, ուստաբաշին թռչում ու ասում էր ստորև դրվող խոսքերից մի տող, մյուսները կրկնում էին.

Առաջին փոփոխակ. Կտի-կտի մաստանա,
Կտիկըմ գյալդի բոստանա,
Բոստանչի գյոդի (տեսավ), գյոդի,
Գյոդի դչի (այծր) կոբլտի (ջարդեց),
Թանով ապուր, թեյրանի,
Կարպետը ծակ ջեյրանի:
Գնացի մեկ մարագ,
Գտա կճուճըմ կարագ,
Զարկի պատին կոտրեցի,
Կանթը երթիկ թաբլեցի,
Աթակ-մաթակ տեղ բակմագ,
Թառլի կոյուն դյշըմագ:
Երկրորդ փոփոխակ. Ուլն ելավ սարը,

²⁵ Նիկողոսյան Ն., էջ 7199-7200:

²⁶ Քաջբերունի, Հայկական սովորություններ, Ազգագրական հանդես, գիրք IX, Թիֆլիս, 1902, էջ 99:

Քար կերավ, ցախ խմեց,
Արուն շոեց, պանիր թափեց:
Կորեկ էի կոտրմ ցանել
Ղշերն էին եկել, կերել:
Գնացի բերդի դուռը,
Գտա մե հատրմ նուռը,
Կեսը հոտած էր, կեսն անուշ:
Շափխա դնել վար չընկնի,
Շափխա տանել հեյրանի:

Առաջին փոփոխակում թոշողի առավելությունն այն է, որ պիտի բարձրից թոշեր, և իր շորերը չկաշեին կռացողին, իսկ երկրորդ փոփոխակում իրար վրա կռացողի կռնակին դիզվող գլխարկները չպետք է թափվեին, որ գլխարկները թափեր, նա պետք է կռնար: Վատ թոշող և դանդաղաշարժը ծաղրելի էր դառնում և շատ կռնում»²⁷:

Նեճնցիկներից *Թամբուլում-թամբուլում-թամբալակ*²⁸, *Էրկան էշ, էրկան գոմեշ*²⁹, *Պոչ-թալասի*³⁰, *Մատանի չախչախ*³¹ խաղերի տարբերակները նույն անուններով, իսկ *Էս ի նչ է, կամ քանի մատ է*³² խաղը՝ այլ անուններով ու կանոններով ներկայացված են Վ.Բոյանի մոտ:

Հյուսամա դուրբան գմբեթախաղի տարբերակ է, որը էապես տարբերվում է համանման խաղերից:³³ Այն կատարվում էր հետևյալ կերպ. «Քյաստվողները գլուխ-գլխի տված կանգնում էին բուրգ ձևացնելով: Ուստաբաշին մեկի փեշից բռնած՝ պտտում էր բուրգի շուրջը, աշխատելով պոկ չգալ բուրգից և ոտքով խփել դրսից հարձակվողներին: Սրանք վրա էին գալիս ամեն կողմից, որը ուստաբաշուն էր ծեծում, որը բուրգի վրա բարձրանում: Հարձակվողները աշխատում էին ուստաբաշուն պոկել բուրգից, որ ազատ կերպով հեծնեն նրանց ու չարչարեն, իսկ տակինները վեր-վեր թոջելով, ոտքերով հարվածում էին հեծնողներին, որ վայր գցեն նրանց: Քանի բուրգը չէ քանդված, ուստաբաշին չէ մեկուսացած բուրգից, ծեծողները զարկվելու վտանգի մեջ են: Եթե ուստաբաշին զարնե մեկին կամ մյուսին, դերերը կփոխվին և բուրգ պիտի դառնան խաղա-

²⁷ Նիկողոսյան Ն., էջ 7200-7202:

²⁸ Բոյան Վ., ՀԺԽ III, № 246, 247, էջ 82:

²⁹ Նույն տեղում, № 260, 261, էջ 85-86:

³⁰ Նույն տեղում, № 293, էջ 95:

³¹ Նույն տեղում, № 498, էջ 145-146:

³² Նույն տեղում, № 255, 257, էջ 83, 84:

³³ Նույն տեղում, № 319, 321, էջ 103:

ցողները: Այս խաղը պահանջում է ֆիզիկական ուժ և ուստաբաշուց՝ ճարպիկություն»³⁴:

Չիֆտալի բանդան մի ոտքի վրա կատարվող խաղ է, որի տարբերակները Վ.Բդոյանը միավորել է *Ակնատոտիկ* խաղեր անվան տակ: Նմանություններով հանդերձ այս խաղը Ալեքսանդրապոլում ուներ էական տարբերություններ. «Այս խաղը կոչվում է նաև «Քյարաստա-սարմիա»: Երեխաները խաղում էին գարնանը և աշնանը: Երկու հոգի կանգնում էին բնում (կոչվում էր «աբա»): Նրանցից մեկը բնից դուրս գալու համար ծալում էր մեկ ոտքը և ընկերին որպես թե թույլտվություն ստանալու համար ասում էր. - Քյարաստա, նա էլ ասում էր. - Սարմիա: Առաջինը մի ոտքի վրա ուստոստելով առաջ էր գալիս և աշխատում էր մյուսներին բռնել, որ ուղարկե իր տեղը: Խաղացողները խփում էին ու փախչում: Եթե դադրեր մի ոտքի վրա թռչկոտելուց և մյուսը գետին դներ, իսկույն վրա կհասնեին խաղացողները և լավ կծեծեին, այնպես որ հազիվ նրանց ձեռքից ազատվելով իր տեղը կփախչեր: Իսկ բնում կանգնած ընկերն երբեմն հանաքի համար ասում էր. - Մարմի սրգ, այդ նշանակում էր թե առաջ էր եկել առանց թույլտվության: Այս դեպքում մի լավ ծեծ կուտեր, հետ կդառնար: Հիմա էլ երկրորդ ընկերն էր բնից դուրս գալիս նույն ձևով: Այսպես կտներ, մինչև որ կբռնվեր մեկը, և ինքը կազատվեր»³⁵:

Ալեքսանդրապոլում տարածված էին *Ղարով մտա* և *Ես տարա խփել-խույս տալու* շարժական խաղերը: Առաջինը կատարվում էր այսպես. «Խաղացողները կազմում էին զույգեր: Մի զույգը աջ ու ձախ ձեռք բռնած հայտարարում էր իրան. - դըրրով մտա: Մյուսները վրա էին հասնում խփելու, խփում ու փախչում էին, իսկ սրանք աշխատում էին խփողին բռնել, որ ստիպեն նրանց նույն դերը վերցնել»³⁶: *Ես տարա* խաղը նույն անունով տեսնում ենք նաև Վ.Բդոյանի մոտ,³⁷ սակայն որոշ տարբերություններով: Ալեքսանդրապոլում այն խաղում էին հետևյալ կերպ. «Մեկը կանգնում էր կենտրոնում, իսկ մյուսները նրան շրջապատում էին ու հանկարծ խփելով թիկունքին, ուսին, փախչում էին, ասելով. - Ես տարա: Հարված ստացողը նրա հետևից էր ընկնում բռնելու, բայց իսկույն երկրորդն էր խփում, փախչում: Մա առաջինին թողած ընկնում էր երկրորդի հետևից: Սրան ազատում էր երրորդն իր հարվածով և այսպես անվերջ, մինչև որ կհաջողվեր վերջին խփողին բռնել, որից հետո խաղն անցնում էր ձեռք մնացողին»³⁸:

³⁴ Նիկողոսյան Ն., էջ 7208-7209:

³⁵ Նույն տեղում, էջ 7213:

³⁶ Նույն տեղում, էջ 7211:

³⁷ Բդոյան Վ., № 167, 168, էջ 64:

³⁸ Նիկողոսյան Ն., նշվ. աշխ., էջ 7211:

Բռնոցիներից քաղաքում հայտնի էր *Գերի-գերի* խաղը, որը այսպես էր ընթանում. «Իրարից բավական հեռու տարածության վրա կանգնում էին խմբերը: Նշանակում էին մի կետ, վորտեղ կանգնում էին գերիները: Ուստաբաշին գալիս էր հակառակորդներից մեկի ձեռքին խփելու: Սա աշխատում էր ձեռքը փախցնել: Յերեք անգամ խփելուց հետո իսկույն պիտի փախչեր, յեթե վոչ, մյուսները՝ վրա վազելով՝ նրան գերի կվերցնեին: Գալիս էր երկրորդը, երրորդը և այլն, նույն ձևով կամ փախչում ազատվում էր, կամ գերի ընկնում: Գերվածների կողմի անհատներն աշխատում էին առանց բռնվելու հասնել գերիներին ազատելու համար: Եթե բոլորն էլ գերի բռնվեին, պարտավոր էին գերողներին շալակած երեք անգամ տանել իրանց տեղն ու դարձնել: Խաղը կատարվում էր շատ աշխույժ. պահանջում էր ճարպիկություն, իսկ վերջն էլ փոխվում էր մեծ զվարճության»³⁹:

Շարժական խաղերից էին պահմտոցիկները (*Հալալի մոլլա, Աչքախուսի*), *Էծ-էծ* շունչպահուկը, *Փափախ յետև դնել* հետապնդիչ խաղը, *Մանդակ* չիլիկախաղը և այլն:

Բացի շարժականից, Ալեքսանդրապոլի տղաների սիրած խաղերից էին նաև ուշադրության խաղերը (*Բանդա, Թամբուլում*) և հանելուկախաղերը (*Կանգլի-Կանգլի*):

Աղջիկների խաղեր

Ինչպես վերը նշվեց, միջին տարիքային խմբում խաղացողների մեջ ի հայտ է գալիս սեռային տարանջատումը: Աղջիկների խաղերի վերլուծությունը ցույց է տալիս, որ դրանք թե՛ որակով և թե՛ քանակով խիստ զիջում են տղաներին բնորոշ խաղերին: Դա բացատրվում է ալեքսանդրապոլցիների նահապետական կենցաղով, որտեղ աղջիկներն ավելի շատ էին զբաղված տնային աշխատանքներով, ինչպես նաև տղաների շարժուն ու աղմկոտ խաղերին նրանց մասնակցելու արգելքով: Այս մասին Հ.Գյուլեցյանը գրում է. «Երիտասարդ հարսներն ու աղջիկները թե՛ տանը, թե՛ դրսում պիտի լինեին զուսպ, բարձրաձայն խոսելն ու ծիծաղելը մեծերի ներկայությամբ անվայել էր համարվում: ... Մայրը շատ մեծ պարտականություններ ուներ իր աղջկա շենք ու շնորհքի, նիստ ու կացի, լավ վարքի, օրինակելի հարս, մայր, տանտիկին լինելու համար: Դեռ փոքրուց հետևում էր, որ աղջիկը թամբալ, անգործ չէղնի, փոքր ժամանակից ավելը ձեռքն էր տալիս դուռն ավլելու, ապա բակի-շվաքի հավաքելն ու մաքրելն էր հանձնարարում, իհարկե ուշադրությամբ հետևելով:

... Տան հոգավը (մաքրելը, հավաքելը) սովորեցնելուց հետո սովորեցնում է սեղան դնել, ուտելուց անմիջապես հետո հավաքել, լվանալ, վերցնել, սեղանը

³⁹ Նիկողոսյան Ն., էջ 7202-7203:

ճանճերի տակ չթողնել: Առավոտ շուտ տունն ավլել, յիստկելուց հետո լամպի շուշեն յիստակ, մաքուր սրբել, լամպը նավթ լցնել, հագր էնել: Քանի աղջիկը փոքր է, սովորեցնում են թեշիկով (իլիկով) թել ոլորել: Երբ մի քիչ մեծանում է, սովորեցնում են բուրդ մանել, գգել, գուլպա, շալ և այլն գործել:

Մայրը սովորեցնում է կար անել, իհարկե շապիկ, վարտիկ, երեխայի շորեր, որոնց համար առանձին վարպետություն չի պահանջվում: Սովորեցնում է լվացք անել, հարթուկել»⁴⁰:

Նիկողոսյանը ևս հաստատում է երկու սեռի առանձին խաղալու իրողությունը. «Աղջիկները կամ երիտասարդ կանայք տղայոց հետ չէին խաղում: Նրանք էլ ունեին մի քանի խաղեր. *Աչքահուփ, Պուտ-պուտ, Մալաքսիմա, Չակուր, Փիլո-փիլո*:

Պուտ-պուտ. Այս խաղը նման էր տղաների փափախ դնելու խաղին: Խաղացողները շրջանաձև չորում են. մեկը ձեռքի աղլուղով պտտում էր շրջանի շուրջը և հանկարծ աղլուղը գցում է մեկի ետևն ու վազում, որ պտտի գա, նրա տեղը գրավե: Իսկ մյուսը կա՛մ դեռ իմացած չի լինում, կա՛մ բարձրանում, նրա հետևից է վազում, բայց արդեն ուշ է, տեղը գրավված էր լինում: Հիմա ինքն է ստիպվում աղլուղը պտտել»⁴¹:

Մալաքսիմա և Չակուր խաղերը նկարագրել է նաև Քաջբերունին՝ միաժամանակ տալով խաղն ուղեկցող տեքստերը:⁴² *Մալաքսիման* խաղում էին այսպես. «Երկու խումբ կանգնում էին իրար դեմ: Մի խումբը ձայն էր տալիս.- Մալաքսիմա, մյուս խումբը պատասխանում էր.- Մալքի տուտա: Առաջինն ասում էր.- Փերուշա, երկրորդը պատասխանում էր.- Փերմին տուտա, առաջինը՝ Տաղաղա, երկրորդը՝ տաղմինտուտա- վարա, վարա քի՛մ երիշա-Կատյա (կամ մի անուն տալով) Գյալդի բուղաթլար: Մեկը վազում էր դեպի Կատյան, աշխատում էր շղթան կտրել ու Կատյային հետը տանել, բայց չկարողանալով շղթան կտրել, ինքը մնում էր նրանց մեջ: Հիմա էլ նույն խոսքերով երկրորդ խմբից մեկն էր վազում դեպի առաջին խումբը»⁴³:

Չակուրը Քաջբերունու մոտ ներկայացված է *Չրիկըր* անունով. «Ալեքսանդրապոլում խաղացողները երկու խմբի են բաժանում և իւրաքանչիւրի պարագլուխները իրար հարց ու պատասխան են տալիս:

-Խնամի Խորա՞ն:

«Ի՞նչ է:

⁴⁰ Գյուլեցյան Հ., Գյումրի (Ալեքսանդրապոլ, Լենինական), տետր N 1, 1976, ՀՀ ԳԱԱ ՀԱԻ ԱԲԱ, գործ 4/99, էջ 68-70:

⁴¹ Նիկողոսյան Ն., էջ 7220-7221:

⁴² Քաջբերունի, նշվ. աշխ., էջ 103:

⁴³ Նիկողոսյան Ն., Նույնը:

-Հաւերս կորան, ձեր տունն է:

«Մեր տունն է:

-Քշէ, քշէ գայ:

«Քշէմ, քշէմ, չի գայ:

Տաք-տաք ապուռ վրան լից գայ:

«Լըցէմ, լըցէմ չի գայ:

-Մախաթ կոխէ, թող գայ:

«Կոխէմ-կոխէմ չի գայ:

-Հաւերս քանի՞ հաւկիթ են ածէ:

«Մաղ ու կէս:

-Քա, ան օր ես ձեր դռնէն անցայ, ան ի՞նչ պարակ մուխ կելլէր ձեր յերդիկէն.

«Հարսս պառկեր էր՝ տղա էր պերէ, ձուածեղ էփեր էի:

-Ի՞նչ է պերէ:

-Մանչ:

-Անունը ի՞նչ դրիք:

«Ստեփան:

Այս անուան վերայ երկու բաժինն էլ իրար խառնուելով թոչկոտում են և ծափահարում և մի քանի անգամ կրկնում են. «չըխկըր, չըխկըր Ստեփան»:⁴⁴

Քաջբերունին նկարագրել է նաև *Պուլտ* խաղը, որը չկա Նիկողոսյանի նյութերում: Խաղն այսպիսին էր. «Ալեքսանդրապօլում երկու աղջիկ, մէջք մէջքի տուած, միմեանց փոփոխակի բարձրացնում են, և տակինը հարցնում է ու պատասխան ստանում:

-Տակդ ի՞նչ կայ. «Եօրդան դօշակ,

-Վրեղ ի՞նչ կայ. «Աստղ ու լուսնեակ»⁴⁵:

Աղջիկների սիրած խաղերից Քարկտիկի մասին հիշատակել է Ալ. Մխիթարեանցը այսպէս. «Մանկական խաղ, որ հինգ հատ կլորակ քարերով կը խաղան»:⁴⁶ Քարկտիկը տղաների խաղացած Փամփաստի աղջկական ձևն էր, որը նույնպէս բազմաթիվ տարբերակներ և բարդության աստիճաններ ուներ:

Եզրահանգում. Այսպիսով, Ալեքսանդրապօլի խաղային մշակույթի ուսումնասիրությունը մեկ անգամ ևս փաստում է այն, որ խաղը անձի սոցիալական հարմարվողականության կարևորագույն մեխանիզմներից մեկն է, ան-

⁴⁴ Քաջբերունի, նշվ. աշխ., էջ 103-104:

⁴⁵ Նույն տեղում, էջ 102:

⁴⁶ Մխիթարեանց Աղ., Փշրանք Շիրակի ամբարներից, Էմինեան ազգագրական ժողովածու, № 1, Մօսկուա-Ալեքսանդրապօլ 1901, էջ 337:

հատի դաստիարակության և սոցիալ-տարիքային տարբեր խմբերի մեջ ներգրավվելու միջոցներից մեկը:

Ալեքսանդրապոլի մանկապատանեկան շարժական խաղերը, հայկական ավանդական խաղերի հետ ընդհանրություններով հանդերձ, ունեն քաղաքային մշակույթին բնորոշ առանձնահատկություններ, որոնք դրսևորվում են խաղի կազմակերպման, խմբերի կազմման ձևերի, ղեկավարների ընտրության, անվանումների մեջ և այլն:

Տղաների խաղերը ավելի քիչ էին վերահսկվում, դրանից էլ գալիս էր նրանց ձգտումը դեպի տնից հեռու, չբնակեցված, «գաղտնի» տարածքները: Տղաների խաղային «տիրույթների» համար գերակա են տարածքի ուսումնասիրումն ու յուրացումը (փնտրելու հետ կապված խաղեր), մրցակցության և հակառակորդի տարածքը գրավելու թեմայով խաղերը, ուժային, էքստրեմալ խաղերը և այլն:

Աղջիկների խաղերն, ընդհանուր առմամբ, ավելի էին վերահսկվում մեծերի կողմից, բացի այդ աղջիկների խաղային «տիրույթում» գերակշռող էին տնային տնտեսության, ամուսնության, երեխաների դաստիարակության և նման թեմաների հետ կապված դերային և տիկնիկային խաղերը:

Հարկ է նշել, որ տղաների և աղջիկների մի քանի խաղեր պահպանվեցին և գրեթե նույնությամբ շարունակեցին կենցաղավարել լենինականցի երեխաների ու պատանիների մեջ ընդհուպ XX դ. 70-80-ական թվականները:

ИГРА В ТРАДИЦИОННОЙ ГОРОДСКОЙ КУЛЬТУРЕ АЛЕКСАНДРОПОЛЯ

Базеян К.Р.

Ключевые слова: *Александрополь, городская культура, игра, сообщество сверстников, социализация, соревнование, игровой фольклор.*

Статья посвящена подвижным (спортивным) играм – одной из значительных сфер городской культуры Александрополя. Игра имеет огромное значение как для духовного, так и физического развития ребёнка. Детские игры чрезвычайно многообразны по содержанию, характеру, видам организации. Они всегда считались общественно полезными, так как направлены на формирование физических навыков и на развитие умственных способностей детей.

Исходя из специфики городской культуры, традиционные детские и юношеские подвижные игры Александрополя заметно отличаются от схожих игр других регионов и городов Армении. Это проявляется в особенностях ор-

ганизации игры, формировании групп, выборе лидеров и так далее. В статье на основе впервые введенных в научный оборот архивных материалов представлены игровые формы как для мальчиков, так и для девочек.

GAME IN THE TRADITIONAL URBAN CULTURE IN ALEXANDROPOL

Bazeyan K.R.

Key words: *Alexandropol, urban culture, game, peers community, socialization, competition, game folklore.*

The article describes the outdoor games (sports games), one of the important spheres of the urban culture of Alexandropol. The game has a great importance both for the mental and physical development of children. Children games are diverse under the contents, the nature and the type of organization. They have always been considered as useful since they are helpful for the physical skills formation and for the mental development of children.

Relying on the urban culture specifics, the outdoor traditional games of Alexandropol for children and young people are markedly different from the similar games of the other regions and cities of Armenia. That is manifested in the game organization, the formation of groups, the selection of the leader and so on. Based on the archive records firstly introduced into scientific circulation, the article presents the games for the boys and girls as well.

References

1. **Bdoyan V.**, Haj azgagrutian, hamarot urvagic, Yerevan, 1974 (**in Armenian**).
2. **Blinova A.N.**, Detskie igry nemtcev Zapadnoi Sibiri// Kulturologia tradicionnikh soobshcestv, Omsk, 2007. (**in Russian**)
http://www.rukukla.ru/article/kuhi/game_nem.htm
3. **Goletsyan H.**, Gyumri (Aleqsandrapol, Leninakan), tetr 1, HH GAA Hnagitutyanyan ev azgagrutyan instituti azgagrutyan bajni arkhiv, gorc 4/99 (**in Armenian**).
4. Hay joghovrdakan khagher, Ashkhatasirutyamb V. Bdoyani, hator II, III, Yerevan 1980,1988 (**in Armenian**).
5. **Magomedov M.Z.**, Narodnye igry lezgin v XIX – natshale XX veka: avtoreferat disertacii kandidata istoritsheskikh nauk, Makhatskala, 1994 (**in Russian**).
<http://www.dslib.net/etnografia/narodnye-igry-lezgin-v-hih-nachale-xx-veka.html>

6. **Mkhitareanc A.I.**, Phshranq Shiraki ambarneric, Eminean azgagrakan joghovacu, №1, Moskva-Aleqsandrapol, 1901 (in **Armenian**).
7. **Morozov I.A., Slepova I.S.**, Krug igry: Prazdnik i igra v jizni severorusskogo krestianina (XIX-XX vv.), Moskwa, 2004 (in **Russian**), «ebook».
8. **Nikoghosyan N.**, Leninakan, HH GAA Hnagitutyany ev azgagrutyany instituti banahyusutyany arkhiv, FF II (in **Armenian**).
9. Russkie deti: Osnovy narodnoi pedagogiki. Illiustrirovannaya enciklopediya, SPb, 2006 (in **Russian**), «ebook».
10. **Shagalova G.R.**, Detskie igry v kontekste sistemy cennostei, IV kongress etnografov i antropologov Rossii, Naltshik, 2001 (in **Russian**).
11. **Qajberuni**, Haykakan sovorutyunner, Azgagrakan handes, girq IX, Tiflis, 1902 (in **Armenian**).

Ընդունվել է՝ 25.06.2019
Գրախոսվել է՝ 18.07.2019
Հանձնվել է տպ.՝ 05.11.2019

Տեղեկություններ հեղինակի մասին

Կարինե ԲԱԶԵՅԱՆ՝ պատմ. գիտ. թեկնածու, դոցենտ,
ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների
կենտրոնի ավագ գիտաշխատող, էլ. փոստ՝ bazeyan60@mail.ru

ՀՏԴ՝ 398.7

ՀՈՎՀ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ՈՐՊԵՍ ՔՆԱՍՈՒՏԻ ՏԵՔՍԵՐ
Հասմիկ Մատիկյան

ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն

*Կարծում են՝ հեշտ ու հանաք բան է մանկական գրվածք գրելը,
դա ամենադժվար գործն է, երեխայի հոգու հետ գործ ունես,
պարզ ու հասկանալի պիտի տալ, զգույշ ու նուրբ պիտի մոտենալ,
գեղեցիկ ու անպայման ճաշակով պիտի հրատարակել:*
Հովհ. Թումանյան

Բանալի բառեր՝ օրորոցային, հեքիաթ, հեղինակ, բանասաց, հաս-
ցեատեր, բանահյուսություն, պատում, օրորոց, տեքստ միջավայր:

Աշխատանքում արժևորվում են Հովհ. Թումանյանի մանկա-
կան ստեղծագործությունները՝ դիտարկվելով բանահյուսական
մշակույթի համատեքստում: Թումանյանի մանկական ստեղ-
ծագործությունները մեծ դերակատարում ունեն հայ մանկանո-
ցում: Մեր կատարած բանահավաքչական աշխատանքները վկա-
յում են, որ Թումանյանի մանկական երկերը հնչում են տարբեր
տարիքային խմբերի բանասացների շուրթերից:

Նախաբան. Հովհաննես Թումանյանը՝ որպես բանահյուսական մտածո-
ղության կրող և փոխանցող, ունի մանուկներին հասցեագրված տեքստերի բա-
ցառիկ ընտրանի, որը բանահյուսահեն է: Մեզ հուզող խնդրի տեսանկյունից
նշում ենք այն տեքստերը, որոնք նախաքնային են, քնաբեր կամ քնամուտ: Ըստ
էության, օրորոցայինի, հեքիաթի տեքստերը կարելի է բնորոշել որպես քնա-
մուտի տեքստեր: Քնամուտի տեքստերն ունեն բացառիկ դերակատարում ման-
կաշխարհում և առատ բաշխվածություն թե՛ հեղինակային, թե՛ բանահյուսա-
կան ստեղծագործություններում:

Թումանյանի՝ որպես մանկագրի, ուսանելի ավանդույթներից մեկը ժողո-
վրդական բանահյուսության հետ մշտական սերտ կապն է: Հանճարեղ բանա-
ստեղծի կախարդական գրչին հարուստ նյութ են տվել բուն ժողովուրդը, ժողո-
վրդական երգերը, լեգենդները, զրույցները, հեքիաթները, առակները, որոնք

մեծ վարպետությամբ մշակել է նա ու վերադարձրել հարազատ ժողովրդին. «Որքա՛ն, որքա՛ն մեծ բան է, եթե գրողը կարողանա ուսումնասիրել իր ժողովրդին, ուսումնասիրել նրա ավանդույթները, լեզուն, աղաթները,-գրում է Թումանյանը»:¹

Մեզ հուզող խնդրի տեսանկյունից առանձնանշում ենք այն տեքստերը, որոնք նախաքնային են, քնաբեր կամ քնամուտ: Քնամուտի տեքստերն ունեն ինքնատիպ դերակատարում թումանյանական աշխարհում:

Յուրաքանչյուր բանասաց նորովի և յուրովի է ներկայացնում Թումանյանի մանկական ստեղծագործություններն ու դրանց լեզվական պատկերը:

Հարկ է նշել այն իրողությունը, որ կայուն միջավայրում է ձևավորվում, «արտադրվում» թումանյանական նյութը՝

1. վերարտադրողների խումբ,
2. ընդունողների խումբ:

Առաջին խմբում են ավագ օրոքասացները, հեքիաթասացները, որոնք երեխայի քնի միջավայրը ձևավորում են Թումանյանի հեքիաթների կերպարների «բնակեցմամբ»: Այդ կերպարները մարդանում են, անձնավորվում և տեղափոխվում մանկաշխարհ, մասնավորապես՝ քնաշխարհ: Այս առիթով մեջբերենք հեքիաթասաց Արեգնազան Մխիթարյանի խոսքը. «Երեխաներիս փոքրուց կարդացել եմ Թումանյանի հեքիաթները. Թումանյանի լեզուն ժողովրդական է, երեխաների համար հասանելի, մատչելի, հանգավորումով և բովանդակությամբ լեցուն»²: Բանասացը ասացողական վարպետությամբ փոխանցում է մեզ իր հիշողությունները երեխաներին քնեցնելու, մանկասենյակում թումանյանական շունչ ապահովելու մասին. «Ժողովրդի բանաստեղծի՝ Թումանյանի ասելիքը լավ փոխանցելու համար երեխաներիս հետ կենդանի բեմականացում /բեմական դիմակներով, մորթե գլխարկով/ էի կազմակերպում հեքիաթների կերպարների «ներկայությամբ»: Բեմադրության միջոցով երեխաների հուզաշխարհում ավելի կտպավորվեք Թումանյանը»:

Ընդունողների խմբում են այն երեխաները, որոնց հասցեագրվում են Թումանյանի ստեղծագործությունները:

Ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ Թումանյանի մանկագրության յուրաքանչյուր նմուշ կարող է դառնալ մանկաշխարհի անբաժան ուղեկիցը: Տեղին է մեջբերել մեծ մանկագրի հետևյալ դիտարկումը. «Ես ինքս գրող եմ, մանկական գրվածքներ գրելիս երբեք չեմ մտածում, թե քանի տարեկանի հա-

¹ Մելքունյան Մ.Ս., Հովհաննես Թումանյանը կրթության ու դաստիարակության մասին, Եր., Լույս հրատ., 1969, էջ 119:

² Արեգնազան Մխիթարյան. բանասաց: Ծնվել է 1952թ. Գյումրիում: Ունի բարձրագույն կրթություն: Նախնիները գաղթել են Պարսկահայաստանից (Հ. Մատիկյանի գրառումներից):

մար է նա: Քանի տարեկան ուզում է թող կարդա, ինչ հասակի համար կլինի, թող նրան տան: Բոլոր հասակներին հարմար կլինի-ավելի լավ: Չենք կարող սահմանավորել»³:

Բանասացը ընդգծում է, որ օրորոցի մոտ միշտ երգել է Թումանյանի «Ա՛խ, ինչ լավ են սարի վրա» երգը.

*Ա՛խ, ի՛նչ լավ են սարի վրա
Անցնում օրերն անո՛ւշ, անո՛ւշ,
Անըջային, թեթևասահ
Ամպ ու հովերն անո՛ւշ, անո՛ւշ:*

Բանասաց Արեգնազանի բանավոր փոխանցմամբ՝ վերոնշյալ երգի բաների ներքո երեխաների առօրյա աշխուժությունը անցնում էր. հանգստանում էին ու քնում:

Լեզվաոճական առումով ևս նշված պատառիկը ուշագրավ է: Առօրյա կան նշանների առկայությունը ինչ-որ չափով ևս ապահովում է հանգստաբեր վիճակ. ստեղծվում է մեղեդային պատկեր:

Օրորասացի փոխանցմամբ՝ վերոնշյալ երգը ապահովում է նաև օրոր երգողի խաղաղաբեր քունը. ինքնաքնաբեր է: Հիշյալ տեքստը որպես օրոր ներկայացնելու, երգելու ուրույն մեկնություն է տալիս բանասացը. «Երգը երգելիս բնության գեղեցկությունները իմ աչքի առաջ էին (*սար, ամպ, հով*), և ես էլ երանությունից աչքերս փակում էի: Մանավանդ ես ապրում էի գյուղում, համեմատում էի իմ գյուղը Լոռվա աշխարհի հետ և երգում էի: Թումանյանին սիրում են թե՛ մեծերը, թե՛ փոքրերը, որովհետև նա խորը հասկանում էր ամեն մի հայ մարդու հոգեվիճակը, նրա ստեղծագործությունների մեջ մարդիկ մխիթարություն էին տեսնում:»:

Թումանյանի մանկական գործերի ստեղծման հիմքում են ժողովրդական խոսքն ու երկխոսությունը. *Ժողովրդական երկխոսության էությունն այն է, որ մարդը սերտորեն կապված է ուրիշ մարդկանց հետ, նրա ամբողջ կյանքը անցնում է համայնքում, որը կարող է գոյություն ունենալ միայն ուժեղ կապերի ու առնչությունների շնորհիվ: ...Ժողովրդական խոսքը միշտ հնչում է յուրայինների շրջանում: Այն հնչում է բացահայտ, բոլորի, շատերի համար, այն միայնություն, առանձնություն չի ընդունում: Այն իսկապես ժողովրդական խոսք է՝*

Խնդրո առարկային առնչվող մեր կատարած բանագիտական աշխատանքը ցույց է տալիս, թե ինչքան տարատեսակ պայմաններ կարող են առա-

³ Մելքունյան Մ.Ս., Հովհաննես Թումանյանը կրթության ու դաստիարակության մասին, Եր., Լույս հրատ., 1969, էջ 92-93:

⁴ Եղիազարյան Ա., Թումանյանի պոետիկան և նրա ժողովրդական ակունքները, Եր., 1990, էջ 179:

ջաղրվել էր երեխային՝ քնելու դիմաց. «Քնի՛ր, Թումանյանի հեքիաթները կկարդաս» և այլն:

Այս առիթով մեջբերենք բանասաց Կ. Թադևոսյանի խոսքը. «Երբ էրեխեքս փոքր են էղել՝ գրկանոց, երգել են օրորոցային, իսկ երբ արդեն մի փոքր մեծըցել են, սկսել են հեքիաթներ պատմել, հատկապես Թումանյանի հեքիաթները. նրանք ուրիշ համ ու հոտ ունին...»:⁵

Ըստ բանասացի՝ փոքր տարիքում, երբ երեխան շատ է լաց լինում, օրորասացը, բացի օրոր երգելուց, տարբեր միջոցների է դիմում՝ երեխային հանգրստացնելու համար, և այդ ժամանակ երգն է ստեղծվում. շարժումը կարևոր նախադրյալ է երգի ստեղծման համար, իսկ հանգիստ վիճակում պետք է ընթերցել խրատական պատումներ, հատկապես հեքիաթներ:

Քնամուտի տեքստերում գերակա են մանկախնամ, մանկապահպան և քնաբեր կերպարները, որոնք օգնում են հեքիաթասաց/օրորասացին՝ երեխային քնի աշխարհ տեղափոխելու: Թե՛ բանահյուսական, թե՛ հեղինակային նախաքնային տեքստերը հազեցած են ներքոհիշյալ կերպարներով:

Հ. Թումանյանի «Ուլիկը» հեքիաթը անդրադարձ է մանկախնամ կերպարի՝ այծի բարեխնամ գործունեությանը: Ասվածը դիպուկ ներկայացնելու համար մեջբերենք մի պատառիկ վերոնշյալ հեքիաթից.

Սևուկ ուլիկ,
Միրուն բալիկ,
Ման են եկել սարեսար,
Կաթն են արել քեզ համար,
Դոնակը բա՛ց, ներս գամ ես,
Անուշ-անուշ ծիծ տամ քեզ.
Սևուկ ուլիկ,
Միրուն բալիկ⁶:

Հայ օրորոցային տեքստերում ևս հիշատակվում է այծի բարեխնամ, հոգատար դերակատարումը.

Դարի գլուխ ճղոր զարկիմ,
Հարավ քամին տանի-բերի
Վերու էձ գալ քեզ ծիծ տա,
Մեկիկ աստված քեզի պահա,
Հայրուրուրի՛, հայրուրուրի՛:

⁵ Կառույինա Թադևոսյան: Ծնվել է 1954թ. Ջաջուռում: Ունի միջին մասնագիտական կրթություն: Նախնիները գաղթել են Վանից (Հ. Մատիկյանի գրառումներից):

⁶ Թումանյան Հ., Հեքիաթներ, Եր., 1988, էջ 4:

Մանկանոցում ուշագրավ գործառույթ ունեն նաև փերինները՝ քնաբեր, արթնացնող, հաճախ էլ վախեցնող: Փերինները՝ որպես կերպար, հայտնվում են ինչպես բանահյուսական, այնպես էլ հեղինակային նյութերում: Ավելին, մանկանոցում նրանց «գործունեությունը» ավելի նկատելի է հեղինակային գրական երկերում:

Օրինակ, Վարանդայում մայրերը հավատում են, որ օրորոցագող քաջքեր կան, որոնք գալիս են և տանում երեխաներին⁷: Քաջքերը հաճախ գողանում են մարդկանց երեխաներին, որոնք հետագայում իբրև հովիվներ նրանց հոտերն են արածեցնում: Գողացված այս երեխաներին նրանք պարզում են կերպարանափոխվելու և աներևութանալու կարողություն: Բայց ամենից շատ նրանք սիրում են երեխաներին փոխել: Օրորոցից վերցնում են առողջ և գեղեցիկ երեխաներին, որոնք պաշտպանության ոչ մի միջոցով չեն ապահովված, և նրանց փոխարեն դնում են իրենց հիվանդ ու սգեղ երեխաներին, որոնք սովորաբար չեն ապրում⁸: Հեղինակային ստեղծագործություններում ևս ակնհայտ է ոգիների մանկագող լինելու իրողությունը: Լավագույն օրինակ է Թումանյանի հեղինակային երկից՝ «Օրորոցագող»-ից հետևյալ մեջբերումը.

Կես գիշերին մութ խրճիթում
Մայրը լսեց մի խորոյուն,
Եվ վեր թռավ ահը սրտում,
Նայեց քնած յուր որդուն:
Մի արարած սև ու խավար
Նա նկատեց սրտադող,
Եվ ճանաչեց սարսափահար՝
Օրորոցի մի չար գող,
Որ գավակի բուկը բռնած՝
Խեղդում էր սև ճանկերում,
Եվ երեխան աչքերը բաց
Չարչարվում էր ու հևում:
Եվ մայրական անհուն սերը
Ուժ էր տալիս գերբնական...
Եվ ուժասպառ, հաղթված չարը
Թողեց օրրանը մանկան...⁹

⁷ Լալայան Ե., Երկեր, հ. 2, Եր., 1988, էջ 179:

⁸ Աբեղյան Մ., Երկեր, Է, Եր., 1975, էջ 88:

⁹ Թումանյան Հ., Երկերի լիակատար ժողովածու, հ. 2, Եր., 1990:

Ստեղծագործությունն արտացոլում է մայրական սիրո ուժգնությունը, գերբնական գորությունը գիշերվա չարքի դեմ:

Նշված ստեղծագործությունը լեզվական առումով ևս հիշարժան է. Օրորոցագող, օրորոցի մի չար գող բառերն ու արտահայտությունները փոխանվանական յուրօրինակ դրևորման միջոցներ են (օրորոց՝ երեխա բառանվան փոխարեն):

Եզրահանգում. Ամփոփելով նշենք, որ Հովհաննես Թումանյանի՝ մանկանց հասցեագրված ստեղծագործությունները՝ որպես քնամուտի տեքստեր, ունեն կիրառական՝ քնաբեր, անդորրաբեր նշանակություն, լրացնում ու հարստացնում են հայ սովորութամշակութային միջավայրը: Ըստ էության, բացի գեղագիտական ու բանաստեղծական արժեքից, այդ երկերը հոգեթերապևտիկ նշանակությամբ հարստացնում են մեծն Թումանյանի մանկագրության բովանդակային շերտերը:

ПРОИЗВЕДЕНИЯ ОВАНЕСА ТУМАНЯНА КАК ПРЕДСОННЫЕ ТЕКСТЫ

Матикян А. Г.

Ключевые слова: *колыбельная, сказка, автор, нарратор, адресат, фольклор, наррация, детская кроватка, среда, текст.*

Ованес Туманян как носитель народного наследия хорошо известен в армянском детском мире. Его знаменитые сказки как особый вид повествования перед сном являются живыми «организмами» в армянских семьях. Сказки рассказываются разными возрастными группами и выполняют разные функции: мирные, дидактические, эстетические - и в то же время в некоторых случаях считаются предсонными.

HOVHANNES TOUMANYAN'S WORKS AS BEDTIME TEXTS

Matikyan H. H.

Key words: *lullaby, fairy tale, author, narrator, addressee, folklore, narration, cradle, environment, text.*

Hovhannes Toumanyan as the bearer and transmitter of folk heritage, is well-known in the Armenian nursery. His famous fairy tales, as specific species of bedtime narration, are living “organisms” in Armenian families. The tales are narrated by different age groups and carry out different functions: peaceful, didactic, aesthetic and at the same time are in some instances considered to be sleep “putters”.

R e f e r e n c e s

1. **Melqumyan M.S.**, Hovhannes Tumanyany krtutyany u dastiarakutyany masin, Yerevan, Luys hrat., 1969 (**In Armenian**).
2. **Yeghiazaryan A.**, Tumanyani poetikan ev nra zhoghovrdakan akunqner, Yerevan, 1990 (**In Armenian**).
3. **Tumanyan H.**, Heqiatner, Yerevan, 1988 (**In Armenian**).
4. **Lalayan Y.**, Yerker, h.2, Yerevan, 1988 (**In Armenian**).
5. **Abeghyan M.**, Yerker. Yerevan, 1975 (**In Armenian**).
6. **Tumanyan H.**, Yerkeri liakatar zhoghovacu, h.2. Yerevan, 1990 (**In Armenian**).

Ընդունվել է՝ 04.11.2019

Գրախոսվել է՝ 15.11.2019

Հանձնվել է տպ.՝ 20.11.2019

Տեղեկություններ հեղինակի մասին

Հասմիկ ՄԱՏԻԿՅԱՆ՝ բան. գիտ. թեկնածու,

ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնի

գիտաշխատող, էլ. փոստ՝ hasvrej@mail.ru

ԺՈՂՈՎՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ДЕМОГРАФИЯ

DEMOGRAPHY

ՀՏԴ՝ 314

ՇԻՐԱԿԻ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՇԱՐԺԻ ՕՐԻՆԱԶՄՓՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 20-ՐԴ ԴԱՐՈՒՄ

Արտաշես Բոյաջյան

ՀՀ ԳԱԱ Շիրակի հայազիտական հետազոտությունների կենտրոն

Բանալի բառեր՝ բնակչության շարժ, բնական վերարտադրություն, ծնելիություն, մահացություն, բնական աճ, սեռատարիքային կառուցվածք, հայրենադարձություն, միգրացիա, ժողովրդագրական ճգնաժամ, բնակչության գրադվածություն:

Սույն հոդվածում ներկայացվել են Շիրակի մարզի բնակչության թվի փոփոխությունների վրա ազդող շարժառիթներն ու դրդապատճառները: Կատարված ժողովրդագրական վերլուծությամբ պարզվել են XX դ. Շիրակի մարզի բնակչության կազմի, բնական վերարտադրության վրա ազդող գործոնները, որոնք խոչընդոտել կամ նպաստել են բնակչության շարժին: Ներկայացվել են մարզի բնակչության տեղաշարժերի ժամանակագրությունը և ուղղությունները, ուրբանիզացման գործընթացները:

Նախաբան. Բնակչության շարժի օրինաչափությունների բացահայտումն ունի գիտական և սոցիալ-տնտեսական կարևոր նշանակություն: Շիրակի ժամանակակից անկայուն ժողովրդագրական իրավիճակն անհրաժեշտություն է առաջացրել բնակչության աճի գործոնների բացահայտման ու գնահատման հիման վրա ժամանակին կանխատեսելու մարզի բնակչության ժողովրդագրական պատկերը՝ երկարատև հեռանկարի տարբեր փուլերի համար: Ընդհանուր առմամբ, բնակչության շարժի զարգացման օրինաչափությունները ձևավորվում են բուն ժողովրդագրական գործընթացների պատմականորեն հանդես եկող ու տվյալ պահին ինքնուրույն գործող երևույթների և հասարակության սոցիալ-տնտեսական ու մշակութային պայմանների ազդեցության ներքո:

Չնայած նրան, որ տասնամյակներ շարունակ ՀՀ ժողովրդագրական գործընթացների, բնակչության տարաբնակեցման և ուրբանիզացման ուսումնասիրությունների շրջանակը բավական լայն է եղել, սակայն XX դ. Շիրակի բնակչության շարժի օրինաչափությունները գրեթե ուսումնասիրված չեն: Մեր ուսում-

նասիրության համար, որպես սկզբնաղբյուր են ծառայել հիմնականում ՀՀ Ազգային վիճակագրական կոմիտեի տվյալները, գիտական մենագրությունները և հոդվածները:

Բնակչության շարժի օրինաչափությունները բնութագրող ցուցանիշներն են. բնակչության թվի շարժընթացը, բնական վերարտադրությունը, բնակչության կազմը, տարաբնակեցումը և միգրացիան:

Երկար ժամանակ Շիրակի մարզի ներկայիս տարածքը բնութագրվել է բնակչության թվի բավականին բարձր աճով, չնայած նրան, որ աճի ցուցանիշի մեծությունը պատմական առանձին ժամանակահատվածներում տարբեր է եղել:

Աղյուսակ 1-ի թվային տվյալների վերլուծությունից պարզվում է, որ 1897-2001թթ. բնակչության թիվն ավելացել է երկու անգամ, այդ թվում քաղաքայինը՝ 5.3, իսկ գյուղականը գրեթե չի փոփոխվել: Ըստ տարածաշրջանների՝ բնակչության թվի աճ գրանցվել է Ախուրյանի և Արթիկի տարածաշրջաններում, իսկ մյուս երեք տարածաշրջաններում (Աշոցք, Ամասիա և Անի) նվազել է: Աշոցքի և Անիի տարածաշրջանների բնակչության թվի նվազումը պայմանավորված էր հիմնականում սոցիալ-տնտեսական, իսկ Ամասիայինը՝ էթնոքաղաքական գործոններով: Այսպես, 1988-1990թթ. Ամասիայի տարածաշրջանի բնակչության թվի շեշտակի անկումը կապված էր արցախյան հիմնախնդրով, որի պատճառով աղբյուրներից Հայաստանից արտագաղթեցին: Հատկանշական է, որ 1987-1988թթ. Ամասիայի տարածաշրջանի բնակչության թիվն ավելացել է 1.8, իսկ 1988-2001թթ.՝ պակասել 2.8 անգամ:

Հաշվի առնելով ուսումնասիրվող ժամանակահատվածում բնակչության շարժի փոփոխության առանձնահատկությունները՝ այն կարելի է բաժանել չորս ժամանակափուլի: Առաջին ժամանակափուլն ընդգրկում է 1897-1913թթ., երկրորդը՝ 1914-1921թթ., երրորդը՝ 1922-1988թթ. և չորրորդը՝ 1989-2001թթ.: Երկրորդ և չորրորդ ժամանակափուլերում արձանագրվել է բնակչության թվի շեշտակի անկում, իսկ առաջինում և երրորդում՝ կտրուկ աճ:

Համառուսական առաջին մարդահամարի (1897թ.) տվյալներով Շիրակի մարզի ներկայիս տարածքում բնակչության թիվը կազմել է 125, 5 հազար մարդ, այդ թվում՝ 30,6 հազարը կամ 24,4%-ը բնակվել է Ալեքսանդրապոլ (ներկայիս մարզկենտրոն Գյումրի) քաղաքում (տես աղյուսակ 1): Առաջին ժամանակափուլում մարզի բնակչության տարեկան միջին աճը կազմել է 2,6%: Բնակչության աճի բարձր ցուցանիշ է արձանագրվել Ալեքսանդրապոլ քաղաքում, ինչը բացատրվում է ցարական բանակի խոշոր զորամասերի առկայությամբ, քաղաքի՝ երկաթուղային հանգույց և Հարավային Կովկասի առևտրա-արհեստավորական խոշոր կենտրոն լինելով: Բնակչության ներգաղթին զուգընթաց՝ գրանց-

վել է նաև արտագաղթ: Այդ տարիներին Երևանի նահանգից սեզոնային արտագնա աշխատանքի մեկնածների ընդհանուր թվի մոտ 5%-ը մեկնել է արտասահման, որը բնորոշ էր նաև Ալեքսանդրապոլի, Նոր Բայազետի, Էջմիածնի և Նախիջևանի գավառներին¹: Մեծ թվով շիրակցիներ և հատկապես ալեքսանդրապոլցիներ տեղափոխվեցին Ամերիկա²: Շիրակից բնակչությունն արտագաղթել է նաև Կարսի մարզ, Անդրկովկասի այլ բնակավայրեր և Հյուսիսային Կովկաս: Առաջին ժամանակափուլում Շիրակի բնակչության դանդաղ աճի գլխավոր պատճառը Կարսի մարզի միացումն է Ռուսաստանին: Հիշատակենք, որ 1886-1913թթ. Կարսի մարզի բնակչության թիվն ավելացել է 2,2 անգամ³: XIXդ. վերջին և XXդ. սկզբին Շիրակի գյուղական բնակչության մի մասն արտագնա աշխատանքի է մեկնել Երևանի նահանգի այլ գավառներ⁴:

Աղյուսակ 1

Շիրակի մարզի բնակչության թվի շարժընթացը

	1897թ.	1906թ.	1914թ.	1926թ.	1959թ.	1979թ.	1988թ.	1989թ.	2001թ.
<i>Ընդամենը</i>	125475	137633	169358	135130	214294	329551	368260	334381	257242
Քաղաք	30616	33879	51316	42313	122235	226494	261919	213415	161298
Գյուղ	94858	103754	118042	92817	92059	103060	106341	120966	95444
Ախուրյանի	26670	31909	37550	29476	31938	35096	38117	51685	40952
Արթիկի	24334	25405	28015	26943	33441	40855	51087	57782	40396
Անիի	20213	21688	22498	14094	18435	17626	19534	22010	18075
Ամասիայի	10684	11144	12843	10225	12231	20151	19497	13443	6967
Աջոցքի	12858	13608	17136	12079	10325	9904	9425	11210	10034

Աղյուսակը կազմելիս օգտագործվել է՝ Մանասյան Ս., Գրիգորյան Ա., Պոտոսյան Ս., Շիրակի մարզ(բնությունը, բնակչությունը, տնտեսությունը), Եր., 2002թ., էջ 52: Պոտոսյան Ս., ՀՀ գյուղական բնակչությունը և բնակավայրերի տարաբնակեցումը, Եր., 2013թ., էջ, 403-406: Հայրապետյան Ա., Ալեքսանդրապոլի գավառը վիճակագրական նյութերում (XIXդ.-XXդ. սկիզբ), Եր., 2011թ. էջ 203-210: Հակոբյան Թ., Մելիք-Բախշյան Ստ., Բարսեղյան Հ., Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, Եր., 1986-2001, 2001թ. մարդահամարի նյութերը:

Շիրակում բնակչության թվի առաջին լուրջ փոփոխությունները գրանցվել են երկրորդ ժամանակափուլում: 1916թ. տվյալներով՝ մարզն ուներ 176,2

¹ **Խոջաբեկյան Վ.**, Հայաստանի բնակչության վերարտադրությունը և տեղաշարժերը XIX-XX դարերում և XXI դարի շեմին, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., Եր., 2001թ., էջ 113:

² **Հայրապետյան Ա.**, Գյումրի-Ալեքսանդրապոլի էթնոժողովրդագրական պատկերը XIXդ. և XXդ. առաջին կեսին, //ՇՀՀԿ «Գիտական աշխատություններ», հ. 11, «Գիտություն» հրատ., Գյումրի 2008թ., էջ 31:

³ **Խոջաբեկյան Վ.**, նշվ. աշխ., էջ 58:

⁴Նույն տեղում, էջ 112:

հազար բնակիչ, բացարձակ մեծամասնությունը (90%) հայեր էին, և 1914թ. համեմատ վերոնշյալ թիվը ավելացել է 6842 մարդով կամ 4,1%-ով: Իսկ 1919թ. հունվարի տվյալներով գավառի բնակչության թիվն արդեն 152,4 հազար էր⁵ և 1914թ. համեմատ՝ նվազել էր 10,1%-ով, իսկ 1916թ. համեմատ՝ 14,1%-ով: Երեք տարիների ընթացքում մարզի բնակչության թվի շեշտակի անկումը նախ և առաջ պայմանավորված է եղել 1918թ. մայիսին թուրքական բանակի ներխուժումով, որի արդյունքում սպանվեցին և սովից մահացան տասնյակ հազարավոր բնակիչներ: Բացի դրանից, 1915թ. Ալեքսանդրապոլի գավառում տեղի ունեցած երկրաշարժի հետևանքով 15 հազար մարդ մեկնեց արտասահմանյան երկրներ և Հյուսիսային Կովկաս, սակայն դրանց մի մասը հետագայում վերադարձավ և բնակություն հաստատեց Լենինականում (ներկայիս Գյումրի)⁶: 1919թ. Ալեքսանդրապոլի գավառի բնակչության կազմում մահացածների ավելի քան կեսը համաճարակների պատճառով էր, իսկ դրա 21%-ը մանուկներ էին⁷:

Բնակչության արտագաղթին զուգընթաց՝ գրանցվել է նաև ներգաղթ: 1914թ. Ալեքսանդրապոլ քաղաքում բնակվել է երեք հազար գաղթական, որոնցից 2400-ը՝ հայ, 600-ը՝ հույն, իսկ 1916-1919թթ.՝ 34 հազար արևմտահայ գաղթական⁸: Այսպիսով, այդ տարիներին, գավառի ամբողջ բնակչության 20%-ից ավելին արևմտահայ գաղթականներ էին, ինչը բավականին բարձր ցուցանիշ էր և տեղի իշխանությունների համար՝ բարդ խնդիր: Գաղթականներին կացարանով, սննդով և աշխատանքով ապահովելու համար 1918թ. դեկտեմբերի 10-ին կազմավորվում է Ալեքսանդրապոլի քաղաքային ինքնավարության գաղթակա-նական կոմիտեն: Կոմիտեի հաշվարկով գյուղական բնակավայրերում տեղավորվել էր 20000 գաղթական⁹: Հայաստանի առաջին Հանրապետության Կենտրոնական վիճակագրական բյուրոյի 1919թ. հունվարի տվյալներով Ալեքսանդ-

⁵ **Ալեքսանյան Կ.**, Ալեքսանդրապոլի գավառի վարչատարածքային կառուցվածքի և բնակչության հարցի շուրջ //ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն «Շիրակի պատմամշակութային ժառանգություն» հանրապետական 6-րդ գիտաժողովի նութեր, Գյումրի, 2004թ., էջ 49:

⁶ **Խոջաբեկյան Վ.**, Հայաստանի բնակչության վերարտադրությունը և տեղաշարժերը XIX-XX դարերում և XXI դարի շեմին, Եր., 2001թ., «Գիտություն» հրատ., 480 էջ էջ 136:

⁷ **Հայրապետյան Ա.**, Գյումրի-Ալեքսանդրապոլի էթնոժողովրդագրական պատկերը XIXդ. և XXդ. առաջին կեսին //ԳԱԱ ՇՀՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ» հ. 11, «Գիտություն» հրատ., Գյումրի, 2008թ., էջ 31:

⁸ **Ստեփանյան Ա., Մարգարյան Հ.**, Հայրենադարձության տեղաբաշխումը Ալեքսանդրապոլ-Լենինականում //ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն «Շիրակի պատմամշակութային ժառանգություն» հանրապետական 5-րդ գիտաժողովի նութեր, Գյումրի, 2002թ., էջ 49:

⁹ **Ալեքսանյան Կ.**, Արևմտահայ գաղթականությունը Ալեքսանդրապոլի գավառում //ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն «Շիրակի պատմամշակութային ժառանգություն» հանրապետական 7-րդ գիտաժողովի նութեր, Գյումրի, 2007թ., էջ 110:

րապովի գավառում կար 31989 գաղթական¹⁰: Իսկ ընդհանուր առմամբ՝ 1915-1918թթ. Ալեքսանդրապոլ քաղաքն ընդունել և ճանապարհել է 95 հազար գաղթականի¹¹:

Ա. Մյասնիկյանի՝ 1921թ. հունիսին ՌԽՍՖՅ արտաքին գործերի ժողկոմ Չիչերինին հաղորդած տվյալների համաձայն՝ Ալեքսանդրապոլի գավառում 1918-21թթ. թուրքական օկուպացիայի շրջանում, սպանվել է 60 հազար մարդ, սովից մահացել է 32 հազարը, վիրավորվել՝ 26 հազարը: Թուրքերի հասցրած վնասը կազմել է 19,7 մլն ռուբլի¹²:

Այսպիսով, երկրորդ ժամանակափուլում մարզի բնակչության թիվը նվազել է 20,2%-ով, այդ թվում՝ քաղաքայինը՝ 18,5%-ով, գյուղականը՝ 21,4%-ով: Բնակչության թվի նվազման ամենաբարձր ցուցանիշ գրանցվել է Անիի (37,3%) և Աշոցքի (29,5%) տարածաշրջաններում, իսկ ամենացածրը՝ Արթիկում (3,8%):

Երրորդ ժամանակափուլում (1926-1988թթ.) մարզի բնակչության թիվն ավելացել է 2,7 անգամ, այդ թվում՝ քաղաքայինը՝ 6,2 անգամ, իսկ գյուղականը՝ 14,5%-ով: Քաղաքային բնակչության թվի շեշտակի աճը բացատրվում է մի շարք գործոններով: Նախ ավելացել է քաղաքային բնակավայրերի թիվը՝ մեկից (Լենինական) հասնելով հինգի (Լենինական, Արթիկ, Մարալիկ, Անիպենգա, Պենգաշեն), որոնցից վերջին երկուսը քաղաքատիպ ավաններ են եղել: Երկրորդ գործոնը արդյունաբերության և սպասարկման ոլորտի ճյուղերի արագընթաց զարգացումն է, երրորդը՝ ներգաղթողների ճնշող մեծամասնությունը նախընտրում էր բնակվել քաղաքներում, մասնավորապես Լենինականում և Արթիկում: Քաղաքային բնակչության աճի ամենաբարձր ցուցանիշ գրանցվել է Արթիկ քաղաքում՝ 7,8, իսկ Լենինականում՝ 5,4 անգամ: Ներկայացված ժամանակափուլում քաղաքային բնակչության թվի աճի 87,7%-ը բաժին է ընկնում Լենինականին:

Տարածաշրջաններում, բացառությամբ Աշոցքի, նույնպես գրանցվել է բնակչության թվի աճ: Առավելագույն բարձր ցուցանիշ գրանցվել է Ամասիայի՝ 90,7% և Արթիկի տարածաշրջաններում՝ 89,6%, իսկ Աշոցքում բնակչության թիվը նվազել է 21,9%-ով: Մարզի բնակչության աճի աղբյուրներն են եղել բնական վերարտադրությունը, գաղթականները, հայրենադարձները, հանրապետության այլ բնակավայրերից ներգաղթածները: 1920-ականների առաջին եր-

¹⁰Նույն տեղում, էջ 108:

¹¹ **Հայրապետյան Ա.**, Գյումրի-Ալեքսանդրապոլի էթնոժողովրդագրական պատկերը XIXդ. և XXդ. առաջին կեսին/ԳԱԱ ՇՀՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ», հ. 11, «Գիտություն» հրատ., Գյումրի, 2008թ., էջ 30:

¹²Նույն տեղում, էջ 31:

կու-երեք տարիներին գավառ ներգաղթել են նաև Հյուսիսային Կովկասից¹³: 1926-1927թթ. Շիրակում բնակվում էր 13810 գաղթական, ըստ որում Ախուրյանի, Արթիկի, Անիի տարածաշրջաններում՝ 7722 մարդ (1584 ընտանիք)¹⁴:

Բնակչության կազմակերպված ներգաղթը և հայրենադարձությունը դեպի ՀԽՍՀ, այդ թվում՝ Շիրակ, սկիզբ առավ 1921թ. Խորհրդային Հայաստանի իշխանության ջանքերով: Ընդունված է զանգվածային հայրենադարձությունը ժամանակագրորեն բաժանել երեք փուլերի: Առաջին փուլում (1921-1936թթ.) Հայաստանում հաստատվեց ավելի քան 40 հազար հայ՝ հիմնականում Իրաքից, Հունաստանից, Թուրքիայից, Իրանից, Ֆրանսիայից, Բուլղարիայից, Լիբանանից: Երկրորդ փուլում (1946-1948/49թթ.) Ռումինիայից, Իրանից, Սիրիայից, Ֆրանսիայից, Եգիպտոսից, Պաղեստինից, Իրաքից, ԱՄՆ-ից, Չինաստանից, Հունաստանից, Բուլղարիայից, Լիբանանից ներգաղթեց զրեթե 120 հազար հայ: Երրորդ փուլը (1962-1987թթ.) զանգվածային բնույթ չէր կրում, այն հիմնականում անհատական ներգաղթ էր, որի ընթացքում 30 երկրներից (Իրաք, Իրան, Սիրիա, Լիբանան, Կիպրոս, Եգիպտոս, Թուրքիա և այլն) գաղթեցին 35 հազ. հայեր: Մակայն պետք է նշել, որ ստույգ թվեր հայտնի չեն, թե այդ տարիներին քանի մարդ է բնակություն հաստատել Լենինականում¹⁵:

1921-1978թթ. ընթացքում Խորհրդային Հայաստանն ընդունել է 250 հազար փյուռքահայերի, որոնց 20 հազարը բնակություն է հաստատել Լենինական քաղաքում, ընդ որում՝ դրա 45%-ը 1946-1947թթ. ներգաղթածներն էին, որոնց 68,6%-ը Լիբանանից, Հունաստանից և Սիրիայից էին¹⁶:

1949թ. Արթիկի տարածաշրջանի բնակչության թիվը հայրենադարձների հաշվին ավելացել է 3,7%-ով: Արթիկ քաղաքում տեղավորված հայրենադարձների թվի 33,1%-ը 1948-1949թթ. տեղափոխվեց հանրապետության այլ

¹³ **Խոջաբեկյան Վ.**, Հայաստանի բնակչության վերարտադրությունը և տեղաշարժերը XIX-XX դարերում և XXI դարի շեմին, Եր., 2001թ., «Գիտություն» հրատ., էջ 141:

¹⁴ **Վարդանյան Լ., Սարգսյան Հ.**, Շիրակի 1926-1927թթ. գաղթականության որոշ հարցեր, (ըստ Ստ. Լիսիցյանի արխիվային նյութերի), //ՀՀ ԳԱԱ ՇՀՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ», Գյումրի, 1999թ., հ.2, էջ 209:

¹⁵ **Ստեփանյան Ա., Սարգսյան Հ.**, Հայրենադարձության տեղաբաշխումը Ալեքսանդրապոլ-Լենինականում//ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն, Շիրակի պատմամշակութային ժառանգություն հանրապետական 5-րդ գիտաժողովի նութեր, Գյումրի, 2002թ., էջ 50:

¹⁶ **Բոյաջյան Ա.**, Հայրենադարձությունը Լենինականում 1946-1947թթ. (ըստ ՀՀ ԱԱ Շիրակի տարածքային բաժնի նյութերի), //ՀՀ ԳԱԱ, Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն, Շիրակի պատմամշակութային ժառանգություն հանրապետական 7-րդ գիտաժողովի նութեր, Գյումրի, 2007թ., էջ 166:

բնակավայրեր, հիմնականում՝ Մասիսի, Էջմիածինի և Շահումյանի շրջաններ, ինչպես նաև՝ Լենինական¹⁷: 1949թ. մեծ հայրենադարձությունը դադարեց¹⁸:

Բացի ներգաղթից, ներկայացվող ժամանակափուլում գրանցվել է արտագաղթ: Սկսած 1980-ական թվականներից՝ ՀԽՍՀ-ից, ոչ ամբողջական տվյալներով, ամեն տարի արտագնացությանը մասնակցել են 25-30 հազար մարդ, իսկ որոշ հաշվարկներով՝ 40 հազար, որից 7694-ը՝ Շիրակի պատմագագազական շրջանից¹⁹: Ըստ Մ.Գալստյանի էթնոսոցիոլոգիական հետազոտության արդյունքների՝ XXդ. վերջին Շիրակի մարզի յուրաքանչյուր երրորդ տնային տնտեսությունն ընդգրկված է եղել աշխատանքային միգրացիայի գործընթացում, իսկ ընտանիքների 18,4%-ն ունեցել է երկու, 7,3%-ը երեք և ավելի աշխատանքային միգրանտ, որոնց 95,1%-ը տղամարդիկ էին²⁰: Այսինքն՝ նշված ժամանակահատվածում մարզի 27 հազար տնտեսություններ ունեցել են աշխատանքային միգրանտներ, որոնց ընդանուր թիվը 35-40 հազար է, ինչը կազմում է մարզի աշխատունակ տարիքի բնակչության 25-28%-ը:

XXդ. Շիրակի բնակչության միգրացիոն ակտիվության առանձնահատկությունների հիման վրա կարելի է առանձնացնել նրա հետևյալ ժամանակափուլերը, որը ներկայացված է աղյուսակ 2-ում:

Աղյուսակ 2

Միգրացիոն գործընթացների ժամանակափուլերը Շիրակում

Փուլեր	Տարեթվեր	Միգրացիայի ձևեր	Միգրացիայի հիմնական ուղղությունները	Միգրացիայի մնացորդը
I	1897-1914թթ.	ներքին և արտաքին	Գյուղից- քաղաք, Շիրակից Վրաստան և Արարատյան դաշտ	դրական
II	1915-1921թթ.	արտաքին	Արևմտյան Հայաստանից Շիրակ, Շիրակից Վրաստան և Հյուսիսային Կովկաս	բացասական
III	1922-1940թթ.	արտաքին և ներքին	Գյուղից քաղաք, հայրենադարձություն	դրական

¹⁷Սարգսյան Ա., Բոյաջյան Ա., Հայրենադարձությունը Արթիկի շրջանում, 1946-1947թթ. (Ըստ ՀՀ ԱԱ Արթիկի տարածքային ներկայացչության նյութերի), //ՀՀ ԳԱԱ, Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն «Շիրակի պատմամշակութային ժառանգություն» հանրապետական 8-րդ գիտաժողովի նութեր, Գյումրի, 2010թ., էջ 157:

¹⁸Ստեփանյան Ա., Սարգսյան Հ., Հայրենադարձության տեղաբաշխումը Ալեքսանդրապոլ-Լենինականում //ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն «Շիրակի պատմամշակութային ժառանգություն» հանրապետական 5-րդ գիտաժողովի նյութեր, Գյումրի, 2002թ., էջ 69:

¹⁹Գալստյան Մ., Շիրակի մարզի բնակչության աշխատանքային միգրացիոն գործընթացներն արդի շրջանում //ՀՀ ԳԱԱ, Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն «Շիրակի պատմամշակութային ժառանգություն» հանրապետական 7-րդ գիտաժողովի նյութեր, Գյումրի, 2007թ., էջ 174:


²⁰Նույն տեղում, էջ 179:

Արտաշես Բոյաջյան

IV	1941-1945թթ.	արտաքին	Պատերազմ մեկնածներ և ԽՍՀՄ-ի հանրապետություններից եկածներ	բացասական
V	1946-1949թթ.	արտաքին	Հայրենադարձության երկրորդ փուլ	դրական
VI	1959-1979թթ.	արտաքին և ներքին	Հայրենադարձության երրորդ փուլ, գյուղից քաղաք, Շիրակից ԽՍՀՄ հանրապետություններ:	դրական
VII	1982-1988թթ.	արտաքին	Շիրակից ԽՍՀՄ հանրապետություններ և արտասահմանյան երկրներ	դրական
VIII	1989-1991թթ.	արտաքին և ներքին	Քաղաքից գյուղ, Շիրակից ԽՍՀՄ հանրապետություններ և արտասահմանյան երկրներ, Շիրակից Ադրբեջան, Ադրբեջանից Շիրակ	բացասական
IX	1992-2001թթ.	արտաքին	Զանգվածային արտագաղթ արտասահմանյան երկրներ	բացասական

Իններորդ ժամանակափուլում (1989-2001թթ.) մարզում, հատկապես Գյումրի քաղաքում, գրանցվել է բնակչության թվի շեշտակի անկում: 1988թ. դեկտեմբեր 7-ի աղետալի երկրաշարժից հետո մարզի ժողովրդագրական իրադրությունում տեղի ունեցան արմատական տեղաշարժեր, հատկապես արտագաղթողների թվի շեշտակի աճ, ինչը հետագա տարիներին բացասաբար անդրադարձավ բնակչության բնական վերարտադրության վրա: Անշուշտ դա կարելի է բացատրել Մպիտակի աղետալի երկրաշարժից մահացածների թվի շեշտակի աճով ու բնակչության զանգվածային տեղաշարժերով (տե՛ս գծապատկեր 1), սակայն պետք է նշել, որ բնակչության թվի արագընթաց անկումը պայմանավորված է առաջին հերթին մեր հանրապետության 1990-ական թվականների սոցիալ-տնտեսական և աշխարհաքաղաքական անկայունությամբ: Երկրաշարժով պայմանավորված՝ 1988-1989թթ. Գյումրու բնակչության թիվը շեշտակի նվազում է, իսկ գյուղականը՝ մասնավորապես Ախուրյանի և Արթիկի տարածաշրջաններինը՝ աճում: Ընդհանուր առմամբ՝ նշված տարում մարզի քաղաքային բնակչության թիվը նվազել է 18,5%-ով, իսկ գյուղականը՝ ավելացել 13,7%-ով:

Գծապատկեր 1



Ընդ որում, քաղաքային բնակչության թվի շեշտակի անկումը տեղի է ունեցել հիմնականում Գյումրի քաղաքի հաշվին:

Ընդհանուր առմամբ, բնակչության թվի փոփոխության վրա ազդեցություն ունեն բնական վերարտադրությունը, ամուսնությունը և սեռատարիքային կազմը: Բացի սոցիալ-տնտեսական, կրոնական, բարոյա-հոգեբանական և այլ գործոններից՝ բնակչության ծննդի, մահվան, ընտանիքի մեծության, ամուսնությունների թվի վրա ազդում է սեռատարիքային կազմը: 1897-2001թթ. ընկած ժամանակահատվածում մարզի բնակչության սեռային կազմի փոփոխությունը ներկայացված է աղյուսակ 3-ում: Առաջին ժամանակափուլում մարզում տղամարդկանց թիվը գերազանցել է կանանց թվին: Այդ իրավիճակը Վ. Խոջաբեկյանը պայմանավորում և բացատրում է ծնված և մահացած երեխաների անբավարար գրանցումով և այն փաստով, որ տղամարդը որպես «հարկատու և հաշվառվող անձ» ավելի մեծ նշանակություն ուներ, քան կինը²¹: Վիճակը փոխվեց խորհրդային և անկախության տարիներին: 1922թ. տվյալներով, մարզում 1000 տղամարդու հաշվով կանաց թիվը 1039 էր, 1959թ. համապատասխանաբար՝ 1079, և 1979թ.՝ 1061: Հատկանշական է, որ 1922թ. մինչև 19 տարեկան տղամարդիկ կանանց գերազանցել են 748-ով: Սակայն Ալեքսանդրապոլ քաղաքում պատկերը հակառակն է, 20-59 տարեկան կանայք գերազանցել են տղամարդկանց 2,7 հազարով: 1909-1913թթ. Երևանի նահանգում 100 աղջկա հաշվով ծնվել է 113 տղա, իսկ 1923-1927թթ. Խորհրդային Հայաստանում (կարծում ենք ցուցանիշը նույնն է նաև Շիրակում-Ա.Բ.)՝ 109,6 տղա²²: Դժվար է նշել՝ նորածին տղաների բարձր ցուցանիշը հետևանք է նորածինների սեռերի մասին հավաքված տվյալների անճշտության մը, թե՛ դա իրոք համապատասխանում է իրականությանը:

Աղյուսակ 3

Շիրակի բնակչության սեռային կազմի փոփոխությունը

Տարեթիվ	Տղամարդ	%	կին	%	Ընդամենը
1897թ.	89281	54,1	75577	45,9	164858
1906թ.	79226	51,7	73829	48,3	153055
1915թ.	115262	53,1	101921	46,9	217183
1922թ.	66553	49,0	69170	51,0	135723
1959թ.	103075	48,1	111219	51,9	214294
1979թ.	159832	48,5	169719	51,5	329551
1989թ.	166187	49,7	168194	50,3	334381

²¹ Խոջաբեկյան Վ., Հայաստանի բնակչության վերարտադրությունը և տեղաշարժերը XIX-XX դարերում և XXI դարի շեմին, Եր., 2001թ., ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., էջ 56:

²² Աբելյան Պ., Հայաստանի բնակչությունը նախախորհրդային և խորհրդային շրջաններում, Պետ. հրատ., Եր.1930թ., էջ 93:


Արտաշես Բոյաջյան

1996թ.	170717	47,5	188688	52,5	359405
2001թ.	111021	43,1	139221	56,9	257242

Աղյուսակը կազմելիս օգտագործվել են՝ ԿԿ ռա 1905Ե., IIIօրժ., սրբ. 310: Ա. Հայրապետյան, Ալեքսանդրապոլի գավառը վիճակագրական նյութերում (XIXդ.-XXդ. սկիզբ), Եր., 2011թ., էջ 211, 240: Հայաստանի ազգաբնակչությունն ըստ սեռի, տարիքի, գրագիտության և ազգության, Կենտրոնական վիճակագրական վարչության աշխատություններ, 1922թ. Գյուղատնտեսական վիճակագրության նյութեր, Եր., 1924թ., էջ 4, 46: ՀՀ ԱՎԾ-ի և ՀՀ 2001թ. Մարդահամարի արդյունքներ:

1990-ական թվականներին արագընթաց տեմպով նվազեց տղամարդկանց թվաքանակը, ինչը պայմանավորված էր հիմնականում աշխատունակ տարիքի տղամարդկանց արտագաղթով: Ըստ 1989թ. վերջին Համամիութենական մարդահամարի տվյալներով՝ Շիրակի մարզում 1000 տղամարդու հաշվով կանանց թիվը 1013 էր, քաղաքային բնակավայրերում՝ 1037²³, իսկ 2001թ. համապատասխանաբար՝ 1179 և 1183²⁴: Հիշատակենք, որ 2001թ. մինչև 19 տարեկան տղամարդկանց թիվը գերազանցել է կանանց թվին 2,2 հազարով, 20-59 տարեկանների մոտ կանայք գերազանցում են տղամարդկանց 15,9 հազարով, 60 և բարձր տարիքում՝ 7,5 հազարով, իսկ քաղաքային բնակավայրերում համապատասխանաբար՝ 0,8, 9,6 և 4,9 հազարով²⁵:

Գծապատկեր 2



²³ Մանասյան Մ., Գրիգորյան Ա. և այլ, Շիրակի մարզ (բնությունը, բնակչությունը, տնտեսությունը), «Նահապետ» հրատ., Եր., 2002թ., էջ 60:

²⁴ Շիրակի մարզի բնակչության սեռատարիքային կառուցվածքը /www.armstat.am(12.02.2019թ.)

²⁵ Նույնը:

Գծապատկեր 2-ից պարզ է դառնում, որ 1979թ.ու 1996թ.աշխատունակ տարիքի բնակչության համեմատաբար բարձր տեսակարար կշիռը պայմանավորված է 1926-1940թթ. Հայկական ԽՍՀ-ում, այդ թվում՝ Շիրակում բնակչության բարձր բնական աճով²⁶: Այնինչ՝ Առաջին և Երկրորդ աշխարհամարտի տարիներին ծննդաբերության ցածր մակարդակը բնակչության աշխատանքային տարիքի վրա արտահայտվեց համապատասխանաբար միայն 1930-ական թվականների վերջերին և 1960-ական թվականների կեսերից ընդհուպ մինչև 1980-ական թվականների առաջին տարիները:

1989-2001թթ. աշխատունակ տարիքի բնակչության թիվը պակասել է 30370 մարդով կամ 16,7%-ով, այդ թվում քաղաքայինը՝ 27825-ով կամ 24,2%-ով, իսկ գյուղականը՝ 2547-ով կամ 3,8%-ով²⁷: Ներկայացվող ժամանակափուլում մարզի բնակչության թվի նվազման 36,1%-ը բաժին է ընկնում աշխատունակ տարիքի բնակչությանը: Նրանց թվի նվազումը պայմանավորված էր հիմնականում արդյունաբերական ձեռնարկությունների աշխատանքների դադարեցումով, ինչը հանգեցրեց զանգվածային գործազրկության և արտագաղթի: Այսպես, 2001թ. ՀՀ մարդահամարի տվյալներով՝ Շիրակում գործազուրկների թիվը կազմել է 52646, այդ թվում՝ քաղաքային բնակավայրերում՝ 44456: Նշված տարում գործազուրկները կազմել են աշխատունակ տարիքի բնակչության 32,8%-ը²⁸: Հիշատակենք, որ 1988թ. մարզի արդյունաբերական ձեռնարկություններում զբաղվածների թիվը կազմել է 50,2 հազ. մարդ, իսկ 2001թ.՝ 3,5 հազար, գյուղատնտեսությունում՝ համապատասխանաբար 30,0 հազար և 28,2 հազար²⁹:

Շիրակում 1920-ական թվականներին գրանցվել է ծնելիության ամենաբարձր ցուցանիշը (տե՛ս գծապատկեր 3): Լենինական քաղաքում 1926-1959թթ. ընկած ժամանակահատվածում ամենաբարձր ցուցանիշը դիտարկվել է 1937թ.՝ 4001 երեխա կամ 62,5%, իսկ ամենացածրը՝ 1943թ. 978 երեխա կամ 14,2%³⁰: 1926-1959թթ. Շիրակում ծնունդների թվի աճի վրա ազդող գործոններն են եղել աղջիկների վաղ ամուսնությունը, ԽՍՀՄ-ում 1936թ.ընդունված օրենքը հղիության արհեստական կասեցումը արգելելու և այն քրեորեն պատժելու մասին,

²⁶ **Խոջաբեկյան Վ.**, Հայաստանի բնակչության վերարտադրությունը և տեղաշարժերը XIX-XX դարերում և XXI դարի շեմին, Եր., 2001թ., «Գիտություն» հրատ., էջ 192:

²⁷ **Բոյաջյան Ա.**, Շիրակի մարզի սոցիալ-տնտեսական զարգացման մի քանի հարցեր, // ԳԱԱ ՇՀՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ», հ. 9, Եր., 2006թ., էջ 121:

²⁸ Շիրակ մարզի բնակչության սեռատարիքային կառուցվածքը /www.armstat.am(12.02.2019թ.)


²⁹ **Բոյաջյան Ա.**, Շիրակի մարզի սոցիալ-տնտեսական զարգացման մի քանի հարցեր, //ԳԱԱ ՇՀՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ», հ. 9, Եր., 2006թ., էջ 122:

³⁰ **Բոյաջյան Ա.**, Ալեքսանդրապոլ-Լենինականի բնակչության թվի շարժը 1900-1970թթ.// ԳԱԱ ՇՀՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ», հ. 5, Եր., 2002թ., էջ 198:

որը չեղյալ համարվեց 1956թ.: Այդ օրենքի չեղարկումը երկրում, այդ թվում՝ Շիրակի մարզում, ծնունդների թվի նվազման պատճառ հանդիսացավ³¹:

1965-1980թթ. Շիրակը բնութագրվում է հանրապետությունում բնակչության ամենացածր մահացությամբ: Նշված տարիներին ծնունդների բարձր ցուցանիշը և ցածր մահացությունն ուղեկցվել է միգրացիայի դրական մնացորդով, իսկ 1989-2001թթ.՝ բացասական մնացորդով³²: Ինչպես ցույց են տալիս բնակչության թվի փոփոխության ցուցանիշների վերլուծությունը, մարզի բնակչության ընդհանուր հավելաճը պայմանավորված է ոչ միայն ներգաղթով, այլև բնական աճով:

Գծապատկեր 3³



1926-1970թթ. ընկած ժամանակահատվածում Շիրակում ծնունդների թվի աճին զուգընթաց, անընդհատ նվազել է ծնելիության գործակիցը, վաղ տարիքում ամուսնությունների թիվը նվազել է, աստիճանաբար փոքրացել է ընտանիքների անդամների միջին թիվը՝ 5,7 մարդուց հասնելով 1979թ.՝ 4,5-ի, 2001թ.՝ 3,8-ի³⁴, դրան զուգահեռ՝ նկատվում է մեծ ընտանիքների տրոհում և անցում հիմնականում միջին և փոքր մեծության ընտանիքների կազմավորմանը: Ներկայացվող ժամանակահատվածում մարզում գրանցվել է մահացության գոր-

³¹ Воспризводство населения СССР, под ред. А.Вишневого и А.Волкого, М., 1983, стр. 17

³² Բոյաջյան Ա., Ժողովրդագրական գործընթացները Լենինականում 1970-80-ական թվականներին., //ՀՀ ԳԱԱ ՇՀՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ», Եր., 2011թ., հ. 4, էջ 172:

³³ 1988թ. երկրաչարժի զոհերի թիվը հաշվառված չէ:

³⁴ Շիրակի մարզի ընտանեկան կազմը, www.armstat.am(14.03.2019թ.)

ծակցի նվազում, իսկ բնական աճի գործակիցը գրեթե չի փոփոխվել (բացառությամբ 1941-1945թթ.):

1970-1987թթ. Շիրակի, մասնավորապես Լենինական քաղաքի բնակչության կտրուկ աճին զուգընթաց՝ աննշան նվազել են ծնելիության և մահացության գործակիցները: Ծնելիության անկումը պայմանավորված է ուշամուսնությամբ, կրթական մակարդակի բարձրացմամբ և այլ գործոններով: Մահացության ցուցանիշի նվազումը պայմանավորված է ոչ միայն բնակչության բարձր կենսամակարդակով, այլև մատուցվող բուժսպասարկման որակի բարելավումով: Նշենք, որ Լենինական քաղաքում (ներկայացվող ցուցանիշը գրեթե նույնն է ողջ Շիրակի մարզում) 1970թ. մանկամահացության ցուցանիշը կազմել է 8,4%, 1979թ.՝ 8,2%, 1987թ. 7,4%³⁵, և 2000թ.՝ 5,2³⁶:

Եզրահանգում. Այսպիսով, Շիրակի մարզի ներկայիս տարածքը XX դ. ութսուն տարիների ընթացքում (բացառությամբ Առաջին և Երկրորդ աշխարհամարտերի տարիների) բնութագրվել է բնակչության թվի բավականին բարձր աճով: Հայաստանի անկախացումից հետո շեշտակի նվազել է բնակչության թիվը, ինչն առաջին հերթին պայմանավորված է եղել հասարակարգի փոփոխությամբ՝ սոցիալիստականից կապիտալիստականին անցումով: Մարզում, մասնավորապես Գյումրի քաղաքում, բացառիկ սոցիալ-տնտեսական և բարոյա-հոգեբանական ծանր պայմաններում բնակչության ժողովրդագրական նոր վարքը առաջին հերթին դրսևորվեց ամուսնությունների թվի նվազումով, ուշամուսնությամբ, աշխատունակ բնակչության զանգվածային արտագաղթով:

ДИНАМИКА РОСТА НАСЕЛЕНИЯ ШИРАКА В XXв.

Бояджян А. Г.

В течение долгого времени на нынешней территории Ширакской области отмечался довольно высокий рост населения, хотя численность его в отдельные исторические периоды была различной. По данным первой всероссийской переписи населения 1897г., в Ширакской области проживало 125,5 тыс. человек, из которых 30,6 тыс. человек (24,4%) - в г. Александрополе (ныне областной центр Гюмри). В целом до 1914 г. в Гюмри и марзе был зарегистрирован стабильный рост населения. Анализ таблицы показывает, что в 1897-1914 гг. среднегодовой рост населения марза составлял 2,6%, в 1914-1926 гг. он уменьшился на 1,7%, в 1926-1959 гг. - на 1,6%, что ниже среднего по стране, с 1959 по 1988 г. Увели-

³⁵ **Ա. Բոյաջյան**, Ժողովրդագրական գործընթացները Լենինականում 1970-80-ական թվականներին., ՀՀ ԳԱԱ ՇՀՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ», Եր., 2001թ., հ. 4, էջ 173:

³⁶ Շիրակի մարզի բնակչության վերարտադրությունը, www.armstat.am (17.03.2019թ.)

չիլся на 2,5%, а в 1988-2001 гг. снизился на 2,3%. Из представленного в таблице ясно, что на динамику роста населения и его сокращение оказали негативное воздействие такие исторические события, как Первая мировая война (1914-1918гг.), годы становления первой Армянской республики(1918-1920гг), Великая Отечественная (1941-1945гг.) и социально-экономический кризис 1990-х годов, который привел к массовой эмиграции трудоспособного населения региона, в частности г. Гюмри.

Основными источниками роста населения в первой половине XX века были: естественное расширенное воспроизводство, репатриация и иммиграция населения из СССР. Исходя из демографической ситуации в Шираке, за последние десятилетия, особенно в 1988 году, произошли радикальные сдвиги в направлении роста численности эмигрантов, что оказало негативное влияние на воспроизводство населения. Безусловно, сокращение населения резко возросло за счет числа погибших в результате Спитакского землетрясения, но его ускоренный темп сокращения численности населения в значительной степени обусловлен социально-экономической и геополитической нестабильностью 1990-х годов. В контексте прироста населения Ширака, особенно после провозглашения независимости республики, практическое значение имеет изучение демографических и социально-экономических проблем. С 1988г. по 2001г численность населения Ширака снизилась на 111,1 тыс., или 30,1%.

THE POPULATION MOVEMENT PATTERNS OF SHIRAK REGION IN THE XX CENTURY

Boyajyan A.G.

For a long period current territory of Shirak region, had shown quite population growth, although the the amount of growth indicators were different depending on periods. According to the first all-Russian census the population of Shirak region was 125,500 people, among them 30,600 or 24,4% in Aleksandrapol (currently Gyumri) city. Untill 1914 in province and Gyumri city occured stable population growth. In chart 1, the reserach shows us that from 1897 -1914 the anual avarage population growth was 2,6%, from 1914- 1926 declined by 1,7% , but from 1926-1959 increased by 1,6%, which was less than avarage number, from 1926-1959 the amount was grown up again by 2,5%, and from 1988-2001 decreased by 2.3%.

We clearly can see, that some negative effects had their influence on demographic reproduction from 1914- 1921 and from 1941- 1945. The population decline

from 1993-2001 was the result of first and second World wars, in 1990s it was due to the socio-economical crisis, when the working class migrated and such other cases.

During the Soviet Union period, the urban population number of Shirak region had grown up fastly. From 1926-1988 the annual average growth of urban population was 8.3%, and the rural population number respectively by 0.2%. In 1980s the urban population growth was slow down but the rural population remained the same. As a result of earthquake from 1988- 1989 the population of Gyumri was sharply declined but rural one, especially in the regions of Akhuryan and Artik had increased. So in the mentioned period the rural population amount was declined by 18.5% , and the rural was grown up by 13.7%. From 1988-2001 the specific weight of urban population of Shirak region was declined. In 19878 the urbanization level was 71,2 % in 2001 62,7%.

References

1. **Abelyan P.**, Hayastani bnakchutyuny nakhakhordain ev khordain shrjannerum, Petakan hratarakchutyun, Yerevan, 1930t (**In Armenian**).
2. **Aleqsanyan K.**, Aleqsandrapoli gavari varchataracqayin karucvacqi ev bnakchutyun harci shurj, HH GAA Shiraki HH kentroni Shiraki patmamshakutain jarangutun hanrapetakan 6-rd gitajorovi nyuter, Gyumri 2004t (**In Armenian**).
3. **Aleqsanyan K.**, Arevmtahay gaxtakanutuny Aleksandrapoli gavarum, HH GAA, Shiraki HH kentroni Shitaki patmamshakutain jarangutun hanrapetakan 7-rd gitajorovi nuter, Gyumri 2007t (**In Armenian**).
4. **Boyajyan A.**, Hayrenadarzuthuny Leninakanum 1946-147tt.(Yst HH AA Shraki taracqain nuteri)HH GAA Shiraki HH kentroni Shiraki patmamshakutain jarangutun hanrapetakan 7-rd gitajorovi nuter, Gyumri 2010t (**In Armenian**).
5. **Boyajyan A.**, Shiraki marzi social-tntesakan zargacman mi qani harcer, HH GAA Shiraki HH kentroni Gitakan ashtratutunner, Gyumri 2006t. h.9 (**In Armenian**).
6. **Boyajyan A.**, Aleqsandrapol-Leninakani bnakchutyun tvi sharj 1900-1970tt., HH GAA Shiraki HH kentroni Gitakan ashtratutunner, Gyumri 2002t. h.5 (**In Armenian**).
7. **Boyajyan A.**, Joghovrdagrakan gorcntacnery Leninakanum 1970-80-akan tvakannerin, Shiraki HH kenroni Gitakan ashtratutunner, Gyumri 2011t. h.5 (**In Armenian**).
8. **Galstyan M.**, Shiraki marzi bnakchutyun ashkhatanqain migracion gorcntacnery ardi shrjanum, HH GAA, Shiraki HH kentroni Shitaki patmamshakutain jarangutun hanrapetakan 7-rd gitajorovi nuter, Gyumri 2010t. (**In Armenian**).

9. **Khojabekyan V.**, Hayastani bnakchutyun verartadrutyun ev teghasharjer XIX-XX darerum ev XXI dari shemin, HH GAA «Gitutun» hratarakchutyun, Yerevan, 2001t. (In Armenian).
10. **Hayrapetyan A.**, Gyumri-Aleqsandrapol etnojoghovrdagrakan patker XIXd. ev XXd. Arajin kesin, Shiraki HH kentroni Gitakan ashtratutunner, h.11, Gyumri 2008t (In Armenian).
11. Hayastani azgabnakchutuny (yst seri, tariqi, gragitutyun ev azgutyun) 1922t, gyughatnte sakan vishakagrakan nyuter, Kentronakan vishakagrakan varchutyun akhatutyuner, Prak 2, Pethrat, Yerevan, 1924t (In Armenian).
12. **Manasyan M, Grigoryan A ev urishner**, Shiraki marz(bnutyun, bnakshutyun, tntesutyun), Nahapet hratarakchutyun, Yerevan, 2002t (In Armenian).
13. **Sargsyan H, Stepanyan A**, Hayrenadarcutyun teghabashkhumy Aleqsandrapol-Leninakanum, HH GAA Shiraki HH kentroni Shiraki patmamshakutain jarangutun hanrapetakan 5-rd gitajorovi nuter, Gyumri 2002t (In Armenian).
14. **Sargsyan H, Vardanyan L**, Shiraki 1926-1927tt. Gakhtakanutyun vorosh harcer(yst St. Lisicyani archivain nuteri), HH GAA Shiraki HH kentroni Gitakan ashtratutunner, Gyumri 1999t. h.2 (In Armenian).
15. **H. Sargsyan, Boyajyan A.**, Hayrenadarcuthuny Artiki srjanum 1946-147tt.(Yst HH AA Artiki taracqayin nerkayacuchutyun nuteri)HH GAA Shiraki HH kentroni Shiraki patmamshakutain jarangutun hanrapetakan 8-rd gitajorovi nuter, Gyumri 2010t. (In Armenian).
16. Vosproizvodstvo naselenia USSR, pod. redakci A. Vishnevskogo I A. Volkogo, izdatelstvo Mysl, M.1983g (In Russian).

Ընդունվել է՝ 25.06.2019

Գրախոսվել է՝ 03.07.2019

Հանձնվել է տպ.՝ 21.11.2019

Տեղեկություններ հեղինակի մասին

Արտաշես ԲՈՅԱՋՅԱՆ՝ պատմ. գիտ. թեկնածու, դոցենտ,
ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների
կենտրոնի ավագ գիտաշխատող, էլ. փոստ՝ a.boyajyan@mail.ru

Լույս է տեսել ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնի «Գիտական աշխատություններ» պարբերականի 21-րդ հատորը բան. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Սերգո Հայրապետյանի ընդհանուր խմբագրությամբ:



Հատորում տեղ են գտել գիտական 16 հոդվածներ, 5 հրապարակումներ ու հաղորդումներ, ապա և «Լրատու» բաժինը: Ժողովածուի վերջում բոլոր հոդվածների ու հաղորդումների անգլերեն անփոփոխումներն են:

Առաջին հոդվածի հեղինակները Թ.Աղանյանը և Կ.Բազեյանը, «Արվեստն ու գեղարվեստական արհեստագործությունը հետադարձաբան Գյումրու բնակչության հարմարվողական գործընթացներում» ուսումնասիրության մեջ անդրադարձել են այն աղապատացիուն փոփոխություններին, որոնք երկրաշարժից հետո տեղի են ունեցել մարդկանց մշակույթային-արժեքային կողմնորոշումներում, կենսական տարաբնույթ հարցերի նկատմամբ վերաբերմունքում, ընտանեկան, ազգակցական հարաբերություններում և այլ ոլորտներում: Հեղինակները նշում են, որ հոգեբանական սթրեսի հաղթահարման գործում մեծ դեր են կատարում ստեղծագործական բնույթի աշխատանքները, արվեստը, արվեստի միջոցով հոգեբանական խանգարումների բուժման այն եղանակը, որն ստացել է արտթերապիա անունը:

Երաժշտագետ Հ.Հարությունյանը, ուսումնասիրելով Ալեքսանդրապոլի աշուղական երգերը Արշակ Բրուտյանի գրառումներում, հատկապես ընդգծում է 19-րդ դարի վերջում քաղաքի զարգացող մշակութային կյանքում բանահավաքչական արժեքավոր հավաքածուների մեջ ընդգրկվել են նաև աշուղական երգերի ձայնագրյալ /հայկական նոր ձայնագրության համակարգով կատարված/ նմուշներ, որոնք համարվում են համաժամանակյա արժեքավոր փաստացի նյութեր՝ աշուղական երգերի երաժշտական բաղադրիչի գիտական ուսումնասիրման համար:

Ազգահոգեբաններ Կ. Սահակյանը և Ռ. Հովհաննիսյանը «Իմ քայլը՝ ելից դուռ» խորհրդանշական վերնագրով հոդվածում անդրադարձել են հայ իրականության մեջ 2018թ. ապրիլ-մայիսյան համաժողովրդական զարթոնքի /շարժման/ վերախմաստավորված ընկալմանը, հրապարակում տեղի ունեցող սիմվոլիկ գործողություններին ու սիմվոլացված կերպարներին, ազատության նորոքյա ընկալմանը, հանրային նոր վարքի փոփոխություններին: Վերլուծության մեջ կարևորվել է այն, թե ինչ ոգեբխում ունեցավ հրապարակում հավաքված հայ ժողովուրդը նոր ժամանակի, նոր գաղափարների ու նոր արժեքների հոշակումով:

«Տիկնիկը՝ որպես մանկանոցի անձնավորված կերպար» հոդվածում բանագետ Հ.Մատիկյանը վերլուծում է տիկնիկի գործառույթային նշանակությունը՝ նրա հանգստաբեր և բուն մաթթող լինելը, պահպանական գործառույթը բանահյուսական ու հեղինակային հեքիաթներում: Հ.Մատիկյանն ուշագրավ է համարում այն հանգամանքը, որ տիկնիկների իբրև թե շնչավոր էակների հետ շփման ընթացքում երեխաներն ակտիվ ասացողների դերում են և հանպատրաստից երգային նյութեր են հորինում:

Հնագետ Լ. Եզանյանը «Ոչխարի պաշտամունք և անարյուն գոհաբերություն» հոդվածում նշում է, որ հնդեվրոպական ավանդույթներում ոչխարի պաշտամունքը և անարյուն գոհաբերությունն արտացոլված են կենդանուն իմաստաբանորեն կապված առարկաների / (գեղմ, բուրդ, թել, գորգ, գուլպա, գոտի, կտոր, սանդեք, իլիկ, ճախարակ և այլն) ծիսական գործառույթներում: Տարբերույթ մշակույթների դիցաբանության մեջ ու հավատալիքներում խնդրի քննությունը հոդվածագիրը բացատրում է տնտեսության մեջ ոչխարի դերի առանձնակի կարևորությամբ:

Պատմաբան Ս. Պետրոսյանի «Սեպագրային UTTIRU(Կ)I երկրի տեղադրության շուրջ» հոդվածը նվիրված է Վիտիրուսի էթիոպյան երկրին, որն զբաղեցրել է «Աշխարհացոյց»-ի Շիրակ գավառի հարավարևմտյան մասը՝ հարակից որոշ տարածքով: Հեղինակը հանգամանալից անդրադարձել է հոդվածում հիշատակվող հատուկ անունների ստուգաբանությանը:

Ուշագրավ է պրոֆեսոր Լ. Խաչատրյանի «Կրկնավոր բարդությունների աճականով և նախդրավոր տիպերն Աստվածաշունչ մատյանում» ուսումնաքննությունը: Ըստ հեղինակի՝ աճականով և նախդիրներով տիպերի բառակազմական բաղադրիչները բնիկ հայ

կական կամ հնդեվրոպական փոխառյալ արմատներ են: Այդ կարգի կազմությունների ուսումնասիրությունը բացահայտում է հին հայերենի բառակազմական հնարավորությունները լեզվի համաժամանակյա մակարդակում:

Լեզվաբան Հ.Թորոսյանը վերլուծել է «զլուխ» բաղադրիչով սոմատիկ դարձվածքները հայերենում և պարսկերենում՝ նշելով, որ ըստ ձևակազմական քերականական հատկանիշների այդ դարձվածքները կարելի է ներկայացնել անվանողական և հատորդակցական տեսակներով: Այսօրինակ զուգադրական քննությունը լեզվաբանական տիպաբանության կարևոր խնդիրներից է:

Ք. Նիկողոսյանի ուսումնասիրության առանցքում Նար-Դոսի «Մեր թաղը» պատմվածաշարում օգտագործված ոճական բանադարձումներն են: Հեղինակն անդրադարձել է Նար-Դոս գեղագետի խոսքի պատկերավորման ինքնատիպ համակարգին, որ նպաստում է գրողի լեզվի գեղարվեստականացմանը, ժողովրդայնացմանն ու կերպարների տիպականացմանը:

«Այգի-պարտեզ և սրբավայր-արգելանոցները Հին Արևելքում և Հայաստանում» հոդվածում պատմաբան Լ. Պետրոսյանն անդրադարձ է կատարել հնագույն ժամանակներից ինչպես Հին Արևելքի մյուս երկրներում, այնպես էլ Հայաստանում գոյություն ունեցող հատուկ պահպանվող տարածքներին, որոնք թագավորների ու նրանց մերձավորների համար ծառայել են ոչ միայն որպես արքունի պարտեզներ, պուրակ-սրբավայրեր, այլև որպես արգելանոց-որսատեղիներ և զվարճանքի ու զորավարժությունների համար նախատեսված վայրեր:

Պատմաբան Ա.Ակոպովը «Թորթումի գավառի հայ բնակչությունը 1830-1878թթ.» ուսումնաքննության մեջ անդրադարձել է XIX դարի կեսերին Տայքի Թորթումի հայության վիճակին՝ ընդգծե-

լով, որ Օսմանյան կայսրության վարած ժողովրդագրական քաղաքականության արդյունքում լիովին հայաբնակ էին մնացել ընդամենը մի քանի գյուղ: Ըստ սկզբնաղբյուրների և արխիվային նյութերի՝ XIX դարի երկրորդ կեսին Թորթումի գավառակում կային մոտ 3000 հայ: Միննույն ժամանակ, շրջանի մահմեդականները, որ հայտնի էին «կեսկեսներ» անվանումով, ճնշող մեծամասնությամբ ոչ միայն հայկական արմատներ ունեին, այլև տիրապետում էին հայերենին և բարիքրացիական հարաբերություններ ունեին քրիստոնյա հայերի հետ:

Պատմաբան Գ. Այվազյանի քննության նյութն ունի հետևյալ վերնագրումը՝ «18-19-րդ դարերի հայ ազգային-քաղաքական խորհրդանիշների պատմությանից»: Նշյալ դարերում պատմաշխարհագրական խորհրդանիշները ներկայացնելիս հայ հոգևորականները, բանաստեղծներն ու հրապարակախոսները սերմանում էին հայրենապաշտություն՝ վերահաստատելով, որ Հայկական լեռնաշխարհում երկրի, հայ հողի պաշտամունքը հին արմատներ է ունեցել և ունի:

Պատմաբան Ա. Հայրապետյանի ուսումնաքննության կիզակետում ժողովրդագրական գործընթացներն են Ալեքսանդրապոլի գավառում 1918թ. մայիս-նոյեմբեր ամիսներին: Այս հողավածի շրջանակներում արխիվային նորահայտ վավերագրերի, գիտական գրականության, դեպքերին ականատեսների հուշագրությունների և պարբերական մամուլի հաղորդումների համադրմամբ կատարվել է թուրքական գորքերի կողմից Ալեքսանդրապոլի գավառի ազգաբնակչության հանդեպ իրագործված ցեղասպանական քաղաքականության քննություն, ինչը հնարավորություն է տալիս փակելու հայ պատմագիտության մեջ առկա բացը և միաժամանակ հանրային սեփականություն դարձնելու մեր

հարևան պետության հանցավոր պատմության ևս մեկ էջ:

Պատմաբան Կ. Ալեքսանյանի հողավածը վերաբերում է Հայաստանի առաջին Հանրապետության շրջանում Մերձավոր Արևելքի նպաստամատույց կոմիտեի գործունեությանը Ալեքսանդրապոլի գավառում: Հեղինակը բնութագրել է կազմակերպության մեծ դերը Հայոց եղեռնից փրկված արևմտահայ գաղթականների ու որբերի փրկության գործում, նաև՝ Հայաստանի իշխանությունների ու Ամերկումի ներկայացուցիչների միջև եղած հակասություններն ու տարբեր մտեցումները:

Ա. Բոյաջյանը վերլուծել է Շիրակի մարզի գյուղական բնակավայրերում ժողովրդագրական և տարաբնակեցման գործընթացները (XX դ. - XXI դ. սկզբին՝ ընդգծելով, որ հետխորհրդային տարիներին մարզի քաղաքային և գյուղական զանգվածային արտագաղթը լուրջ ժողովրդագրական և սոցիալ-տնտեսական հիմնախնդիրներ է առաջացրել:

Միջազգայնագետ Ա. Հայրապետյանի «Միաբնեռայնության ձևավորումն ըստ PAX AMERICANA հայեցակարգի (մերձավորարևելյան քաղաքականության օրինակով) հողավածը միջազգային հարաբերություններում որակապես նոր միաբնեռայնության փուլի ձևավորման մասին է: ԽՍՀՄ-ի և սոցիալիստական ճամբարի գոյության դադարումից հետո 1990-ական թվականների առաջին հնգամյակը դարձավ երկրներ աշխարհակարգի կազմալուծման և միաբնեռայնության ձևավորման շրջան՝ ռազմաքաղաքական և տնտեսական հարթություններում ԱՄՆ-ի համաշխարհային գերակայությամբ: Ի. Այվազյանի առաջին հրապարակումն ունի «Ուրվագծեր Ալեքսանդրապոլի պատմամշակութային դիմապատկերից» (մասն II) վերնագիրը, որտեղ հեղինակն անդրադարձել է Ալեքսանդրապոլ – Լենինական - Գյումրու վերնակույթար ճարտարապետության


առանձնահատկություններին, որոնք ներկայացրել է ըստ պատմական կենտրոնի: Նույն հեղինակի մյուս «Գյումրու հին գերեզմանոցը որպես պահպանական միավոր» հաղորդումում լուսարանվում են հիմնահարցերը Գյումրու հին գերեզմանոցի, որը 1980-ական թթ. Ընդգրկվել էր քաղաքի անշարժ հուշարձանների ցուցակում: Գերեզմանոցի ուսումնասիրությունը շարունակվում է նաև այսօր, քանի որ այն պատմության ու մշակույթի մեծարժեք միավոր է:

Ազատանի դամբարանադաշտի 2015թ. պեղումներին և գտածոների ուսումնասիրությանն է անդրադարձել հեղինակների մի խումբ՝ Հ.Խաչատրյանը, Լ.Եզանյանը, Լ.Պետրոսյանը, Ա. Ֆորթվենգլերը, Թ.Նեուսերը և Դ. Մաուերման նշելով, որ գտածոները զուգադիր են Հայաստանի ուշ բրոնզի և վաղ երկաթի ժամանակաշրջանի հուշարձանների նյութերին ու կարող են թվագրվել մ.թ.ա. 12-10-րդ դդ.:

Արվեստաբան Ա.Մարգարյանը «Գյումրին իբրև թատրոն. գեղանկարիչ Գարիկ Մանուկյան» հրապարակումում վերլուծում է բեմական նկարիչ Գ. Մանուկյանի գեղարվեստական աշխարհը, թատերական ձևավորումները՝ ինքնատիպ կերպավորումներով, թատրոնի ու ֆարսի վերածված Գյումրիով:

Հ.Մահտեսյանը «Գեներալ Ղորղանյանի կազմած նախագիծը Հայաստանի, Վրաստանի և Ադրբեջանի սահմանագծման վերաբերյալ (1918. հունիս)» հաղորդման մեջ նշում է, որ ՀՀ հռչակումից հետո հանրապետությունների միջև սահմանների հարցը պետք է քննարկվեր Կոստանդնուպոլսում կայանալիք խորհրդածողովում, սակայն աշխարհաքաղաքական իրավիճակի փոփոխությունների պատճառով խորհրդածողովը չի գումարվում:

Ռ. Հովհաննիսյան



«Շիրակի պատմամշակութային ժառանգություն. հայագիտության արդի հիմնահարցեր» խորագրով միջազգային գիտաժողովները, որ ավանդաբար հրավիրվում են Գյումրիում, ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնի անուրանալի ձեռքբերումներից են՝ մեծամասշտաբ միջոցառումներ ոչ միայն Գյումրու, այլև հանրապետության գիտական ու մշակութային կյանքում: Ունկնդիրների հսկայական լսարանով /Գյումրու և մարզի գիտական մտավորականություն, ուսուցչություն, բուհերի հայագիտական ամբիոնների պրոֆեսորադասախոսական կազմ և ուսանողություն/, քննարկվող հարցերի թեմատիկ լայն շրջանակով, մասնակիցների հեղինակավոր ու ներկայացուցչական կազմով, մշտապես մասնակցողների ու երիտասարդ գիտնականների մեծ

քանակությամբ 10-րդ միջազգայինը, որ նաև հորեյանական էր, գերազանցեց նախորդները: Հորեյանական էր մի քանի առումներով. նախ՝ թվով 10-ն էր, ապա՝ գումարվում էր այս գիտաժողովների պատմության 25-րդ տարում և, որ անչափ խորհրդանշական է, գումարվում էր շքեղ վերաշինված մի մշակութային օջախում, որի կիսամութ ու կիսավեր դահլիճում 1994-ի ցուրտ աշնանային մի օր վերարկուների մեջ ցրտից սրթսրթացող բազմաթիվ նշանավոր հայագետների օրհնությամբ այն լույս աշխարհ եկավ՝ նաև ազդարարելու որ Ադետը չի մարել Գյումրիում գիտության լույսը:



«Շիրակի պատմամշակութային ժառանգությունը» վերտառությամբ անցկացվող գիտաժողովները սկզբից եթե եղան և շարունակում են մնալ հայագիտական շրջանակների ուշադրության կենտրոնում: 10-րդ միջազգային գիտաժողովի մասնակիցների թիվը անցավ 150-ից, այդ թվում՝ 20-ը՝ արտասահմանյան 9 երկրներից /Վրաստան, Ղազախստան, Ուկրաինա, Թուրքիա, Նիդերլանդներ, Իտալիա, Թուրքմենստան, Ֆրանսիա, Հունաստան, Գերմանիա/: Զեկուցումների գերակշիռ մասի հեղինակները ՀՀ ԳԱԱ համակարգի և բուհերի հայագիտական ու հասարակագիտական

ամբիոնների ներկայացուցիչներ էին՝ հիմնականում հանրապետության /և ոչ միայն/ գիտական շրջաններում հայտնի հնագետներ, բանագետներ, ազգագրագետներ, պատմաբաններ, ժողովրդագետներ, ֆոլկլորիստներ և բանասերներ, ընդ որում մասնակցության համար հայտավորվել էր նաև երիտասարդ գիտնականների բավականին ներկայացուցչական կազմ: Գիտաժողովի աշխատանքի երեք օրերին հնագիտության և վիճագրության մասնաճյուղում լսվեցին 21 զեկուցումներ, պատմագիտության և ժողովրդագրության մասնաճյուղում՝ 47, ազգաբանության մասնաճյուղում՝ 37, ճարտարապետության և արվեստաբանության մասնաճյուղում՝ 18, բանասիրության մասնաճյուղում՝ 26, որոնց ճնշող մեծամասնությունն աչքի ընկավ հեղինակների՝ ուսումնասիրվող խնդիրների խորը իմացությամբ, քննարկման ներկայացվող հարցադրումների լայն ընդգրկմամբ ու հաճախ նաև՝ նորովի մեկնաբանություններով:



Ենթոյա գիտաժողովի բացման հանդիսությամբ, որ կայացավ սեպտեմբերի 27-ին Գյումրու մշակութային կենտրոնի մեծ դահլիճում, ներկա էին նաև հասարակական-քաղաքական գործիչներ, պետական այրեր: Ողջույնի խոսքով հան-

դեռ եկան Շիրակի մարզպետ Տ. Պետրոսյանը, Գյումրու քաղաքապետ Ս. Բալասանյանը, Կենտրոնի տնօրեն Արմեն Հայրապետյանի խոսքում ընդգծվեց այն կարևոր դերակատարումը, որ վերջին քառորդ դարում Շիրակի մշակութային հսկայական ժառանգության ուսումնասիրության մեջ ունի Գիտությունների ազգային ակադեմիայի Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնը: Անդրանիկ լիագումար նիստում մեծ հետաքրքրությամբ լսվեցին բանասիրության դոկտոր Դ.Գասպարյանի հաղորդումը Եղ.Չարենցի գյումրիական օրերի մասին, որու հայագետ Անդրեյ Իվանովի՝ Գյումրու ժողովրդական ճարտարապետության առանձնահատկություններին նվիրված զեկուցումը, ազգագրագետ Գ.Շազոյանի, պարագետ Գ. Գինոսյանի, մոսկվաբնակ պրոֆեսոր Կ.Բայանի ուշագրավ գիտական հաղորդումները: Այնուհետև գիտաժողովի աշխատանքները ծավալվեցին հինգ մասնաճյուղերում.

Հնագիտության և վիմագրության.

Հնագիտական նյութի ուսումնասիրման բավականին լայն թեմատիկ շրջանակ էին ներկայացնում հաղորդումները՝ սկսած Շիրակի մարզի բնակավայրերի ու թաղումների կենդանական մնացորդներից /Կ.գ.թ. Ն.Մանասարյան/, Արցախի Տիգրանակերտի անտիկ սպասքից /Ա.Գաբրիելյան/, վաղբրոնզիդարյան Մեծ Սեպասարի կոթող-գոհասյուններից /Կ.գ.թ. Լ.Եզանյան/, վաղ երկաթի շրջանի աճյուն չպարունակող դամբաններից /Բ.Վարդանյան/ մինչև անտիկ Հայաստանի սյան խարխիսները /Կ.գ.թ. Ա.Կանեցյան/, Շիրակի Շենգավիթյան մշակույթի խեցեղենի զարդագոտիների տի-

պարանության /Ա.Ազիզյան/, Վարդաբաղի դամբարանադաշտի թվագրության /Կ.գ.թ. Բ.Ավագյան/, Հայկական լեռնաշխարհի վիշապաքարերի «ջրային» կոդի /Կ.գ.թ. Ա.Բոբոխյան/, հայաստանյան և փոքրասիական մշակույթներում եղջերվի և արևի պաշտամունքի կապի /Կ.գ.թ. Հ.Հմայակյան/ բացահայտման հարցերը:

Բուռն քննարկումների մթնոլորտում անցան հայ-գերմանական հնագիտական արշավախմբի /Հ.Խաչատրյան, Լ.Եզանյան, Լ.Պետրոսյան, Ա.Ֆուրթվենգլեր, Դ.Մաուերման/՝ Ազատանի եռաշերտ մշակույթ ունեցող հնագիտական հուշարձանի պեղումներին, Լճաշենի երկրորդ դամբարանադաշտի /Լ.Պետրոսյան/, Հայաստանի միջին պալեոլիթի ոչ օբսիդիանային արտադրամասերի /Հ.Հայդոսյան/, Արտենիի հուշարձանի /Բ.Քալանթարյան, Բ.Պերելլո/, Դաշտադեմի ամրոցի 17-18-րդ դդ. գտածոների և Շիրակում 2008-2016թթ. անտիկ շրջանի նորահայտ դամբարանների հնագիտական հետազոտություններին վերաբերող զեկուցումները:



Վիմագրական ուսումնասիրությունների նոր արդյունքներ ներկայացվեցին Կ.գ.թ. Ա.Հարությունյանի «Միջնադարյան Երևանը վիմագրական արձանագրություններում», Կ.Թոխարյանի «Մեծ Հայքի հյուսիսի ժայռապատկերները»,

պ.գ.թ. Ս.Ադամյանի «Մակար եպս. Բարխուդարյանցի կյանքն ու վիճակագրատական գործունեությունը» թեմայով հաղորդումներում, արժանին մատուցվեց ճարտարապետ Ղ.Չիսյանի /Չիսլին/ այն հսկայական ավանդին, որ ունեցավ նա Արթիկ-տուֆի ստեղծման, հանքավայրի ուսումնասիրման, գործարկման ու հանրահռչակման հայրենանվեր գործում /երկր.գ.թ. Հ.Մելիք-Ադամյան/:

Պատմագիտություն, ժողովրդագրություն. Գիտաժողովի բոլոր օրերին մասնաճյուղը գործեց մեծ ծանրաբեռնվածությամբ. լսվեցին և քննարկվեցին ավելի քան հինգ տասնյակ հաղորդումներ, որոնց մեջ պատկառելի քանակ ունեին Շիրակի ու հարակից տարածքների հին ու նոր պատմությանը նվիրված ուսումնասիրությունները՝ պ.գ.թ. Կ.Ալեքսանյանի «Ալեքսանդրապոլի գավառի պատմության տարրնկալումներ /1918-1920թթ./», պ.գ.թ. Գ.Այվազյանի «Գյոթեի Ֆաուստ»-ի բեմադրությունը Ալեքսանդրապոլում», թուրք պատմաբան Է. Ալթընքայնաբի «Անին գեներալ Յ.Քեֆելիի հուշերում», պ.գ.թ. Ա.Հայրապետյանի «Պաղվալի Վաղո. ազատագրական պայքարի ընդհատակի լեգենդը», Հ.Ղազարյանի «Ալեքսանդրապոլ-Լենինական-Գյումրու պարբերական մամուլի մասին», պ.գ.թ. Ա. Մալոյանի «Կարսի պատմության 18-19րդ. մի քանի ժողովրդագրական տվյալների շուրջ», պ.գ.թ. Ա. Մանուչարյանի «Մի ալեքսանդրապոլցու տապանագրություն Նոր Նախիջևանից», պ.գ.թ. Հ.Սուքիասյանի «Մշակութային գործունեության կազմակերպումը Ալեքսանդրապոլի գավառում 1920-ական թթ.», պ.գ.թ. Ա. Ակոպովի «Խոտրջուրը 19-րդ դ. երկրորդ կեսին» և այլն:



Արժարժվեցին աղբյուրագիտական բնույթի մի քանի հարցեր՝ նորովի մեկնաբանություններով. դրանք վերաբերում էին՝ հայ-վրացական հարաբերությունների պատմության որոշ իրողություններ լուսաբանող մի քանի արխիվային նորահայտ փաստաթղթերի /պ.գ.թ. Ռ.Կավրեյիշվիլի, Վրաստան/, Քանեսի գրավոր աղբյուրների՝ որպես Հայկական լեռնաշխարհի արևմտյան շրջանների Ք.ա. 20-18-րդ դդ. պատմության սկզբնաղբյուրի ուսումնասիրությանը /պ.գ.թ. Ռ.Ղազարյան/, Այ Կոյունլուների տերության անկման վերաբերյալ հայկական աղբյուրների քննությանը /պ.գ.թ. Գ. Մարգարյան/, 1835թ. օսմանյան մարդահամարի տվյալների ուսումնասիրությանը՝ որպես Վերին Բասենի սանջակի տարածքի հայկական ծագումնաբանության աղբյուրի /Ա.Նահապետյան, Մոսկվա/, միջնադարյան հայկական ձեռագրերում Համշենի վերաբերյալ նյութերին /բ.գ.թ. Լ.Սահակյան/, Քսենոֆոնի՝ Հայաստանը հիշատակող որոշ տեղեկությունների /պ.գ.թ. Լ.Պետրոսյան/, Հայաստանի և հայերի մասին օտար գրավոր աղբյուրի՝ Ա.Ֆրայերֆոն Հաբստհաուզենի «Անդրկովկաս» աշխատության մեջ առկա վկայություններին /Գ.Շախկյան/:

Անդրադարձներ եղան նաև հայոց պատմության, ժողովրդագրության տարբեր խնդիրների լուսաբանմանը. պ.գ.թ. Հ.Սարգսյան «Էթնոժողովրդագրական գործընթացները Խորհրդային Հայաստանում 20-30-ական թթ., պ.գ.թ. Հ. Մուրադյան «Հյուսիսկովկասյան մահմեդական ժողովուրդների բնակեցումը Կարսի գավառում», պ.գ.թ. Լ.Քոսյան «Կ.Պոլսի հայոց պատրիարքարանի որբախնամ գործունեության պատմությունից», Ռ.Գասպարյան «Մուսալեռան ինքնապաշտպանական մարտերն առաջնային աղբյուրներում և դրանց ազդեցությունը տեղային ինքնության փոխակերպման և սոցիալական հիշողության վրա», բ.գ.թ. Դ.Հայրապետյան «Օսմանյան կայսրության համբարությունները որպես բռնի իսլամացման միջոց», պ.գ.թ. Գ.Այվազյան «Ադրբեջանի աղվանա-ուդիական եկեղեցին Արցախյան հարցի համատեքստում», փ.գ.դ. Մ.Արպենտևա /ՌՆՎ՝ «Ղարաբաղյան հակամարտությունը և հայագիտության հիմնահիմքները», Դ.Դիմիդով /Ուկրաինա՝ «Հայաստանի Բագրատունյաց շրջանի գուրգերը», պ.գ.թ. Ռ.Ցականյան «Հայ-մարական հարաբերությունների որոշ խնդիրների շուրջ», պ.գ.դ. Ս.Պետրոսյան «Առասպելաբանված եղջյուրի և միեղջյուրի մասին», պ.գ.դ. Ս.Սարգսյան «Հայ ժողովրդական կուսակցության տեղն ու դերը Հայաստանի առաջին Հանրապետության քաղաքական կյանքում»:

Մի քանի գեկուցումներ նվիրված էին արտերկրի հայկական համայնքների կյանքին, հայ հասարակական, քաղաքական և տնտեսական գործիչներին, ինչպես՝ «Հայագգի կուսակցական և պե-

տական գործիչները Միջին Ասիայի խորհրդային հանրապետություններում» /պ.գ.թ. Հ.Ալեքսանյան/, «Կ.Պոլսի «Բուլվեր» թիվ 891 օթյակի հայ անդամները» /պ.գ.դ. Ֆ.Մովսիսյան/, «Լ.Միրզոյանի գործունեությունը և ներդրումը Ղազախստանի զարգացման մեջ» /Ս.Մորյակովա, Ղազախստան/, «Թուրքմենստանի հայ համայնքը» /բ.գ.թ. Ա.Պետրոսյան/, «Նոր զարթոնք. Գեզի զբոսայգին և հայ երիտասարդության ակտիվության խթանումը Թուրքիայում» /Գ.Պետրոսյան/, «Երուսաղեմի գործոնը արաբա-իսրայելական խաղաղության գործընթացում և հայկական համայնքը» /պ.գ.թ. Ա.Հովհաննիսյան/, «Հովսեփ արքեպս. Արղությանի դավանաբանական գործունեությունը» /պ.գ.թ. Հ.Ամիրջանյան/ և այլն:

Ուշադրությամբ լսվեցին նաև հաղորդումներ քաղաքականության և իրավագիտության պատմությանը վերաբերող հարցերի շուրջ, մասնավորապես Մերձավոր Արևելքում ամերիկյան արդի քաղաքականության հետևանքների մասին /Ս.Հայրապետյան/, համաշխարհային քաղաքակրթության ցիկլային շարժընթացում հայկական քաղաքակրթության տեղի վերաբերյալ /պ.գ.թ. Ա.Ներսիսյան/, ինչպես նաև կատարվեց երիտթուրքական վարչակարգի ցեղասպան քաղաքականությանը զուգահեռ իրագործված՝ հայերի ունեզրկման «օրենսդրական» մեխանիզմների հանգամանալի վերլուծություն /պ.գ.դ. Ա.Մարուքյան/, ըստ ամենայնի ներկայացվեցին ժամանակակից իրավական պետության հիմնաքար հանդիսացող իրավական մշակույթի խնդիրը /բ.գ.թ. Զ.Ղազարյան/, արժարծվեցին Հայաստանում կա-

մավորական շարժման պատմությանն ու ներկա վիճակին վերաբերող հարցեր /պ.գ.թ. Լ.Ասոյան/:

Ազգաբանություն. Հարուստ թեմատիկ-բովանդակային համատեքստում ուշագրավ ու արժեքավոր անդրադարձներ եղան դասական ազգագրության բազմաթիվ հարցերի. Շիրակ-Ջավախքի կանանց տարազի գեղագարդման առանձնահատկություններին /պ.գ.թ. Ս.Պողոսյան/, Ղարազոզ ծիսական տիկնիկին ու ստվերների թատրոնին /բ.գ.դ. Թ.Հայրապետյան/, Շիրակում Տյառնընդատաջի ծիսատնական սովորությունն ու ժողովրդական հավատալիքներին /Ռ.Հովհաննիսյան/, Գյումրիում գատկական տոնի ժողովրդական ավանդություն /հ.գ.թ. Կ.Սահակյան/, հայոց մեջ միջերկիկ հյուրընկալության առանձնահատկություններին /պ.գ.թ. Ռ.Օհանջանյան/, հայկական հարսանեկան համակարգի խորհրդանիշներին /բ.գ.թ. Ն.Վարդանյան/, հայ հոռոմների ավանդույթ-ավանդագրույցներին /Գ.Ղազարյան, Հունաստան/, քրիստոնեական նավակատիքում հաղորդության արխայիկ դրսևորումներին /պ.գ.թ. Հ.Աբրահամյան/, ժամանակի լուսանկարների հիման վրա 19-րդ դ. Ալեքսանդրապոլի քաղաքային կենցաղին ու մշակույթին /պ.գ.թ. Կ.Բազեյան/, 20-րդ դ. Շիրակի բնակչության շարժի օրինաչափություններին /պ.գ.թ. Ա.Բոյաջյան/, աշխատանքային միզրանտների շրջանում ամուսնալուծությունների հիմնախնդրին /պ.գ.թ. Ս.Գալստյան/, հայ կաթոլիկների գյուղերում հարսանեկան ծիսակարգի առանձնահատկություններին /Ս.Գրիգորյան/, հայոց ավանդական և ժամանակակից հարսանիքում հրավերի ու հրավիրատոմսի դերին /պ.գ.թ. Ե.Ղե-

գալցևա/, 18-20-րդ դդ. հայկական գարդերի խորհրդանշական իմաստներին /Ա.Բսրայեյան/ և այլն:

Պ.գ.թ. Թ.Աղանյանի հաղորդումը հետխորհրդային Հայաստանում ինքնասպանությունների սոցիո-մշակութային դիտարկման հաջողված փորձ էր:

Այդպիսին էր նաև պ.գ.թ. Մ.Գաբրիելյանի և Ռ.Ծատուրյանի հաղորդումը 1823-1830թթ. արևմտահայության գաղթի ու մշակույթի վերարտադրության մոդելավորման մասին, արդիական հնչեղություն ուներ Գ.Հակոբյանի ղեկուցումը՝ նվիրված սիրիահայոց շրջանում հայրենիքի մասին ընկալումներին, պարբերական մամուլի նյութերի սպառիչ վերլուծություն էր Վ.Մելքոնյանի հաղորդումը Ալեքսանդրապոլի 19-րդ դ. տնտեսության մասին, ավանդույթի և ինովացիայի համադրման կարևոր խնդիրն էր շոշափում Մայկոպի հումանիտար հետազոտությունների ինստիտուտի դոցենտ, պ.գ.թ. Ռ.Կոնդորի հաղորդումը:



Բանահյուսական թեմաներ էին արծարծվում բ.գ.թ. Է.Խենյանի «Խիկար Իմաստունի սյուժեները Շիրակի ու Կարսի բանահյուսության մեջ», բ.գ.թ. Ս.Խենյանի «Կարսի հրաշապատում հեքիաթները որպես հայ ժողովրդական հեքիաթների բաղկացուցիչ մաս», բ.գ.թ.

Տ.Դալայանի «Միաշքանի հսկայի մասին առասպելի փոփոխականները Հայաստանում և Գովկասում», Գ.Գուրբանովայի /Թուրքմենստան/ «Ազգային ինքնատիպության արտացոլումը հայկական և թուրքմենական առածներում և ասացվածքներում», Բ.Գ.Թ. Հ.Մատիկյանի «Մանկական բանահյուսության ընդհանուր նկարագիրը ժողովրդական բանահյուսության համատեքստում», Բ.Գ.Թ. Ա.Սարգսյանի «1988-ի երկրաշարժի արտացոլումը հայկական անեկդոտներում», Ս.Վարդանյանի «Բսլամացած համշենահայերից գրառված մի զվարճապատումի տարբերակների մասին», Ն.Խաչատուրեանի «Բուսական պատկերները հայ ժողովրդական օրորներում» և Ա. Հալիսայի /Թուրքմենստան/ ««Քյոռոլի» էպոսի հայկական տարբերակի մասին» հաղորդումներում:

Թանգարանագիտության արդիական հարցերի էին վերաբերում պ.գ.թ. Լ.Գեվորգյանի «Ազգագրական ուղղվածություն ունեցող ցուցադրությունները արդի հայ ինքնության ձևավորման գործընթացի համատեքստում», մշ.գ.թ. Լ.Ղուշյանի /Ռուսաստան/ «20-րդ դ. կեսերին Հայաստան կատարված ազգագրական գիտաբանական կյուրթեր Ռուսաստանյան ազգագրական թանգարանի հավաքածուից» զեկուցումները:

Ճարտարապետություն և արվեստ. Աշխատանքային մասնաձյուղում գրեթե նույնաքանակ էին արվեստաբանության և ճարտարապետության հարցերին նվիրված հաղորդումները: Հետաքրքրությամբ լսվեցին և քննարկվեցին ճարտ.դ. Ա. Հայկազուն Գրիգորյանի «Հավասարակողմ եռանկյունիների հորինվածքային առանձնահատկությունները

ները հայ մշակույթում», ճարտ.թ. Դ.Նահատակյանի «10-11րդ դդ. հայ քաղքեղոնական ճարտարապետության որոշ փորձերի մասին», պ.գ.թ. Հ.Չոլաքյանի «Քեսապի շրջանի հայոց նիւթական մշակույթի ճակատագիրը», ճարտ.թ. Ա.Տեր-Մինասյանի «Հայաստանի վաղմիջնադարյան գմբեթավոր եկեղեցիների ճարտարապետական տիպի կիրառումն ու զարգացումը Անիում», պ.գ.թ. Բ.Ավագյանի և Պ.Զաքարյանի Ալեքսանդրապոլ-Գյումրու մեմորիալ մշակույթը» զեկուցումները:



Աշխույժ քննարկումներ տեղի ունեցան արվեստագիտության խնդիրներին վերաբերող հաղորդումների շուրջ: Դրանք արժարժում էին և՛ արվեստի պատմության, և՛ արդիական հնչեղության հարցեր. «Գոմիտասը և Ալեքսանդրապոլի աշուղական ավանդույթները» /արվ.թ. Հ.Հարությունյան/, «Ալեքսանդրապոլի պրոֆեսիոնալ երաժշտության զարգացման ակունքներում. Ն.Տիգրանյան» /Ա.Ասատրյան/, «Լենինականի նրկարչական դպրոցը գեղարվեստական կրթության ակունքներում» /արվեստ.թ. Ք.Ավետիսյան/, «Հայ դիրիժորական արվեստի պատմության էջերից» /Ա.Պետրոսյան/, «Ներսես Շնորհալու երաժշտական ժառանգությունը» /Ա.Տեր-Մինասյան/:

յան/, «1980-ականների Գյումրու գեղարվեստական կյանքը» /արվ.թ. Ա.Մարգարյան/, «Հայ կոմպոզիտորական արվեստում հայրենասիրական թեմայի որոշ դրսևորումների մասին» /Ռ.Ադայան/:

Բանասիրություն. Ներկայացված երկուսուկես տասնյակ գիտական զեկուցումների մի խոշոր մասը վերաբերում էր բարբառագիտության խնդիրներին. «Լեզվատառնությունն առանձնահատկությունների քննությունն ըստ Շիրակի գյուղերի խոսվածքների գրառումների» /բ.գ.թ. Ջ.Բառնասյան/, «Գյումրու արդի խոսվածքում արևելյան լեզուներից բանավոր փոխառությունների մասին» /բ.գ.թ. Ս.Զաքարյան/, «Տեղաշարժեր Կարնո բարբառի Գյումրու խոսվածքի քերականական համակարգում» /բ.գ.դ. Ս.Հայրապետյան/, «Կարնո բարբառի ուսումնասիրության հարցեր» /բ.գ.թ. Հ.Մարտիրոսյան, Նիդեռլանդներ/, «Նախիջևանի տարածքի բարբառային համապատկերը» /բ.գ.թ. Ա.Վարդանյան/, «Ննջեցյալի հիշատակին վերաբերող բարբառային բառաշերտը» /բ.գ.դ. Հ.Մեսրոսյան/և այլն:

Մասնագիտական արժեքավոր տեղեկատվություն էր պարունակում բ.գ.դ. Լ.Խաչատրյանի «Լատիներեն լեզվաբանական եզրույթների պատճենումները հայերենում» զեկուցման մեջ, հետաքրքրությամբ լսվեցին բ.գ.թ. Հ.Թադևոսյանի «Կենդանիների անվանումներով ախտանունները միջնադարյան բժշկարաններում», բ.գ.թ. Հ.Զաքարյանի «Ճ սկզբնահնչյունով մի քանի բառերի ստուգաբանություն», բ.գ.թ. Լ. Ղամոյանի «Օտարաբանություններն ու փոխառությունները «հագուստ» իմաստային դաշտում»,

բ.գ.թ. Ա.Ավագյանի «Հայերենում քերականական կարգերի տեղաշարժի մասին», բ.գ.թ. Լ.Պետրոսյանի «Բառաբարդումները Շիրակի վիմագիր արձանագրություններում», բ.գ.թ. Մ. Միրուսյանի «Համեմատության աստիճաններ չունեցող ածականների ուսումնասիրումն ավագ դպրոցում», Ա.Վարդանյանի «Բայական հիմնաբաղադրիչի խնդրառությունը գրաբարի իսկական բարդություններում» և Հ.Հովհաննիսյանի «Ան. Շիրակացին և նրա «Տիեզերագիտություն և տումար» աշխատության համաբարբառը» հաղորդումները:



Լեզվաբանական հետաքրքիր հարցադրումներ էին առկա բ.գ.թ. Մ.Խաչատրյանի «Խոսքի գեղագիտությունն ըստ Ավ. Բուսահայկյանի պոեմների», բ.գ.թ. Ա.Հայրապետյանի «Դարձվածքները միջնադարյան տաղերգության մեջ», բ.գ.թ. Ա.Մխիթարյանի «Ճարտասանական ձևերը Հովհ. Շիրակի «Անի» պոեմում» և Ք.Նիկողոսյանի «Անձնավորումը որպես խոսքարվեստի ինքնատիպ միջոց Նար-Դոսի «Մեր թաղը» պատմվածաշարում» հաղորդումների մեջ:

Մի շարք զեկուցումներ ունեին գրականագիտական ուղղվածություն. Ստեղծագործական զուգահեռներ զմվեցին բ.գ.թ. Ա. Բեքերյանի «Բայրոնը և Բսա-

հակյանը» հաղորդման մեջ, Շ.Խաչատրյանի՝ գեղարվեստական թարգմանության հարցեր արծարծող «Մ.Առեզովի Արայ» վեպի հայերեն թարգմանության շուրջ» զեկուցումում, հետաքրքրությամբ լսվեցին պ.թ.գ. Լ.Թումանյանի «Գրիգոր վրդ. Հեսվացու խորհրդապաշտական ստեղծագործությունները», փ.գ.թ. Ս.Հովհաննիսյանի «Արևմտահայության ազգապահպանման խնդիրները Դ.Վարուժանի գրական-հրապարակախոսական դիտումներում» և բ.գ.թ. Կ.Մարտիրոսյանի «Լեո Կամսարի պիեսները. Ներկայացում Ալեքսանդրապոլում» հաղորդումները:



Շիրակի պատմաաշակութային ժառանգությանը նվիրված գիտաժողովների կազմակերպմանը և իրականացմանը ԳԱԱ ՇՀՀ կենտրոնում մոտեցել էին մեծ պատասխանատվությամբ: Արվել էր առավելագույնը՝ ապահովելու մասնակիցների եռօրյա աշխատանքի տեխնիկական լավագույն պայմաններ, արված նվիրատվությունների շնորհիվ Կենտրոնն ամբողջությամբ հոգացել էր մասնակիցների սննդի, գիշերակացի ու ժամանցի կազմակերպման խնդիրները: Հիրավի, անջնջելի էին սպավորությունները «Սև բերդ» մշակութային համալիրում կայացած Կոմիտասյան գալա-համեր-

գից, անմոռանալի էին «Հրայր» երիտասարդական ազգագրական համույթի կրթական ջանքերի հետ շուրջպար բռնելու պահերը:



Գիտաժողովը լավագույնս վկայեց, որ մեզանում վերջին տարիներին նկատելի առաջընթաց է արձանագրվում մեր ժողովրդի հսկայածավալ պատմաաշակութային ժառանգության ուսումնասիրության գործում, մասնավորապես հայոց նորագույն շրջանի պատմության բազմաթիվ վիճահարույց հարցերի նորովի լուսաբանման մեջ ազգաշահ և իրատեսական մոտեցումներում, ավանդականի կողքին նոր ուղղությունների, նորաբնույթ հետազոտությունների, վերջին շրջանում հայագիտության բնագավառում երիտասարդ գիտական կադրերի թվաքանակի նկատելի աճի մեջ, որ դրսևորվեց նաև Գյումրու միջազգային գիտաժողովում, որտեղ բավականին նկատելի ու արդյունավետ էր ինչպես ՀՀ, այնպես էլ մասնակից մյուս երկրների երիտասարդ պատմաբանների, ազգագրագետների, հնագետների ու արվեստաբանների առկայությունը:

Կարևորվեցին նոր սերնդի դաստիարակման գործում ազգաաշակութային ժառանգության տեղին օգտագործման խնդիրը, ազգաաշակութային տարած-

քում ազգային արժեքների փոխակերպումների ուսումնասիրության անհրաժեշտությունը, մշակութային կապիտալի դրսևորման ձևերն ու առանձնահատկությունները, մշակութային երկխոսության և փոխառնչությունների արդիական հնչեղություն ունեցող հարցերը: Իրավացիորեն նշվեց նաև պատմամշակութային ժառանգության ուսումնասիրության գործում առկա դժվարությունների պատճառով /հիմնականում ֆինանսական/ ազգագրական ու բանահյուսական գիտարձավների և սոցիոլոգիական հարցումների պակասի, հատկապես արտասահմանյան գործուղումների անբավարար քանակի, արտերկրի միջազգային գիտաժողովներին մասնակցելու սուղ հնարավորությունների մասին:

Գիտաժողովի բարձր մակարդակով անցկացմանը, անշուշտ, մեծապես նպաստեց ՀՀ նախագահ Ա.Սարգսյանի, Գյումրու քաղաքապետ Ս.Բալասանյանի, ՀՀ ԳԱԱ հայագիտական հիմնադրամի, ՀՀ գիտության կոմիտեի, Ռուսաստանի գիտության և մշակույթի կենտրոնի աջակցությունը: Նաև դրա շնորհիվ՝ մասնակիցների աննախադեպ քանակով, քննարկվող հարցերի թեմատիկ բազմազանությամբ, մասնակից երկրների լայն աշխարհագրությամբ ու արդյունավետ կազմակերպվածությամբ Գյումրու 10-րդ միջազգային գիտաժողովը դարձավ վերջին տարիներին հանրապետությունում տեղի ունեցած մեծամասշտաբ գիտագործնական միջոցառումներից մեկը, վերածվեց հայագիտության իսկական փառատոնի:

Ս. Հայրապետյան



Պ Ա Տ Մ ՈՒԹ Յ ՈՒՆ

ՊԵՏՐՈՍՅԱՆ Մարգիս

Լույսի պաշտամունքի էթիոնյան վայրերը5

ՅԱԿԱՆՅԱՆ Ռուսյան

Հայ-մարական հարաբերությունների որոշ խնդիրների շուրջ.....20

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ Մարինե

Արցախի Վերին Թաղավարդ գյուղի Առաքել Սյունեցու Աղամգիրքը՝
ըստ ՄՄ Հ⁴ 3888 ձեռագրի28

ՆԱՀԱՊԵՏՅԱՆ Անդրանիկ

Վերին Բասենի սանջակի 1835 թվականի Օսմանական
մարդահամարը որպես հայկական ծագումնաբանության աղբյուր.
Քյոփրյուքյոյ գյուղի օրինակը.....37

ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ Արմեն

Դրվագներ XXդ. սկզբին Ալեքսանդրապոլի գավառում
մոլեզնած տարափոխիկ հիվանդությունների պատմությունից.....52

ՄԿՈՊՈՎ Արկաղի, ՈՄԿԱՆՅԱՆ Դիանա

Արխիվային վավերագրեր Ալեքսանդրապոլի գավառի մասին
(XX դարի սկիզբ).....72

ԱԼԵՔՍԱՆՅԱՆ Կարինե

Ալեքսանդրապոլի գավառի կրթամշակութային կյանքը 1917-1920թթ.....109

ԱՅՎԱԶՅԱՆ Գևորգ

«Հայելի»-ն՝ Ալեքսանդրապոլի առաջին երգիծաթերթ.....125

ՄԱՐՈՒՔՅԱՆ Արմեն

Ցեղասպանությանը զուգահեռ իրականացված հայերի զանգվածային
ունեզրկման քաղաքականության երիտթուրքական վարչակարգի
«օրենսդրական» մեխանիզմները.....138

ԱՎԱԳՅԱՆ Ինգա

Ալեքսանդրապոլի զինվորական եկեղեցիները որպես
մշակութային պահպանական միավոր.....149

Հ Ն Ա Գ Ի Տ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

ԽԱՉԱՏՏՅԱՆ Համազասպ, ԵԳԱՆՅԱՆ Լարիսա, ՊԵՏՐՈՍՅԱՆ Լևոն
ՖՈՒՐՏՎԱՆԳԼԵՐ Անդրեաս, ՄԱՌԻԵՐՄԱՆ Դորոթեա
Ջրափիի դամբանադաշտի պեղումները.....161
ՎԱՐԴԱՆՅԱՆ Բենիկ, ՄԿՏՉՅԱՆ Լևոն
Տիրաշենի մշակութային լանդշաֆտը. նախնական դիտարկումներ.....194

Բ Ա Ն Ա Ս Ի Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

ՀՈՎՀԱՆՆԻՄՅԱՆ Հայկանուշ
Անանիա Շիրակացին և նրա «Տիեզերագիտություն և տոմար»
աշխատության Համաբարբառը.....203
ԽԱՉԱՏՏՅԱՆ Լալիկ, ՄԻՐՈՒՄՅԱՆ Մարգուշ
Ներխոսքիմասային տարարժեքություն ածականների իմաստային
կառուցվածքում (համաժամանակյա և տարժամանակյա հայեցակետ).....218
ԶԱՔԱՐՅԱՆ Հովհաննես
Ճ սկզբնահնչյունով մի քանի բառերի ստուգաբանություն.....228
ԵՂԻԱԶԱՐՅԱՆ Մաթենիկ
Պարսկերեն բառերը Արիգ Ավագյանի արձակում.....239

Ա Զ Գ Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

ԲԱԶԵՅԱՆ Կարինե
Խաղը Ալեքսանդրապոլի ավանդական քաղաքային մշակույթում.....245
ՄԱՏԻԿՅԱՆ Հասմիկ
Հովհ.Թումանյանի ստեղծագործությունները որպես քնամուտի տեքստեր.....264

Ժ Ո Ղ Ո Վ Ր Դ Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

ԲՈՅԱԶՅԱՆ Արտաշես
Շիրակի բնակչության շարժի օրինաչափությունները 20-րդ դ..... 271
Գիտական լրատու.....287

С о д е р ж а н и е

И С Т О Р И Я

ПЕТРОСЯН Саргис

Этиунские места почитания света.....5

ЦАКАНЯН Руслан

О некоторых проблемах в армяно-мидийских отношениях.....20

АРУТЮНЯН Марине

“Адамгирк” Аракела Сюнеци арцахского села Верин Тагавард
согласно рукописи Матенадарана № 3888.....28

НАГАПЕТЯН Андраник

Османская перепись населения Верхнебасенского санджака 1835 г.
как источник по армянской генеалогии: пример села Кёпрюкёй.....37

АЙРАПЕТЯН Армен

Эпизоды из истории эпидемических заболеваний, вспыхнувших в
Александропольском уезде в начале XX века.....52

АКОПОВ Аркадий, ВОСКАНЯН Диана

Архивные документы об Александропольском уезде (начало XX века).....72

АЛЕКСАНИЯН Карине

Образование и культурная жизнь в Александропольском уезде
в 1917-1920гг.....109

АЙВАЗЯН Геворг

”Зеркало” - первая сатирическая газета Александрополя.....125

МАРУКЯН Армен

«Законодательные» механизмы экспроприации имущества армян,
осуществленной младотурецким режимом параллельно
с политикой геноцида.....138

АВАГЯН Инга

Александропольские военные храмы как охраняемые
культурные единицы.....149

АРХЕОЛОГИЯ

<i>ХАЧАТРЯН Амазасп, ЕГАНИЯН Лариса, ПЕТРОСЯН Левон, ФУРТВАНГЛЕР Андреас, МАУЕРМАН Доротеа</i>	
Раскопки некрополя Джрапи.....	161
<i>ВАРДАНИЯН Беник, МКРТЧЯН Левон</i>	
Культурный ландшафт Тирашена: предварительное наблюдение.....	194

ФИЛОЛОГИЯ

<i>ОГАНИСЯН Айкануш</i>	
Анания Ширакаци и Амабарбар (конкорданс) его работы “Космология и календарь”.....	203
<i>ХАЧАТРЯН Лалик, МИРУМЯН Маргуш</i>	
Внутричастеречная полисемия в смысловой структуре прилагательных.....	218
<i>ЗАКАРЯН Оганес</i>	
Этимология некоторых армянских слов с начальным звуком Ճ.....	228
<i>ЕГИАЗАРЯН Сатеник</i>	
Персидские слова в прозе Абига Авагяна	239

ЭТНОГРАФИЯ

<i>БАЗЕЯН Карине</i>	
Игра в традиционной городской культуре Александрополя.....	245
<i>МАТИКЯН Асмик</i>	
Предсонные тексты Ованеса Туманяна и их взаимосвязь с фольклорными текстами.....	264

ДЕМОГРАФИЯ

<i>БОЯДЖЯН Арташес</i>	
Динамика роста населения Ширака в XXв.	271
<i>Научная информация</i>	287
С о д е р ж а н и е	

Contents

HISTORY

PETROSYAN Sargis

Etiuni Places of Ligth Cult.....6

TSAKANYAN Ruslan

On the Some Problems of the Armenian-Midian Relations.....20

HARUTYUNYAN Marine

“Adamgirk” of the Village of Verin Taghavard of Artsakh of
Arakel Syunetsi according to the Manuscript № 3888 of Matenadaran.....28

NAHAPETYAN Andranik

Ottoman Census of the Population of Sanjak of Upper Basen of 1835 Y.
As a Source for the Armenian Genealogy: An Example of Köprüköy Village.....37

HAYRAPETYAN Armen

Episodes from the History of Epidemic Diseases Outbreaks
in the Alexandropol Uyezd in the Early XX Century.....52

AKOPOV Arkadi, VOSKANYAN Diana

Archival Documents on Aleksandropol Province (Early Twentieth Century).....72

ALEQSANYAN Narine

Educational and Cultural Life in Alexandropol Province in 1917-1920.....109

AYVAZYAN Gevorg

“Mirror”- the First Satirical Newspaper in Alexandropol.....125

MARUKYAN Armen

"Legislative" Mechanisms of Expropriation of Armenian's Property which
is Carried Out by Young Turks Regime in Parallel with Policy of Genocide.....138

AVAGYAN Inga

Alexandropol Military Temples.....149

ARCHAEOLOGY

KHACHATRYANA Hamazasp, EGANYAN Larisa, PETROSYAN Levon,

FURTHWANGLER Andreas, MAUERMAN Dorotea

Excavations of Jrapi Necropolis.....161

VARDANYAN Benik, MKRTCHYAN Levon

The Cultural Landscape of Tirashen: Preliminary Study194

PHILOLOGY

HOVHANNISYAN Haykanush

Anania Shirakaci and Concordance "Cosmology and Calendar".....203

KHACHATRYAN Lalik, MIRUMYAN Margush

Morphological Polysemy in the Semantic Structure of Adjectives
(synchronic and diachronic conception).....218

ZAKARYAN Hovhannes

Etymology of some Armenian Words with the Initial Sound228

YEGHIAZARYAN Satenik

Persian Words in Abig Avagyan's Prose239

ETHNOLOGY

BAZEYAN Karine

Game in the Traditional Urban Culture in Alexandropol.....245

MATIKYAN Hasmik

Hovhannes Toumanyan's Works as Bedtime Texts264

DEMOGRAPHY

BOYAJYAN Artashes

The Population Movement Patterns of Shirak Region in the XX Century.....271

Scientific Information287

*Հայաստանի Հանրապետություն
Գիտությունների ազգային ակադեմիա
Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն*

ԳԻՏԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ. 1-2 (22) 2019

*Республика Армения
Национальная академия наук
Ширакский центр арменоведческих исследований*

НАУЧНЫЕ ТРУДЫ. 1-2 (22) 2019

*Shirak Centre for Armenological Studies
National Academy of Sciences
Republic of Armenia*

SCIENTIFIC WORKS. 1-2 (22) 2019

*Համակարգչային և գերարվեստական ձևավորումը՝ Լ. Կոստանյանի,
Խմբագրումը և սրբագրումը՝ Ռ. Հովհաննիսյանի, Հ. Մատիկյանի,
Ռ. Շտոյանի*

Ստորագրված է տպագրության՝ 21.11. 2019թ.

Ծավալը՝ 306 էջ, թուղթը՝ A4, տպաքանակը՝ 180, գինը՝ պայմանագրային

Գիտությունների ազգային ակադեմիայի
Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն
Հայաստան, Գյումրի, Վազգեն Սարգսյանի-5^ա
<http://shirakcenter.sci.am/>. E-mail: scient.works@shirakcenter.sci.am